Էս ախճիգյը կղնվում ա, գյուլը յոր օնում, քյնում, նի մննում ուրան օթաղը: Էս օգողն էլ քյնում ա, զնաղը աեմ տամ շարշուեն, թա.— էտ գյուլը ինձ պիտի աաս, վեր պիտի տաս:

Հարը, մարը քյնում ըն, դաշանք անում, թա.— Տո ուրան՝ քյնի:

Վեր շատ ըն դաշանք անում, ախճիգյը գյուլը շպրտում ա, թա տա օգողեն. Էս գյուլը մին հափուո կորեկ տ տեռնում, տանավը տեռնում, էղ օգողն էլ մին հավ ա տեռնում՝ թուխսկան, սկսում էտ կորեկը՝ օտելը: Մին հաա կորեկ խալիչին տակեն կյող ա կենում:

Տահանք՝ թագավերը, կնեգյը, ախճիգյը, մնացալ ըն դարմացած. ա, էս հի՞նչ կրակ տ, հի՞նչ նաղը ա...

Էս թուխսկանը կորեկն օտում տ, սկսում քըրքացե անելը: Ախրը աղեն քյթալ չի: Աստ էլ, էս տղան մին աղվես ա աեսնում, հավերն էլ օտում, ճուահերն էլ օտում, պրծնում: Վեր լուղուն պոշներեն քսելտվ րիգի թագավերը քյնում ա, թագավերը վըխնելավ քյնում տ էն կողքը. վեր մին էլ ընդղավ ա կյամ՝ ինդի յա փախճում:

Վեր տահանց մին խիլա լրշարում ա, ուրան թափ ա աամ աղվեսը, տեռնում մին լյավ աղա.— Թագավեր, էս արհեսաին հավա՞ն ըս:

Թա.— Իե՞ս, տու էն պոավեն տղտ՞ն ըս:

Թա.— Հա՞:

Մհենգյ հրսաներյ բիղի տնին:

Թա.— Քյնիլ բիղիմ, ուստակինս ընդեղան աղաղիմ, պիրիմ, ևտո հրսաներյ անիմ, ինձ նտյտ աղագալ:

Քյնում ա ուստակնոջը, թա.— Դե, ուստակին, ուստեն կլլոխը կարտլ ըմ, պրծալ:

Հվարում ա, յոր օնում պիրում, հրսաներյ անում, տի ապրում ըն:

4. ԱՆՄԱՀԱԿԻՆ ԽՆՉՈՐԸ

Մին թագավեր ա ինում, իրեք հատ աղա օներ, լյուվ կարողություն, մին, էլ՝ մին լյավ րախճա, թայց էս բախճում մին խնձորե ծտո կտր, վեր ամեն տարե հսնում ար, մին ուոթանա եր ին կենում, տեսնում, խնձորեն յրա խնձոր շկաւ:

Էս հինչ պին ա. տյեր, տվեր, մին տարե էս թաղավերեն մեծ տղան ասում ա.— Ես րիդի փըռնիմ, տեսնամ՝ էս կյողը հուվ աւ:

Սադ տարեն քյնում ա տակեն բոն ինում (այսինքս ինձորը հասծ վախտր), բայց մին ուռթանա եր ա կենում, տեսնում, խնձորուն յրա ինձոր շկա:

Էն մին աարեն էլ մանակ տղան ա քյնում, բայց էլա քոնը տանում ա, եր ա կենում, տեսնում ինձորեն տերտակ:

Մհենդի էլ էն մին տարե պիծինն ասում ա.— Ես ըմ քյննական:

Քյնում ա: Լիա վեր օղում ա, թա քոնը տանե, մանն կարում տ, աղ ա քցում, ծերքը հեռում ա, քոնը տանում չի: Մին էլ մին քշեր, ըհը՛, եշում ա, տեսնում՝ մին օշափ եկավ, եր իլավ ժառը: Սա դաման քաշում ա, օշափ տեսնում տ, փտխում: Ղաման յրա ա անում, հետնան քյնում ա. վեննան ա, թա հինչ տղան, վիրավորում ա: Արունը շոշոալավ փախչում ա: Եշում ա, տեսնում՝ էս օշափ քյնից, նի մտավ մին վըերու մաշ:

Իրեք ըխպըավ եր ըն կենում, քյանդիր-պեն յոր օնում, քյնում: Մեծ ախպորը քյնդիրավ կապում ըն, վեր մտնի: մին խրեդյ վեր իշնում ա, բղավում ա.— Վա՛յ էրից, վա՛յ էրից, վա՛յ էրից...

Տյուս ըն օնում:

Մաշնակն ասում ա.— Ես փորձիմ:

Սա էլ ա կյոուկյոում, թա՝ էրից: Տյուս ըն օնում:

Պիծինն ասում ա.— Մհենդի էլ ես նի մտնիմ: Բայց վեր ասիմ՝ էրից, տյուս չօնիք. պեց թողեք՝ թորը կը՞նկնիմ, կը՞նկնիմ:

Տի ել անում ըն:

Սրան վեր պեց ըն թողնում, թոմփ՝ ըղնում ա վըերեն աակը: Եր ա կենում, շոռ կյամ, տեսնում՝ մին տեղ մին ախճիդյ նստած:

Թա.— Պա տու հինչ միլլաթ ըս, վեր ստեղ ըս ընգալ, Շուտ քյնի, թա չէ՝ դերը կկյան քեղ կօափին:

Թա.— Ես զեան վախոդը ըըմ:

Թա.— Դե վեր տու տի հերոս ըս, մունք իրեք քուր ընք՝ էս դվերեն ճանկը ընկած, մինը ես՝ կյարմուր դեեն, մինը՝ Սե, մինն էլ՝ Միապակ:

Էս վարում Կյարմուր դեր կյամ ա, թա.— Ստգաս մարդառոտ ա կյամ:

Լիա խոսքը պիրանումը, կլոխը թոշում ա:

— Պա հինչ տեղ ըն մնացածը:

Էս ախճիդյ տեղն ասում ա: Սե դեեն կլոխն էլ ա կարում: Քյնում ա տեսնում Միապակ դեեն պլասաումը մին ախճիդյ նստած. հինչ ախճիդյ,

վեր իրքյնակեն ասում ա՝ տու տյուս մի կյալ, թող ես տյուս կյամ քու տեղ:

Էս ախճիդյ վեր էս տղեն տեսնում ա, ասում ա.— Տու հինչ տեղա յըս, շուտ քյնի ստղան, Միապակ դեր վիրավոր ա, քառասուն օր քոն պիտի ինի, երեսունինը քոն ա իլալ, մհենդյ եր կընալու վախտն ա. թող, քյնի, վեր եր կենա, քեղ կոլ կտաւ:

Թա.— Թող եր կենա, ես տրա հետ դործ օնիմ:

Լիա էտ վախտ եր ա կենում: Մահանք վեր ուրուր տեսնում ըն, կլխը ըն րղնում, վեր սահանցա մինը պիտի ապրե:

Թա՝ հու՞վ, մին խրեգյ ետնան կտեսնանք: Եը ըն կենում, ղաման քաշում, քյնում-կյամ, ուրուր տամ: Կարում լըն, թտ մինը մինին հաղթին: Վերջը, էս ախճիդյ մին պեն ա ասում: Թա հինչ ա ասում, մինակ տղան ա սկանում, կլխու ըղնում: Էս ըխճկան ծենը, խոսքը վեր լսում ա տղան, օդը էրկու էնքան իվիլանում ա: Թիում ա, լիա մին կըծկրակ ա տեսնում, մին էլ սատկած դեին սիպտակ կլոխր:

Էս ըխճկան յոր ա օնում, էն էրկու քուրերն էլ յոր օնում, կյամ վըերեն կոշտը: Ընդղան ծեն տամ, ըխպընեն կյամ ըն: Կյամ ըն, քյանդիրը քցում, առաջ մեծ քվերն ըն հանում, կտնտն՝ մաշնակեն:

Պիծինին վեր օղում ա թա հանե, ասում ա.— Եկ առաջ տու տյուս եկ: Ինձ վեր տեսնան, քեկ հնանական ըն, թուղլական ըն ըստեղ:

Թա.— Տի պեն չկա, տի օրենք չկա, առաջ տու րիդի տյուս կյաս:

Թա.— Դե լյավ, վեր տի յա, թա քեղ չհանցեն, կոշտտ էրկու էծ ա կյալական, մինը՝ սե, մինը՝ սիպտակ: Կնստիս սիպտակ էծնն, տյուս կկյաս լյուս աշխարհ: Սկը նստիս վուլ, թա չէ՝ կտանե քեղ սե տշխարհ:

Սում ա, քյնդիրավը կպտում, թա.— Տիք տվեք:

Տիք ըն տամ, հանում: Էս ախպերը սպասում ա, սպասում, թա հես ա քյտնդիրը կկյա: Էլ հինչ քյանդիր: Էնքան ծեն ա տամ, էնքան տպտապում ա, աշկերը մթնում ա, ծերքը քցում ա, տեսնում՝ էծու մաղեր: Էլ զոկում չի, թա՝ սե ա, սիպտակ ա, նստում ա:

Տու մի ասել սե էծին ա նստում: Սկ էծը սրան տանում ա, տյուս պերում սե աշխարհ:

Քյնում ա, սե ըշխարքում մին պառավ կնկան զոնաղ ըդնում: Ինքն էլ ծարավ, լսե՛ շատ ծարավ:

Ասում ա.— Մայրիկ, ճյուր չօնի՞ք, մին պատառ ճյուր ավեք:

— Չէ,— ասում ա,— մեր շենին ճյուրը ամսեկան մին դոնում տ ինում: Էն ա մեր ըխպըին

օխումը մին օշափ կա, ամսեկան մին ախճիգյ
ըն տանում, տամ ուրան, օտում ա, ճյուրը պեց
թողում, էքուց թագավերեն ըխճկանը հերթն ա,
պիտի տանեն տան, վեր օտե, ճյուր տա:

Էն մին օրը եր ա կենում, ինքն էլ քյնում:

Պառափն ասում ա.—Քյնումէր, օշափը բեղ էլ
կ'օտե:

Սա.—Զէ, պիտի քյնամ, տեսնամ էտ հի՞նչ ա:
Քյնում ա: Մին հըվուրան եշում տ, տեսնում՝
ըհր՝, թագավերեն ախճիգյը եկավ, սարքված, մին
պազնոս էլ կլիխեն տիրած: Էս ախճիգյը մինակ ա
ինում: Դե հու՞ սերտ կանե կյա օշափեն կոշտը,
վեր ուրան հերթը շի: Էս աղեն զաման ծերքեն
կյողլ ա կենում: Եշում ա, տեսնում, վեր ախճիգյը
մուտանում ա, օշափը ճիրին օխան տյուս ա
կյամ, ոեխը պեց, վեր ըխճկանը կոլ տա: Սա զա-
ման քաշում ա, կլոխը ծիվում, տեն քցում: Սրունն
ու ճյուրը խառնված քյնում ա: Էս ախճիգյը ծեր-
քը քսում ա, ըոնումը թաթախում ու տինում տղեն
գալվեն: Տղան սկանում ա, թա աա հինչ ա
նշանակում, թողում ա, կորչում:

Խարարը հսում ա թագավերեն: Թագավերը,
զե, ուրախտնում ա. Համ ախճիգյն ա ագատվալ,
համ էլ ճյուրն ա պեց ընգալ:

Հիխճկանը հրցնում ա.—Էն հի՞նչ տղա յար
քըդ ագատալ:

Թա.—Էս ա ես նշան օնիմ նրան մաշկեն:
Նշան լի, հունցը հիմա փեշաան ա:

Լոխճին հվաքում ա թագավերը, ախճիգյը շոռ
ա կյամ, լոխճին մաշան էա աղեն քթենում: Եշում
ըն, տեսնում՝ ըխճկտն տիրած փեշատն էլ յրան,

Թա.—Վեր տու էա լվոթոնը ինձ հմար ըրեր,
իմ ախճիգյն էլ բեղ, իմ թագավերությունն էլ:

Թա.—Զէ, ևս նշանած օնիմ, թա օգում ըս
ինձ լվոթոն անիս, ինձ տյուս տեր լուս աշխարհ:

Թա.—Ես կարել շրմ տա, րայց ստեղ մին
գմրուխտ դուշ կա, էս ա աասնրօթ տարե յա ճո-
տեր ա անում, ճոտերը կյամ ըն, մին քշեր օտում:
Թա հով ա օտում, կարում շի փոնե: Թա առ
քթար, բեղ տյուս կողիրի լուս աշխարհ:

Թա.—Հի՞նչ աեղ ա:

Թա.—Փլան, փլան տեղն ա:

Դե էտ փլան տեղը քյնացողն էլ ևտ շի կյամ,
Թաղավերեն օղածն էլ էտ ա: Նրա հմար, վեր էս
տղան թաղավերեն խոսքտն տյուս ա եկալ, րիս-
կանը յրան փսակվալ շի: Դե թաղավերը հի՞նչ ա
գյուղում, թա էս աղտն էլ ա թագավերու տղա:

Եր ա կենում, քյնում էս դումրուխտ դուշեն
հետան:

Քյնում ա, քյնում ա, աեսնում՝ իսկալես,
մին դուշու պյուն, մաշը ճոտեր, մարը կա վուլ:

Եշում ա, տեսնում՝ մին օխտը կլիխանե օխտը կյամ
ա. թա էտ ճոտերն օտե, Սա զաման քաշում ա,
օխտը հետ թիսում. ամեն մին թիսլով էս օխտը
պիրանան կրտկ ա թափում, բայց տղեն մհար՝
հետ Օխտը կլոխն էլ կտրում ա, քրտնքե մաշին
կորած, լիա տեղ պարտնց ըղնում: Պարանց ա
րդում. քոնը տանում ա: Էս վախտ էս ճոտերեն
մարը կյամ ա: Վեր սրան տեսնում ա, յրա յա
պրծնում թա սպանե, ճոտերը լյուգու վըն առնում
թա.—Սպանել մի, տա մեղ աղաղողն ա, մեղ
ուսողեն ինքյն ա սպանալ:

Վեր ասում ըն, նոր ա նկատում. վեր տղէն
տեղը լյավ շի: քոն ինիլու հետե հարմար շի: Հանց
անում ա, վեր տղեն լյավ, հանգիստ քոն ա ինում,
կշտանում, ղարթնում:

Թա.—Տու հի՞նչ մարդ րս. հի՞նչ տեղա եկար,
հի՞նչ լյավություն անիմ քեղ:

Թա.—Ինձ վեշ մին պեն հաջաթ շի: թա կարում
ըս՝ տյուս պեր ինձ լուս աշխարհ:

Թա.—Ես տյուս կպիրիմ: Միայն տու տաս
հատ վիճարու տմակ պեր, աասը կուպրուն ճյուր,
ես բեղ տյուս պիրեմ լուս աշխարհ:

Տղան քյնում ա թագավերեն կոշտը: Թաղավե-
րը սրան վեր տեսնում ա, մնում ա քար տեռած:
Տղան ասում ա, պատմում ա, թա հինչու հետա
յա եկալ:

Թագավերեն ասում ա.—Աշես լրա:

Տասը կուպրուն ճյուր ա տամ, ինը տմակ: Սա
հաշվում շի, պիրում ա, պեռնում դմրուխտ դու-
շեն: Թա.—Հինչ տեղ մին «ղա» անիմ, մին տը-
մակ կանիս պիրանես մաշին, մին կուպրուն ճյուր
կլցնիս:

Տի էլ անում ա: Մին գոնում էլ վեր «ղա» յա
անում, տղան եշում տեսնում՝ մին կուպրուն ճյուր
կտ, մին տմակ կա վուլ:

Պա հի՞նչ անե, հունց անե, զաման քաշում ա,
ուրան փափուկ տեղան կտրում, տամ դմրուխտ
դուշեն, ճյուրն էլ տամ:

Տյուս ըն կյամ լուս աշխարհ:

Վեր ա կյամ, շնորհակալություն-պեն անում,
վեր քյնի, կարում շի: Էս մին թահրավ, կղեղյի
տալավ քյնում ա, դուշը նկատում ա. թա.—Խե՞
կղեղյի յըս տամ:

— Վենս մինը խրեղյ թմրըալ ա,

— Թմրըել շի, եկ ստեղ:

Լյուգին աական տեղն մեսր տյուս ա օնում,
տնում տեղը, թեփուր քսում, սղանում ա: Ինքը
թուղում ա, քյնում:

Սա կյամ ա ուրան հոր տոնը, կլիխավը եկածը
լոխ պատմում:

Թաղավերը հինչ օնելոնե աամ ա սրան, թաղավորութունն էլ նհետը, իսկ էն էրկու ախպորը մին խրեգյ պեն ա աամ, վեր յոլա քյնին, Արան էլ փակում ա ուրան նշանածեն նհետ, վեր սպասում ար:

Փոքր տղան նսառմ ա հորը տեղը:

5. ԱՅՍՐԹՆՈՒԿ ԱԽՃԻԳՅՅ

Մին թաղավերու իրեք տղա ա իլալ: Թաղավերն ասում ա. «Տղերքս հասալ ըն, աահանց հըետե ախճիցյ պիտի օղիմ»: Պիրում ա, դե թաղավեր ա լի, ժողովուրդը կանչում, ժողովուրդը հվաբում պլատեն առաջը: Ժողովուրդ, է՛, շատ ժողովուրդ: Թաղավերը մին զուշ օնե, ասում ա՝ էտ զուշը պեց ըմ թողնելու, հուրը յրա վեր վրետը կենա, նրա ախճիդյը իմ աղորցը հետե օղելու ըմ, Հա, պիրում տ, հինչու վեր է, զուշը պեց ա թողնում, զուշը քյնում տ ուրան նաղիրին յրա վեր կյամ՝ թաղավերեն նաղիրին: Թա ասում ա. «Մըեծ տղես հետե նտ ախճիդյը ուղեցեա»: Մին էլ պիրում տ պեց թողնում, րտ էլ վաղիրին յրա ա վեր կյամ: Մնամ ա կուճի տղան: Կուճի աղեն համար պիրում ա պեց թողնում, աի մին քյոհնա զարաղամ ա ինում, հուրթը պիցիրան՝ կարեն մաշան, քյնում ա էա քյոհնա զարաղամեն հուրթնեն յրա վեր կյամ: Վել մինին՝ մարդկանց յրա, վեր չի կյամ: Հա, վեր չի կյամ: Քյնում ա թա. ռէս կյիժ ա՛, հի՞նչ ա, էս շանք ժողովուրդը թողած ըստեղ, քյնա զարաղամեն սրահեն հուրթին վեր կյամ՝: Քյնում ա փոնում ա փոնում, նորը պիրում, պեց թողնում, մին էլ ա քյնամ ընդեղ: Փոքր տղան ասում ա. «Հալբաթ էն ա էն տտնը, լի, զմաթիս, իմ նշանածաս»: Ժողովուրդը ցրկ ըն կյամ, քյնամ: Ցրկ ըն կյամ քյնամ, էն տղան քյնամ ա տոռնը պենում, տեսնում, էն ա մաշին մին սուփիրա պաղրաստած, սեղան, մաշը ամեն ինչ ուտելիքավ լիլը: Ասում ա. ռէս, էս հու՛ կնի պաղրաստած»: Բայց էն ա մին կյերթնուկ տանը մեշավը լոք-լոք ա անում: Ակսում ա էս սուփիրան հաց օտել: Մին լյավ օտում ա, սլրծնում, քյնում մին դալդա եղում: Ախր, էն կյերթնուկան կման էլ ստեղ պեն չի կա: Եղում ա, տեսնում՝ էն կյերթնուկը լոք-լոք ընելավ եկավ, եկավ ստուեն կշտեն հանվից, տեսուվ մին հուրի-մալադյ ախճիդյ: Ասում ա. ռէս լյա իմ նշանածս ա, լիս: Մտնում ա, թա.—Տու իմն ըս:

Թա.—Վեր քոնն րմ, քոնն րմ:

Ատեղ մինմիլանց կոլավն ըն ընդնում:

Թա.—Անումտ հի՞նչ ա:

Ասում ա.—Անումս Գյուլիարի ա:

Կյամ ա, հորն ասում ա.—Ա հեր, էն ա իմ նշանածս ընդեղ:

Թա. ասում ա.—Վեր նշանածտ ընդեղ ա, մին մըեծ զոնաղլը ընք սրբլական, վեր կյան ժողովուրդը օտին, խմին, քեփ անին: Թառասուն կյումաշ րմ մուրթելու, տու քյնալ բիդիս մին հանց զղղան պիրիս, վեր էտ քառասուն կյումաշը էտ զղղանա մաշին տըղվարի:

Քյնում ա նշանածեն կոշտր, ասում ա.—Գյուլիարի, պա իմ հարըս թաղավեր ա, —ասում ա,—...ասալ ա. կքյնիս, քու հներանց տանան մին հանց զղղան պիրիս, վեր քոասուն կյումաշը ըմ մուրթը-ական՝ մաշին տըղվարին:

Ասում ա.—Հասե, քյնի էն տանձուն տակեն վեննը կաց, ասե՝ մեծ աղի, կուճի աղին ասալ ա՝ էն կուճուր զղղանը քյեղ տա, պիր:

Քյնամ ա ասում, տամ ըն ուրան, պիրում, տամ ուրան թաղտվերեն: Ասում ա.—Հա, կարելի ա, Դե մհենդյ էլ քյնա, մին պեն էլ կա՝ էն էլ պիր:

Թա, ասում ա.—Վե՞րն ա:

Թա, ասում ա.—Քյնի, մի խալիշա կա, է՛, իմարշու կարպետ. էն էլ կալիրիս, հանցու ժողովուրդը վեր կյա, յրան տըղվարին:

Քյնում ա, ասում.—Գյուլիարի, մեկ էլ ասում ա՝ քյնա մին խալիշա պեր, հանցու ժողովուրդը կյական ա, յրան տըղվարին:

Ասում ա.—Վնաս չկա, քյնի էլ լհա ընդըղան ասե՝ մեծ աղի, կուճի աղին... խալիշան քյեղ տա, պեր, կուճի խալիշան:

Ասում ա, յոր օնում պիրում, տամ թաղավերին: Թաղավերն ասում ա.—Հա, դյուղ ա: Դե վեր էտպես ա, հիմա կանշում ընք ժողովուրդը՝ թողլուխ կյան: Տուք քյնամ ըք ծեր նշանածերը, ծեր հաները յոր օնում, կյամ, վեր հանցու քեփ ընք ըննական:

Տա՞նք քյնում ըն, ամեն մինը ուրան նշանածեն, ուրան հաները, զեմքուշը յոր օնում, քըլնում: Էս տղան քյնում ա Գյուլիարուն կոշտր թա.—Գյուլիարի, իմ հար ասալ ա՝ քյնի՝ հաներտ, նշանածտ, զեմքուշ եր կալ, եկ, վեր քեփ ընք ըննական:

Թա տսում ա.—Քյնի, էն տանձուն տական ասե. անպայման, ուրեմն՝ մեծ աղի, կուճի աղի, ամի՝ հաներն ա ինում, եկեք՝ ուրախություն ա մեր տտնը:

Սահանց յոր օնում, կյամ, Գյուլիարուն կոշտր: Հաները ասում ա, թաղավերեն աղեն ա ասում.—Գյուլիմ ըս հի՞նչ կա:

Թա ասում ա.—Հը՛:

Թա ասում ա.—Մունք վեր կյանք ընդեղ, դոնաղլը զումը, մըեծ ախպերտ յոր ա ուննական խմե, ասե. խմում ըմ իմ ծնողներես, իմ հայրիկիս, մայրիկիս կյենացը, այսինքն՝ թաղավե-

րեն, թագուհու կյենացը, վեր ինձ ամուսնացնում ըն, Քու մաշնակ ախպերն էլ այոր ուննական ասե, խմում ըմ թագավերեն, թագուհու կյենացը, վեր ինձ ամուսնացնում ըն: Վեր տու էլ ասիս, քրուսուն ճոխտ ըրկաթե տրեխ պիտի մաշիս վեր մեղ թենաս: Ասիս վուչ:

Ասում ա.—Դե լավ:

Հըվաքվում ըն տեղ, թուփ աեռնում, սահանք ուրանց նշանածերը պիրում ըն. տեսնում են՝ կուճի աղեն նշանածը լոխճան գեղեցիկ աւ: Նստում, օտում, խմում ըն, բեփը շարունակում ըն: Մըեծ ախպերը եր ա կենում, ասում ա.—Ես խմում ըմ, իմ հայր թագավերեն, թագուհու կյենացը, վեր ինձ ամուսնացնում ըն: Էն մաշնակ տղան էլ ա յոր օնում:—Ես էլ ըմ խմում, ասում ա,—իմ հայր թագավերեն, թագուհու կյենացը, վեր ինձ ամուսնացնում ըն: Էն փոքրն էլ ասում ա. «Պա վեր ես ասիմ վո՞չ, կարելի ա՞»: Ասում ա. «Զէ, ես էլ բիդի ասիմ: Յոր օնում շտեղ ասում ա.—Ես էլ ըմ խմում իմ հայր թագավերեն, թագուհու կյենացը, վեր ինձ ամուսնացնում ըն: Ղուզեր ըն տեղնում տահանք, լոխ թոշում, տյուս տեղնում տտղատ: Մնամ ըն ղարմացած ժողովուրդը Արգեն ցրե ըն կյամ ժողովուրդը. մին օր, երկու օր, վերջը քյնում ա գամըրշուն կոշար: Ախեր, հաներն ասից, վեր քուսուն ճոխտ ըրկաթե արեխ պիտի մաշիս, վեր մեղ թենաս: Դամըրշուն ասում ա.—Ինձ հըեաե ջերգին տրինե ըրա քուսուն ճոխտ:

Աս անում ա, պրծնում, մին ճոխար կյենում ա, մնացածը օսերը բցում՝ յալլա, ճանապարհ րդնում թինամ ա, մին ճոխտ արեխը մին տարե քաշում ա, մինչե մաշում աւ Փոլ ա կյամ, ասա էլ մին ճոխան ա կյենում, քյնամ: Էտ մին ճոխան էլ ա փոլ կյամ: Արդեն երկու տարեն քյնաց, երերինշինն ա կյենում, քյնում, աեսնում՝ իրեք դուզիշ ուրուր նհետ կովում ըն: Կյամ ա ասում:—Խե՞յը կովում ուրուր նհետ:

Ասում ըն:—Եղայր, դյուգում ըս հինչ կա՞: մեզ իրեք պեն օնինք, մունք լոխ մին պենու յրա ընք. նա ասում ա՝ իմն ա, նա ասում ա՝ իմն ա, մունք էլ իրեք ախպեր ընք:

Թա:—Հինչ պեն ա, ծեր պեները վե՞րն աւ:

Թա, ասում ա.—Էս սուփրաս վեր մտակում ընք, հիշտեղ մտակում ընք, ասում. ա սուփրտ, քյողանա կօղինք ամեն հինչը մաշին: Պղրաստում ա ամեն հինչը, օտում ընք: Էտ մինն էլ վըննաման ա, վեր մարդ հաբնում ա, ասում՝ քյանա կօղիմ, ասինք՝ թաքու, էն մամենաւն ուրան բցում ա ընդել, նիյ ա հացնում ընդել: Էտ էլ մին թասակ ա, վեր տինում ա կլինն, էլ ուրան տեսնող չի ինում: Հիմա, էն ախպերն

ասում ա՝ ես ըմ յոր օնում: Էն մինն ասում ա՝ ես ըմ յոր օնում, ես էլ ասում ըմ՝ ես ըմ յոր օնում: Հաա համար կուկ ընք անում: Հատե, մեր անգյալը տա յա:

Դե, ասում ա.—Էս ա՝ էս չուրան-քարը, էս յամաջն իկեր թոլ տամ: Հով վեր կարե ճելի փոնե, նրանն ա:

Թուլ ա տամ: Տահանք վազ ըն տամ քարին հեաան, սա՝ սուփրան ջուրումն ա տինում: Վըննըմաները կյենում, թասակը տինում կլինն, էլ ուրան տեսնում ըըն: Տահանք քարեն հետնան հնում ըըն, ետ ըն տեղնում: Կյամ: Վել մարդ կա, վել սուփրա, վել: թասակ: Ախեր, էն ա կոխեն վըննը կացած, տեսնում ըըն, տսում ըն՝ տեսեր կլոխնես հինչ պերավ էն շան վերթին: Մնում ըն մաթալ Դե սուփրան քյինից, վըննըմաները բյնից, լոփ քյնից:

Տա, էտ տղան, ասում ա.—Ա վըննըմաներ, քգանա կօղիմ Գյուլփարին հիշտեղ վեր կա, ընդեղ:

Տյուս ա պիշում մին օրիշ երգիր: Տեսնում մին քաղաք, էս քաղաքումը մին մըեծ պալատ, կողքեն էլ՝ մին օրիշը: Էս պլըտնեն մին հարուր մեաը հոռու ա մին մինի անաւ Ասում ա. տեսնաս էս հինչ պալատներ աւ Ընգեղ մարգիր ա ինում, սա ել՝ թասակը կլինան եր կալած, լի, մարդ աւ Ասում ա.—Էս հինչ պալատնե յա:

Ասում ըն:—Մին թագավեր եկալ ա, էս տիրերինչի աարեն ա, մեզ հրաման ա րրալ, երկու պալատ ընք շինալ: Մին ախճիգ օնե, ասալ ա՝ եկ բեղ մարգու աամ, ասալ ա՝ քառասուն արունանը ետն ըմ ես մարզի քյննական, օգում ըըմ: Մնողներեն ա ասալ: Հիմա, վեր ամալ չի եկալ, մին պալատ ընճըկանը համար ըն սարքալ, մին պալատ էլ ուրանցն աւ Հիմա տի դրադ պահում ըն, վեր ուրան ասաներեն անգում չի օնում: Հա, Գյուլփարին ա, ե՛:

Վեր տի յըն տսում, թասակը տինում ա կլինն, ծածկվում, ասում ա. «Քրդանա կօղիմ, տ վըննըմաներ, Գյուլփարին հիշտեղ վեր կա, ընդեղ հացնիս:

Էն պալատը վեր կա, ընդեղ ա տանում, տեսնում՝ Գյուլփարին սուփրա, հաց-զատ քցած, վեր օաե, սերուն-զաշանգ, քյնում ա կլինն վըննը կենում: Գյուլփարին օաում ա, տեսնում՝ մինը, ախեր, ուրան ըմանան օաում ա, ուրվամ չի Արա, ասում ա,—Էտ հուկ աւ Ասում ա.—Տու հովեր վեր ըս, ես քյեղ ըմ կյլական, տյուս եկ տեսնամ, տու հուկ ը՞ս:

Թասակը կլինան յոր ա օնում, աեսնում՝ ուրան նշանածը: Պոոշտի ըն անում իրար նհեա:—Պա տու հունց եկեր, առ քուսուն տըոնանը ետը բիգիր

կյալ, իրեքինչի տարում եկալ ըս մեղ քթալ...
տես-տեն:

Ասում ա.— Ես, էն ա լլտվ օժ օնիմ, նանավ
եկալ րմ:

Ասում ա.— Ծնողներս էն ըն էն պլտտումը,
քյնամ նահանց ասիմ, տեսնամ՝ հի՞նչ ըն ասում:

Թիում ա, թա.— Եվ հայր, և մայր, լի վեր իմ
նշանած կյա, ինձ կտա՞ք իմ նշանածիս:

Ասում ըն.— Քու նշանածը քառասուն տըռնա-
նը ետն ա կյալու Շիծաղում ըն:

Թա.— Պեն ա, լի, վեր կյա, կաա՞ք:
Վերջը, լի, ասում ըն.— Հա, կտանք, վեր
կյա:

Կյամ ա, ասում, դե՞ սաի ըն ասալ: Սերուն-
դաշտնգյ թասակը կլխան յոր ա օնում, քյնու
պլասեն տոռնը թակում:

Թա, դե.— Հա, մտեք:
Մտնում ա, տեսնում ըն՝ համտն տըղան:

Թա, դե.— Տու քառասուն առնանը ետնը բիդի
կայիր, առւ ըստեղ հի՞նչ ըս անում:

Ասում ա.— Դե, ես օժ օնիմ, եկալ ըմ, լի, իմ
օժս էլ աի ա:

Փիրում ըն ըննենց անին, վեր մին էլ կուց-
նին աա.— Քեզ,— ասում ըն,— դարկում ընք մին
տեղ, աասը տարե քյննակտն ըս, աասը աարե՝
կյաս, Կընաս, թա ընդրդան մին խարար պիրես.
պերեր, մեր տիմիդյը քեզ ընք տալու, թա պերեր
վուշ, ուրեմն՝ քո կոնդր կտրելու ընք:

Ասում ըն, թա հինչ րիդի անե:
Ասում ա.— Դե, լլավ,— ասում ա,— Հա:

Քյնում ա, քաշվում դրադ, վըննըմաները կյե-
նում: Թասակը տինում կլխեն, ասում ա. «Ա վըն-
նըմաներ, էն հիշտեղ վեր ասում ըն, է՛, ուրեմն՝
քյնաս ընդեղու: Սա լհա տշկը ճպում ա, սրան
մտցնում ա մին առն, մին հայաթ, մըղակը թա-
կում ա, մինը տոռնը պենում ա, սա մտնում ա
ստեղ: Սա էն մարդն ա, վեր մին խուրմու կորի-
գավ մին ծիու յհաը ա կարում: Կարում ա, պըրծ-
նում, կուարապում, փշրում, կրակ տամ:

, Ասում ա.— Էտ խե՞ տի ըրեր:
Ասում ա.— Այ տղա, արսը ը՞ս, իմ սեկը-
ար չի կարելի քեզ ասած:

Ասում ա.— Զէ, ասել րիդիս:

Վեր ստիպում ա, թա՝ ասել րիդիս, ասում
ա.— Եկ: Դե, լլավ եկ: Եկ ստեղ, քե նշանց տամ:

Մին տոռնը պենում ըն, տեսնում՝ էն ա մին
հացու ստոլ, մին մարդու կարկած՝ տիրած ընդեղ,
մին կնեգյ էլ ընդղնըյեր դիք վըեաը:

Թա, ասում ա.— Էն իմ կնեղյս ա, էն էլ՝ իմ
կնգանս սիրածն ա, հիա՝ մին կոպալ էլ կշտեն ա,
նանավ կլխեն թիում ըմ, կնեգյս ընդեղ դինքյը
կշում ա:

Կուպալավ թիում ա, կնեղյը ստի, ստի, ստի
ա անում*: Մին էլ, հինչու վեր է, ասում ա.— Տե-
սե՞ր:

Ասում ա.— Հա:

Ասում ա.— Դե, եկ ստեղ:

Տանում ա մին տեղ, ստի պենում: Պենում ա՝
մին խոր վեր ա: Ասում ա.— Մաշինը հի՞նչ ա:

Ասում ա.— Մարգի կլխներ ա:
Էն ժածկում, մին էլ՝ մին օրիշը պենում: Թա.—
Էն հի՞նչ վեր ա:

Թա.— Մարգկանց ջամդաք ա նիհ տվտժ,
Վեր տի ասում ա... չի՞ վեր էտ թաղավերեն
հրտմանավն ա տի կուտորած, ընդեղանս ասում
ա.— Տու տեղ կաց, քյնամ՝ մին տեղ կա, կյտմ:

Սա հենց օղում ա տյուս կյա, ըրդան կապե,
սա թասակը կլխեն ա տինում, վըննըմաները կյեցն
ա, կոփկավը այուս ա կյամ, դե, աեսնում չի,
հա՞՝, դե, թասակը կլխեն ա՝ աեսնում չի, լի: Ըն-
դեղան տյուս ա կյամ, ասում ա. ռկետը կենամ,
գե ինքը ինձ ասնըլական չի, տեսնամ՝ էս հի՞նչ
պեն ա:

Տեսնում ա իրեք խնըլավուր, խնըլանեն եր
կալած, կյամ ըն, հյամ ըն վեր էն տղեն մոր-
թին, քցին ընդեղու: Տոռնը պենում ըն, տեսնում,
պու՞... պա՞՝, ստեղ էլ մարդ չկա: ռՊա՞հ, —
ասում ա,— մեր սեր ու սեկըտը տյուս եկավ լլուս
աշխարհք: Էս լոխ իմացեն, էս հունց ա տոնըլա-
կան, ես թագավերեն պաղասխանը հինչ կտա՞մ,
կլխս կտրելու ա...»:

Տրան տի թողում ա.— Ա վըննըմաներ,— ա-
սում ա,— քղանա կողիմ՝ Փարուն կշտեն, Գյուլ-
փարուն կշտեն:

Քյնում ընդեղ, դե՝ ստի, ստի...
Ասում ա.— Դե, քյնի թաղավերեն կոշտը:

Քյնում ա թաղավերեն կոշտը:

Ասում ա.— Հը, քյեցա՞լ ըս:

Թա, դե, ասում ա.— Հա:

Պա, էտ հունց քյեցեր-եկեր, դաթը մին օր
քաշալ չի:

Թա, դե, ասում ա.— Քյեցալ ըմ, լի:

Թա, դե.— Ընդեղեն սերն ու սեկըտը կկարի՞ն
ինձ ասիս:

Թա, դե.— Հա:

Թա, դե.— Հի՞նչ ա լլալ, ասե:

Թա, ասում ա.— Մին մարդ կա, խուրմու կու-
րեղավ ծիու յհար ա կարում, կուտրապում, կրակ
տամ, չրում, մին էլ...

— էլ հի՞նչ կա:

* Տանըլում է (Ծ. Բ.):

— Քյեցալ ա, էրկու վեր պեց ըրալ. մինչ
կլինե յա՝ կուտորած մարդկանց, նիյ ածած, մինն
էլ հանգանքն ա ընդեղ ածած:

թա, ասում ա.— Հասե, սաի:

— Ուրեմն՝ էն ըս գյիդաս: Ախճիգյա բեզ տվեւ:

Պիրում ա՝ թագավերության կեսը ասամ մին
պալատում սահանք ապրում ըն, ուրանք էլ՝ էն
մին պալատումր: Նահանք ընդեղ ըն ապրում,
սահանք՝ սաեղ: Տանտվ էլ վերջանում ա:

6. ԹՈՒՐԾԹՅԱՄԲԻ

Մին թագավերու մին աղա երեխա ա ունենում,
Տա կողդից՝ ուրան անդից, մսի թուր ա ինում...
մսից, է՛, մսիցը թուր ա ինում, արա համար էլ
անունը ախում ըն թուրությամբի: Էա թագա-
վերեն տղեն անունը ախում ըն թուրությամբի:
Էա թուրությամբին կյամ ա հասակը առնում ա,
մին՝ աասնօթ, աասնինը, քան աարեկանումը
աա, երաղումը սիրահարվում ա մի տղիկա հեա,
էտ աղջկան անունը Ոսկեծամիկ. մի ուրիշ երդ-
րում, մի ուրիշ թագավերու աղջիկ: Էտ որ երա-
զում սիրահարվում ա՝ ինչպես Աշըդ Ղարիբն ա
սիրահարվում Սանամի հեա, էտ տեսակ ա ինում,
աղջիկն էլ ընդեղ ա ըրազումը թուրությամբուն
նհետ սիրահարվում: Սիրահարվում ա, մի բիշ
ժամանակ անց ա կենում, աա մոռացություն ա
աամ, լի, իրան համար, վերջը, իրան դործը շա-
րունակում ա:

Հունց ա պտահում, մին օր, մին պառավ կնեղյ
թուրությամբուն փողոցումը պտահում ա, ասում
ա.— Թուրությամբի, զյուղում ըս հինչ կա. մին՝
երգիրում,— ասում ա,— մին թագավեր մին աղջիկ
ունի, անումը Ոսկեծամիկ, լյավ քեզ սաղական
ա, առու բյնա նրան ճարի,— ասում ա: Ինչքսն
թագավորսթյուննե, կառավարություննե արա հոր
հետ նովում ըն, էա աղջկան ու որի չի տամ: Հունչ
ա զյուղում, հինչքան փահլվաններ, զներ, կյամ
ըն, կովում ըն, պեն չի այուս կյամ, ախճիգյը տի՛
սաղ-սլամաթ, մնում ա:

Տա վեր էտպես ասում ա, րիգան հիշում ա
իրան արադը, վեր հենց էտ աղջկան ա աեսալւ
կյամ ա հորը, մորը, ղե, մին մադար տղան ա
ինում, թա, ասում ա՝ էսպես, էսպես... ևս բյեցնէ
Հարը հիշքան անում ա, մարը հիշքան անում ա,
չէ, ասում ա,— ևս բյնալ րիգիմ, էտ ախճկանը
ճարիմ: Ասում ա ու ճանապարհվում ա:

Հանապարհվում ա. շատ ա բյնամ, խրեղյ ա
բյնամ, տեսնում ա՝ ճանապարհին, մին ծառի
տակին մին մարդ նստած ա: Էտ մարդի հեա բա-
րեկում ա, բարեն առնում ա, պրծնում, կտնը

չարցնում էտ մարգիցը, ասում ա.— Տու որտե՛ղ
ես բյնամ:

Ասում ա.— Ճանապարհորդ ըմ, լի, ճանա-
պարհ ըմ բյնամ:

Թա, ասում ա.— Ես էլ ըմ. կակրաղ, ճանա-
պարհորդ, լի, մեկ շինինք էրկու ինինք... Ասե,
աեսնամ միայն, բեղ որեէ արհեստից-պենից
ունե՞ս, թա՝ չե:

Թա, ասում ա.— Ես ոչ մի արհեստ չունիմ.
միայն լյավ ճանապարհ բյնող ըմ: Ուրեմն՝ եթե
մին օրիշը աաս օր ա բյնում էտ ճանապարհը, ևս
մի օրումը կրյնամ:

Թա.— Տրանից լյավ պեն կլինի՞: Քեցենք:

Ասում ըն, էրկու հողավ ճանապարհվում ըն:
Շատ ըն բյնամ, խրեղյ, բյնամ ըն, տեսնում՝ մին
ծառու տակե մին մարդ էլ ա նստած, հանգստա-
նում ա: Պարիօր ըն տամ, աստծու պարին, էտ
թուրությամբի աղան հարցնում ա. Թա, ասում
ա.— Որտե՞ղ ըս բյնամ:

Թա.— Ճանապարհորդ ըմ, լի, բյնամ ըմ էտ
ճանապարհավը:

Թա, ասում ա.— Քեղ մին որեէ արհեստ-դտտ
ունե՞ս:

Թա, ասում ա.— Ինձ արհեստ չօնիմ, բայց ևս
աստղագյեա ըմ,— ասում ա.— մին որեէ մարդու
ասաղ ծովի-պեն անի, ևս հասաւատ զյուղում
ըմ, լի:

Թա.— Դե, պա, արանից լյավ պեն կլինի՞, էր-
կու հոդի շինինք, իրեքն ինինք:

Միասին ճանապարհվում ըն, բյնամ, Շատ ըն
բյնամ, քի: ըն բյնամ, էլ լճա աեսնում ըն՝ մի
ծառու տակեն մի մարդ նստած ա: Քյոնում ըն,
մուանում, բարեկում, բարեն առնում, նսաում,
հանգստանում, մհենդ էտ մարդին անա հրցնում
ա թուրությամբին, ասում ա.— Քեղ, ստի, մին
որեէ արհեստից-պենից օնի՞ս:

Ասում ա.— Ինձ արհեստ-պեն չօնիմ, ևս ծո-
վին իրեսեն հանց կլողանամ, վեր ծովին տակին
մին ասեղ էլ լինի, կհանիմ:

— Պա,— ասում ա,— տանա լյավ պեն կի-
նի՞: Իրեք հոդի շինինք, շորսը՝ ինինք:

Բյնամ ըն, Տահանք բյնամ ըն, Շարունակում
ըն ճանապարհը, կյամ ըն հասնում մի ծմակու,
կշում, աեսնում՝ էտ ծմակումը լյավ, ղեղեցիկ
աներ շինած, շորս անդյունը հասար բաշած,
զրդան յրան ըրած... Էտ թուրությամբին հնդե-
րունցն ասում ա.— Տուր ըսաեղ սպասեցեր, ստ
երեկում ա վեր զների աներ ա, ևս բյնամ մի զյի-
դամ:

Էտ հնդերունցը թողում ա բաեղ, մենակ
բյնամ, մտնում հայաթիւ: Հյաթումը մին անե մին
հովսու ա ինամ, շար հովսու, լի, հիրավ լիրը,

տեսնում ա՝ մին ըխճկա նկար ընդած ա էտ հովուգեն մաշին, ճիրին իրեսեն։ Ստի եշում ա, ասենում, ակուշկավը ընդած՝ մին գյեղցկուհի կնիկ ա, ասում ա. — Այ տղա, այ տղա, պա, առ վախում չը՞ս, բատեղեք հի՞նչ գործ օնիս։

Թա. — Հինչ ա՞ պատահալ, քույրիկ։

Թա, ասում ա. — Ախեր, երեք գլխանի ղենն առն ա սա, ամարաթն ա, լի։

— Ախեր, հիշտեղ ա՞ էա երեք զիխանի գեց։

Ասում ա. — Քյեցալ ա վերսի, էս սհաթիս կյալու ա։

Ասում ա. — Տու լափ արխային կաց։

— Չէ, ասում ա. — տու րիգի թագնվիս Ասինքը վեր թագնվիս էլ, նա մարգու հոտը գյուղամ ա, ավելի լավ տ փտիեր, պրծեր։

Ասում ա. — Ինձ փախչիլը-պենը հարկավեր չի, միտյն ասի, տեսնամ՝ որտեղից ա կյալու դեր։ Կյալու թուշն ա ինձ հարկավեր։

Ասում ա. — Այ, էս կողմավը։

Քյնամ տ, տեսնում վերս ա, լի, տուաջն ըրած, մին կազնի ծառ պուք տված, օսեն տիրած, կյամ ա։

Էա տղան՝ թուրությամբին, քյնամ ա խրթնրցնում վերսի հիյվըններին, էս գեց կղնվում ա, ծառը վեր քյում, կյամ, վեց թուրությամբուն հոփ տա, կոլ տա, վեր կյամ ա մուտանում, էս թուրությումբին կողքիցը թուրը հանում ա, վեր թիում ա, էտ կլոխները իշեքան թուում ա: Կլոխները վերցնում ա, պիրում ա, տամ էն կնդանը, տսում ա. — Կա, հասե գլին կլսները։ Մհենդյ տրիտիին ը՞ս, վեր սպանալ ըմ դին։

Թա. — Հտ, վեր տի տ, ես՝ քեղ, տու ինձ, — ասում ա, — միտսին ապրինքը։ Է՛՛, վըսկին, տրծաթը թափտծ, տները-պենը, հինգ թագտվերի կտըղություն կա ստեղ։

Թա, ասում ա. — Ինձ հարկավեր չի, ինձ նպատակ օնիմ, — ասում ա, — ես քյնամ ըմ իմ նպատակին, բայց ինձ հնգեր օնիմ, — ասում ա, — կպիթիմ, քըգ նհետ կտմուսնացնիմ, ես կթողիմ, քյնամ։

Քյնում ա հնգերունցը վերցնում, կյամ, էն սովմա վեր պտտահում ա՝ էն շատ ճանապարհ քյնողը, թա ասում ա. — Տեսնում ը՞ս, էս կնեղը։

Թա. — Հա, տեսնում ըմ։

— Տամ ըմ քեղ, միասին տուք ապրեք, էս հարստությունն էլ, եշի է՛, մին թագավերու կարողություն ա, գեղենն ա լյալ, մհենդյ քունն ա, ապրե, մունք մեր ճանապարհը շարունակում ընք։

Տըան թողում ա ըտեղ, պտտեն մի մեխ ա թիում. — էս մեխը, — ասում ա, — եթե տեղիցը շարժվի, առ իմտցի, վեր ես նեղ տեղ ըմ։ Եթե

կյաս հասնիս իմ հարայիս, կկյաս, եթե հասնիս վուշ տերը քեղ հետ, էտ լոխ քեղ տվենք, մունք քյնամ ընք։

էտ իրեք հոգին շարունակում ըն ճտնապարհը, էլ լհա քյնում ըն բիգի ծմակը, էլ լհա՝ նույն ֆորմի. աեղ էլ հենդյ կլխանի գեն ա ինում, էլ լհա էտպես մի գեղցկուհի կնեղյ։ էտ գեիա էլ ա ըսպանում, էտ գեղցկուհուն էլ պիրում ա, ասաղագնտին աամ. աԾուք ըսաեղ ապրեք, մունք ճանապարհը շարունակում ընք։ էրկու հոգտվ քյնամ ըն. էլ լհա աի մին պենու հանգիպում ըն, սա էլ օխաը կլխանի գեն ա ինում, էլ լհա մին գեղցկուհի կնեղյ, էս գեին էլ ա ըսպանում, էլ լհա նույն ֆորմի. կողքեն թուրը հանում ա, մին գոնում յրա պիրում, օխտը կլոխին էլ թուում ա: Հտեղ էլ պիրում ա էս գեղցկուհի կնեղյն էլ աամ ճյուրում լոգ ավողին, թա, ասում ա. ուս էլ քեղ ըմ տամ, ես մինակ քյննական ըմ։ էլ լհա պաան մին մեխ ա թիում, ասում ա. աԵթե էս մեխը աեղիցը շարժվի, ուրեմն՝ ես նեղ ըմ լինելու, կյաս, կհասնիս՝ կհասնիս, շես հասնի՝ շես հասնիս։

Դե էն ասագագեաը աստղերն յրա գյուղում ա, նրան մեխ-պեն թիում լի։ Ստում ա. աԱստղավ կգլիգաս, կկյաս, կկյաս վուշ կյաս վուշ, թողում ըմ քու սովիստին։

Ինքը, մինակ, ճանապարհը շարունակում ա: Շարունակում ա, քյնում ա, հասնում ա էտ թագվերի քաղաքը, հիշտեղ վեր ախմիդյն ա, տեսնում՝ քաղաքը ավերակ ըրած, մարդ շկա, պեն շկա, բայց մագաղինները ըպրանքավ լիգյն ա, քյուշեցում ապրանքը թափած ա, բայց մարդկություն շկա, է՛, մին մարդ էլ շկա էտ քղարում։

Քյնում ա, մտնում թագտվերն պալատները, էտ պալատներում ը Ոսկեծամիկը կյեղած ա ինում։ Ոսկեծամիկն էլ ա սպասում արան. վեց մինին խոսք լի տված, աի ըսպասում ա թուրըթյամբուն. Սա վեր մտնում ա թագավերն պալատները, ման ա կյամ, էտ Ոսկեծամիկը կյեղտծ տեղան տեսնում ա, վեր մին տգա եկավ, պցիրացավ։ Տա իսկույն գյուգում ա, վեր թուրըթյամբին ա: Ստի եշում ա, տեսնում, վեր թուրըթյամբին ա, տեմաց ա տյուս կյամ։ էտ թուրըթամբին վեր արա պաակերը տեսնում ա, օշը քյնում ա: Ախմիդիգը տյուս ա կյամ, ստա օշը տեղն ա պիրում, սաեղ ուրուր պտահում ըն, տրանց սիրահարությունը մհենդյ իսկականից շարունակում ա: Էն շմեն ըրաղում ըն իլալ, մհենդյ էլ արաղ-մարաղ շկա, ուրանք ըն ուրուր աեմաց։ Սկսում ըն տեղ՝ էտ քագաքում ը, իրար հետ ապրելը։ Մինակ ուրանք ըն, երկու հոգի ըն, մարդ-պեն շկա։ Միասնա-

մանակ բուեղից տյուս ըն կյամ, քյնամ ըն, վեր-
շապես, ուաելը, խմելի ամեն հինչը ճարում ըն,
պիրում: Մին օր... ինչպես թարու քաղաքը ծո-
վեն կողքեն ա, համան էտ քաղաքն էլ՝ էն ա
ինում ծովեն կողքումք. ասում ա.— Քյնանք ծո-
վեն մեջը լողանանք:

— Պաժալուստա:

Քյնամ ըն, ծովը մտնում, այուս ըն կյտմ,
հանգստանում ըն, էտ Ոսկեծամիկը տեսնում
ա՝ իր մաղան մին հատ ճիրի իրեսին ա մնացալ
վեսկե ա տրան մաղերը, ախեր:

Ասում ա.— Թուրբթյամբի, մազս, տեհում ըս,
մնացալ ա ճիրին րեսին, հանվիր, քյնա մազը
քաշի պեր:

— Աա՛հ, մին մաղ ա, լի, մնացալ ա՝ մնացալ
ա, հի՞նչ ա վեր:

— Զէ՞— ասում ա,— էն մազը մեր կլոխը
խաթա... խաթա կպերի:

Ասում ա.— Վեշ մի խաթա. հուր անա՞ ըս
վախում, էն ըմ ըստեղ:

Թա ասում ա.— էս մին պեն ա, վեր թեղ ասա-
ցի. էս մազը մեր կլոխն մին խաթա ա պերելու
վերջում ասում ա. աՄարդ ա, լի, շի լսում,
շի լսումք թայց Ոսկեծամիկը ամեն պեն զլու-
դում ա, իսկ սա՝ թուրբթյամբին, ամեն պենա
մհալ շի տինում:

Վերջը, էտ մազը ճիրի իրեսավը անցնում ա
դեպի Պարսկաստան. ըտեղ ծուկուն փոնողները
թուու քաշում. ըն, աեսնում՝ թուուն մաշին մին
վեսկե ծամւ: Մին պառավ յոր ա օնում տանում,
տամ թաղավերեն, ասում ա.— Թագավերն ապ-
րած կենա, Ոսկեծամիկը էն ա սաղ. ծովումը լը-
ղացել ա. մազը եկալ ա, տյուս եկալ ըստեղ. էս
աւ Համին էն քաղաքումք տա մինակ, — ասում
ա, — ապրում ա, Սաղ աւ:

— Պա, հունց կինի, — հունց շինի, հու-
կինիս:

Թա.— Ես կրյնիմ, ագավիմ, պիրիմ,

Ասում ա.— Եթե պիրս, քու կշոավը մին
վեսկե կատամ:

Ասում ա.— Կյավ:

Էտ պառավը եր ա կենում, լողկա ա նստում,
կյամ, տյուս կյում էտ քաղաքը: Էտ ավերակ քա-
ղաքը, թաղավերեն քաղաքը: Քյնամ ա, աես-
նում՝ մարդ շկա, պեն շկա, մին պատի տակին
նստում ա, մեծ կնիկ ա, լի, հասակով, մին պա-
ռավ կնեղյ ա, նստում ա, տեսնում իրիկնաղեմին
էտ վըսկեծամիկն ու թուրբթյամբին տյուս ըն
կյամ տեղեք՝ զրունելու, լի, կյամ ըն, տեսնում
էտ պատեն տակեն մին աղքատ կնիկ աւ

— Այ կնիկ, ըստեղ հի՞նչ կործ օնիս, հո՞վ
ըս, հի՞նչ ըս, ըստեղ մարդ շկա, ինսան շկա...

Ասում ա.— Ես. ըստի մին գմբախտ կնեզի ըմ.
լի, եկալ ըմ տեսալ՝ մարդ չկա. ինձ տարեք ձեզ
մոտ.— ասում ա,— ես ինչպես ծեզ մար. ծեզ
լյավ դուլըդ կանիմ, ծեր հացը-ճյուրը կպադ-
րաստիմ, շորը կլվանամ. ամեն հինչը կանիմ ձրկ
համար:

Ոսկեծամիկն ասում ա.— Բորա ուազ ըրա.
քյնա:

— Խե՞, հինչ ա՝ ըննական էս կնիկը մեզ:

— Քեղ ասում ըմ՝ տա լյավ կնիկ շի, ուազ ըրա.
թոկաց անց կենա, քյնա, ծեր ծմբելիքը ըսե-
ցե, պրծե, մնացած՝ տու ըս գյուղում:

Էտ կնիկը յոր ըն օնում, տանում ուրանց տո-
նը: Էտ պառավ կնիկը աւանում ըն ուրանց տոնը:
Սա, տրանց մի՞ն դուլըդ անում. էնպէ՞ս լյավ
ծառայում ա. հացը, ճյուրը, ամեն օր վենները
լյանում, լըդցնում, տինում ա տեղումը՝ ինչպես
մար: Տըանց էրկուսին էնպէս լյավ պեն ա ցույց
տամ, վեր հավատան, լի, ասին՝ տրանմանը շկա.
հորից մորից էլ ա հա լյավ: Էտ պենները ցույց
տալուց հետո, մի օր վեր Ոսկեծամիկը տյուսու-
մը ըզրաղված ա ինում: ինքը մտնում ա թուրու-
թյամբու մստր. թա ասում ա:— Թուրությամբի.
էսքան թագավերները կովալ ըն, գները, փահ-
լըգաններ ըն եկալ, ոչ մեկը շի կարողացաւ Ոս-
կեծամիկին տիրանա: Տըա հոր կարողությունը
ունիշտոծիտ ըն ըրալ, քաղաքը ավերակ զարձ-
րալ, ոչ որ շկա. պա թեղ էտ հի՞նչ ում օնիս,
հունց կարողացար ակրանաւ Ոսկեծամիկին, ծո
օղում ըմ քու սեկրետր իմանամ:

Ասում ա.— Մայրիկ, իմ սեկրետր կս թուրն աւ:
էս թուրը, — ասում ա,— եթե ըստեղից տյուս կյա,
ես ինքս՝ մին մեռած մարդ ըմ: ծիշա ա մեռնել
շրմ, թայց մի նափաս ա մննական՝ քյնայիս-
կյայիս:

Հետո, պառավ տու պառավ, ըսպասում ա,
մին քանի օր վեր անց ա կենում, մին օր տեսնում
ա, վեր Ոսկեծամիկը այուսումը զրագիւծ տ,
թուրթյամբին էլ րոն իւած ա, քյնաւ ա էտ
մըս թուրը հանում, տանում, քցում ծավին մա-
շը, ետ տեսնում, կյամ: վեր թուրը հանում ա,
թուրթյամբին էլ տեղան տուրուփ եկողը շի՝ վկա-
ղու նման ընդեղ վեր ընդած ա, մին նափաս տ
աեղը, վեր քյնում ա, կյամ: ինքն էլ զտնավար
պատով ա ինում, լի, խտառում ա Ոսկեծամիկին,
պիրում զողկա նսացնում, տյուս պիրում իրանք,
հոյնում թաղավերեն, թա:— Ոսկեծամիկը պերալ
ըմ:

Թաղավերը տրան կշոավը մին վեսկե տ
տամ, թա:— Էտ քու վեսկեն, եր կալ, քյնա:

Մհենց էտ Ոսկեծամիկին թաղավերն ասում
ա.— Քեղ տղես յըա փսակելու ըմ:

Ոսկեծամիկն ասում ա.— Էլինչ շօնիմ, րայց
միաւն տասը օր ինձ ժամանակ տո, տաս օքանը
և տոնը կփսակիս:

Թա.— Լյավ, հինչ ըմ ասում:

Պիրում ա տրան ծառայողնե-պեն նշանակում,
վեր տասը օր զուլըդ անին լիավ:

Մհենգյ խոսքը տանք թուրբթյամրու ընկերնե-
րին, էն՝ շատ ճանապարհ քյնողը, եշում ա աես-
նում՝ մեխը տեղան տուրուր ա եկալ, շարժվալ ա.
եր ա կենում, ճանապարհվում: Աստղագետն ել
և շում ա տեսնում՝ թուրբթյամրու աստղը խավա-
րած ա, տա էլ ա ճանապարհվում: էն ծովեն մաշին
լող տվողն էլ, եշում ա, տեսնում՝ մեխը տեղան
շարժվալ ա, ասում ա՝ թուրբթյամրին նեղ տեղ
ա... աա էլ ա ճանապարհվում: Տրանք իրեքն էլ
կյամ ըն, մին տեղ ուրուր հանդիպում: Աստղա-
գետը տահանց պիրում ա, տյուս պիրում էտ քա-
ղաքը, հիշտեղ վեր թուրբթյամրին ա: Պիրում ա
լա քաղաքը, աստղերեն յիշիլավ, տեղը որոշիլավ
կյամ ըն, տեսնում՝ թուրբթյամրին էն ապակած
ա, րայց տրա մըսե թուրը տեղը չի: Աստղագե-
տին ասում ըն՝ մի գյիգա թա տրա թուրը որ-
ակ՞ղ ա: Աստղագետը մտիկ ա անում, թա՝ տրա
թուրը ծովումն ա: էն ծովում լող տվողը քյնում
ա, մտնում: ման ա կյալիս, ման ա կյալիս, տյուս
ա կյալիս, ասում ա:— Զկա ծովումը:

Էտ աստղագետը ասում ա.— Նորից մտիկ
արա, լյավ մակիկ արա, ծովումն ա, տես որակ՞ղ
ա: Ես աեսնում ըմ, վեր ծովումն ա:

Մեկել ա մտնում, էլի չի կարում, տյուս ա
կյամ ասում ա:— Զկա, լի, չկս:

— Լյավ մտիկ արա,— ասում ա,— ես աես-
նում ըմ վեր թուրը ծովումն ա:

Մին էլ մտնում ա, աեսնում, ինգի, քըերծեր
ա, է՛, քարեց-պեն: Մհենգյ, ընկած էտ քըերծերն
ա ման կյալիս: Ման կյալավ, ման կյալավ, ման
կյալավ, կյամ ա, տեսնում ստի մին ճեղք ա,
թուրը մեջը ընգած ա: Ճարում ա, ծերքին տյուս ա
կյալիս, թա,— Հսե, թուրը ճարալ ըմ:

Պուրում ա, տինում տեղը, թուրբթյամրին լոք
ա տամ տեղը նստում:— Պա՛հ, պարե, պարի օր,
էտ հի՞նչ պեն ա, հի՞նչ նազլ ա, յաղու՞ղ եկալ
ըք, ա՞ա, հի՞նչ ա պտահալ ժեգ, մի շուտ պատ-
մեք, տեսնանք... աիեր,— ասում ա, — գյուգում
ըք, թա ինձ նհետ հինչ ա լյալ, հինչ ա պտահալ...
մին տեսեք Վըեսկեծամիկը ըտե՞ղ ա, մին պա-
ռավ կնեղյ էլ կա, տես կենում ա, կանչեցեք,
կյա:

— Ա՛, — ասում ա, — հի՞նչ Ոսկեծամիկ,
հի՞նչ պեն, թուրու, — ասում ա, — ծովան ըմ ճա-
րալ, պերալ:

Տտ իսկույն տեսնում ա, վեր էտ պառավը
քյալագյ ա եկալ. թուրը հանալ ա, քցալ ծովը,
Ոսկեծամիկին եր կալալ, տարալ:

Ասում ա.— Ոսկեծամիկն ասալ ա, վեր էտ
պառավից օքուտ չկա, ոադ ըրա, քյնա, ես լսալ
ըմ ուրան, ափսոս, վեր լսալ չըմ, ասալ ըմ.
«Մեծ կնիկ ա, լի, հի՞նչ բեղում ա անի», Բայց
մհենգյ աեսնում ըմ, վեր Ոսկեծամիկը լոխ
գյուղում ա լյալ, Բայց ես իրան լսալ չըմ: Ափսոս,
վեր անց ա կացալ, եղածը՝ եղած ա: Եվ՝ ծեղա-
նից էլ շատ շնորհակալ ըմ՝ ըստղաս մինչեւ եր-
գիիքը, վեր եկալ ըք, իմ հալին հասալ ըք
տուք: Մհենգյ քյեցեք ծեր տեղերը, ես, հիշտեղ
էլ վեր ինի, մեկ ա, քյնալու ըմ Ոսկեծամիկը
ճարիմ:

Տրանց քաղցր ճանապարհ ա տինում, ինքյ
կյամ լողկա նստում, կյամ տյուս կյամ էտ քա-
ղաքը: Իրանն է, է՛, Պարսկաստան: Հիմա մեն
պառավ կնիկ ա ճարում, թա, ասում ա:— Մայ-
րիկ, մին տեսլ ինիլ չի՞՞ ուրուգյունս ծեղ մոտ
քնելի:

Ասում ա.— Տեղ՝ քնելի, կինի, րայց աղքաս
կնիկ ըմ, լի ուտելու պեն-մեն չկա...

Տյուս ա օնում մին քանե վըեսկե-մըեսկե
տամ, թա.— Քյնի ուտելու-խմելու պեն պեր,
ուտելու մասին մտածել մի:

Քյնամ ա, վերջը, հինչ ասիս պիրում ա, օ-
տում ըն, խմում, պրծնում: տա, մինչեւ քնելը,
թա, ասում ա:— Մայրիկ, ծեր էտ քաղաքումը մի
որեւէ նորությունից-պենից հի՞նչ կա, հինչ չկա՞:

Թա, տում ա.— Այան ըը մտտաղ,— ասում
ա,— նորությունը, էտ հարեան թաղավորությանը
մին Ոսկեծամիկ անունով ախճիգյ ա իլալ, հինչ-
քան թագավորություններ, հինչքան դեեր, հինչ-
քան փահլվաններ, ովշեմ, տրան ուղեցալ ըն տի-
րապետին, ոչ մեկին ամալ չի եկալ, և հոր կա-
ռավարությունն էլ ինշտոփիտ ըն ըրտւ, մին ճարդ
էլ զկա երգումը, րայց եկ տես, վեր Վըեսկեծա-
միկը սաղ ա լյալ, Հա,— ասում ա, — մին պառավ
կնիկ, քյեցալ ա, Վըեսկեծամիկը պերալ, տվալ
թագավերին, իրան կշոավը մին վըեսկե ստա-
ցալ, քյեցալ: Իսկ էքյուծ,— ասում ա, — Վըեսկե-
միկին հրսանեքյն ա:

Էտ թուրբթյամրին, թա, ասում ա:— Մայրիկ,
դյուղում ըս, հինչ կա:

Թա ասում ա.— Հի՞նչ կա:

Թա, պա, ասում ա:— Էն Ոսկեծամիկը իմ նը-
շանածս ա, — ասում ա, — էտ պառտվ կնիկը եկալ
տ, էտ աեսակ, էտ տեսակ. որլորը պատմում ա,
ափեր, քյալաղյ ա եկալ, Ոսկեծամիկը ըտի պերալ
ա: իմ հնդեռունքը եկալ ըն, օգնալ ըն,— տսում

ա,— մէնդյ եկալ ըմ Վըեսկեծամիկի ետևցը. ես Հինչպէ՞ս կարող ըմ մեկ էլ Ոսկեծամիկին տիրանալ:

Ասում ա.— Գյուղում ը՞ս հինչ կա, շատ տժեր ա,— ասում ա,— որովհետե էն թագավերը էլ լա թագավեր ա և թաղավերին քավերները ղեկը ըն, իրեք հաս ղե ըն, էտ ղեերեն ըռային, — ասում ա,— մարդ չի կաղնում, — ասում ա,— հինչ կարող ըս անիս, — ասում ա,— վել մին պեն շես կարող անիս: Մէնակ՝ մին կառավարության, կամ էտ ղեերեն ղեմ չի՞նչ բիղի անիս: Էտ կնիկն ասում ա.— Գյուղում ը՞ս հինչ կա, Թուրբթյամրի, միայն մի ելք կա, ես քեզ կասիմ, եթե կարողանաս տու հիմա անիս, դյիղա, վեր Ոսկեծամիկին կտիրանաս, եթե շկարողանսու՝ Ոսկեծամիկը ծերեցտ կըյնա:

Թա, ասում ա.— Հինչ աւ:

Դե նա էլ հերոս աղա ա, լի, դյուղում ա վեր ինչ վեր ասին՝ կարող անե:

Ասում ա.— Էտ ղովերին մերը սադ օրը էտ ղովերին հետե հաց ս թիում. կտանիմ, քեղ թուրունը ցույց կամամ: Կըյնաս իւ րունը, — ասում ա,— մոտիկանաս, ղովերին մերը վեր կոռանում ա, :ացը նըեստա տամ, է, էտ ժամանակ եթե կարողանաս ընդիմիս ղովերին մոըը սրտեն, ծեցեր նրա մոը կաթը, ուրեմն՝ գիղա վեր Ոսկեծամիկը բունն աւ:

Ասում ա.— Լուսվ,

Տանում ա, ցույց ա տամ թուրունը. աղան րյնում ա թուրնեն մուտանում ա, տեսնում՝ էտ ղառավը՝ ղովերին մարը, վեր հաց ա թխում, վեր կոռանում ա, տեց անաւմ ծեցերը, աս րուրղան ընդնաւմ ա ծծեն, ծծում: Էտ ղովերին մարը երը վեր հացը թիում, պրժնում ա, եր ա կինում, կաղնում, թա, դե. — հնդիրքտ ասի, կաղարիմ: Տու էսօրգանից իմ տղաս ըս, — ասսում ա,— իմ երկխաս ըս:

Տա մանրամասը ղատմում ա, թա հինչպես ա ղառավը եկալ Վըեսկեծամիկին խափալ, պերալ, լիս ետնան ասում ա.— Հնե, հրսաներյ ա, իմ նշանածը փուակում ըս:

Էտ ղառավը քցում ա տրան հեաան, թա, ասում ա.— Թյնանք հարսանեքյ:

Կյամ ըն էտ թաքավերեն հայաթումր, է, մըեծ թյեփ ա. տծում ըն, պար ըն կյամ, էտ ղովերն էլ թավող ըն, լի՝ տրա տղերը: Տղան մըտնում ա վեր պար կյա՝ ղեը, մարը սրան սվրցնում ա, թա՝ թյնա նանավ մասիաը րրա, վեր օգի թա թյեղ մին պեն անե, փափիեր, եկ կոշտու Ռա թյնամ ա, ղեին պար կյամ վափաը ժժըպաղա ա անսում, մասիաը պատ. վեր օղում ա թա թիս,

վաղ ա տամ. թյնամ իրան մորը փեշկեն տակն ա մտնում: Տա կյամ ա, ասում ա.— Այան. — ասում ա,— էս խոխան հուվ ա՞:

Թա, ասում ա.— էս խոխան,— ասում ա,— ծեր պաւառու եղբայրն ա: Սա փոքր ժամանակը,— ասում ա,— անհետացալ ա, ըարան կարողացալ չըմ ճարիմ, ասում ա,— լա տի էլ մնացալ ա ինքը, դե, մարդ նան ղեը ափուն, մին շահու քին: Բայց տա, — ասում ա,— տես՝ տըան հինչ ուժ ա լյալ, — ասում ա.— վեր կարողացալ ա... էսքան կառավարություններան վե: Մինը կարողացալ չի Ոսկեծամիկին տիրանալ. հինչքան կու ա լյալ, հինչքան փացալ ըն. ըայց ձեր փոքր ախալերը կարողացել ա տիրանալ Ոսկեծամիկին. Բայց էտ ջաղու պառավը թյեցալ ա, թա՝ հինչ ըրալ. թա հունց ըրալ, փիցրալ, պերալ, տվալ թաղավերեն՝ հորը: Մէնդյ նա էլ փսակվում ա, հրսաներյ ա անում, առու էլ քավոր րք, համ էլ պար ըք կրամ՝ հառսնանքումը:

— Այան, դյու՞ղ ըս ասում:

Թա, ասում ա.— Հաւ:

Տահանք սրերը հանում ըն, հրսաներյ-դասաը սադ յան-յան անում, թաղավերը վե՞րն ա, պենը վե՞րն ա, լրիւճին քշում, թյնում Ոսկեծամիկը փունում, պիրում, տամ թուրբթյամրուն: Տամ ըն թուրբթյամրուն, ասում ըն. — Թուրբթյամրի, էսօրլանից տու մեր փոքր եղբայրն ըս, օգում ըս, հիշաեղ օդում ըս թյնա, ընդեղ ապըք, օգում ըս, է, միզ մստ ապըք, էս ղալատները՝ թա թիփդ տամ ա, ապըք... հիշտեղ էլ վեր ապըքիս՝ արիային, թիփդ՝ քւսք թյնի հու՞ղ ա կարում քու հանդավարավտ անց կենա, հու՞ղ ա կարում թեզ մին պեն անե, կերցըու Ոսկեծամիկին՝ թիփտ օգած տեղը ապըք:

Ըտեղից վերցնում ա Ոսկեծամիկը, նորից կյամ էն թաղաքը... Դե, ավերակ թաղաք ա ըտեղ՝ հինչ կա: Ուրան էլ՝ հարը թաղավեր ա, թաղավերու տղա ա, Ոսկեծամիկին ասում ա.— Թյնանը, իմ հոր տանն ապըինք: Ես թաղավերի տղու ըմ, լի, իմ հոր մաղար տղան ըմ, աշրը ճամրին ա, թյնանք ընդեղ՝ իմ հոր, իմ մոր հետ, ընդեղ միասին կապըինք:

— Դե,— ասում ա,— հինչ ասիմ, վեր տանում ըս՝ տանում ըս:

Կյալիս ըն, տյուս կյալիս ուրանց թաղաքը, թաղավերը պիրում ա՝ օխա օր, օխտը քշեր տրանց համար հրսաներյ անում, հետո՝ ինքն էլ արդեն ծերացած ա ինում՝ թաղավերը ծերացած ա ինում, թուրբթյամրին տիրում ա ուրտն տեղը՝ ինչպէս թաղավեր, իսկ Ոսկեծամիկին էլ՝ թաղումի:

կղպես ըսկում ըն ուրտնց հետե ապըկըր:

Մին ծկնորս ա ինում: Տրան երեք աղջիկ ա ինում: Էս ծկնորսը վեր քյում ա ծուկն փոնում, հենդյ հատ ծուկուն ա տյուս կյալիս: Պերում ա, մեկը ինքն ա օտում, մեկը՝ կնեգյը, մեկ-մեկ հատ է՝ աղջկերբյը: Քանե անգամ ծուկն ա փռոնում, հենդյ հատ ա, վըել ավիլ, վըել պակաս: Մարդը մին հատ օտում ըն, ովզըմ, տի էլ ապրում ըն: Օրերեն մին օրումը, հոնց ա տեռնում՝ էտ մարդին կնեգյը մեռնում ա, նորը մինան քյում ա մին կնեգյ պերում՝ խորթ մայր՝ երեք ըիմկորանց համար: Բայց էս մարգը, վեր թոռը բցում ա, էլ լճա հենդյ հատ ծուկն ա կյամ, բայց էս խորթ մարդ փոնում ա՝ ըիմկորանցը կես-կես ծուկուն տամէ էտ մարդն ասում ա:— Ա. կնիկ, մտրդը մին հատ ա, ինե՞ յըս...

Ասում տ.— Էքյուծ, բուրգան քիշ կըդնե:

Ասում տ.— Քիշ չի ըղնե, ե՛, փորձած ըմ, մտրդը մի հատ ա, լճա տի ա իմ ճկատեն կյիրած:

Խորթ մարդ չի հոժարվում, արանց մեջ վիճարանություն ա սկսում, կոյիվ-պեն, էտ կնեգյն ասում ա:— Ես էտ ըիմկորանց հետ չիմ ապրում, յա՛ տար թողե ծմակումը եկ, յա՛ քըզ նհեա էլ շըմ ապրում:

— Ա, կնեգյ, պա տի պեն կինի՞:

Թա:— Հա՛, ես էտ ըիմկորանցը հետ ապրել շըմ: Օղում րս՝ ըիմկորանցը աանիմ թողիմ ծմակումը, կյամ, օղում շըմ՝ առ ըս գյուղում, ես կըյնամ:

Վերջը, ճարահատյալ էա մարգն ասում ա:— Դե հի՞նչ անինքյ, տանինքյ, լի:

Յոր ըն օնում էտ իրեք ախճիգյը, քյնամ ըն ծմակր: Ծտեղ, իրը թե խնձոր ըն քաղում, տես ըն անում, տեն ըն անում, օըը ուշացնում, մինչև մթնում ա, էտ իրեք ախճիգյը թողում ծմակումը, մարգ-կնիկ կյալիս ըն տուն: Ծտահանք մնամ ըն ծմակումը: Վեշ մին պեն չի պտահում, ճանապարհ էլ շըմ գյուղում: Հեռու ըն քյնամ աանան: Տուն կյալիս, տահտնք շատ սովածանում ըն: Մհենգյ, հաբյաթումը տի ա ասած, լի, վեր էա իրեք բուրը... մեկը պիտի մորթին՝ էն էրկուաը օտին: Մհենգյ հուր՝ մորթին, հուր՝ չմորթին. էտ ըիմկերեն ասում ըն: «Գյուգում ըք հինչ կա՞», եկեք կյուղինք, — ասում ա, — հուը կյուղ փրիքե՛ նըան մորթինք: Դե, էն մրեծերը գյուգում ըն, հունց կյուգին վեր չփրիք, կուճինը խամ ա, գյուղում չի: Կուճուրը կյուղում ա, փրիքում տէ Ասա ահում ա:— Դե, վեր ինձ մորթելու ըք...— էն ըն ինգի նստոտած, լի, կլոիք, տինում ա բվերը գյուրգումը, ասում

ա,— կլոիս մին քիշ քթվեցեք, մին քիշ ծըպանա կշտանամ, նանա ետը հինչ օղում ըք՝ ըրեք:

Տա համ ասում ա, համ էլ մատներավը տափը քանդում ա: Քանգում ա, տեսնում ա, տաղատ շամինչ ա այուս կյալիս, խուրմա ա տյուս կյալիս: Տրանք վերցնում ըն, օտում ըն:

— Դե վեր բատեղ տի պեն կա, — ասում ա, — էլ ինձ հոր ը՞ք մորթում, տյուս տվեք էտ շամինչան, խուրման կերեք:

Խտի քանգիլավ, քանգիլավ, քանգիլավ, քանգիլավ քյնամ ըն, տեսնում, վեր բատեղ կյումեր ա, ախոռ, ծի կա, մարգիք ըն քյնում-կյամ: Տու մի ասել, տա թագավերեն ծիանոցն ա, շամենչին, խուրմեն պահեստն ա, գե թագավեր մարգ ա, լի, ծիանոցը շամենչավ, խուրմավ տ կորմիտ անում: Տահանք մտնում ըն շամենչին պահեստը ամեն օր, փշկնեն շամենչավ, խուրմավ լցնում, տյուս կյամ: Տի ապըում ըն: Մին ամես, երկու տմես... Օրերեն մին օրումը, թագավերը կյամ ա ծիանոցը կողտը, տեսնում՝ ծիենը մաշված ըն: Էտ պահողներեն ասում ա:— Ծիանցը կորմը տուք ծախում ըք, տամ ըք ծիերեն, տրա համար էլ մտշվում ըն:

Տրանք:— Թագավերն ապրած կենա, ծախում շընք... տես շընք անում, տեն շընք անում...

— Էն վախտը, — ասում ա, — կյուղանում ըն: րեգում ա կյողը ճարիք Մինչև մին քանե օր եթե կյողը ճարիք վուշ, ծեղ կախաղանի ըմ տլական:

Տահանք քշերները քոն լըն ինում: Մին քշեր եշում, տեսնում՝ մին ծակավ մին լուս ընգավ կյումը. տեսնում՝ իրեք տիճիգյ ուրուր հետա մըտեն, փեշկները լցեն էտ կորմիցը՝ շամենչ-խուրմա ա... հինչու վեր է, տի ա ասում լի հեքյաթումը... վեր տյուս ըն կյամ քյնամ, տրանց հետքավը քյնում ըն, էտ ախճկորանցը փոնում: Փըռնում ըն, իրեքան տանում թագավերեն մոտը:— Թագավերեն ապրած կենա, ծիանոցը կորմ օտողները հուսէ՝ էս իրեք ախճիկն ըն:

Արանց տալիս են թագավերեն, թագավերը սըրանց անից հարցնում ա:— Տուք հի՞նչ ախճկերքը ըք:

Պատմում ըն, լի, վեր՝ էսպես, էսպես. մին ծկնորսի ախճկերք ընք, մեգ պերալ ըն, թողալ ծմակումը, քյեցալ. վերջը շոռ ընք եկալ, քյեալ շընք տոնը, ընգալ ընք ըստեղ, տի շամենչա-պենա կյուղացալ, ապրալ ընք, լի:

Թա, ասում ա:— Ծաա լավ:

Տահանց իրեքան էլ թագավերը կնեգյ ա վերցնում ըր հմար: Էտ իրեք ախճկանը վերցնում ա իրա կնիկ, Թա, մհենգյ:— Ասեցեք տեսնամ՝ ծեր ամեն մինի ծեռուքը հի՞նչ ա կյամ, հի՞նչ դործ կարող ըք անինք:

Հն մեծ քուրն ասում ա.— Թագավերն ապ-
րած կենա, ես կարող ըմ,— ասում ա,— մի էն-
պես կերակուր էփիմ,— ասում ա,— վեր՝ բեզ
հինչքան զորք օնիս, էտ զորքը էտ կերակուրիցը
օսե, կշտանա, կեսն էլ մնա դգղանումը:

Թա, ասում ա.— էտ վեշինչ, լլավ պեն ա:

Մէնդյ հարցնում ա մեշնակ թվերը. թա.—
Տու՞ հինչ կարող ըս անիս:

Ասում ա.— Թագավերն ապրած կենա. ես կա-
րող ըմ մի էնպիսի խալիչա կյործիմ, վեր քեղ
հինչքան զորք օնիս՝ էն խալիչին յրա նստին,
խալիչին կեսը մնա տյուրա:

Թա.— Վեշինչ, տա էլ ա լլավ:

Մէնդյ՝ փորդիցը Փոքրն ասում ա.— Թագա-
վերն ապրած կենա, վեր մունք ամուսնանանք,
ես կարող ըմ,— ասում ա,— վսկրյաբյուլ խո-
խեք պիրիմ:

Թա, ասում ա.— Վեշինչ, բռնը հլա րոլորից
լլավ ա. ուրեմն, եթե սուտ ինի՝ ծեր իրեքանց կլո-
խը ալական ըմ:

Կյալիս ա ժամանակը, մեծ քուվերն ասում ա.—
Դե տու կերակուր պազրասաხ, տեսնամ ինչպես
ըս պազրաստում, որ իմ զորքս լոխ օտի, հլա
կեսն էլ մնա կերակուրեն դղղանումը:

Թա ասում ա.— Թագավերն ապրած կենա,
մին զղղան զակագ առոր, վեր օխտը զամրչի էտ
զագղանեն մաշին կործ անին, մեկը-մյուսի շաբ-
րումի սասր շրսկանա:

— էտ,— ասում ա,— սոտ պեն ա, տա ամալ
կյալի պեն շի Ուրեմն՝ բու ասածը սոտ ա:

Մէնդյ կյամ ա մեշնակ քուվերը, թա, ասում
ա.— Դու աճալ ըս. մին խալիչա կկյործիմ, որ բու
զորքը բոլորը նստին, հալա խալիչին կեսն էլ մը-
նալու ա:

Թա, ասում ա.— Թաղավերն ապրած կենա,
տու արեելից տրեմուտք հինա սարքել տո, ես
ետ խալիչան կյործիմ:

Թա, ասում ա.— Քոնն էլ ա սոտ:

Ենամ ա փոքրը. գե տա էլ հրցնելու պեն շի:
Կյամ ա, օգում ա թա մին տարեն թմամե, էտ
փոքր կնիկը պատճառավել ա տեսնում, մին
ծոխտակ երեխա պիրում: Մինը՝ ախճիզ, մինը՝
տղա, մագերը վըսնկե, վըսկըյաբյուլ Տա վեր
պիրում ա՝ էն էրկու բուրը նախանձվում ըն:

Երր աշտմերը բյնում ա թաղավերից մշալեղ
օգի, էրկու բուրը առաջը կտրում ըն.— Հը, հինչ
ա պիրալ:

— Երկու բեխա, մինը՝ տղա, մինը՝ ախճիզ,
վըսկըյաբյուլ:

Տահանք պիրում ըն էտ պառավին շատ փող
ըն տամ, էտ էրկու բուրն, է՛, ասում ըն.— Էն խոխե-
րը կուառուրեցեր, էրկու շան թուլտ պերեք, տրեք

ընդեղ, վեր ասինք՝ երկու շան լակոտ ա ծնալ
կնեցյա:

Էտ տատմարը պիրում ա՝ էտ խոցը զիմիշ
շի անում կուտուրե, մին յաշիզ ա պաղըաս-
տում՝ սանդուղ, խոցը տինում ա մեջը, հետո,
կյետ ա ինում, քցում ա էտ կյեաին մաշը, քցում
ա կյետին մաշը. կյետը յոր ա օնում. բյնամ:

Խսկ շան լակոաները պիրում ըն տինում խո-
ցը տեղը, բյնամ թագավերեն թա.— Թագավերն
ապրած կենա, կնիկու էրկու շան լակոտ ա ծը-
նալ:

— Հաա՞ կյամ տ, տեսնում, իսկապես՝
շան լկուտնե:

Ասում ա.— Կուպորունը բսեցեր իըեսեն, տա-
րեք բղաքեն զրազումը կպեցեր, վեր բյնող-կրյ-
վող նրա իրեսին թքին, վեր ինձ տի իւայտառա-
կալ ա:

Իտի էլ անում ըն:

Մէնդյ խոսքը տանք էն էրկու իւուխան, վեր
յաշիզին մաշին ըն՝ ճյուրը քցած: Կյետը բշալ
ա, տարալ, տյուս պերալ ծովը: Քյեցալ ա ընգալ
ծովը... Քյուուն էն մին կողմին մին մարդ ա
ապրում առանց կնիկ, առանց պէն, ինքյն էլ
շատ հարուստ մարդ, կրթված մարդ, թայց բշեր-
ցիրեկ աստուծուն աղոթք ա անում, թա՝ հիշտղա
օգում ա ինի. թաքյի ուրան մին խոխա ինի: Մին
առավուս եր ա կենում, աեսնում՝ մին սանդուղ
Քյուուն իրեսեն կյամ աւ Ասում ա. «Ա, իրիքը-
նակ... բյնիմ էն սանդուղը պիրիմ, հս՛ր ա թի
մաշին մին խոխա ինին: Զին քցում ա, բյնամ էտ
սանդուղը քաշ անսւմ, պիրում պեց անում, տես-
նում՝ էրկու վըսկըյաբյուլ խոխա մաշին, մինը՝
տղա, մինը՝ ախճիզ: Տանում ա, վըսկապես, վը-
խարի կաթավ, տեսավ-տեսնավ պահում ա. մծա-
նում ըն էտ երեխինքը: Վեր մծանում ըն, տտհանց
կրթցնում ա, մինչե՝ տասնօխար-տասնութ տիրեկա-
նը տի կյամ ըն տեսնում. էտ մարզն էլ, ուժե, ծե-
րանում ա, մեռնելու յրան ա ինում, խոցը վըսյաթ
ա անում, ասում ա.— Ես ծիին թափշուր ըմ ըրալ,
տուր կնստիք ծիին յրա, էտ իլած-շիլած վըսնկե
ա, րոլանտ ա, կպեռնիք ծիին, առոք էլ մեշը
նստիք, ծիին ծեղ աանելու ա մին թագավերու քա-
ղաք, էն թագավերեն քաղաքումը,— ասում ա,—
ծիին հիշտեղ կաղնե, ընդեղ ծեղ համար լլավ-լլավ
տներ կսարքիք և ընդեղ կապրիք:

Իտի էլ անում ըն Հարը մեռնում ա. Հորը թա-
ղում ըն, պրծնում, հինչ վեր օնին, լոխ պեռնում
ըն ծիին, կյամ ըն, տյուս կյամ թաղավերեն քա-
ղաքը էտ ծիին բյնամ ա, բյնամ, թագավերը էն
հիշտեղ վեր ծողով շի անում, հրապարակ ա ինում,
բյնում ա ըաեղ կաղնում թանի վեր հարն ասալ
ա. «Հիշտեղ վեր ծիին կաղնե, ընդեղ ծեղ համար

կնեղյն ա, ե՛, տի շինալ:

— Պա, ես քյնիմ հի՞նչ տղավ մտնիմ:

Թա.— էն ա զրբղան մին արկաթ կախ տված.
Քյնի եր կալ, ստի թակե, կյլական ըն պենան:

Քյնում ա, էտ արկաթը թակում, կնիկը կյամ
ա տոռնը պենում, տեսնում մարդը, կոլոքն ըդնում,
գրկած տանում: Մարն էլ ա եր կենում, ճնան-

չում, վերջը կարուտնեն առնում ըն:— Թա.— Պա
էս հինչա՞վ ըս շինալ:

Թա.— Պա էրկու նոռն ըս դարկալ, նանավ ըմ
շինալ:

— Ախճի, ես իրեքն ըմ դարկալ:

— Հա՞— թա,— պտհ, մինը եր ա կալալ:

Թա.— Էնք կօնիս, պեց չի թողիս:

Թա.— Պա՞հ, հի՞նչ ըմ տնում, էս ա քառա-
սունն էլ ըմ պերալ:

Թա.— Զէ՛, ե՛, տինը չի: Տի նոռնը չի, ինք
կօնիս, անպատճառ ինք կօնիս:

Թա.— Ախր ասալ ըն. «Էն հարթնը կպիրիս,
դավթարն էլ, շոտկն էլ, վեր մեր հաշիվները...
Հի՞նչ անինքը...»

— Հի՞նչ շոտկ, հի՞նչ դադ: Ես նահանց հետ
խոսալ ըմ, վեր ամիսը էսքան պիտի տան, լի, թող
էտքան աան, ինձ իվիլ պեն չի հաջտթ, — թա,—
վեր տի յա, քյնի նահանց եր կալ, եք մեր առնը:

Մհենգյ օժը հադթ ա: Լյավ դոնաղ կանե:

Եր ա կենում կյամ, սպասում, թաշիրնեն
կյամ ըն, թա.— Դե կանչալ ա:

Ինտերեսու հմար՝ եր ըն կենում, կյամ: Կյամ
ըն, Վա՞հ, դեր պլասեն եշում ըն, պատառ,
ինդի, վախում ըն:

— Ա, — ասում ըն,— հանց ա էն թաղավերեն
սպատան ինի, հիշտեղ մեղ փոնեցեն:

Վերջը մտնում ըա աեղ՝ օտել... աես-տեն...
իմել:

Էս թաշիրն էլ, թա.— Դե կյալ րիդիս. մին
տեար էլ եր կալ, մին շոտկ էլ, մին դալամ էլ,
աշխադանքը պեժին անինք:

Թա.— Հի՞նչ աշխադանք. մունք ծեղ նհետ
ամսավ լը՞նք խոսալ:

Թա ասում ըն.— Էն աղան մին էնպես դուա-
ղություն ըրավ, մեղ մա՞ից աղաղալ ա, պայ-
մանավերվալ ընք մեր աշխադանքն էլ, օղտերն էլ
տրա նհետ կեսինք:

Եր ա կենում, մին շոտկ էլ յոր օնում, մին դա-
լամ էլ, մին դավթար էլ... Նրա հետե հի՞նչ կա...
քյնում տ, հաշիկ անում, լոխ կես ըն անում:

Թա.— Օղտերն էլ կես ըրա:

Թա.— Մեղ օղտ պահելի միջոց չկա. թող օղ-
տերը ծեղ մնան, վերջում ես ծեղ կանչելու յրմ:

Ցոր ըն օնում ուրանց պեժինը, կյամ տոն:

Էս կնեղյը թմրալին համար մի՞ն կասայում ա
դակաղ տվալ, մի՞ն կաստյում ա դակաղ տվալ,
վեր հարավերու լայաղ՝ մին հանց դրթարալ ա
թմրալին, մին հանց դրթարալ, էնպես պեն ա
ըրալ... ամեն օր կուոնան փոնում ա, տյուս օնում
բակոնը, ման կյալը սվրցնում, նստել-վեր կե-
նալը սվրցնում՝ հունց վեր թաղավերեն ա վայել:

— Վրենդ ստի փոխե, վլենդ ինդի փոխե. ստի շոռ ևկ, ինդի շոռ ևկ. ստի մտեր տոռը, պալտոտ ընդեղան կախ տո...»

Տի մին քանե ամես տրա նհետ տյաս ա անց կցնում: Արթուրյան ա տամ, սվրցնում: Տեսնում ա վեր, առող, սերուն ովերում ա: Մին պազնոս ա ուաղրասուում, մին իրեք հաս էլ էն նուռնան տինում մաշին, ղարկում, թա.—Քյնի, թագավերեն զոնադ կանչի, բնաւանիքամը, բոլոր խոխոցավը... բոլորը... բոլորը...

Պիրում ա նհաշ աա, է:

— Վիր քյնիս,— ասում ա,— շղցննական ա քեղ, հա՛, նստած տիղու կնստիս: Փափաղա հիշտպա վեր կախ առալի յա՝ ընդղան կտի կտաս, հա՛: Հանց տուրուր կկյաս, վեր յանմիշ շանեւ:

Եր ա կենում քյնում, պազնոսը տինում թագավերեն ըսաշին:— Դի փլան տեղից դոնաղ ըն կանչում:

Էլ ասում չի, թա կնեղյս ա: Էհա համ ասում ա, համ էլ կյրած թողթը տինում ըռաշին:

Թագավերն էլ, ախեր, վարավորդ տ անում. եթե թնդանոց պադարկա չինի, քյնալ չի դոնաղ, էտ նուռներեն շատ ա թմաշա անում: Թմաշա ա անում, վերջը, րիշտիրմազու նման մինին կողքան վեր կտրում ա, բոլյանտը վեր ա տեռնում:

Թա, դե:— Աղա, էս իրեք նոռնն էլ ստի՞ յա:

Թա, դե:— Իրեքը չի, տանա հինշքան օդիս օնինքյ:

«Պու՛յ, պա էս վեր սանա հինշքան օզում ըն՝ օնին, իմ թագտվորությունը սկի էտ իրեք նուռնանը մշանք չի. էս, էս, էս զոնաղ քյնիլի՞ ա, րասա:

Պադրաստվում ըն, քյնում:

Կնեղյը մարդուն ասած ա ինում. «Վեր կյան, սպասի վուլ թա ուրանք եր ընցնին, ետնան տու եր ընցնիս փալարյանավ. առաջ տու եր կընցնիս:

Մարդ ա ղարկում, էն իրեք թաշիրներին էլ կանչում ըն, կյամ ըն:

Էս թագավերը եր ա կենում, թոփ-թոփիխանա, կուլսնի-մուխնի եր կալած կյամ ըն եկան, վերշը մտալ ըն հայաթը: Պա՛հ, այ մարդ, էս հի՞նչ ա, էս հո՞վ ա, էնքան պեն ըն պադրաստալ, օխտը օր էլ վեր օտին, կիխական չի:

Մանում ըն, նստում, վեր հացկերույթ սկսին, թագավերն ասում ա:— Ես չեմ ուտիլ, մինչե էս պենի էությունը ինձ բացատրիք վուլ:

Էս թաշիրնեն եշում բն, թա. «Եյ մարդ, էս մեղ փոնող թագավերն ա. է՛, վեր մեղ փոնալ ա: Վերջը խոսում լըն, սուս-փուս նստած ըն, թմաշա լըն անում: Թագավերը նորը մինան ա

ասում:— Էս զոնաղլըղին պատճառը ինձ ըսեցեք, սերտս ճաքում ա:

Թա.— Տուք կերեք-իսմեցեք, ետնտն ես կը-բացատրիմ: ախճիդյն ա ասում:

Թա.— Զէ, մինչե բացատրիս վուլ, կրլական լընը օտինք:

Թա.— Ժողսվուրդ, բոլորտ իմացեք: Ետ ա տեռում թագավերին, թա.— Հայրիկ, տոնը կնկանը կինի՞, մարդի՞նը:

— Ախճիդյս ըս:

Թա.— Հատե, կողքիտ նստածն էլ թուռնին թամբալն ա, ես էլ փսակվալ ըմ տրա հետ, հա-նե, էն թաշիրնեն ըն վկա, թաշիր, տուք վկա՞ լըք, վեր ես էն տղու նհետ փսակվեցի՞: Հիմի հյու՞ր կինի տոնը կնկանը կինի, տղամարդի՞նը:

Եր ա կենում, բիսճկանը ճկատան պաշում, օխտը օր, օխտը զիշեր հրսանեքյ անում, եանան իրա աերիտորի կեսն էլ կարում, տամ բիսճկանը:— Տու թագավերություն ըրա,— թաշիրնե, տուք էլ կինիք իմ ախպերքը: Երկիրը ծերն ա, ապիեցեք:

Ստեղ էլ տի վերջացավ,

12. ՄԱՐԴՈՒ ԱՇԽԸ

Մին թագավերու իրեք աղա ա ինում: Ամեն մին տղեն իրեքհազար մանեթ վեսկե փող ա աամ, թա:— Տարեքյ, ծըղ հեան խրցեցեք, եկեք: եկեք, ըսեցեք, վեր էս պենու յրա խարշալ ընք:

Թագավերեն տղեքը փողը յոր ըն օնում, քյնում:

Մինը քյնում ա գյուղարանքում շկոլնե շինում: Մինն էլ՝ քղաքում մեծ տներ ա շինում: էն մինն էլ՝ պիծինը, քյնում ա ամեն օր մի գյուղում, մի քղաքում օտում-խմում, անց կենում քյնում:

Էն շկոլնե շինողը, էն քղաքումը տներ շինուղը ճեկի ետ ըն տեռնում, քյնում, պիծի տղան (օտող-խմողը), շաա ա յտանում: Ախոը, կյամ ա զղղուն* հղեն, փողը կիխում ա: Մնում ա հարուր մանեթ, մին րիւթու փողը: Տյուս ա կյամ էս շենան, թա քյնի բիւթ յոր օնե, քյնում ա ըղնում մին հինդիստավ: Եշում ա տեսնում՝ մին մարդ, մին մեյդ տյուս կտլած, թակում ա:

Ասում ա:— Ա մարդ, պա մեղկը չի՞, համ մեռալ ա, համ թակում ըս:

Թա ասում ա:— Տա սաղ վխտին ինձանա հա-րուր մանեթ փող ա պարտք ըրալ, տվալ չի: Մհենդյ եկալ ըմ տյուս կալալ, էտ հարուր մնեթի թակիմ, էլհա տինիմ աեղը:

* Գյուղ Մարտունու շրջանում (Ս. 4.):

Տյուս ա օնում էն հարուր մանեթը, աամ ուրան, թա.—Կա էս հարուր մանեթը, բու ծեռուքտ և մելդր աիր տեղու

Հարուր մանեթը յոր ա օնում, մելդր տինում ահոր, ուրան ծեռուք վեղավ անում պրծնում. վեր մին սուտկայում մաշինավ րիզի տեղ հսնե, իրեր ամեն փիալա բյնում ա. Քյնում ա թաղավերին մայզիլը. վեր բյնում ա տյուս կյամ, նազիր-վեպիրը բյնում ըն թաղավերին ասում թա.—Տգերք եկալ ըմ:

— Սեն ավիք կյան սահու, — ասում ա:

Երեքտն տանում ըն, սաի նոտցնում թաղավերին բաշին: Սեծ տղեն հրցնում ա.—Հի՞նչ ըս բրալ:

Թա.—Քյեցալ ըմ դյուղարանքում շկոլնե շինալ:

Մաշնակ աղեն ասում ա.—Հի՞նչ ըս ըրալ:

Թա.—Քյեցալ ըմ քաղաքներումը տներ շինալ:

Պիծի տղեն ասում ա.—Տու հի՞նչ ըս ըրալ:

Թա.—Ես էլ քեցալ ըմ ամեն դյուղում, ամեն րդաքում մին ծանոթ բյթալ, եկալ:

— Տա լոխճան լյավ ա, պա իս՞ էաքան ուշացալ ըս:

Թա.—Թաղավերն ապրած կենա, էս ա իրեք ամեն ա ես փիալա ճանապարհ կյայիս:

Թա.—Խե:

Թա.—Դե, քյեցալ ըմ մին հինդիստավ ընդալ, տեսալ մին մարդ մին մեյդ տյուս կալած թկեյիս, նազանը, հարուր մանեթը տվալ ըմ, մհենդի փիալա եկալ:

Թադավերը այուս ա օնում ուրան թաղավերական փափաղը, տինում պիծի աղեն կլիսեն, թա.—Տու պիտի երգիրը ղեկավարիս:

Թադավերությունը տամ ա կուճի տղին:

Մին հենդի-վեց օր վեր թադավերություն ա անում, հարը ծեն ա տամ, թա.—Եկ ստեղ: Գյուղում ըս հինչ կա, քեզ մին պեն ասիմ:

Թա.—Դե, ասե:

Թա, ասում ա.—Եմ նազիր-վեպիընեն ինձանա շատ ըն դյուղում, տու բյնի քեզ հետե մին նյոքյար փոնե, մին նազիր փոնե, վեր առ իրա լելուն հասկանաս, ինքը՝ բու:

Թա.—Պա հունց անիմ:

Թա.—Քեզ հենդի մանեթ վեսկե ըմ տամ, բյնում ըս րազարը, ջայշի ըս ծեն տամ, շայշին ալուս տ կյամ՝ թադավերեն մին նյոքյար, հու վեր կյա, եր կալ, պեր:

Թադավերին տղան բյնում ա, ծեն ա տամ, ջայշին կյամ ա, հենդի մանեթ ա տամ, սա ծեն ա տամ, թա.—Թադավերեն նյոքյար:

Մին մարդ ա կյամ թա.—Նյոքյար:

Մա եղում ա, դարմանում.—Զէ, տու նյոքյարցու լրս: Տու թագավերու նման մարդ ըս:

Թա.—Ա մարդ, ծեն ըս տվալ՝ նյոքյար, ես էլ նյոքյար ըմ, հի՞նչ ըս ասում:

էն ասում ա, էն ասում ա:

Թա.—Ես կյական ըմ. տանիս՝ կյական ըմ, աանիս վուլ՝ կյական ըմ:

Վերջը՝ նհնտը անց ա կենում, կյամ:

Թադավերը եղում ա դյուղուլավ՝ օխտը ըտածեն կլիան, տեսնում՝ տղեն նհնտ մին թաղավեր ա կյամ: Վեր կյամ ա մուտանում, վեր ա կյամ օխտը ըտածեն կլիան, կլոփ աամ:

Թա.—Խե՞լրս կլոփ աամ, թաղավերն ապրած կենա, ես մին մղուր ըմ:

Թա.—Զէ, առ մղուր լրս:

Յոր ա օնում թագավերը սրան տանում ուրան կոշար, վեր պլատում վեր կենում ա: Մին իրեք օր, լուրք օր տեղ օտում ըն, իմում, նյոքյարը եա ա աեռում թա.—Թադավերն ապրած կենա, դյուղում ըս հի՞նչ կա: Ես եկալ ըմ սաեղ դործ անիմ, ես եկալ ըմ ստեղ կուրորտ: Գործ տո, անիմ:

Թա.—Զէ, զործտ էն ա, վեր ես քեղ ահիննական ըմ աղես նհեա, բյնիս փլան երկրում առեառու անիս, կյամ: Տու ճնանշող մարդ ըս, թադավեր մարդ ըս:

Թա.—Հինչ կինի:

Թադավերը իրեք օղա ա աամ տահանց, համ ուրան տղեն, համ նյոքյարին ասում ա.—Քյեցեք: Իրեք օր վեր բյնիք, իրեք հող յա կյական ըոշնետ, մաշի հղեննի կքյնինք. ծեխս հղեննի, ալի հղեննի բյնիք վուլ:

Մին սուտկա վեր կյամ ըն, համան էտ հղեցը, թադավերեն աղեն ասում ա.—Քոնս տանում ա, պատառ դինշանամ:

Թա, ասում ա.—Հինչ կինի:

Օղտերը շորցնում ըն՝ նստցնում, վեր թադավերեն տղան քունավ ա ընցնում, ինքը եր ա կենում, ծեխս հղեննի բյնում: Միկա գըրառալ ա կենում, տեսնում՝ օխտը հոգի կյամ ըն, առաջը կտըում: Օխտն էլ կտըում ա, բյնում, տեսնում՝ մին մեծ շենքյ: Շուշարանդ: Կոուգում շուշարանդ՝ մի միլի գյուղում: Վեր բյնում ա մուտանում, եշում ա, աեսնում՝ իրեք ախիճիգյ:

Ասում ըն.—Ստեղ հի՞նչ ըս անում, էս սհաթես կլոփ կարալական ըն:

Ասում ա.—Կարել ըն կտըին:

Մահանց տոները պեց ա անում, պրծնում, լինձկորանցն ասում.—Տեղ կացեք, կյամ ըմ:

Ետ տեռնում, նորը մինան բյնում տղեն կոշար, Քյնում, աեսնում հունցը բնած ար, տի բոն

իլած: ԶԵՇ նոտում, վեր զյուրիթնանում աւ վեր եր ա կենում, էս տղան օղտերը քաշում ա ծեխ հղեննի:

« և տղան թա.— Պա, իմ ապեր հի՞նչ ա ասալ:

« Նյորյարը թա.— Քու ապա ինձ առալ չի՝ ստղավ ա հղեն:

« Վեր միկա զըբառաշ ըն կենում, եշում ա տեսնում՝ հղեցը տակեն էլ կտ մեյդ, կլին էլ թա- գալիկերեն տղեն պողջ ճաքում տ:

« Նյորյարը ետ ա եշում, ասում ա.— Վախել մի, վել մի պեն:

« Դրբառուշ ըն կենում, քյնում, էտ շենքին կող- քը, տեսնում՝ քոասուն տոնն էլ լոխ իսանու կըր- իսավ լիքը: Իսանու կլոխ Ըխճկերը տյուս ըն կյամ, հրցնում ըն.— Սահանց իսազնտն հինչ- տե՞ղ ա:

« Ըխճկերն էլ՝ զյուվտքի աստված ստեղծալ ա, տիրալ ըտեղ՝ իրեք դյուկ: Ատհանք տտնում ըն, իսազնան նշանց տամ: Պիրում ըն էտ իրեք օղտեն վեսկավ պեռնում, էտ ախճքերքն էլ յոր օնում՝ դիրիյետ ետ տեռնում:

« Իրեք սուտկումը քյնում տ, կյամ: Թադավերը մնում ա ղարմացած:

« Էլա թադավերը ծեն ա տամ, թա, ասում ա՝ նյորյարն ա ասում.— Թադավերն ապրած կենա, ես իմ նորյարությունը վերջացրի, քյնում:

« Թա ասում ա.— Տու նյորյար մտրդ լրս, բայց վեր քյնում ըս՝ հաղկդ եր կալ, նոր քյնի:

« Թա.— Ինձ հաղկը-ղատ չի հաջաթ:

« Թա.— Զէ, հաղկտ եր կալ:

« Թա.— Օզու՞մ ըս ինձ հաղկ տաս:

« Թա.— Հա:

« Թա.— Դէ մին կշեռք պեր ստեղ:

« Կշեռք պիրում ա, ստի կախ տամ, մեծ կշեռք ջուրան մին ծըրբյուլեխ ա տյուս օնում: Մըր- քըլլիխտն մաշան մին պեն տյուս օնում, ակնում կշոքեն հակումը, թա.— Տանավ մին, մին պեն տո, յոր օնիմ քյնիմ:

« Էտ իրեք պեռնը վեսկեն տժում ա, տուրուր չի կյամ: Ուրան իսազնան պուրում ա, ածում, տուրուր չի կյամ:

« Ասում ա.— Թադավերն ապրած կենա, սկիծի տղեա ծեն տո, կյա սաեղ:

« Ծեն ա տամ, կյամ ա:

« Թա.— Թադավերն ապրած կենա, դյուդում ըս էս հի՞նչ ա:

« Թա.— Զէ:

« Թա.— Սա մարդու աշկ ա, Մարդը ասում ա. «ԱՇ մին ասաը մանեթ ինի, հա՞»: Վեր տասը

մանեթը կյամ ա, ասում ա. «ԱՇ մին քսան մա- նեթ ինի, հա՞»: Վեր քսանն ինում ա, ասում ա.— «Հա՞յ, մին հարուր ինի, հա՞»: Աշկը վել մին պենա կշտանտլ չի, մինակ՝ ուրան մրթոթոնն ա կարում ես հինչու պերալ ըմ, հասե՝ ծեր տղեն հայալ ինի ես,— ասում ա,— մեյդ ըմ: էն ըմ իլալ վեղեն ատկեն, տյուս ըն կալալ, թկեյիս, տղատ եկալ ա, տյուս կալալ հարուր մանեթ տվալ, ինձ աղադալ, նորը մինան տիրալ վեղումը: Մհենդյ ես եկալ ըմ էն հարուր մնեթեն պարաքը տամ, քյնամ: Ես մեյդ ըմ, ես քյնում ըմ իմ աեղը: Ամա երդիրը էս կկառավարե, հալալ ինի: Հինչ վեր էլ պիրալ ըմ, հալալ ինի, լյավ ըս քյթալ:

Ասում ա, ետնան անց կենում քյնում:

13. ՕԽՏԸ ՔՎԵՐՏԱՆՑ ՊԻՄԻՆԸ

ինում ա, լնում մին մարդ: Էդ մարդին ինում ա օխտը ախճիդյ: Տրանք շատ քյասիր ըն ինում: Էտ մարդը ուրան ըխճկորանցը օրեկան ամեն մեկին մին ցորեն ա տամ, վեր արանով ապրին: Էս ըխճկերքը էտ ցորենը օտում ըն, ամա պիծի ախճիդյը՝ մին օր օառում ա, մին օր պահում, Վերշը վեր մին դոդ թամամում ա, քյնում ա հոր կոշտը, թա.— Ապա, էս խե՞ լոխ հարուստ ըն, մունք՝ քյասիր. տու էլ վար ըրա, ցան ըրա, մունք էլ հարուստանանք: Ասում ա.— Ապա, տու քյնի արտեն մոշը հլա կարե, մնացածը յոլա կքինի: Թա.— Պա, առու կքինիմ:

« Են ինքը սերմ պադրաստած ա ինում, չէ՞ էն ա մին դոդ կա: Յոր ա օնում, քյնում: Հղենը քյնում ա, համ էլ մտածում: « էս լյավ, հաղնանք սերմը տանում ըմ, էս հինչավ պիտի վար անես: Աի աստված, — զաշանք ա անում, — ըուաշաս մին ճոխտ եղնը տյուս կյա, ալաթը լծած. քչիմ, աանիմ տամ իմ ապոր՝ վար անես: էտ տի մաքեն դոնը ընկտծ քյնում ա, եշում ա աեսնում, ոշկեն մի ճոխտ եղնը լծած, լհա տի մաթալ: Յոր օնում, քյնում, թա.— Ապա, հսե՝ եղներն էլ ըմ պիրալ, ալաթն էլ, սերմն էլ, եր կալ, վար ըրա:

Ուրիսանում ա հարը, թա.— Մատաղ անիմ, պա էս հի՞նչտղա պիրար: Յոր ա օնում, վար անում, պրծնում, ուրուցյունը էտ եղները ոշնեն ըրած՝ կյամ ըն տոն: էլհա ըիճկան մաքավը անց ա կե- նում, ասում ա. «Աիս, ասաուծ, լհա վեր ասածս կատարալ ըս, մին էլ եր կենամ աեսնամ՝ էտ արտը հսած, փսած հսկանած: Առավոտը եր ա կենում, տեսնում՝ հսած-փսած, հսկանանած: Տեսնում ա, վեր հինչ օգում ա, ինում ա, մտածում ա վեր՝

Հինչ կա, ամեն ինը ըսլական ըմւ Ասում ա. «Էհա եր կենամ, տեսնամ հնձած-փնջած, մեր կալին դրաղն թուփ բածու Ռութանան եր ա կենում, անսում՝ հնձած-փնջած, կալիս զրադեն թուփ բածու Ռուգունը վեր կյամ, ասում ա, ասում ա, «Էհա եր կենամ, տեսնամ՝ թակած-քամած, թեն մաշին անկածու եր ա կենում տեսնում՝ թակած-քամած, թեն մաշին տնկած, մին շանավար օխծ էլ թիավը զիրագ տված էտ մարդ ետ ա տեռնում, էտ օխծն թա.— Տու հինչ միլաթ ըս, վեր թողում ըս էս ցորենը տանիմ: Վեր եկ, քյնի, թող ասնիմ. թա չէ՝ սպննական ըմ:

Օխծը լուգու ա առնում, թա.— Ինձ վեր մինը կարել չի սպանել: Թող ծեր տան անդամները լոխ կյան-խնդրին, բարքի վեր կյամ:

Մհենդյ կնեպյ ա կյամ, թա՝ վեր եք, ճանապարհա պարի, վեր չի կյամ: Ախճիդյն ա կյամ, վեր չի կյամ. էն մին ախճիդյը՝ էլհա վեր չի կյամ: Վերջը ասում ա.— էն հու վեր խնդրալ ա, թող նա կյա: Վերջը կուճուր ախճիդյը կյամ ա, թա.— Խնդրեմ, վեր եք, իմ ապան քյտսիր ա, անջախ ա մին խրեդյ ցորենու տար տեռալ:

Օխծը էլհա լուղու ա առնում, թա.— Տու էտ հինչին ըս սետ: Հինձիլին սետ ըս, փնչելին սետ ըս, կալսելին սետ ըս, մհենդյ եկալ ըս, թա՝ վեր եք:

Ասում ա, թա.— Ես խնդրալ ըմ, խնդիրքս աստված կատարալ ա: Թա.— էն կատարողը ես ըմ: Ես քու խնդիրքը կատարալ ըմ, մհենդյ էլ իմ խնդիրքս տուք պիտի կատարիր: Թա.— Պա, քու խնդիրքը հինչ տ: Թա.— Իմ խնդիրքս էն ա, վեր տու ինձ կյաս, ես էլ վեր կյամ, քու տպան ցորենը տանե, հրուտանա, էլ նեղություն լքաշին: Հարը ևս ա տեռնում թա.— Զէ, չէ, իմ խոխան ցորեն ա թուփ բալ, ըրշարվալ ա, մհենդյ պիրիմ քե՞ղ տում: Զէ, ամալ չի կյա: Թա.— Դէ վեր ամալ չի կյա, ես էլ վեր չեմ կյամ, հու վեր ինձանա մուտանա, փորավն ըմ տլտկան, սպանիմ: Ախճիդյն ասում ա.— Պապա, էտ իմ ճկատեն կիրն ա, թող ես քյնիմ, տուք ցորենը տարեք, կերեք:

Վերջը համտայնվում ա, լյացտվ-շուլտնտվ քյնում ա: Օխծը ասում ա.— Սեղ հտլտլ, ցորենը տարեք, կերեք: Ծիճկանն էլ տսում ա:— Ես հիշտ-դական քյնիմ, տու հետաս եք:

Էս օխծը հիշտեղ քյնում ա, տիճիդյը հետան. վերջը քյնում տ մի մոշու քոլու նեղ դաթավը տնց կենում: Ախճիդյն ասում ա.— Լյտվ, տու անց կտցեր, պա ես հունց անց կենամ: Ակսում տ լյաց ինիլը: Էս օխծը պլունախտատ ա տնում, անց-կացնում: Քյնում ըն, քյնում, մին դյուղ տեղ ա ինում, էս օխծը ըխճկանն տսում ա:— Տու տսեղ մին խրեդյ դինջաց, մեղք ըս, ես քյնիմ էն յալեն

քամակը, կյամ: Ամա մին մեծ տրաքուց տ կյլա-կան, վախիս վուչ: Թա.— էտ հինչ տրաքուց ա: Թա.— Թեղ ըսեցի, իլի, վախիս վուչ: Ասում ա, քյնում: Մին խրեդյ անց ա կենում, մին տրաքուց ա կյամ: Ախճիդյը թող ա ինում, բայց վախում չի: Մի պատառ կենում ա, եղում տեսնում՝ էս օխծը մի լյավ, սերուն տղա տեռած կյամ ա: Ասում ա՝ դե քյնինք: Քյնում ըն, Տանում ա մին տոնն էս տանը մինակ իրանք ըն ինում: էս տղան քյնում ա մին ճոխտ ըրկաթի շումուկ ինք օնում (էն վխտեն շմշկնեն ադաթ ար), պիրում, տամ էս ըխճկանը, թա.— Եր կալ կեց: Ես քյնում ըմ դոր-ծի, էնքան շոռ կկյաս մին օրում, վեր էս շմշկնեն մաշի:

Դէ էլ հինչ շոռ կյա, արկաթը կմաշվի՞՝, նըս-տում ա, լյաց ինում: Մին պառավ կյամ ա, տես-նում, թա.— Ախճի, ա հարթնը, իսե՞ լյաց ըս ինում: Ասում ա, թա.— Պա հունց լյաց լինիմ, ստի-ստի տանշվալ ըմ, մհենդյ էլ րրկաթի տրիխն ա տվալ, թա՝ մին օրում փող պիտի ածիս: Ար-կաթը փող կկյա՞: Ասում ա.— Մատաղ, լյա՞ց մի ինի, տիր տոան տակեն, էնքան ճըռ հա ճըռ րա, վեր դիլիմ-դիլիմ տեռնաւ:

Ստի էլ անում ա: Տղան կյամ ա թա՝ հունց ըներ: Ախճիդյը թա՝ դե հունց վեր ասալ ըս, ին-դի էլ րալ ըմ:

Մհենդյ էլ մին շարդաթ ա ինք օնում, ասում.— Էս շարդաթը կցցիս կլիսետ, էնքան շոռ կկյաս, վեր կյամ տհամ պտուն տեռած: Ելհա սկսում ա լյաց ինիլ: Ախճ կլիսեն քցած շարդաթը շոռ կյա-լավ փող կկյա՞: Էս պառավը կյամ ա տեսնում, թա.— Մհենդյ իսե՞ ըս լյաց ինում: Թա.— Պա հունց անիմ, վեր լյաց լինիմ, մհենդյ էլ ստի ա ասում: Էս պառավը լյավ խորհուրդներ ա տամ, թա.— էն ա՝ տեսնում ը՞ս էն ցաքի քոլը, մին դոնում քցի շարդաթը մաշը, սաի ծիք տու: Տի էլ անում ա: Մհենդյ էլ պիրում ա տասնհենդյ կու-ժանոց մին կարաս, թա.— էնքան լյաց կինիս, վեր էս կարասը ըրտուսութավ լցնիս: Լյաց ա ինում, լյաց ա ինում: Դէ հինչքա՞ն պիտի լյաց ինիս, վեր էս կարտսը լցնիս: Պառավը մին էլ տ կյամ, մին էլ հրցնում: Աս թա.— Ախճի, պա հունց անիմ, էս հինչ ցաք ար, հինչ կրակ ար, վեր ես մաշը ընզա: Թա դե ասում ա:— Քյուլիմ տրա-կոնդը վեր տի ա: Էն ա՝ արխեն ճյուրը, պիր լցրու կտրասը, մին խրեդյ աղ քցի, խառնե սաի՝ կինի աղե, ըրտասունքտ էլհա աղե ա: Կյամ ա լհա տի անում: Էս օխծ-տղան կյամ ա, թա՝ վելինչ, լյավ ա: Վերջը էս տղան վեր մին էլ դործի ա քյնում, էս աղճիդյը մտածում տ, մտածում, եր կենում ստղաս փախչում: Ասում ա՝ լհա հտմ կբյինիմ իմ հոր տեսնամ, հտմ էլ լհա կաղատվիմ

Էս ցավան։ Հի՞նչ ա դյուգում, թա իրեք պայմանը վեր կատարալ ա, մհենդյանց տենը արքայություն բիգի ինի եր ա կենում փախչում։ Քյում ա, քյում, մին աեղ խե՞ շատ ծրավում աւ Եշում ա տեսնում՝ առաջին մին դրբակ կաւ Ստի մին թիթեվ կուփե ա տամ, դրբան պեցվում աւ Նի ա մնում, ճյուր իսմում, օզում ա թա տյուս կյա, դրդան փակվում ա, մնում ա մաշին էս հի՞նչ պեն ա, հինչ պեն չի՞։ մնում ա մաթալ։ Դե ախր, հի՞նչ անեւ Եշում ա աեսնում՝ մաշում մին տոն էլ կա. քյում ա տեսնում՝ սաեղ մին մարգ քոն իլած, պոշնեն չուրանում աւ Քյում ա, մին կուա ճյուր պիրում, տամ էն քոն իլած մարգուն։ Ստի քոն իլած էս մարգուն օխար տարե պահում աւ Մին օր մին գառի կյամ ա, գրբաղեն էն կողման թա՞ ծարավ ըմ, մին խրեց ճյուր տու, թա՞ պա քեղ հունց ճյուր տամ։ Լիա ստի ծիք ա տամ, դրդան պեցվում աւ Ասում ա. — Դե ստղես ճյուրը չորացալ ա, էն մաշզոլ կուժեն մաշին ճյուր կա, քյնի խմեւ Քյում ա թա խմեւ, էս օխտը տարե քոն իլած մտրդը եր տ կենում, թա. — Պա՞ էս հինչքան ըմ քոն իլալ։ Հաշվում ա տեսնում՝ օխար տարե։ էս կնգան հրցնում ա, թա. — Էս օխտ տարեն հու՞կ ա ինձ պահել։ էս գառին ետ ա տեռնում, թա. — Ես ըմ պահալ, էլ հու՞ պիտի պահե, քո կնեցյն ըմ, ճյուր ըմ տվալ, ճտնճերտ տեն րտլ, կերակրալ, թմդալ-թմդցրալ, տուղիսուգի, ու էսքան էլ տանջվալ։ Էս վարումը էս ախճիգյը նի ա մնում, թա՞ հինչ ա՞։ Էս մարգը ասում ա. — Էս կնեցյը իմ կնեցյն ա, օխտը տարե ինձ պահալ ա, պա տու հու՞ ես։ Սա թա. — Էն մհենդյ եկավ, քեղ ես ըմ պահալ։ Էն, թա՞ ես ըմ պահալ, էս թա՞ ես ըմ պահալ։ Էս մարգը ասում ա. — Դե լավ, քեցեք բաղալ՝ հու հինչ օդում ա, թող պիրի Քյում ըն. Էս կնեցյը ուրան հմար հինչ ասիս ինք ա օնում։ Էս ախճիգյը մին մժմահի ա ինք օնում, մին տենակ, մին էլ մին նոռնը։ Պիրում ա տոն, աենակն ա նոռնը տինում ա մժմահուն մաշը ու ասում. — Թա էս մարդուն ես չինիմ դահած, թող էս տենակը պոկս մտնե, թա ես ինիմ պահած՝ թող էն նոռնը պտոպատառ տեռնաւ։ Ստեղ նոռնը պտոպատառ ա տեռնում։ Էս մարդը էս աինձկանը ստեղ յոր ա օնում՝ ուրան կնեցյ։ Վերջը էս ախճիգյը բախապորվում աւ Ուրան կնգյանն էլ կապում ա ծիռու հետան, քաշքաշ անում։ Ստի էլ իլալ ա։

14. ԱԼԱՀԱՅԵՐԴՈՒ ՔԱԹԸ

Մին թագավերու, շտտ զողրա թագավեր ա ինում, ժառանդյ չի ինում։ Մին դերվիշ վիճակ ա քցում էտ թագավերեն յրա, կյամ թագավերեն

տեսության։ Տեսության ա կյամ, թա. — Քեղ մին ժառանդյ ըմ ալական, պայց վեր ժառանդյ եկավ աասնհենդյ տիրեկան տեռում, ինձ բիգիս տալ ժամանակավեր։

Թա. — Թաքյի ժառանդյ ինի, վեննավը-կլիավը քեղ ինի։

Վերցը՝ թա հունց ա անում, հունց չի անում, էս թագավերեն մին ժառանդյ ա ինում։ Պիրում ըն կնոնք անում, անումը տինում Ալահավերդի։ Ալահավերդի, այսինքս աստծու աված։

Էս Ալահավերդին վեր կյամ ա տըսնհենդյ տիրեկան ա տեռնում, գերվիշը կյամ ա, թա. — Թագավեր, ես համան դերվիշն ըմ, եկալ րմ աղատ տանիմ։

Թագավերը ուրանան քյնում ա. — Ա, — ասում ա, — կառավարությունս, թագավորությունս օղի, էտ պենան հեռե կտց։

Թա. — Զէ, կասս լավ կինի, աաս վու՞ վատ։

Ստեղ թագավերեն լյավ կորցնում ա, թաղավերեն էլ ճար չի մնամ։ Ալահավերդին տամ ա գերվիշին, գերվիշը յոր տ օնում, քյնում։

Քյնում ա, մին սալըու տեմ ըղնում։ Թա. — Ալահավերդի, — գերվիշին ա ասում, — կա էս թողթը, էս կյիրը, կրթիլավ քյնա, էն ա սարումը մին փանար կա, էտ փանարը եր կալ, պեր էն փնարավն, էկ, աշխարհը մերն ա, հինչքան թագավերություն կա, էն փինարավը կհաղթինքյ։ Թիփըրա, Պայց, էն փնարին կշտեն վըեսկե, արծաթ, — ասում ա, — պրոմ-բռլյանտ, անգին քարեր շատ ա իննական, լիդյն ա իննական, յոր չօնիս, հա՞։ Եթե յոր օնիս, սալը հոփ ա կյիլական, մըննական ընք ղաթումը ծոր չօնիս, հա՞, յոր չօնիս Կա՛, առու էս մին կյիրը կրթիլավ քյնի, ես էլ էս մին կյիրը ստեղ կկարթիմ։

Դարվիշը մին կյիր ա յոր օնում ծերքը, մինն էլ տամ Ալահավերդուն ծերքը, ըղղե յա անում։ Աս քյնում ա, փանարը յոր օնում։ Վեր քյնում ա փանարը յոր օնում, ասում ա. «Հաղնանք գարվիշին ասալ ա՝ յոր չօնիս, վըեսկեն ստեղ թուփը շուգ, բռլյանտը՝ ստեղ, մին հլա շուքերս, ծոցս լցնիմ, վեր մին պեն պտահե, դրաղան մոտե ըմ, մին կերպ կծկիմ, տյուս կկյամ»։

Դարվիշը կլինե ա ըղնում, ծեն տամ. «Հա՞յ, յոր մի օնել, հա՞յ, յոր մի օնել, սարը հոփ ա կյիլական, մնըլական ըս սալեն ղաթումը։ Մննական ըս սալեն մաշին։ Նշում չի։ Զուքերը, ծոցս վըեսկավ, քարավ լցնում ա, սարը կյամ ա հոփ կյամ, Ալահավերդին մնամ տ սարեն մաշին։

Դերվիշն ասում ա. «Թագավերը գյիգլական ա, ինձ շարեշար անզլական ա, ես էս թագավերեն վեղան տյուս կյամ»։

Էտ տղան մնամ ա սարեն մաշին. տես ա շոռ

կյամ, տես ա շոռ կյամ, մին քամե ա եր կենում, մին հրարուի ա պեցվում, ընդեղանս, ծառեր-դատը սաղ փշրում ա։ Տեղ, մին սալլամա ա ինում, էս հրարուի վեր շոռ ա տամ, տաղատ մին ճուր ա տյուս կյամ, շատ վարար։ Մին տախտակ ա տինում էտ միբին յրա, լրտն նըստում, ճյուրը թշում ա, տանում Քշում ա տտնում, շատ տ տանում, խրեդյ ա տտնում, մին տեղ էտ տախտակը վեր ա կյամ, աեսնում՝ արդեն ընզալ ա լյուս տշխարհ։ Ստեղ նսառում ա մին քարու յրտ, լյաց ինում կյաց ա ինում, հունց ա լյաց ինում, պա՛հ, պա՛հ, պա՛հ։ Էտ լյացին յրա մին չորան ա կյամ։ Կյամ ա, տեսնում մին գեղեցիկ տղա նստտծ, լյաց ա ինում։ Այ աղա, — ասում տ, — էս վրընի տեղ ա, հի՞նչ դարդ օնիս, վեր եկալ ըս ստեղ։ Օխծըր ուրան պորտեն յրա, զուշը ուրան թենեն յրա սաեղավ թոշում չի

Թա. — Հայրիկ, հայրիկ սոված ըմ, մին կտոր հաց տու։

Չորանր մին կյարու պեղարճ ա տինում ծերքեն, օտում ա։ Ետնան յոր ա օնում աանում տոն, թա. — Ա կնեզյ, — ասում տ, — օխտր աղա օնինքյ, սօր էլ սրան ըմ քյթալ, թող տեռնա օթը։ Տըա շորերթ-դասը լվաց, խառն մեր խոցը նհետ, ճուկիս վուլ։

Պահում ա տրան, Պահում ա. էս աղան մին օր մին անգին քար ա տամ մորր, թա, ասում տ. — Մայրիկ, տար ընդեղ մին պառավ կա, աար ընդա յրա ծախս, տանը հեաե, խոցը հետե հի՞նչ հարկավեր ա, ինքյ կալ։

Տանում ա ծախում, մին քստկ փուլ ա տեռնում... ընդեղանս... էս հլա՛ մի ճոխա մյաս... ինքյ օնում, քցում վենները, աանը հետե աեստեն ինքյ օնում, կյամ։ Մշենդյ էլ Ալահվերդին ա տտնում, մին էրկու քար ծախում... ընդեղանս... ըննըհնեն, զուլզունն յոր օնում, կյամ. ընդեղանս... թա. — Ստեղ, մին երկու ըածանե, մին-մին ծերք տներ շինեցեյ։

Եինում ըն, Զուրանեն հեաե արկեկլոխ տներ ըն շինում, տմեգը մին ախսզը հետե հրսանեքյ ա անում, փսակում, տինում էտ աներեն մաշին։

Չորտնն ասում ա. — Ալահվերդի, մհենդյ հերթը քունն ա, մին ըխճըկան հսպան կաց, քյնինքյ, քըգ հետե օգինք, պիրինքյ։

Թա. — Հայրիկ, — ասում ա, — ես փլան թադավերու տղտ ըմ, ես ստեղ կննակտն ըմ։

Պիրում ա էս շորսը մին վեխճար մորթում, հաց ու պաշար սարբում, վեր հըղեցը նեղություն քաշի վուլ։ Ախեր, մննաս ընդավ, վեր ասիմ՝ էս աղան փանաըն էլ նհեան ա պերալ տյուս ա օնում, փանաըր նի կըցնում, աեսնում. աա՛, մին սուփրա քցվից, հի՞նչ սուփրա, հի՞նչ կերակուր-

նե... օտում ըն Օառում ըն, պրծնում. սա փինարին թա. — Ինձ հետե մին քյոհլան ծի հանե։

Քյոհլան ծի ա կյամ, յիհտը ափրած, սարքած... ընդեղանս... ծիուն զանգյուն կոխում ա, եր ա ինում զալուն, քշում, մնաս բարով ասում չուրանեն, շուրտնեն կնդանը, խոցը, ասց կենում, քյոնում։

Մհենդյ համան դտրվիշը իմաստուն տ ինում... վեր Ալահվերդին ստեղան տյուս ա եկալ, դյիդացալ ա, մհենդյ օղում տ կյա, Ալահվերդուն սպտնե, փանարը ծերքան խլի։ Հա՛, Հա՛, ըսպանե, փտնարը ծերքան խլի։ Աստուծուն էլ ա հայտնի տեռնում։ Նտ էլ հրիշտակ ա դարկում, թա՛ քյնի դերվիշին սպանե, վեր Ալահվերդուն մին պեն շանե։

Ալահվերդին ծին քշուծ քյնում ար, եշում, տեսնում՝ մին սկ ծշավեր ա թոշած կյամ, հունց ա կյտմ։ «Ա, էս հիշտե՞ղ կյողը կենամ, վեր ինձ կտտ շանե՝ սպանե վուլ։ Մին էլ եշում տ, տեսնում՝ էն մին ունդունան էլ մին կյապուտ ծիավեր ա թոշած կյամ։ Էտ կյապուտ ծիավերը կյտմ տ, էա սե ծիավերեն վեր թխում ա, սկ ծիավերը րդնում տ ծիուն փորեն տակը, ըստակում։ Ալահվերդին մուատնում ա, թա. — Էտ լվոթունը վեր տու ինձ ըրեր, ասե տեսնամ՝ էտ հի՞նչ ա, հու՛վ ըս, րալքյի, կկարիմ էտ լյուվությունեն տեղը... լյուվությունեն տական սրյուս կյամ։

Թա. — Ես աստծու հրեշաակն ըմ, գյղացալ ըմ, վեր աա կյամ ա, թա քեղ սպանե, ես եկե նրան սպանեցի։ Այսուհետեւ քեղ էլ մահ ջօնիս, Օրասետը մահ-դագ ջօնիս։

Տյուս ա օնում էրկու ինձոր տամ... ընդեղանս... Համ էլ, թա. — Յալլեխա ինձ տու։

Յալլեխը յոր ա օնում, քսում ծիուն աոշը, ինձորն էլ, յալլեխն էլ թա. — Տար, մինը քու հոր աոր, մինն էլ քու մոր, կյաց ինիլան քոոացալ ըն... ընդեղանս... Հիլիվերտլ ըն ինձորը վեր օաին, շիհըլըննական ըն, յալլեխն էլ վեր քսին ըշկերեն՝ լվննական ըն, սղանան։

Հա, Պիրում ա... ընդեղանս... յալլեխը քսում հորը, մորը ըշկերեն... Հո՞ր ա, մինն էլ րիդար իմ ըշկերես օսիմ*... Հարը, մտրը սղանում ըն։ Հարն ասում ա. — Բալա, փլան թադավերը ինձ յրա կուկ ա կյամ, հու՞նց ընք ըննական։

Թա. — է՛հ, հայրիկ, ես էս փինարեն դարդան հի՞նչ նեղություններ ըմ քաշուլ, հի՞նչ նեղություններ, սկի դյուդում ըս։ Էտ փանաըր վեր մեր ծերքեն ա, վեր մի թադավեր մեղ տեղան աուրուր շի աա։

* Հերիաթ պատմառը կուր է (Ս. թ.)։

Կոեվը ըղնում ա: Փանարը վեր վառում ա,
թշնամու զորքը լոխ վառվում ա: Զորքը կըտո-
րում ա, անց կենում, կյտմ:
Պրծավ:

15. ՆԱՄՈՒՍԱՎ ԿՆԵԳՅԸ

Մին մարդ, մին կնեգյ շատ սեր ըն ինում:
Տահանց էլ էրկու աղա խոխայա ինում, պայց
ապրուստը լավ չի ինում: Մարդը վախում ա,
թա տանան տյուս կա, կործի քյնի, կնգանը նհետ
մին փիս պեն պտահե: Հո՞վ ա գյուղում կնեգյ
ա, լի:

Վերջը մին օր կնեգյն ասում ա.—Ա մարդ,
չքե՞լ հիր ընք ստի սոված մոնըլական, խե՞ աշ-
խատանքու լրս այուս կյտմ:

— Ա կնեգյ,— ասում ա,— վախում ըմ թա՝
մեր հալալը հրըմցնիս, տա հմար էլ քյընում լրմ:

Թա.—Արխային կաց էա կողման: Եկ անց
կաց, քյնի մին աշխատանք ըրա, պեր ապրինքյ, լի:

Ախրը, մոլըհաթ ըն անում, էտ մարդը անց
ա կենում, քյնում: Տտնը վել մին զադ չի ինում,
կնեգյը մին քանե քար ա ածում զզանը, տակեն
կրակ անում, խոցը ըրխըյնցնում, վեր քունավ անե:

Աստծուն հայտնի ա ինում: Գյուղում ա: Հրիշ-
տակեն դարկում ա, թա.—Քյնի, էս կնեգյը վեր
մարդին նհետ պայման ա կապալ, վեր ասից՝
պեն չի ինիլ, կքնիս իրեք հետ փորձիս, տեսնտս
զյուղ ա ասա՞լ, թա՝ մարդին խափալ ա:

Հրիշտակը կյամ ա, տոռնր թակում, թա.—Մթնալ ա, շոլումն ըմ մնացալ, տոռնտ պեց, կյամ
կոշատ՝ լուսորցնիմ:

— Զի կարելի, ես՝ օղլուշաղ, թուլ աամ
կյաս, մանիս տոնս:

Թա.—Հինչ օղում ըս, կաւամ, աի սոված...

Թա.—Հինչ օղում ըս՝ առ: Քաշավըտ մին
վեսկե ել տաս, թողել լրմ:

Հնդունում չի:

Մին էլ ա կյամ, տոռնը թակում, թա.—Թյուզ
տո, կյամ կոշտդ, ցորա ա, շոլումն ըմ մնացալ,
հի՞նչ կինի, դոնազ, լի պահե:

Թա.—Զի կարելի, դոնազ լրմ ընդունում:

Իրեք հետ խոսում ա, իրեք հետ էլ վել չի
օնում: Աստված հրիշտակեն ասում ա.—Ամեն
քշեր մին քսակ վեսկե տար, տիր պերցեն տա-
կեն, վեր աի ուրան խոսկեն դյուղ ա:

Ասա էլ վեսկեն պիրում ա, տինում էտ կըն-
դանը կլիսեն աակեն: Աս էլ էքսը եր ա կենում,
տեղը հվըքեյիս եշում-աեսնում՝ մին քսակ վեսկե՝
կլիսեն աակեն: Թա.—Ասավա՞ծ, իմ խոցը ոու-
փին հսցրալ ըս:

Լյավ ապրուստ ա սկսում ապրելը և լյավ ապրում
տո: Հիմա պիրում ա տներ շինում: Լյավ տներ ա
շինում: Էտ կնեգյն էլ վել մին պարիկամ չօնե,
մինչա՝ մին պելի օնե, մին տաքյեր: Պելուն
իրեսր տյուս չի կյամ էս կնեգյը: Տղեն մինր,
լհա, սաի խիլլա մեծ աղա ա ինում, փուլը տտմ
ա ըտրան թա՝ տար տո պելուն, հինչ հարկա-
վեր ա տան համար՝ թող ինքյ օնե: Էտ կարդավ
ա անց կացնում:

Մին էլ մին օր հեռագյիր ա ստանում մար-
դան, թա՝ կյամ ըմ: Էտ կնեգյը պելեկնգանը, պե-
լուն, մին էլ՝ տաքյորը, ամեգյը մին ծի տ տամ,
եր ըն ինում, քյնում առաջ: Էս պիլակենն ու պե-
լին մին խիլլա առաջ ըն րղնում, թա՝ տահանք՝
րիսպերք-ախապերք խիլլա վաղա մունմունու աա-
հալ լըն, թող նազլ ընելավ կյան, էտ ախպերը
նազլ ա անում, թա, դե ստի, ստի, ստի... տոն
ա շինալ:

— Հինչա՞վ ա շինալ,— ախպերն ա հրցնում:

Թա.—Այ ախպեր, վեր վեննա ծուալ րս տյուս,
կնեգյա լրրությունավ ա էտ փողերը ըշխաղալ,
հա: լրբությունավ ա փուլ ըշխաղալ, տոն շինալ:
Օրական հարուրը եկալ ա, հարուրը՝ քեցալ:

Տատանվում ա ըտեղ: Տաաանվում ա, նահանք
էլ՝ պելին ու պիլակենը առաջ ընդած, հու՞ րիդի
հինչ ասե: Կյամ ա մին ծորում վեր կյամ, կնգա-
նը կանչել աամ ուրան կոշար, վեղը կարում, վեր
քցում էտ ծորեն մաշին, շարսավն էլ դիրավ օնում,
անց կենում, կյամ: Կյամ առն սաուր-ընդուր
հրցնում, վել մինը մին վաա խոսք չի ասում
կնգանը մասին: Պելին ասում ա:—Պա առւ
հու՞նց դիմիշ ըրեր ինդի օղլուշաղեն վեղը կարիս: էդքան վախիա էտ շինությունը շինիյիս, մին դո-
նում իրեսր տյուս շեկավ, թա փուլը ուրան ծե-
ռուքը ինձ տա, աղատ ար պիրում:

Տդան էլ լաց ա ինում, թա.—Պա մայրիկը
էն հինչ ա տանան այուս ըս եկալ, մարդու նը-
հեա խոսալ չի:

Դե, խլբանեն կտրեյիս խոխերյ ըն:

Դե, անց ա կացալ, սպանալ ա, սպանալ ա:

Մհենգյ՝ մին վաճառական կյամ ա էա ծորու-
մը վեր կյամ, հինչ աեղ վեր էտ կնդանը սպա-
նալ ա, ընդեղանս... աեսնում՝ մին ճյուր ա քըյ-
նում: Թա, «Ա, էսքան աարե ար, ես կյամ ըմ
սաեղ վեր կյամ, ստեղ ճյուր չի իլալ, քյնիմ,
աեսնամ՝ էա հի՞նչ ճյուր առ: Կյամ, աեսնում մին
օղլուշաղ՝ վեղը կարած: Տանա՝ էտ օղլուշաղան,
մին ճյուր ա այուս կյամ, հի՞նչ ճյուր: «Ա, այ
մարդ, էս հի՞նչ պեն ա, էս հի՞նչ առ: Զարմանում
ա: Տի զարմացած էլ եշում ա, աեսնում՝ էրկու
մուկուն մին ծակա տյուս եկեն, խաղ ըրեն: Խաղ
ընեյիս տեղը մին մուկունը մինին վեղը պոկից:

Պոկից, ինքը փախավ, նի՞ մասվ ծակրւ Մի կա սպասում ա, աեսնում՝ մուկունը ծական այուս ևկավ, խաղ ընելավ ևկավ, պուր աված կլոխը ափրավ մուկնեն յրա, ճիրան շաղ ավավ, մուկունը սրդացավ, Քյեցեն նի՞ աեռեն էլ լ՛ա ծակը, էս վաճառականը, եր ա կենում, էս կնդանը կլոխը յոր օնում, աանում, աինում յրան, էա ճիրան նի բսում, սղանում ա կնեղը, աեռնում մին հլուրի-փարի Ծերը մեկնում ա, վիղավը քցում, թա պողափի անե հետր, սա, թա.—Ես էս ծորումը սոված, վեր ընդած, խե՞ թայդի ըս, առու վեր սրդրցալ ըս ինձ՝ ես քունն ըմ, առու էլ՝ իմն ըս, լ՛ա՝ մին փոր հաց տո, օահմ, օշու հվաքիմ,

Պիրում ա օրան, հաց աամ, օառում ա, ընդեղանս... թայդի ըղնում:

Թա.—Թայդի մի րդնել, էս ա մթնում ա, ես՝ քոնը, առու իմը, հինչ օպում ըս՝ կանիս, լի

Հաս Սաւեգ սպասար ա: Մթնալ ա: Վեր մթնալ ա, թա.—Փեշավ քյնիմ, կյամ:

Էս վաճառականը մին խրեղյ հվատում չի. պիրում ա մին զայիմ թիլ կապում կուռնան, պեց թաղում: Քյոնում ա, կյամ չի էս կնեղը, վաճառականը թիլան ծիքը ա տամ:—Ախճի, էսշանք վախա ին՞ կյամ չըս:

Ախճիդյ չկա, Քյոնում ա, աեսնում, թիլը քոլա կապած, ինքը՝ կա վուչ:

Էս կնեղը տաղատ քյոնում ա մին չուրանու ոուղավ ինում: Չորանը լլ լ՛ա թայդի ա ըղնում, թա նհեաը հարարերություն անե, չուրանեն ասում ա:—Թայդի մէջ ըղնել, ես սոված ըմ, մի կա հաց տո, օահմ, նանա եանը ես քունն ըմ, լի, թո՞րն ըմ քյննական էս վրինի աեղը: Ես քունն ըմ, առու իմս:

Հա, սաեղ մին խրեցյ փորր պընդընում ա, չսրանը մին էլ ա հալաս անում, ծերը աանում: Թա, ասում ա:—Վեխճարա ցրե եկած ա, եր կաց, վեխճարա հվաքե մին եեղ, վեր կյուլն օտե վուչ, նանա եանը եկ՝ սրաեա օղածն ըըս:

Չորան, վեր չորան. կնդանը յոր ա օնում նը-հեաը աանում: Վեխճարը թուփ ընեյիս, ըղավ մին վարար կեա ա ինում քյնիիս, էս հյուրի-փարին աշկ ա կյուղանում, ուրան նի՞ քցում էտ կետը, կետը կնդանը յոր ա օնում, քյոնում, չորանը պընդընեն լուու աալավ եա ա աեռնում, կյամ:

Ճյուրը տանում ա էս կնդանը մի ճղացու չըրիւու տեմ անում: Ճիղացանը աեսնում ա, վեր ճյուրը կարվից կյամ ա, աեսնում՝ մին հյուրի-փարի ճղացեն նվեն մաշին: Տյուս ա օնում, աանում ճեղացը, թիրշած շորերը հանել աամ, նորը կյենալ աամ, թա, ասում ա:—Ախճիդյ չօ-նիմ. առու, լ՛ա, իմ ախճիդյն ըս:

Ախճիդյ ա ընդունում, մնամ ա էտ ճըղց-պանեն կշան:

Էս կնեղը մին ուրթանա եր ա կենում, աես-նում՝ մին քսակ վիսկավ լիզը կլինեն աակեն աի-րած: Յոր ա օնում, աանում ճղցպանեն թա. — Հայրիկ, սով ա ըղնլական, ուաելու պեն չի ին-նական, ցորեն ինքը կալ, ամբար ըրա, հանցու վեր համ մունք օաինքյ, համ էլ՝ օգողներին աանք, սով ա իննական:

Ճղցպանեն խելքը մանում ա, ցորեն ա ինքյ օնում էտ վիսկավը, ամբար անում:

Կյամ ա սով ըղնում: Կյամ ա սով ըղնում, սա կաղեթ ա քցում, վեր՝ հուվ վեր սոված ա, առանց փուլ ցորեն ըմ աամ, եկեր աարեք:

, Զավը ըղնում ա, լոխ էլ քյնում ըն: Համ էտ առեառլականն էլ ա քյեցալ, չորանն էլ ա քյե-ցալ, էա կնդանը մարդն էլ ա քյեցալ, աիսկերն էլ ա քյեցալ, պելին էլ ա քյեցալ... ընդեղանս... լոխ քյեցալ ըն աեղ:

Լոինին ասում ա:— Տուք հլա կացեք, սահանց հղե քցիմ,—կնեղյն ա ասում,—ինքն էլ աղամար-դու շորեր ա կյեցալ, հո՞վ ա ճինանչում նահանց հղե ա քցում, պրժնում, մթնում ա, թա.—Քշերը էրկան ա, եկեր նալլ ըրեր, լուսանա, աուք էլ ծեր փայը յոր կօնիք, քյնիքյ: Օրինակ՝ առու առե-արական մարդ ըս, երկիր քյեցած, շոռ եկած, պատմե, աեսնանք՝ կլսավու հինչ ա անց կացալ:

Էա վաճառականը նալլ ա անում՝ թա՝ սաի սաի, մին չըաեսած պեն ըմ աեսալ:— Մին օղու-շաղ, — ասում ա:— վեղը կարած՝ մին կետու զրաղե, մին ծորում, աիսպուր աեռած: Էրկու մուկուն եկեն իւալ ըրեն, մինը մինին վեղը պուկ ավավ, մի կա կացավ, վեղը նորը մինան աիրավ աեղը, էա ըիսպի ճիրան քից, սղացավ: Ես էլ՝ էն օղուշաղեն կլոխը աըի յրան, ճիրան քսեց, սղացավ...

— Քյուրդ, առու նալլ ըրա, — չուրանեն ա ասում:

Թա, ասում ա:— Մին օղուշաղ ծերքս ընդավու Սաի ծերքս աարե, վղավը կալի թա պիրիմ, թոշան պաշիմ, թա՝ ին՞ թայդի ըս ըղնում, եր կաց, վեխճարը թուփ ըրա, նանա եար՝ եկ, ես քունն ըմ, առու իմը, պայց...— Քյուրդն էլ տի ա պատմում:

Մհենդյ, վերթը եկալ ա մարդին: Մարդն ասում ա:— Տահանք հինչ վեր նալլ ըն անում, հանց ըն... հանց ըն... հանց ըն, լ՛ա, իմ կնդանս աեսած:

Թա.— Յանի, կնեղյա կճինանչի՞ս:

Թա.— Պա, հո՞նց ըմ ճինանչիլ:

Ախճը, ասալ չըմ, թա կնեղը աղըմարդու շո-րեր կյենալ աամ, թա, ասում ա:— Ախճիդյ չօ-նիմ.

ա. քյնում ա, էն ընգյունին կնդա շորեր կենում, կյամ, իրեսը այուս կյամ, թա.—Ա մարդ, —ասում ա, —քու ախպոր անդում կալիր, ինձ սպընեցիր, վեղս կարեցեր, քցեցեր ծորեն մաշը... ընդեղանս... մհենդյ տոպլ ըս գյուղում՝ քու ախպեր:

Եր ա կենում, ախպորը տինում մին տիտակույրա, խանչալը քաշում, կտորում, տեն աժում:

Մհենդյ մարդ ու կնեգյ էն ըն տի նամուսավ, ույրաթավ ըպրեյիս:

16. ԽԵԼՈՒՆՔ ԸՄ, ՓՈՂ ԶՕՆԻՄ

Մին տղա ա ինում, եր ա կենում տյուս կյամ թաշիրստան: Տեղ աահանք բոլոր թաշիրներ ըն՝ առետորականներ: Հա, էս տղան վեր քյուշավը քյնում ա, ծեն ա տամ. տելունք ըմ, փող չօնիմ, խելունք ըմ, փող չօնիմ: Էս թըզրնեն ասում ըն: Աև մարդ, էս հունց խելունք ա, վեր փող չօնես:

— Խելունք ըմ, փող չօնիմ: Խելունք ըմ, փող չօնիմ:

Էս թաշիրներեն կլիավերը մեծ թաշիրը, պուաված ա ինում, բայց դրան մի ախճիդյ էլ ա ինում, ասում տ. «Փորձիմ, տեսնամ, լհա վեր խելունք ինի, ախճիդյս կտամ ուրան, Խելունք ինի, լհա, տղացու էլ յոր կօնիմ», կտնչում ա. — Այ աղա, եկ ստեղ, տեսնամ՝ էտ հունց խելունք ըս, վեր փող չօնիս:

Թա.—Դե, ախրը, խելունք ըմ, փող չօնիմ:

Թա.—Պես ա, վեր փող տան, կկալի՞ս աշխադիս:

Թա.—Լափ, լյավ կաշխադիմ:

— Դե հինչքան փող ըս օղում՝ վերցրու. էն ա՝ բոլոր պադրաստությունը քաշած, վեր տյուս կյան, քյնին առևտուր, տու ել նհըտնեն կքյնիս:

Թա.—Ես իմ գյիդացածն ըմ ըննական, աի պիներեն նհետ հի՞նչ օնիմ:

Թա.—Դե, հինչ ըմ ասում:

Պայման ըն անում, փող ա յոր օնում, թըզրներեն նհետ քյնում: Քյնում ա կընդակ ինքը ուրան կործը տեսնում՝ հունցը խելքը կտրում ա: Ապրանք ա վաքում, նորյար-զատ ա փոնում, տինում ըպրընքներեն յրա՝ զտրաղուլի: Ճյորեք ա ինքյ օնում: Հունց վեր մեծ թաշիր ինի: Են մնացած թաշիրնեն մնամ ըն ըուժիները պեց. «Այ մարդ, էս հունց խելունք ա, վեր էսքան փողը ծախսից, քամուն ըուեխը տվավ: Առուե, թող ամեն հըյվանում մին հինդյ մանեթ ըշխադե, սրանավ պեն կինի: Էս հունց որիդի ըշխադե, վեր թաշի-

րին փողերեն տեզը տաս: Մին իլխա ապրանք ա ինքյ կալալ, թա հինչ բիդի անե, վել մինը քնենքյ չի անում: Վերջը. Հու հինչ մտածալ ա՝ անե, հու հինչ առաջադրանք օնե՝ կադարում ա, կյամ ա հըդե ինիլի օրը մուանում: Ախեր, էս «խելունք» խոխան մին կարդին պեն չի ըրալ: Զվալ-մվալ լոի հվաքում ըն, ճյուրննեն պըռնոտած հղե ըն ինում: լոի էս խոխիեն յրա ծծղոտում ըն: Սծղոտում ըն, հունց ըն ծծղոտում, թա. «Կեշինչ, թաշիրը վեր ընդավ, քյարացավ, էլ եր չի կենա: Մեծ թաշիրը վեր ընդավ, քյարացավ, էլ կարել չի եր կենա: Էս հի՞նչ ա, էս որիդի տանե՝ հի՞նչ անե: Տանավ հի՞նչ կինի, հինչ աշխադանք կինի՞... փլան-փստան»:

Վերջը, հղե ըն ըղնում. նահանց ճյորոտանքը պեռնած, սրա էլ՝ էս հոքավերեն՝ ապրանքը իլխա ըրած, հունց վեր մեր էս կոլխովեն ապրանքն ա:

Քյնում ըն, մին հաշա հըղըցում վեր կյամ: Վեր ըն կյամ, հաց օտում, ճյուր խմում, պատառ դինշանում, թա.—էս հղեն որդե՞ղ ա տանում: — Քյնում ա փլան քաղաքը,— ասում ըն, էս մինն էլ՝ փլան քաղաքը: Փլան քաղաքը, փլան տեղը...— էս մինը հի՞նչ տեղ ա քյնում: Թա.—էտ մինն էլ դեղան գյալմաղն ա: Այսինքս տաղավ քյնացողը ետ չի կյամ:

Թա.—Ես սանավ քյեցե, էս գեղան դյալմաղ ճանապարհավը:

Ախեր շատ տ նղացալ էս թաշիրներան, վեր յրան ստի ծիծաղում ըն, մասինարա անում:

Թա.—Ա՛, հի՞ր ըս կյական,— էլ լհա մասինարա ըն անում:

Թա.—Սեր կործը չի, ժամանակը հիբը կպի-րի՝ ես էլ նհեար կկյամ:

Ասում ա, հղե ինում գեղան դյալմաղ ճանապարհավը: Դե, նհետը իլխան էլ ա տանում, ճյուրենեքյն էլ, նյուքրնեն էլ, տերաակ շուվալնեն էլ: Քյնում ա, քյնում, մին ծովու տեմ ըղնում: Սովեն տեմ ա ըղնում, վեր կյամ, զալ շինիլ տամ, իլխան տըղավարում, օրա-մորա վեր թողում՝ ուրանն առանձին, նյուքրներեն առանձին: Տանում ըն, ամեն օր, նյուքրնեն ծիերը ըրըցնում, հիյվնեն պահում: Ինքն էլ՝ էտ հեյվըներան կուծի-կուծի մըթոտում ա, նի տամ ծովը. կտրում ա, նի տամ ծովը:

Տու մի ասել, էտ ծովում էլ սով ա, ծուկուննեն սովից կոտորվում ըն: Տահանք օտում ըն էս մորթոտած հիյվընեն, լյավ ապրում: Մին ծուկուն, մին քյալմա յոր ա օնում մին դոնում, աանում ուրանց թադավերեն, թա.—Պա, ասել լըս՝ մին տղա, էս ա հինչքան ժամանակ ա մեղ ստի լյտկ կերակըրում ա:

Թագավերը թա.— Կնք տի ա, տուք էլ էն անդին բրերան տուս ավեր, հինչքան օղում ա՝ թող հցարե.

Էս տղան մի ուսթանա եր ա կենում, տեսնում՝ ծովին գրադր անգյին բրերավ լցրած Հվաքում աւ Դյուզում րս՝ հի՞նչ ա անում, Տինում ա հիյլըներն թթեն մաշին շուրջնում, շինում քաքուու Քարու աւ անում, անգյին բարերը մտշը լցնում, շուրջընում, օխար պեռնը թմամում, Ախեր էս զամմակ նյուբրննն էլ շեն իմանում, թա սա հինչ տ անում Վեր օխար պեռնը թմամուս ա, քաքուն էլ վրդանում, պիրում ա օխար պեռն էլ սայա քաքու անում, մաշը ակրտակ Վերջը հղե ինի ին վաղան էլ մուտանում ա Վեր լոփս թմամում տ, տակն էլ մնամ ա հըղեննի մին մուզթերւ հեյվտն, էլ ողեն չկա, վագան էլ եկալ ա Ճյուրու տերը պկրաստում ա, էն անգյին բրերավ քաքունն լցնում ա շուվըլներն մաշը, ճյուրուտերը պեռնում, սայտ բըրուունեն ել նի տամ մաշերը, կընզակ մին անգյին բար ախնում շուրումը, հղե ինում էս անգյին բարը հիրը շուրան այուս շի օնում, մի՞ն լըրաղվան ա տամ, մի՞ն լըրաղվան, վեր հանց ա լամփուշկա ինի է շղեննի մի՞ն շողուն ա անում, մի՞ն շողուն ա տնում, րայց հև վերը չի կյում, Կյամ ա հղեցը նահանց պտահում՝ թաշիրնելըն:

— Բարեւ

— Բարեւ

Հի՞նչ բարեւ Յորտ օր ա, շողուն, մին աեղ նահանք վեր եկած, կոչ եկած, պեն չկա թա կրակ տնին, լիա ցուրտան կոքնեն զնգնգում ա: Ինքյն էլ ա տեղ վեր կյամ, Վեր կյալն ի րաթ, յոր ա օնում քաքուունեն, կըավերու նման կրտկ անում, Վեր կըրուկ ա անում, սահանք կյամ ըն թա թքանան, ասում ա: — Հեռե կացերյ, հեռե կացերյ, իմ կրակն յրա թքանալ միք:

Թա.— Դե հինչ կինի, էա բըրուուն մըդ էլ տո, մունք էլ կրակ անինք, մրսում ընք, Վերջը, էա քաքուու տննական ըս ծախիս, լի. քանե ասիս, հաղկը կտանք, վեր մին կապեկ ասիս, մունք հենդիյը կտանք:

Թա.— Հի՞նչ կինի, բասպիսկա ավերյ՝ հու քանե հաս ա օղում, վեր աեղ հասնինք, կյինհատինք քաքուուը, ես իվիլ օգում ըըմ, հու քանե քաքուու յոր օնե, կյինհատած կյինավ հաղկը կտա:

Թա.— Պա, էտ լիա լափ լյավ ա:

Եր ըն կենում, մինք ասա քաքուուու բասպիսկա ա տամ, մինք՝ օթ, մինք՝ հենգյ, մինք՝ տասնը՝ հենգյ, հուվ ա գյուղում, հու հինչքան ա մրսած: Լիա, սահի, էտ սայա քաքուունեն բասպիսկայով սահանց յըա լոփս պժենում ա լոփս պիժենում ա, լոփս տտմ ա, էլ սայա քաքուու շի մնամ: Սահանք

կրակ ըն անում, տքանում, օտում, խմում, կշտանում: Վեր լյավ թքանում ըն, լավ կշտանում, էլ լիա սկսում ըն սրա լրա ծիծաղելը, մասխարա անելը: — Քարուուավ հի՞նչ կինի: Առու, թող մինը օթ կպեկավ ծախե հա՛-հա՛-հա՛, հի՛-հի՛-հի՛, կորավ...

Ճանապարդ ըն ըզնում, ինքյը պտտառ լախ ա անում, ետև քյնում, նտհանք շուտ քյնում ըն, մուշտլեղը տանում ըն մեծ թաշիրին: — Թաչիր, աշբա լյուս ինի. ժնելունք ըմ, փող շօնիմը» քեղ հետե էնքան քաքու ա պիրում, ծմեռնըս, լոտ, էրի, մխթարի, հա՛-հա՛-հա՛, հի՛-հի՛-հի՛, քաքուու ա պիրում:

Թաշիրս պլանում ա, կյամ ա թա: — Ա, էտ հի՞նչ ա, էտ պեռնը վեր ըս օնում, հի՞նչ անիս. եկալ ա տեղ հասլ, օղում տ պեռները վեր օնե:

— Քեղ կործ շօնիս, — տսում ա, — ինձ մին օթաղ տո, իմ պերած ագրանքը տըղվարիմ: Բալքաս, սկի կյին շօնե իմ քալրանքն, առանց տեսնալու իսե՝ յըս ինձ րիյաբուու անում:

— Ա, հունց թա կյին շօնե. քաքուուեն կյինը վե՞րն ա, նրա կյինը՝ բղարումը մինը էրկու կապեկ ա քյնում, տու իսե՝ քանե յըս ծխըլական աա: — Քեղ գործ շօնիս, քեղ գործ շօնիս:

Թաշիրը կղնվում ա, մին օթաղ ա տամ, թա: — Տու ել նի մըս րտեղ, էլ ըտղան, տյուա շկյաս: Գյուգում ըմ՝ փշինական ըս, տու իմ փողերս պեր, ինձ աո, տու վեր ջնաննամ օղում ըս, քյնի: Թաքուան փող կինի՞:

Տանում տ ութաղումը փակում: Սա էլ եշում ա էս կողմը. եշում ա էն կողմը, եշում ա՝ տեսնում՝ մեծ թիշիրին ախճիգյը այուս տ եկալ րալկոնը: Զուրբեն անկյին բարը տյուս տ օնում. լըրաղվանը ըղնում ա, տիճիգյը վլու ա տամ: — Պապա, տոնը կրակ ընգտվ, տոնը կրակ ընգտվ:

Վեր մին քանե վախտ տի լըրաղում ա, հաշրաբում, էլսը, էս թաշիրը թա: — Թյնում ընք սուգը, Սուգն ապրած կենա:

Թաշիրը տոռնը փշատում, սա ել ուրանն ա փշատում, ըշոնեն տինում ջրումը, քյնում սուղը:

— Էս մարգը ինձ պտրտական ա էսքան, էսքան փող, պիսի աա... — Սուգումն ա ասում:

Սա էլ, էս աղան: — Փլան թաշիրը էսքտն ինձ քաքուու ա պարտը, փստանը՝ էսքտն, էսքան, ծեն ավերյ լոփս կյան, իմ պարտք տան: Հլսե՝ բասպիսկերն էլ լոփս իմ ծերքեն:

Վերջը սահանց ծեն տամ, էս թաշիրնեն լոփս կյամ ըն ծծողտելավ, մասխարա ընելավ: — Պարաք ր՞ս: — Պաըտք ըմ: — Հի՞նչքան: — Էսքան: — Բղարում քաքուուը քա՞նե ա քյնում: — Մինն էրկու կապեկ: — Մունք հենգյն ընք տամ: Մին շահի:

— Արա, ի՞մ քաքուող կին չօնե, է՛: Տու իմ քաքուողն կիխ տինողը ըլս, հի՞նչ ըս ասում, իմ քաքուող կիխ չօնե:

Դե վեր շատ հոջաթ ըն տամ, տես-տեն, թա, ասում ա.— Օխտը ճյորապեռնը քաքուող ըմ պերալ, դյու՞զ ա:

— Հա:

— Քյնինքյ, օխտը պեռն էլ պիրինք, սաեղ կյինհասինք:

Թա.— Քյնա մին պեր, տեսնանք, էտ հինչ քաքուող ա,— սուզն ա ասում:

Մին ստրածնիկ էլ նհեան ըն տինում, կյամ ա տոռնը պենում, էրկու հատ քաքուող յոր օնում, դաշանգյ, կրղեթումը պտատում, դաշտնդյ պիրում, տինում սուզեն ըռաշին:

— Այ մարդ, էս հի՞նչ ա, առոե, թող մինը մին շահի ինի:

— Ա, իմ քաքուող կիխ չօնե, վաա՛յ, դե, մին կուտրաաե, տես:

Կուտրատում ա, մաշան բոլանաները վեր ա աեռնում. սաղ մնամ ըն ըշկանեն իւլած:

Թա.— Սա, մունք,— սուզն ա ասում,— սա մունք կյինհատողը զընք:

— Պա վեր ասում ըմ՝ իմ քաքուող կիխ չօնե:

Տահանք մնամ ըն պուսի-պոսին կացած:

Թա.— Դե, բոլանտչի պիտի ինի, վըեր սա կյինհատե, մունք կյինհատողը զընք, դա մեր դործ շի:

Կանչում ըն, բոլանտչին կյամ ա, քյնում ըն քաքուոնեն թափ տամ, սկսում կյինհատելը, Մին քաքուողն կեսը, սկի, թաշիրն իլած-շիլածը եր չի կյամ:

Հաշիվ ըն անում, մին թաշիրը օթ քաքուող ա ապրալ, ճանապարհեն էրալ ա, փշացալ ա քյիցալ, սկի մին քաքուողն պադասիանը կարում շի աա, օթենը հու՞նց տա: Ախեր ծծղեյիս մատծալ շի: Պիրում ըն սահանց եղած-շեղած փողերը յոր օնում, առու տողկ անում, էլ լճա պրծնում զըն:

Իսկ մեծ թաշիրը ուրիսացալ ա, հու՞նց ա ուրիսացալ, նսւանք էլ լրիս կյառներ ըն աեռալ. կյամ ըն կյոք տամ, գոնչանք անում, պղաաանք անում:

Թաշիրն էլ աանում ա, երե առնը նշանց աամ, ներքե առնը նշանց աամ, լրիս նշանց աամ, վերջը՝ հը՛, հը՛, հը՛, հը՛, թա՝ դե, ախճիդյս պիտի օղիս:

Վերջը, հի՞նչ կլսիդ ցվըցնիմ, լավ հրսանեքյ ա անում, ախճիդյը տամ էտ աղեն. ախելունք ըմ, փող շնիմին:

Իսկապես խելոք ար, բայց փող չօների:^{*}

* Գյիդաս վու, թա՝ սոտ ըմ ասալ, հա՛, լրիս ճիշտ ար (Ե. Բ.):

Ըստուծունա իրեք խնձոր վեր ըղնե, մինը՝ տողեն, մինը՝ լսողեն, մինն ել՝ վընողեն:

— Ամեն:

17. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆԵԳՅԸ

Մին քյասիր աղա յա ինում: Հարը, մարը վեր մեռնում ըն, լափ կընդակ ա մնում: Վել կրթություն օնե, վել արհեստ օնե, Կարքեն առն էլ չօներ, լճա ինդի մին այնոյին րութկա ար, վեր թուր կլսեն կտթե վուշ, բայց լավ հայաթ օներ:

Վերջը, պարիկամերը տես-տեն քարոզ ըն տամ. «Ա խոխա, եք փսակվե, տանալ-աեղավ իլ»:

Թա աստծու անտ ա, թտ հինչու անա, էս տղան վեր փսակվում ա, էտ, էտ, էա կնեդյը մին, խելու՞նք, մին խելու՞նք ախճիդյ ա տյուս կյամ: էնքան խելունք, էնքան կեղեցիկ, վեր բոլորը թմաշու յըն կյամ, նանա խոսում:

Էտ տղան սկսում ա մտածելը ոէս հի՞նչ անիմ, էս հու՞նց անիմ, վեր ապրիմ: Ես եր կենամ քյնիմ էս մարդկանց նհետ փհլոթյուն անիմ, կյամ տեսնամ՝ կնգանս խայտտոտկ ըրած, տնումը փիսացած, ես էլ էա նամուսը հու՞նց տանիմ»:

Էն ար էա մաքումը էն աղան, էն ախճիդյը՝ կնեդյը, ասում ա.— Ցաղո՞ւ շաա ըս մաածում: Տու, վեր աարեկան, աարեկան, է՛... աարեկան հենդյ մանեթ փուլ ինձ հմար աշխադիս, ես նանտվ տոն ըմ տոնլտկան: Տու խե՞ յըս մաածում: Քըլո՞նղներեն նհետ քյնա, հինչքան աշխադիս՝ բոլ ա, ես առն ըմ տիննական:

Սահանք էլ իլած-շիլած մին քաշալ հավ օնին, էլ պեն չօնին:

Էա աղան մաշը պենում ա, մտքեն մաշը պենում ա, թա.— Գյուդում ըս հի՞նչ կտ: Ես քեղանից վախում ըմ, ախեր, գամում ըմ քյնամ, դե դաթը քշլական ա մին աարե, երկու աարե, կյամ աեսնամ՝ խայտտոտկ ա եռած, նանա եալ նտմուս շի մննական, ինձ էլ րիդի սպանիմ, քեղ էլ րիդի սպանիմ, ըշխարհքաս վերանամ, լի:

Թա, ասում ա.— Դե աես հինչ ըմ ասում: Տու ու ուի շհավատաս: Աշխադիքս վեր վեա կենա, ասե, շհավատաս: Առ, քեղ մին գյուլ ըմ աամ, աիր ծոցումա, պահե: Հիր վեր էտ դյուկը թառամից, փշացավ, դիդա վեր ինձ նի կյոդ ա իլալ: Եթե կենդան մնաց, լավ իլավ, ավելի լվացավ, դիդա վեր ես շատ լավ ըմ: Տրա կհավատաս: Տիր ծոցումա, քյնա:

Հավատում ա, էա դյուկը ծոցումը տինում, քյնում:

Քյնամ ա այուս կյամ մի քաղաք: Էն քաղաքն ա, վեր տեղ թադավերն ա ապրում, թադավերեն քաղաքն ա:

Ստի յա քյնում, մարդկանց նհետ վեր կենում, տևսնում վերն ա հայերեն խոսում, վեր նհետը խոսե, տես անե, տես անեւ ինդի յա քյնում, ասում-լսում, վերջը, մին իրեք-շորս հայու պահում աւ Մինմունու նհետ վեր ըն կենում, տևսնում ըն, վեր հրաշտի տղերը ըն, լլավ մարզիք ըն

Ուրուր ասում ըն հինչ կա, հինչ չկա:

Սա ասում ա.—Հար-մար շօնիմ, եթիմ տղա լըմ, վել մի պեն շօնիմ, եկալ ըմ, լի, ստեղերը կյուխս պահիմ:

Թա.—Արհեստա, դատա օնիս:

Թա.—Չէ:

Թա.—Կրթեցած ըս:

Թա.—Չէ:

Թա.—Վեր տի յա, տղա, քյնի, թագավերեն տուանը, հրեն, մին սկեցուր բար կա շինած, տու էս բարեն յրա նստե: Թագավերը տյուս ա կյական, կանչի, էն բարեն յրա նստածը՝ գյուղում ա վեր իրա կոշան ա օղում մտնե, կանչելու յա քեզ: Քեզ յոր կօնե շորան, կրյնիս, կծառայիս, կամ, կամ՝ վերջը, հարկավեր կինիս:

Քյուս ա, էտ բարեն յրա նստում, թագավերը տեսնալն ի բաթ, կանչում ա տղեն:

Էս տղտն էնքան լավի ա ինում, էնքան գեղեցիկ, վեր թագավերը օղում շի տա հանգերն ուղարկի: Յոր ա օնում ուրան լովուն օգնական աամ, թա.—Էտ պովեն քյումտղ իլ, ճյուրը պեր, սողանը քշվե, պեն րա, տի գործ ըրա...

Էտ էլ օրախ-օրախ տի գործ ա անում, բայց վեաաց ճանապարհ քյնիիս աեղը, միշտ գյուլը ծոցան տյուս ա օնում, ստի եշում, օրախ-օրախ կյամ, դործ անում թափավ:

Մին օր նագիր-վեղիրը քյնում ա կուսնի ստուգե. ալքավն ա ըղնում, վեր էս խոխան վետաց ճանապարհ քյնիիս մին պեն այուս կալավ, եշից, օրախ-օրախ, պար կյալավ եկավ, սկսից գործ անելո:

Հինչքան էս նագիր-վեղիրը ստիպում ա, վեր էս խոխան էտ կաղտնիքը ուրան ասե, ասում շի: Դե վեր ասում շի, կյամ ա թագավերեն կոշար, թա.—Այ թագավեր, ախր էտ թաղա եր կալած ծառայեն ծոցումը գյուգում ըմ հինչ կա: Ամեն վետաց ճանապարհ քյնիլավ, նկատալ ըմ, տյուս ա օնում, եշում, օրախ-օրախ, պար կյալավ կյամ, էնպես գործ անում, էնպես եռանգտվ հինչ անում... հինչքան ըրե, առվավ վուլ, թա եշիմ:

Էտ թագավերեն գտրգ ա տեղնում: Կանչում ա, թա.—Մին ասե տեսնամ, բալա, էն ծոցումտ հինչ կա, վեր ինգի տեսնում ըս, օրախ-օրախ պար կյամ:

Թա.—Վել մի պեն չկա:

Թա.—Չէ, ասե, կյլոխա կկտրիմ: Ասե, վասել մի:

Ախեր սուրթտ ասալ ա, թա՝ վել մին պեն շօնիմ: Մհենգյ ասից.—Ճիշտ ա, հար-պեն շնիմ, վել էլ՝ մար, բայց պասկվալ ըմ, կնեզյ պիրալ, ընտանիք կաղմալ: Ստի պայման ա իլալ՝ տեստեն, կնղանս թա՝ քեղ խայտառակ կանին, վեր քյնիմ: նամուսս յոր չունել, քեղ էլ կսպանիմ, ինձ էլ, կնեզյ թո՛ կա էս գյուլը կշաետ պահե, վեր թառամվե, իմացիր՝ ինձ նի եկող ա իլալ, նրանից հետո տուվ ըս գյուգում, օղում ըս եկ ինձ սպանն, օղում ըս՝ չէ:

Էս թագավերեն շատ տուրը եկավ, ասից.—Ճանս քե մատաղ, բա ղե հո՞ր ըս ծոցումտ տինում, ճալսնորում: պեր տինինք ստոլեն, տու էլ քյնիլ մի ընգեղ, մեր խոցը նհետ դարկիմ քյնի շկոլ, կարթի, մարդ տեռ, ամեն ուրուգլուն-ուռթանա եկ, ստոլեն եշի:

Ճամաձայնվում ա: Գյուլը տինում ա ստոլեն, էս խուիսն էլ յոր ա օնում թագավերը, ուրան խոցը նհետ դարկում շկոլ:

Էտ խոխան լլավ, եռանղավ կարգում ա, լլավ խոսում ա, լլավ սվերում ա... մտքումն ասում ա. «ԱՇԻ, երանի կնեզյ նամուսով տյուս կյա մինչե վերշ, ես էլ ամեն տեղ կարող ըմ աշխաղիմ»:

Կարթիլը հել, տիսեր էս գյուլը թաղավերեն հմար գարգ ա տեռալ:

Մին խուրջին լլավ պրիպաս ա սարքում, թընկյանոց ըպրենե, տես-տեն, վեսկե, արծաթ, ամենալավ ծին էլ տյուս օնում, մեծ տղեն կանչում, թա.—Եր իլ, տար հացրու էս կնգանը, մին քշեր նհետը քոն իլ, էս պաղարկան էլ տո ուրան, անց կաց եկ:

Գյուլին դարգան, է:

Տղան էլ ա էտ օղում, լի, Օրախ-օրախ եր տինում բող ծին, զուրված-դարգարված, պաղարկան էլ նհետը, շափ քցում, Քյուս ա, հրցնում, առնը քթենում, վեր կյամ... Դե հինչ տոն, մին շիքանուց ա, լի, տոն-ղաա չկա: Վեր կյամ, էտ լիքը խուրջինը տամ էտ կնզան, թա.—Դե եկալ ըմ էս քշեր քեղ զոնազ: Քշերը զոնազ կմնամ, էքյուծ ուռթանա անց կկենամ քյնամ:

— Ծատ լլավ ըս բրալ, շաա լլավ:

Դե տեղ էլ քնիլի տեղ չկա: Գյուրան-մուրան չկա: պիրում ա էտ բաշտ հավը մուրթում:

Էս պերած խուրջինն էլ տանում ա շիրունուցեն էս մին աանը տինում, էս կնայիս տանն էլ օտելիմելը սարքում: Վերջը, վեր օտում ըն, իմում, տեղը վեր քցում, սա թա.—Դե առ մաեր աեղը, ես տյուս կյամ առնավը-դտտավն ընցնիմ, կյամ:

Տյուս ա կյամ, այուս կուսան տոռնը քլում, ակուշկավը ասում.—Այ տղա, էս ըն ստեղ մար-

սիրյ կան, ծին կկյուղանան, տու մին խրեդյ քոն
իլ, վեր շառշուռը յան տա, ես կկյամ:

Մաղերն էլ կապում ա, իբր թե ծիուն կողերն
գարաղուլ ա կաղնում:

— Մին ամես կյտես կկենաս, էս քշեր ես ծին
պահմ, էքյուծ մարդ կբթենամ, կփոնիմ, դարառւլ
կբաշի:

Քշերը աեղ նստում, ծին ողաճում: Դե ըրխյին
ա, տյուսան տունը քլլալ ա, էն ա ընդեղը

Էքսը քյում ա նորյար փոնում, ախնում ծիուն
յրա, թա.— Թա էտ ծին հանց կպահիս, վեր ստի
մակ շպակասե: Ուտցրու, խմցրու, լյավ պահե:
Ուրան էլ պիրում ա.—Կնդա շորեր կեց, վեր ժուզու-
վուրդը նկատե վուշ, թա մարդ ըմ պաճում ստեղ:

Տու մի քանի օր կնգա շորերում կաց,
ինքը տոռնը քլլամ ա, ակուշկավը հացա-ղա-
տա տամ, ինքը ետնան սկսում: մարդ ա փոնում,
ինժիներ ա փոնում, մին պալատ յրա քցում թա-
դավերեն դարկաթ վեսկավը:

Դե, թադավերն էլ էն գյուշին գշեց-ցիրեկ էն-
րան եշում ա, սերու ճարում ա, Կուծի-կուծի
գյուլը ավելի կենդանանում ա, քան ճյորում ա:

Վերջը արանքը իիլլա քաշում ա, էն տղան էլ
կարթալ ա, կարդին մարդ ա տեռալ, իւելքն էլ
լյավ կտրում ա, «Ախ, երանի կինի,— ասում ա
ինքը ուրան,— կնեղյս էլ մաքուր մնա:

Թադավերը վեր շատ ա սպասում, պեն չի տեռ-
նում: Մհենդյ էլ մաշնակ տղեն ա դարկում: Մի
խուրչին, լհա ինդի լիքը, պրիպասավ, մին, կյար-
մուր ծի էլ եր իլած, կյամ ա կյամ ա, աեղ հըս-
նում, շոր կյամ, քթենում. տեսնում՝ մի կնեղյ մին
պալատ ա սարքել տամ: լհա էլ մազերը թափած,
մին քանե զուլուզի էլ կողերավը ման կյայիս:
Շինացեր էլ խոսում ըն թա. «Ա, սահանց տոռնը մին
քշերում հինչեան մարդ ա կյամ, հինչեան փող
ըն պիրում: Թմաշա ընելու հեաե յըն կյամ:

Էտ տղեն էլ մեծ ախսոր նման քունավ ա
անում մին տեղ, բանտարկում, էլհա կնդա շորեր
կեց տամ... էլհա մունմունու տեսնում շըն առան-
ձին-առանձին տան ըն:

Պիրում վիշմարու իլսա ինք օնում՝ մարդի ըն-
վանի: Չուրնե փոնում, յրան տինում: Ասլրանք ինք
օնում՝ մարդի ընվանի. ծիու իլիս ինք օնում՝
մարդի ընվանի:

Էքրու տարեն անց կացավ, թադավերեն տղեքը
քյեցեն վել: Մհենդյ պիծի աղան ա դարկում:

Մին օր տղան ասում ա.— Թա հո՞ր ըն փլան-
քյասր, փլանքյասր!

Թա.— Նահանց դարկալ ըմ արտասահման,
Տուվ էլ շուտ ըստ վերջորու ուսումտ, քըդ էլ ըմ
դոկական՝ քյնիս արտասահման:

Մհենդյ էլ ոլիծի տղան ա կյամ. էլհա լյավ

պրիպասավ ա կյամ, տեսնում՝ պալատը պրծած,
բալկոնեն մինը շոր ա կյամ: «Ա՞խ,— ասում ա,—
քյնալու ըմ ես էն շան տղեն սպանիմ, էս կնեղյը
ինձ համար տանիմ»: Պուճուր տղան ա ասում
մտքումը:

Ի՞ զյուղում ա, լի, վեր էն ա, նրանն ա: «Քըյ-
նալու ըմ,— ասում ա,— իստիիմ, տանիմ, փլան
տեղը սպանիմ, էս կնեղյը անիմ»:*

, Հա, վերջը տեղ նորը մինան ա զոնազըզ
անում: Մհենդյ հինչ կա, մհենդյ օժը պատած առ
էտ աղան օտում ա, իստում, պաը կյամ, հուվ ա
զյուղում, հինչեր ա անում, բայց էլհա քշերը
կնեղյը սրա իսափում ա, քունավ անում, տոռնը
կողպում, թողում մին տան: էքսն էլ բիմկա շորեր
կեց տամ, ուրան շորերը տանում, էն էրկու ախսոր
շորերեն կշտեն մին շկափում տինում, քլլում:

Ամեն մինին յրա ել մին զուլուզի կնեղյ տի-
նում:

Բայց գյուլը ավելի ա կենդանացալ: Մհենդյ
էտ տղեն սերաց ճարում ա, թադավերեն տղերը
ընդեղ լըն, թա նհետը խոսե, պեն անե, օրերը
անց կենա: Մհաթ մնուա կյամ ա, գյուլին հշում,
ուրիսանում:

Վերջը կյամ ա թագտվերեն կոշտը, դաշանք
անում:— Թադավեր, էս ա քանե տարի ա՝ վել
փող. ըմ զարկում, վել պեն. սերաս օղում ա,
քյնամ, տեսնամ, կյամ:

Թա.— Ես զարկում ըմ, տու ըրխելին կաց, էս
ա քյննական ընք. մինտեղ ընք քյննական:

«Այ էր, — ասում ա ինքը ուրան, — էս վեր մին-
տեղ քինչնք, ես հինչ պատիվ աամ, մին շփրա-
նոց տեղ ըմ թողալ, մին քաշալ հավ. ես հինչ անիմ»:

Քյննական ընք, հա քյննական ընք... ախեր
քյնում լի:

Մին օր տոնան կյամ ա, շքոր վեններն ըդ-
նում, թա.— Խնպում ըմ, ինձ պեց թողիս՝ քյնամ,
էլի կյամ, լի:

Թա, դե.— Լյավ, էս րոպեիս պաղըաստվե, քըյ-
նում ընք:

Էդ թադավերեն դարդ ա աեռալ: Ախեր կնեղյն
էլ չի գյուղում, թա տի պեն ա ըրալ:

Ծեն ա տամ նաղիր-վեղիըին, թա.— Քու տոնը
քանդվի, քու տեսած սհաթը կրակն ըդնե, տու էն
խարարը հինչեղա ըսեցեր ինձ. էն գյուլը ինձ
կրակու մաշ քցից, Խոխեթս իրեքան ուղարկալ ըմ,
կա վուլ:

Թա.— էս հինչ ա ասում. թա՝ աի-տի... ան-
իւելք մա՞րդ ըս տու թա իւե՝ յրս քու տղերը

* Այսեղ հեթաթասադը ընդիշարկում է. «Կոփատ
մեսնե քո» (Ե. Բ.).

դարկում, օրիշ մարդ չկա՞ր, միկա փող տալինք ուրան, զրկինք բյնա՞ր Մհենդի հու՞վ ա դյու-
դում սաղ ըն, սաղ ըբն տղերքտ:

— Վել մին պեն դյուդում չըմ,— ասում ա թաղավերը, — պագրաստություն բաշեր, շբան
տրուգու բյնանք Քյնանք, ահսնանք հոր ըն:

Պաղրապտություն ըն բաշում՝ թոփ-թոփիսա-
նա, կուխնի-մուխնի, զորք-մորք յոր ըն օնում,
բյնում:

Էա աղան էլ, ղեհ, լյավ հաղնվում ա, թաղա-
վերն էլ մին դշայրա վեսկե ա տամ. «Էտ ա,—
ասում,— բռու հաղկը, վեր տանիս կնդանտ»:

Դե թաղավերը շատ ա տվալ, տղան հի՞նչ տ
դյուդում: Ուրուր նհետ հինչ ժողով ըն անում՝ էս
տղեն ճոկում լըն:

Հաւ վերջը: Շատ ըն բյնում, բիշ ըն բյնում,
տղահում ըն մին վիճարու իլիու իլիան վեր
պրոծնում ա, թաղավերն ուրան ասում ա. «Ա,
և թաղավեր ըմ, ըսկի էսքան վիճարու իլիա
շօնիմ, էս իմ երդրումս էս հով ա, վեր էսքան
վեհճար օնես:

Կյամ ըն, չուրնեն հրցնում ա.— Այ շորաններ,
էղ հու՞րն ա էսքտն վեհճարը:

Թա.— Փլանքյաս փլանքյասինը:

— Պա՞հ, — եշում ըն աղեն: Թա.— Այ տղա,
պա ասում ըս՝ ինձ գայա շօնիմ:

Թա.— Տեր աստված, աեր ասաված, ինձ դատ
շօնիմ, մին բաշալ հավ ըմ թողալ, եկալ:

Քյեցեն հսեն բյահրիդը Եշում ըն տեսնում՝
անասուններ ա, վեր կյամ ա, էլ չորան-մորան
հվաքված ընդեղ, ծիու էլիան:— Այ մարդ, էս հու՞րն
ա, հու՞րը չի:

Թա.— Փլանքյասինն ա:

— Այ մարդ, տու ասում իր՝ բյասիր ըմ, էս
հու՞րն ա, հի՞նչ ա:

— Էհ, թագավերն տպրած կենա, — էս չուրեն-
նեն ըն ասում, — մունք էս ա էրկու-իրեք աարվա
ծառա, հախկ-պեն օղում լընք, լա ինդի թմաշա
անելու համար ընք պահում, մին կապեկ էլ պեար
չի, մինակ էն կնգանը թմաշա անինք:

Էտ տղեն փորումը կտորից հա՞։ «Պա՞հ-պա՞հ,
մղափուն իմ կրթություն, իմ մարդ տեսնալ, վեր
վերջումը սաի փշնական ընք. էմ՝ էս, ինձ խա-
փից իմ կնեղյս:

Ստի, էտ թագտվերեն սերտն էլ ա պատառ
մրսում. «Պահ, սա վեր էսքան դվութատեր ա,
սրա բմտկեն օժ կինի, էս եկավ ինձ խափից,
խլալից, տղերքս էլ րաղա բյեցենս:

Առանց ուրան ժողով ըն անում, որոշում՝ մին
էրկու մարդ դարկին, տեսնան հինչ ա, ետնան
բյնին, բալքյաս ընդեղ բաղրոյնիկի տեղ ա:

Վեր իտի թաքուն դարկում ըն, էտ տղան էլ
ա մրսում:

Վերջը բյնում ըն, կյամ, թա.— Վեր մի պեն
շկա, Մին պտլատ կա, րալկոնեն մինը շոռ տ
կյամ, իրինակ տ, ինդի գեղեցիկ իսան շինի:
Զէ, — ասում ըն, — վեր մի դատ շկա, լա նա յա,
վեր բտլկոնեն շոռ ա կյամ, մին բանիսն էլ ետ-
նտն շոռ ըն տամ. էտ ա:

Էտ տղան մինչե ընդեղ հսնելը էյղանան փոխլ-
փոխլ տ անում: «Էս հունց անիմ, վեր տի յա»:

Ժողովուրդն էլ տսում ա.— Էս ա եկե՞ն, փու-
լըրը պերե՞ն, ինդի, ինդի, ինդի գեղեցկուհու հե-
տե փուլերը ողերե՞ն:

Էտ տղեն սերտն էլ իրտնալ ա, թա կնեղը
տի պենտվ ա զրադվում: Մտքումը տինում ա.
«Քյնամ տեղնուտեղը ուրան սպանիմ, ետնան
ինձ»:

Էտ կնեղը վեր եշում ա, տեսնում կյամ ըն,
մարդ ա զարկում, վեր զրբան պեց անե: Պեց ըն
անում: Ճորքը-պենը վեր նի յըն տեսնում հայտ-
թը, բշանում ա: Առութա թագավերեն նհետ ծերը
ա տամ, բարե անում: Հետո վեր բյնում ա նշա-
նածեն կոշտը, ծերքերը եր բաշում, վեր կոլակն
ըդնե, նա կուփե յա տամ, մավերը տյուս օնում,
թա յրա անե, թագավերը-զատը փոնում ըն:

Թա.— Զինաթափ ըրեք տրա:

Տղեն դինաթափ ըն անում:

Թագավերն ասում ա.— Դէ տուվ էլ դինաթափ
տես:

Կնեղյն էլ ա դինաթափ տեսնում: Հետո բոլո-
րին կանչում ա զալը Զակալ ա տամ, կերակուր-
պեն պտղրաստում ըն, տանում զալը. էտ էլ ուն-
քերը ուրուր տված, աշքերը տափեն կալած:

Ախեր թագավերեն սերտը ճաքում ա՝ տղոր-
ցան...

Նստում ըն: Վեր լոխ նստալ ըն պրծալ, թա
ասում ա.— Եթ ստեղ, Աերտս ճաքում ա, կոշտա
փլան վաղա, փլան վագտ, մին բող ծիավեր, էս-
պես-էսպես զարկալ ըմ, կենդու՞ն ա:

Թա.— Հա, կենդան ա:

Էս տղտն ասում ա՝ չշը՞մ, ստեղ պեն կա:

— Փլան վագտ էլ մին կյարմուր ծիավեր զար-
կալ ըմ, էն էլ ա կենդու՞ն:

— էն էլ ա կենդան, էն ա ինձ մոտ:

Վերջը էն մինն էլ ա ասում:

Ասում տ.— էն ըն լոխ կենդան, ինձ մոտ:

Սերտը ճաքում ա:

Թա.— Խնգրում ըմ... խնգրում ըմ,— ասում
ա,— մին պիրիս տեսնամ, է:

Թա.— Ապասեցեր, հացը-դատը, տեսը-տենը
լոխ քցին, մին նղացած ըթ, սոված կինիք՝ օտիք
հետո:

թա.— Զէ, ե՛, չէ, սերաս,— ասում ա,— ճառում ա:

Հա՛:

Հա նստած տեղը ասում ա.— Քյնի մեծ տղան պեր:

Քյնում ըն պիրում: Ըիմկան լրտիքն ա, լի, ըխճկան լրաթը կեց աված:

Պիրում ա մուտացնում, թա.— Սուվիթա դարկոծ տղաս էս ա:

Թագավերը եջում ա, ճնանշում չի: Նա էլ աշքերը տափան յոր չի օնում, լի: Հարն ա, իրանց սինոթն ա, իրանց նաղիր-վեղիրներն ըն, լոխ եկած, աշքերը տափան յոր չօնում:

Վերջը թագավերը շատ ա եշում, թա.— Էս իմ դարկածը չի:

— Էտ ա, վեր աեսեր:

Ախրը.— Չես ճնանշում, ախճի,— զուլուղուն ա ասում,— քյնի, կաստյումը կեց տո:

Յոր ա օնում, տանում, ուրան կաստյումը-պենը կեց տալ աամ, պիրում կաղնացնում:

— Պալա, — ասում ա,— ես քու տղասու ըմ:

Էն մինն էլ տի: Կանչիլավ, կտնչիլավ իրեքան էլ ցույց ըն տամ:

Էտ տղան. «Հա ստեղ պեն կա».

Դե լլավ, թագավեր, քո գարդատ պրծա՞լ ըս. մհենդյ ստեղ մահի ինգիր ա, — ասում ա, — էտ կողքես նստածը իմ նշանածս ա: Ասե՝ հինշու հետե իր օգում սպանիս:

Թա.— Խսկապես, այ տղա, տու սաի ընաանի-քին խե՞ յիր օգում սպանիս:

Թա.— Նրա համար, վեր սաի պայման ընք տիրալ, պայմանը հանց ա գյուղ չինի:

— Հի՞նչ պայման ա, ես քեղ հի՞նչ ըմ տվալ:

Թա.— Ինձ մի գյուղ ըս տվալ:

— Պա հո՞ր ա էն գյուլը:

Թա.— Էն ա թագավերեն ծերքեն:

— Թագավեր, էն գյուղ հանե աեսնանք:

Հանում ա, տեսնում՝ կենդանացած, լլվացած:

Թա, ասում ա.— Պա ես աի յրմ ավա՞լ քեղ: Կենդանացալ ա. դե ես էլ ստի կենդանացալ ըմ, լի: Մհենդյ համոթը տենը, մահու ինգիր ա, չի՞: Ինդրում ըմ, թագավեր, էս գյուղ տինիս ըռաշիա, իմ նշանածը թյուղ անիս, կյա իմ կարինետս:

Դե թագավերու հրաման ա, նշանածը յոր ա օնում, քյնում կարինետումը մարդ-կնեգյ ըն տեսնում, մունմունավը տամ: Վեր պենը ամալ ա կյամ, գյուղը ընգեղ ճլորում ա: Գյուղը վեր ճլորում ա, թագավերը մնամ ա զարմացած:

— Փաշ՞հ, — զեցցե, — ասում ա, — զեցցե սաի ընաանիքը, զեցցե:

Եր ա կենում, ճկաաան պաշում, ուրան տերի-տորի կեսն էլ ա բախշում, թա.— Տուք թագավե-

րոթոն բիդի անիքյ, ես էլ ծեր հրսանիքը բիդի անիմ:

Օխտը, օր, օխաը քշեր նորը հրսանիք անում, էտ տերիտորիան էլ տամ տա, աշխատում ըն, ապրում:

18. ԽԲԵՔ ՄՆԵԹԱԼ ԽՆՔ ԿԱՎԱՆԴ ԽՈԽԱՆ

Ինում ա, թա ինում չի, հու՞շ ա գյուգում, մին մարդ, մին կնեցյ ա ինում: Սահանց, լիա ինդի մի ասաը աիրեկան խոխա յտ ինում: Սահտնք շատ քյասիք ըն ինում, է՛, շատ:

Մին օր էս մարգը կնգանը նհեա մսլ հաթ ա անում, թա՞ եր կենամ քյնիմ բաղաք, գյուղըմը պարիլը շատ ա տժեր ինում, աեսնամ մին պատառ տեսա-տեսա, փողա-ղատա կճարիմ, յոլա քյնինք:

Թա, ասում ա.— Տուք ըս գյուգում, ա մարդ, օղում ըս քյնի, օղում ըս քյնիլ մի, ես վել դարկողն ըմ, վել էլ պահողը:

Թա.— Զէ, ասում ա, — քյնիմ:

Քյնում ա:

Շենումը մնում ըն էս խոխան ու ուրան մարդ:

Ստի մին չորս-հինգյ աարի անց ա կենում:

Մին օր էս խոխան լիա ստի կլխվեր քյինիլիս ա ինում, եղում ա աեսնում մին մարդ մին քուտկում նսաած*: Հա, մին մարդ մին բուակում նստած, կյրում ա, ճինզում, կյըում ա, ճինչում:

Թա.— Դայի, էա հի՞նչ ըս կյրոտում,— էս խոխան ա, հա, էն քյասիք մարդու խոխան:

Թա.— Դե խատաից ըմ կյրոտում,— ասում ա,— հի՞նչ մարդ հի՞նչ օդի կյրի, ինդի կկյրիմ, վեր գյիդա վուշ, թա փոխած ա էս խատաը:

Թա.— Դայի, ինձ էլ սվուրցրու լի:

Թա.— Բալա, վեր քյնիս մին մանեթ պիրիս, քըդ էլ կսուվրցնիմ:

Դե զահիլ խոխա յա, լի, խելքը հի՞նչ ա կըտրում, թա քյասիք ըն: Վաղ աալով տյուս ա կյամ ուրանց առնը, թա.— Այսն, զա՞ն, մին մանեթ քըի, ինձ առ:

Թա.— Ագա, հի՞նչ ըս անում:

— Ա դե, քթիր, լի, թա կարում ըս՝ քթիր:

էս մարդ այեր, տվեր, հի՞նչ անե:

Շենումը մին քյոխա յա ինում, քյնում ա քյոխան կոշտը, թա՞ մին մանեթ առ:

Դե քյասիք կնեգյ ա, լի: Քյոխան եղում ա, եղում, մաքումը ասում. ոՏամ, կաա, կտա, տալ մի՝ աալ լիս:

Դե մին մանեթը քյոխան հեաե հի՞նչ ա, Տամ ա: Պիրում ա տամ խոխիեն, էս էլ պիրում ա տամ խատաի կյիրողեն:

* Այսաեղ հերթափասադը ընդմիջարկում է. «Մեր էս մհենգյա խոխոցը յրան էլ ըս ասում, է՛» (Ռ. Բ.):

Լյավ սվերում ա, բո օղած, հայանի սվերում
առ էտ սվերից, եկավ տոնն

Միս օր Էլ դիրի ստի յա քյնում, օշր դիրի նոր
շնին անդունը: Քյնում ա տեսնում մին մարդ
մին լյավ շոր տեղ նսաած, էն... էն... հի՞նչ ըն
ասում է, կլտոնհա ա ածում և բաղցր ածում
ա, խե՞ բաղցր ածում առ էս խոխան կշան նրս-
առում ա, թա.— էս հի՞նչ լյավ պին ա:

Թա.— Դայի, ինձ խե՞ սվուրցնում ըստ

Թա.— Վեր քյնիս մին մանեթ պիրիս, կսվուրց-
նիմ:

Դե ին շխեն մանեթը բաբաթ ա իլալ, հու
մհենդյա նման շի:

Էս խոխան տանզվում ա, օՊա ես մանեթը հի՞նչ-
տեղա ճարիմ, էն մինն լլ իմ մաք մին թահրավ
րթալ առ:

Ել՛ս բյնում ա մորը կոշտը, թա.— Մին
մնեթու յոն առ:

Թա.— Ազա, հի՞նչ ըս անում:

Թա.— Դե վեր ասում ըմ, առ, լի:

Դե մար ա, լի: Քյնում ա, ըտեղ մին վարժա-
րեղ ա ինում, էն շխեն վրոժըրեղերեն լյավ փող ա
իլալ, բյնում ա էս վարժարեղին մուննաթ անում:
— Մին մանեթ փող տո, հարկավեր ա:

Դե վարժարեղը մաածում ա, «Ախրը, բյասիր
կնեդյ ա, լի, տանք, յա կտա, յա՝ տալ շի»: Տամ
առ Պիրում ա տամ խոխեն, խոխան վազ աալավ
պիրում ա, աամ կլառնետ ըծողեն: Մին բանե օր
կշտեն կենում ա, մին լյավ սվերում:

Էս ուստա ածողը եշում ա տեսնում՝ էս խոխան
ուրան անա լյավ ա ածում, լյավ ա սուվերալ:

Ասում ա.— Բալա, վեր աի լյավ սվերալ
ըս, ես էրկունն օնիմ, կա՝ էս մինր քեղ տամ, աար
լյավ ածե, սվերի:

Հս էլ ա սվերում, մին կլառնետ էլ փեշեց
սուացած կյամ տոն:

Մին օր էլ էս խոխան եր ա կենում բիդի էս
անդունը քյնում, բիդի Մավերը**, Քյնում ա տես-
նում, էրկու մարդ նսաած կարտե ըն աամ: Կուզ-
բըրնեն նսաում ա, եշում, եշում, թա.— Դայիլար,
ինձ էլ սվերեն լի, կարտե տալը:

Սահանք թա.— Դե վեր բյնիս կես մանեթ
պիրիս, կսվուրցնինք:

Էս խոխան մտածում ա, թա. «Վերջը էս դո-
նումս էլ քյնիմ իմ մոր մոա, տեսնանք հի՞նչ ա
տեռնումս:

Վերջը, մարը բյնում ա դերին կոշտը, թա.—
Ա դեր, մին կես մնեթու յոն տուր:

Դերը ասում ա. «Դե բյասիր կնեդյ ա, լի, տամ
ուրան, յա կաա, յա աալ շի»: Տամ ա: էս էլ պիրում
ա, տամ կարտ խազացողներեն, մին լյավ է, բու
հավան կացած լյավ, սվերում ա:

Կյամ ա տոն:

Էս վարումն էլ հարն ա բղաբան կյամ: Հարն
էլ հունց վեր բյասիր բեցալ ա, ինափ էլ, հա նրա-
նա էլ բյասիր, եկալ ա, Վերջը, հար ա լի, հըրցը-
փորձ ա անում, թա.— Հունց ըս ապօալ, հունց
ըս յոլա բյեցալ:

Կնեդյն ասում ա, վեր իրեք մանեթ, կես մանեթ
էլ իվցնում ա, պարտք ա րալ:

Թա.— Ա, հի՞նչ վըս պարաք ըրալ:

Թա.— Խոխան օղալ ա, ավալ ըմ ուրան:

Թա.— Պա էտ խոխան իրեք մանեթ արժե՞:

Մհենդյ տննական ըմ բղարում ծախիմ:

Հակառակի կրկյամուտ օրը հարը եկալ ար,

էքսն էլ՝ կյերեկի, բազար օր ա:

Մարը զե հվատում շի, թա խուխեն կտանե:

էս կողմ, էն կողմ, օյան, րույան, պեն շի տեռ-

նում:

Վեր լյուսանում ա, հարը եր ա կենում, խուխեն

կուոնան փոնում. գե հնաղանդ խոխա յա ինում,
մհենդյվա խուխոցը հուն նման շի, տանում բա-

զարը:

— Հա՞յ մին խոխա յըմ ծախում...

Դե խոխա ինք օնողը հունվ ա:

Մին թազավերու, բյոհնա թազավերու, բըրար
խոչա յա ինում: Ուրան վաղոն օնե, կանդուկաոր
օնե... վերջը թազավերու բըրար խոչա յա: Աա
ճյուրտանցավ ապրանք ա պիրում, տանում ստի
կլխյեր, բիդի Քյուրդատան, վեր ըպրանքա նհեա
փոխե, պիրի, Վերջը. առուաուր ա անում: Պի-
րում ա վաղոնը, թա ասում ա.— Տուք տյուս տվեր
ապրանքը, ուլուխներեն պոնեցեր, ես մին տյուս
կյամ բազարը, կյամ:

Հա, տեղ կյամ ա բազարը, տեսնում՝ մինը բը-
զարեն էն զրազեն. Հա՞յ խոխա յըմ ծախում, խո-
խա յըմ ծախում:

Էս խոչին էլ խոխա շի ունենում, մին ախճիդյ

ա ինում, մին էլ ուրան կնեդյը:

Լհա ասում ա. ռթա էս մարդը զորթ ա ասում,
էս խոխան ինք օնինք տանինք, ծրբներես տակեն
պնիցնինք:

Մուաանում ա, թա.— Դայի, էտ խոխան ծա-
խում ըս իսկապես:

Թա.— Հա:

Թա.— Կյինն ասե:

Թա.— Դե, իրեք մանեթ ա:

Թա.— Ա մարդ, իրեք մնեթավ խոխա շի ինի,
թա ծախում ըս՝ կյինն ասե:

* Գյուղ Մարտունու շրջանում՝ սահմանակից ասացողին (Ս. թ.).

** Հանդամաս Ղզզալա զյուղի շրջակալքում (Ս. 4.).

Թա.—Դե իրեք մնեթավ ըմ աամ:

Էս խոզան հանում ա, իրեք մանեթը տամ, էս մարգը քյում ա: Ինքն էլ խուիսն կունան փողոնած, ուզում ա կյա ուրան ըպրանքն կոշար: Վեր մին խիլա հոանում ըն բղարան, էս խոխան ասում ա:— Դայի, հանց խոխա յը՞ս ինք կալալ, վեր քպանա խելունք լի՞նի:

Էս խոչան մնամ ա ցմաքած: Ուրտն-ուրտն ասում ա. «Ա», էս ճրդոտված խոխան յաղու՞ղ ինձ ստի տոսից: Սեղու ահ ա ըղնում, թա. «Էս իմ կլին մին քյալագյ կկյառ:

Փա հու՞նց անե, ախը իրեք մտնեթ էլ փող ա տվալ:

Կյամ ա տեսնում ուլուխնեն պիոնած: Խոչան րիդի տյեր յոր օնե քյնի, վագոնն էլ՝ րիգի ուրան տոնը ետ զարկե, խոչան պիրում ա մին թոխտ կիրում ուրան կնգյանը յրա, թա. «Էս խոխան վեր պիրին, կտանիս էս հինչ աեղը, օրական էս-քան պեն կտաս, թողիս վուշ ընդղան տյուս կյա. Թող ուրան-ուրան մեռնես:

Թոխաը կիրում ա, տամ կանգուխտորեն, թա.— Կտաս կնգանս:

Ճանապարհին վեր մին աեղ վենն ըն կենում, զե ախը էն վխտեն ագաթ ար, լհա մէնենց էլ ա լյավ աղաթ, էս կանդուխտորը քյում ա ստղես կարտ խալացողներեն նհետ խաղ անում: Սրա առեն մին գումար փող ա ինում: Սրան լյավ պլոկում ըն, ծերքան ինք ըն օնում, Պիրում ա վաղոնը զալոդ տինում, վեր փողերը ետ պիրի, վաղոնն էլ ա տարվում, ծերքան ինք ըն օնում: Մնում ա լյութ, տկլոր: Լհա կյամ ա վագոննեն մաշին՝ կրավաթեն յրա հրբաժու մնան վեր ըղնում: Էս խոխան եցում ա, թա. «Արա, էս մին իրեգյ առաջ օյալ ար, հարբի՞ց, հի՞նչ ըրավա:

Ասում ա.— Դայի, խե՞ տի րեքեփ ըս:

Թա.— Է՛, բալամ, քեցալ ըմ կարտե տվալ, փողերը տանել ավալ, վաղոնը աիըալ ըմ զալոդ, թա փողերը ետ պիրիմ, վագոնն էլ ըմ տանել ար-վալ: Խոչան վեր կյա, ինձ կախ ա տլական:

Էս խոխան թա.— Դայի, կկարի՞ս ինձ մհար մին երեսուն մանեթ քթենաս, քյինիմ փողերտ պիրիմ:

Թա.— Դե կճարիմ մին կերպ: Եր ա կենում, բտեղեք ուրան հնդեր տղեք ա ինում, նահանց անա մին երկսուն մանեթ պարտք անում, պիրում տալիս էս խուիսն:

Թա.— Դայի, պա վեր ստի ճրդուաված քյնիմ, լյա՞վ կինի: Վեր շոր-պեն ինի, կենամ՝ լյավ կինի:

Սա ուրան սնդղումը շոր-մոր օներ, տամ ա, թա.— Կյեց:

Մին շլարա ել կլին ա ախնում, մին արոսա էլ ծերքը տամ, թա.— Քյնի:

Քյնում ա: Քյնում ա էս կարտ խաղացողնե-րեն կշտեն մին քիլ տյեր-ավեր անում, մուան-ում, թա.— Կաըելի՞ս ա, վեր ինձ էլ թողիք, կյամ իմալ անի՞մ:

Դե սահանք էլ պատրաստ ըն մարդ թեփոին, ասում ըն:— Պա ինե՞ չի կարելի, կտրելի յսու:

Խոխան ա էտ խոխան, մին աասը մանեթ աա-նել ա աամ: Տասը մանեթ աանել ա աամ, սկսում պիրիլը: Պիրում ա լոխ ետ: Հլա ուրանց հինչքան փող ա ինում՝ էտ էլ ինք օնում: Վերջում էլ թա.— Վագոնն էլ խաղ անինք, բտլքյի առւք ըք աննա-կան:

Վագոնն էլ ըն խաղ անում, վագոնն էլ ա տա-նում: Թիաներ-միտեր սաղ ինք օնում, ախնում ծոցումը: Սահանց էլ փող չի ինում, վեր խաղ անին էտ խուիսեն նհետ: Խոխան կյամ ա:

Կտնգուկտորեն աշքը էն ա ինում մղակեն: Խո-խան վեր րուրգան առոնը պենըմ ա, թա.— Մատ-տագ, հի՞նչ տեռավի:

Թա.— Դե վախել մի, ղայի, փողերը սաղ պի-րալ ըմ, մնացալ ա վագոնը:

Ախը, գե րուրգան ասում չի լի, վեր սերաը ճաքը վուշ, անգյալ չպատհնե:

— Ս, — ասում ա, — փողերը չհաննամը գյուղը, վագոնը ետ պեր, վեր խոչան կյա վուշ ինձ կաի տա:

Թա.— Վախել մի:

Էս խոխան քյում ա, մին խիլա ժամանակ գալգալամիշ ինում, շոռ տամ, կյամ: Վեր առոնը պենում ա, թա.— Հի՞նչ ա պտահալ:

Թա.— Վախել մի, պերալ ըմ:

Լհա վեր թիաներ-միթեր ախնում էս մարգըն ըռաշին, սա եր ա կենում սրա կոլավն ըղնում, պշալորում, թա.— Ա՛յ, քեղ համար հի՞նչ անիմ, հու՞նց անիմ:

Թա ասում ա.— Վել մին պեն: էն... խոչան քեղ վեր մին թոխա ա ավալ, ինձ առ, աեսնամ հինչ ա կյիրալ, էլ լհա ետ քեղ տամ:

Էն վարում թոխա չի հինչ էլ օգի կաա: Թոխաը տյուս ա օնում, աամ ուրան: Միկա ղրաղ ա քաշվում, կարգում: Թա. «Էս խոխին վեր պիրի, փլան աեղը կպահիս, էս ինչ պենը կուացնես, թող ուրան-ուրան մեռնես:

Էս վեր կարդում ա խուզեն կյիրածը..., հի՞նչ ա անում... Խուզեն խաատավը կյրում ա վեր. աէս աղան վեր կյա տեղ հսնե, ախճիգյ յրան կը-փսակիս, քանե օր, քանե քշեր հրսանեքյ կանիս, ես մին ամսան եանը կյամ:

Ստի կյիրում ա, թոխաը նորը մինան աամ կանդուկաունեն, քյում ըն: Քյնում ըն, հսնում խոչեն շենը: Քշեր վախան ըն հսնում: Քյնում ըն, խոչեն առոնը թակում: Կնեգյը եր ա կենում,

առողջ պենում, ճրարը վասում, թոխտն էլ, խոխան էլ ախում ա կնդանը ըռաշկեն, կնդեղանը, կնեղը կարդում ա թոխտը, տեսնում՝ խուզեն կյիրածը, խուզեն խատարը:

Դե ախր, խուզեն խոռքն ա, լի, հինչ վեր ասալ ա, կատարել րցի, հու մհենդյա կնանանցը նըսան չի:

Ընկեղանը, էս խուիսեն... դե ախրը խոխտ չի լի, լհա խոխտ լրնք ասում..., հարց ա տամ թա.— Բալա, կենանք լուսանա՞մ, թա՝ լհա հրսանեցը մհենդյա անինք:

Ասում աւ.— Տուվ ըս դյուղում:

Ըստեղ էլ կենում ըն թա լուսանա: Հընդեր, հրվանու, պրիկամու լուխմին եր ըն կցնում, էս մինն ա, էն մինն ա, վերջը ավոնե ինք օնում, վիճոնե ինք օնում: Մարդիք հվաքվում ըն, ըսկըսում մրթոտելք, վերջը լուսանում ա, կանչում ըն զուռնա-զնզրակ, բաք-փսոր լոխ կյամ ըն, ընդեղանը, մին իրեք-շորք օր հրսանեք անում, վերջը ախճիդը էս աղեն յրա փսակում, հրսանեցը ողձնում, ցրվում-բյունում:

Վերջը, տղա յա, լի, ըխճկանը* ասում ա.— Եր քեղ մին քանե օր տանիմ բաղաբը շոռ ածիմ, հանցու մին դյունում վեր մենակ կյաս, հանար ա անում, լի, մեր առնը շիլ չնդյնիս:

Վերջը. վեր բյունում ըն շոռ կյալու, այեր-ավեր, մին անդամ տեսնում ըն մին հղեցու դրադի մին մտրդ նստած, ախուր, խե՛ շաա տիսուր:

Էն մին օրն էլ են աեսնում: Իրեինչի օրումը սամթն ա բցում, դե ախր բղաքեն ծանոթվալ ա, ճընպարհեն մին մարդու անա հրցնում.— էս մարդը էս ա քանե օր ա տեսնում ըմ, շաա ախուր ա, էս հի՞նչ ա իլալ, նրա դարդը հի՞նչ ա:

Ասում ա.— էս մարդը էս բղաքեն աարն ա, օղի բղաքը փսվեր կտինի, օգի՝ պրայեր կահնի: Բայց իսրը մին մաղար տղա օնե, ուրան էլ մին հրեվան ախճիդյ օնե, օղում ա, բյունում չի: Դարդան ընդալ ա տղորեն մաշը: Հու՞վ ա դյուղում՝ յա կապրե, յա կմեռնե, ձարն էլ սաի մեռած ա, թաղած չի:

Վեր աի ասում ա, ետ ա տեսնում ուրան նշանածեն ասում.— Տու բյունի առն, առու էլ պեն չօնիս: Վեր էրկու-իրեք օր էլ կյամ վուշ, դարդ շանիս: Ես ստղես լավ սվերալ ըմ:

Ուրան նշանածը անց ա կենում բյունում ուրանց տոնը, ինքը ետ ա տեսնում բյունում էն մարդին կոշար, էն ախուր մարդին կոշտու: Կյամ ա կշան նստում, թա.— Ա դայի, էս ա մին էրկու օր ա կյամ րմ, տեսնում՝ տու րեբյեփ նստած ըս...

Թա.— Բալա, — ասում ա, — իմ դարդը շաա ծանդը ա:

* Պնտը է լինի հակառակը (Ս. Կ.):

Թա.— Պատմե:

Պատմում ա:

Թա.— Եր կաց, բյունք ծեր տոնու:

Եր ըն կենում, բյունում ուրանց առնը, ստոլը պիրում ըն, տնում տակեն րալկոնումը: Էն կլառնետը, վեր էն ուստան տվալ ա, միշտ ուրան շուրերեն մաշին պահած ա ինում, տյուս ա օնում կլառնետը, ինքն էլ մհենդյա լավ շուրերում ա, լի, վեր եշում ըս, հունց ա թա հինչ ջուռա, սկսում ածելը: Դե էն ախճիդյ էլ՝ էս տղեն նշանածը, ուրանց հրեան ա, լհա պատը պահան, վեր ածում ա, էս ախճիդյ տյուս ա կյամ տոռնը, սա ածելու դաթը կտրում ա:

Թա.— Դայի, պա տինը կկտրին:

Թա.— Բալա, դյուղում ըս հինչ կա. վեր կյամ ստեղ, մշոնք կածիմ, էլ դաթը կտրել շըմ:

Թա ստուծանա յա, թա հի՞նչ ա, էս ախճիդյ ասում ա.— Կյամ, իսե՝ շըմ կյալ:

Կյամ ա, էս խուիսեն կշտեն նստում: Մին ստոլ էլ, դաշանգյ, ախում ըն տակեն, էս խոխտան էլ լհա սկսում ա ածելը:

Վեր ածում ա, ածում ա, լհա խիլա տծում ա, էլ լհա դաթը կտրում ա:

Թա.— Պա խե՝ կարեցեր:

Թա ասում ա.— Քուրիկ, դյուղում ըս հինչ կա:

Մին պեն ըմ ըսլական, հանց ըրա տտկադ շտնիս:

Թա.— Հի՞նչ էինի, ասե, լավ կինի:

Թա ասում ա.— Տու մծացալ ըս, բյունական ըս մին տղու: Հանե՛ էս մարդին խոխտան տեղեն մաշին՝ բու դարդատ, խե՝ շըմ բյունամ, վերջը մինին բյունական ըս, լի: Վեր էս պենը վղավ օնիս, վեր բյունիս էն տղեն, մշանք կածիմ, էլ դաթը կըտրել շըմ:

Թա ասում ա.— Բաշուստա:

Վեր բաշուստա յա ասում, ասում ա.— Դե բյունի ասե՝ եր կաց:

Քյունում ա էս ախճիդյը. յորդանը թող անում պրծնում, թա.— Այ տղա, խե՝ խրեկը շըմ բոն ինում, եր կաց, հրսանեք ընք անում:

Եր ա կենում տղան, մին թահրավ աշկերը հորում, տեսնում համան ուրան նշանածը:

Մհենդյ էս տղեն հարը էս, էս, էս խուիսեն հի՞նչ ա անում, թա.— Պա քեզ հի՞նչ տամ, հի՞նչ անիմ, վեր եկեր՝ իմ մեռած խոխտան սղցրեր:

Թա.— Ինձ մին դատ չի հաջաթ, կրնդակ մին օր էս բղաքեն իրավունքը ինձ տու:

Թա.— Վեր աի վլոթոն ըրեր, օղում ըս մին տարե աամ:

Թա.— Զէ,— ասում ա,— մին օր բոլ ա:

Էս պենը վեր պտահալ ա՝ մին հանց օր ա, վեր էրսը խոչան կյամական ա:

Թա.— Բաշուստա, հիրե օղում ըս:

թա. — էքյուց:

Կնոխե վխտեն միլիցոցը ջանգառն րսելիս ընիլալ:

Էս մարդը քյնում ա, էս խորիւն էլ նհետը տանում, տյուս կյամ ուրան ջանգառնեթի մեծի կարինեար:

Թա. — Հասե՞ր, էս խոխան էքյուց բղաքեն մեծնա. կօզի՝ լոխմին կկտորե, կօզի՝ կպահե,

Դե էտ ջանգառնի մեծը կկարե՞՝ մին ծպուտ հասե:

Ասում աւ— Հի՞նչ կինի, լյավ կինի:

Ութանա քշերավ էս խոխան կյամ ա ուրան պոստում նստում, էս ջանգառնեթ կյամ ըն, ցից ցից կողքեն վենը կևնում:

Ասում ա.— Խոչան վեր կյա, ստոլը կտնիք տակեն, կախաղանը պոկը քցիք:

Իսխաղանն էլ էն ա ինում ուրան կարինետեն կշտեն անկած:

Եշում ա տեսնում՝ խոչան:

Դե հու՞վ ա իմանում հի՞նչ զուռա ծիյուն յրունստած, վեսկեն կյուտած ըռաշին, կյամ աւ Քյարվանն էլ՝ քմական:

Տղան ջանդառնին ասում ա.

— Ստոլը կտնիք տակը, կախաղանը քցիք պոկը:

Տեսնում ա՝ խոչան եկը, եկը, թա անց կենա քյնի ուրանց տոն, դաստի ջլավան փոնեցեն, ծիյան վեր քշեցեն, ստոլը տիրին առակը, կախաղանը քցեցեն պոկը: Քյարվանը անց կացավ, քյնից խուզեն տոնը. վեր նիյ ա հսնում, վեր եղում ըն, տեսնում՝ խոչեն ծին տերտակ ա կյամ, հա՛յ հարայ, վա՛յ հարայ խոչա:

Դաստի խարարը կյամ ա թա. պա ասե՞լ ըըք, խոչեն կախ ըն տլական:

Կնեգյը, ախճիգյը-պենը, հնգեր-հրեան ծվծվալավ, լյաց ինիլավ կյամ ըն: էս տղան վեր եղում ա, տեսնում՝ ղեմքուլը, կնեգյը-պենը լյաց ինիլավ կյամ ըն, ասում ա.— Պեց թուղեցեք՝ քյնի:

Խոչան աշքեն տակավը եղում ա, տեսնում, թա՝ հու ուրան ըղագից: Աստել վեր հղե յա ինում, թա քյնի, օզում ա վեր ուրան ըգըաղեն էլ նհետը տանե, պաահվ անե, թա ասում ա.— Վեր ինձ ըղագալ ըս, քյնական ընք մեր առն:

Թա. — Հի՞նչ կինի, շատ լյավ կինի:

Քյնիիս վախտը տղան մին պաասո լյանգյ ա տամ, էս վախտը խոչան կնգանը հրցնում ա. — Էս հու՞վ ա, վեր եկավ, ինձ ազադից:

Թա ասում ա, կնեգյն ա ասում.— Թու փեսատ ա, հու՞վ ա:

— Ա փեսան վե՞րն ա,

— Էն վեր թխտումը կյիրալ ըս, թա. «Ախճիգյս

կփսակիս մինչե իմ կյալը, կօտիք, կիմմիք, ես ժամանակին կյլական ըմ։ էն ա:

Ետ ա տեռնում, սրա կոլաքն ըդնում, թա. — Ախեր ասում ըմ, թա օրիշ մարգ ինձ ազագել չի:

Վերջը, կուռնըգոնե քյնում առն: Դե խոչու տոն ա լի, օտում ըն, խմում, էտ վախտը եա ա տեռնում էս խորիան, թա. — Դայի, ե՞ս ըմ լյավ տղա, թա՝ տու:

Թա ասում ա.— Քյուփողի, տուվ ըս լյավ տղա, տու էն խոսքը վեր առւ ինձ ըսեցեր է՝, մետ՞ա տ:

— Հա, մետս ա:

— Էն վախտը կլիս ընգե, վեր տու ինձանտ շատ ըս խելունք:

Աաղաս լյավ տես-տեն յոր ա օնում, ուրան կնեգյն էլ, քյնում հսնում ուրանց հոր առնը: Տեսնում՝ լոխ սաղ-սլմաթ, սկսում ըն լյավ, առնե, քու օղած՝ լյավ ապրել:

Լհա մինչե մհենգյ էլ տի լյավ ապրում ըն:

19. ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀՆԱՐԱՄԻՏ ԱԽՃԻԳՅԸ

Մին գյուղացի մին ծի ա ունենում: Մի անգամ էս գյուղացու ծին քյնում ա, մտնում ա թագավերեն հանգը: Թագավերեն մարգիքը կյամ ըն, աանում ղալ անում: Մին ետ վերցնելու համար բիղի քյնիս թագավերեն կոշար, թագավերեն խնգրիս:

Էս գյուղացին քյնում ա թագավերեն կոշար, կոանում, թա. — Ներողություն լի, ծին եկալ ա մաալ քու հանգը, քու մարգիք եկալ ըն աարալ, ղալ ըրալ Միս առ:

Թագավերն ասում ա.— Կտամ, րայց միայն մի պայմանավ: Իրեք հարց ըմ ալական, թա պատասխանեցեր՝ ծին կաանիս, թա՝ չէ, մին լյավ ղամշու թակ կօտիս, կքյնիս:

Ասում ա.— Ասե, տեսնամ հի՞նչ հարցեր ըս աալու:

Ասում ա.— Եթե գու ինձ ասիս՝ տեսնամ, աշխարհում հի՞նչ ա ամենաարագ թոշողը: Էշ՝ մեկ, Մին էլ ասիս՝ տեսնամ, հի՞նչն ա մարդկանց համար ամենաարագըրը: Էշ էլ՝ էրկու: Մեկ էլ՝ հի՞նչն ա, վեր մարդկանց ամեն հինչը մոռանալ ա տամ:

Ասում ա.— Լյավ, կպաասխանիմ, միայն թա ժամանակ աաս, մտածիմ:

— Էրկու օր քեղ ժամանակ ըմ տամ:

Էս գյուղացին մի ախճիգյ օնե: Կյամ ա առն, ախճիգյը հրցնում ա.— Հայրիկ, ծին պերե՞ր:

Ասում ա.— Չէ, ախճի ջան, ծին լրեսի, հլա կարող էի թագավերեն ծերքավը մին ղամշու թակ օտել, ետնան կյալ:

Թա ասում ա.— Խե՞ն, հի՞նչ ա իլալ:

Թա ասում ա.— Սենց, սենց, իրեք հարց ա տվալ:

Թա.—Ասե՛ տեսնամ:

Ասում աւ:

Թա.—Հայրիկ, էտ իրեք հասարակ հարցը հի՞նչ
ա, վեր պատասխանալ շըս, ծին տեղն ու տեղը եր
կալալ, եկալ:

Թա ասում ա.—Հու՞նց ա հասարակ:

Թա ասում ա.—Հի՞նչն ա ամենից արագ թըռ-
շում Տա միտկն աւ Հի՞նչն ա ամենից բաղրը՝
ապրելը, սիրելը էն մեկն էլ՝ Հի՞նչն ա, վեր մար-
դուն ամեն հինչը մոռացնել ա աամ՝ բռնն ա.
վեր բունավ ա ընցնում, ամեն հինչ մոռանում ա:

Թա ասում ա.—Լյավ:

Ետ ա տեսնում, կյամ թագավերեն մոտ:

Թագավերն ասում ա.—Շուտ եկեր եկա՞լ ըս,
ծին տանիս, թա զամշու համն օնիս, բյնիս:

Ասում ա.—Թագավերն ապրած կենա, եկալ
րմ ծին տանիմ, բայց զամշին էլ հարկավեր ա,
վեր ծին բշիմ:

Ասում ա.—Հարցերեն պատասխանե:

Պատասխանում ա ու զամշին էլ ծիան նհետ
աամ իրան, թա.—Խելքս կտրում շի, թա տու ինիս
մտածած էտ հու՞ բշեղ սվեցուըցւ:

Դե գյուղացի մարգ, լի, դոնգի Ասում ա.—
ախճիյս:

Թա ասում ա.—Խելունք ախճիգ օնիս:

Թա ասում ա.—Վեշինչ:

Ասում տ.—Քյնի ծիտ ստաց, կյախ ստղավ
կկյտս:

Կյամ աւ Թագավերը պիըում ա մին մարուն,
մին էլ յոթ հատ ծու տամ, ասում.—Կտանիս տաս
ըխճկատ, կասիս, վեր բշեղը թոխս տինի, ուոթա-
նա բշերսւ ճաերը զարկի ինձ:

Ցոր ա օնում մարուն ու ծվերը, կյամ, շատ
բեքեփս:

Ախճիգյն ասում ա.—Էտ հի՞նչ ա պտահալ:

Ասում ա.—Դե ստի պեն:

Ասում ա.—Էտքան էլ տժեր շի, հայրիկ, ծին
կապե, եկ ստեղ:

Սա՛ ախճիգյը, պիըում ա մին հափուո կյարի
ածում մին պարկու մաշ, թտ ասում ա.—Կաանիս
տաս թագավերեն, կասիմ՝ ախճիգյս ասալ ա՛ բշերս
էս կյարին ցանե, բշերս հացնե, առավոտ շուտ
աղե, զարկե, վեր թտղա կյալուց փթըոկ անինքյ,
տանք ճտերեն, վեր օտին, կտորվին վուլ:

Պիրում ա, տամ թտղավերեն:

Թագավերն տասում ա.—Լյավ, էրյուծ ուոթա-
նա ևս ծեր տոնը դոնաղ ըմ կյլական:

Կյամ ըն հար ու ախճիգյ մոլհտթ տնում, ախ-
ճիգյն ասում ա.—Կյլական ա, տար միկա ցորնու
ալյուր ըըս, պեր թագավերեն հետե միկա լյավ
հաց թինիք, մեր ալյուը լյավ շի:

Հարը յոր ա օնում, բյնում:

Մարն ու ախճերն էլ, վեր պիծի խոխա ա ինում,

բյնում ըն, մին թիքյա հողամաս օնին, մաքին:

Էս վախտը թագավերը կյամ ա, տեսնում տա-
նը մինակ ախճիգյն ա. հրցնում ա.—Որտե՞ղ ա
հայրտ:

— Այնտեղ, որաեղ ճյուրը գաղաղում ա, լիա-
վից մանր անում ծեղ համար:

Թա.—Մարա ու ախճերտ հո՞ր ըն:

Թա.—Դաշտում, մարս բամու նհետ ա տնվա-
շի խաղ անում, եղրայըս էլ՝ մորից շծնվածների:

Թագավերը մնում ա գիք վլեննը կացած:

Ախճիգյը թա.—Պատասխանե, բեղ հի՞նչ հար-
ցեր ըմ տվալ:

Ասում ա.—Կարել շեմ պատասխանիմ:

Ինքը բացարում ա, թա.—Իմ ապեր տարալ
ա ցորնու ալյուր անե, պիրի, վեր բրդ հեան լյավ
հաց թինիք: Իմ մար՝ էնա մի բիլ հողամաս օնինք,
բյուլաշ-մյուլաշ հվաբում ա, կրակ աամ. թըմըդ-
ցնում, վեր հողր վարինքյ: Ախճերս էլ կուճի խո-
խա յա, զուշերեն ծուն հվաբում ա, նհետը խաղ
անում, կուտրատում:

Թագավերն ասում ա.—Լյավ, էրյուծ մեղ մոտ
տու հյուր կյաս, վել հագված կյաս, վել՝ մերկ:
Վել վեաավ կյաս, վել՝ մաշինավ: Մեր տոնն էլ
նի շմննիս, տոանն էլ վեննը շկենաս:

Թա ասում ա.—Լյավ:

Առավոտ եր ա կենում, մին էշ փոնում, բյնում
թագավերեն տոնը էշան վեր ա կյամ, մին ծուկ-
նու թոռում պտատվում, վլեննեն մինը տինում ա
տյուս դոլ, մինը՝ մաշ դոլ, թագավերեն ասում.—
Եկալ ըմ:

Թագավերը եշում ա աեսնում, վեր էս անգամ էլ
ա գործը տանել տվալ, ասում ա.—Խելունք ախ-
ճիգյ ըս, խոսք շօնիմ ըսելու, միայն ասե տեսնամ՝
ըշխարես կենտրոնը հի՞նշտեղ ա:

Էս ախճիգյը վլեննը աափեն ա կյամ, թա.—
Հսե ստեղ, հվատում ըս, շափե:

Արանք ուրուր հավան ըն կենում, կյամ ըն
պայմանավորվում, վեր ամուսնանան:

Ամուսնանում ըն:

Թագավերը պայման ափաս ա ինում, վեր էս
ախճիգյը ուրան կուծերեն խառնվի վուլ: Վերջը
փակվում ըն, վեր կիսլվա-պեն անց ա կենում,
էս թագավերեն նաղիր-վեղիրնեն մտածում ըն,
թա. Շնե՞ էս թագավերը մեր ախճիգյները թողից,
բյնից մին զյուղացու ախճիգյ օղից ու մունք էլ
ստիպված նրա հոր, մոր նհետ սեղան ընք նըս-
տում:

Շաա վեր անում ըն, թագավերեն վելը էնքան
տաշում ըն, վեր թագավերը ստիպված որոշում
ա, կնգանը բարեկամներեն նհետ բարեկամությու-
նը խղե, կնգանն ասում ա:

Կնեգյն ասում ա.— Դա քո կործն ա, գեմ լըմ, Ըու ա կյամ, էս պենին յրա մին տարե ընցնում, էս գեղացու ծին մին քուոակ ա ցըգնում: Գյուղացին ծին նստած գործի քյնիյիս, էս քուոակը խտղ ընելավ քյնում ա, մտնում գնուտանց մաշր: էս զնոտերյն էլ մտնում ըն թագավերեն արտերը: Թագավերեն մտրգիքը տտնում ըն, դալ անում: Էս գյուղացին ստիպված քյնում ա, թա քուոակը պիրի: Նաղիր-վեղիրները ասում ըն.— էս մեր թագավերեն կավն ա սահ զանա ծնալ, ստեղ քուոակ-մոռակ շկա:

Քյնում տ թագավերեն կոշտը՝ կենգյատ:

Թագավերեն տսում ա.— Գյուգում ըս հինչ կա, իմ նազիր-վեղիրները ճիշա ըն ասալ, իմ կավն ա ստի մտրուկ ծնալ:

Լհա գժողոհ, կլոխ կտխ քյնիյիս, ախճիգյն ասում ա.— Հայրիկ, հինչ տ պտահալ, խե՞ բեքյեփ ըս:

Թա ասում տ.— Դե ստի-սաի պեն:

— Վեշինչ,— ասում ա,— ես հանց կանիմ, վեր թագավերը սկեն՝ սե ասե, սիւտկեն՝ սիւտակ, տժեր պեն շի:

Թա.— Հունց:

Թա.— Ուոթանա քշերավ մին ծուկնու թոռ յոր կօնիս, կկյաս էս բիճումը վեր կքշիս: Լհա վեր թագավերը քեգ աեսնա, թոռը. կհավաքիս: Ինքը հրցնլական տ, թա. «Հինչ ըս անում», կասիս. «Շուկուն ըմ փոնում» Ասելու ա. «Բա խոաեն մաշին ծունկ կինիս: Կասիս. «Քեղ նման հիմար թագավերեն կավը եթե մարուկ ծնե, ուրեմն քու բախին խուտում էլ ծուկուն կինիս:

Հունց ասալ ա, աի էլ ինում ա:

Թագավերը կվնված ասում ա.— Առ թողթը, քյնի քուոակտ սաաց, եր կալ քյնի:

Կյամ ա, կնգանն էլ հրցնում:— Երեգի քու հոր տեսա՞լ ըս:

— Հաւ:

— Իմ կուրծերեն խառնվալ ը՞ս:

Թա.— Խառնվալ շըմ: Ես ասալ ըմ, վեր հանց կտնիմ, վեր տու, թագավեր, սեեն սե ասիս, սպիտակեն՝ սիւտակ:

— Իմ կուրծերեն խառնվալ ըս,— թագավերն ա սում, — քեղ այուս ըմ քցում: Էս պլտտեն մաշին հինչ վեր աշքետ քտղըր ա, եր կալ, այուս եկ:

Կնեգյն ասում ա.— Դե հինչ ըմ ասում, գեմ շըմ: Դե պիր ամենքս մին ստաքան կյինի խմինք, ես եր կենամ, քյնիմ իմ հոր տոնը:

Հըամայում ա, կյինին պիրում ըս: Էս կնեգյն էլ քյնում տ, ստաքանը պիրում: Թագավերեն ստաքանեն մաշը մին խրեգյ քոն ինելու փուշի ա լըցնում: Կմում ըն, խմելն ի բաստ թագավերը քոն ա

ինում: Փայտոնը լծել ա աամ, թագավերեն տինում փայտոնումը, յոր օնում, տանում հարանց առնոր: Առավուոը թագավեր աշկը պեց ա օնում, տեսնում մին զարաղամում, մին փագի կրավաթու յրա քոն իլած:

Ասում ա.— Սա երա՞ղ ա, թա իրականություն:

— Զէ, լհա գյուղ պեն ա:

Ասում ա.— Էս հինչ տեղ տ:

Թա.— Իմ հարանց տոնն ա:

— Պա ես սաեղ հինչ ըմ անում:

— Ես ըմ պերալ:

— Հո՞ը ըս պերալ:

Թա.— Թագավեր, ջղայնանում, . էր: Ինձ ասալ րո՞պլատումը հինչ աշքետ քաղցր ա թվում, եր կալ, քյնի քու հարանց առն: Յշեցե, յշեցե, քղանս քաղցր պեն շկար պլատումա, քըդ էլ եր կալի, եկե:

20. ՄԱԴԱՐ ԽՈԽԱՆ ԽԵՂՈՒՆՔ ԿԻՆԻ

Ինում ա, չինում մին վաճառական: Տրան մին մաղար աղա ա ինում: Վեր սա տեռնում ա տասըն-հենց-տասնըցեց աիրեկան, հայրը հիվանդանում ա, օղում ա թա վախճանվե, լի: Էտ խոխեն կան-չում ա հարր, վըսյաթ անում.

Ասում ա.— Բալա, ես մըեռնում ըմ, բայց իմ բաղաքումս,— ասում ա,— օխալ հատ ժուկիներ կան, լի, շայկտ կա ըսաեղ, ատհանց սնից առու հթիաթտվ պահե քել. վնաս ա ինելու:

Տա ասում ա պլընում, հաըը, մըեռնում. վախճանվում ա: Հարը մըեռնում ա, գե հնգեր-հրցվըն-ներ, պարիկամներ ամեն տեղից կյամ ըն, վաճառական մարգ ա, լի: Կակրաղ էն օխալ հոգին, ժուկիները, աահսնը էլ ըն կյամ ուրանց շայկարաշում նհեա: Կյամ ըն, մինը կլինեն ա թխում, մինը վայ անում, մինը հայ անում, մինը լյաց ինում: Մհենգյ, էս աղան մորն ասում ա.— Սահանը մըեկ հինչ պարիկամ ըն:

Թա.— Հիյգամ, քու հերը վաճառական մարգ ա, լի, հալրաթ հնգերունք ըն, սկացալ ըն, եկալ ըն:

Վերշը, հինչու վեր է. մըեռալը բեգում ա տանին ժամ. աանում ըն, լոխ հեաան քյնում ըն ժամ, էտ օխար հոգին մնում ըն տանը: Էտ տանը հիշքան թանգարժեք պեն, ոսկեղեն-գաա հվաքում ըն, յոր օնում, աանում: Թաղում ըն, եա աեռնում կյամ, աեսնում՝ առնը սրփած տարտծ: Մհենգյ, վել էն ա՝ հորը գտրգան լյաց ինին, վել էն ա՝ թլանեն գարգան լյաց ինին...

Էտ աղան մորն ասում ա.— Գյուգում ըս հինչ կա, մամա, առու էտ աարտծ ըպրանքեն զարգան լյաց մի ինիլ, պապուն հտմար լյաց իլ, լի՛, ես նրանց հախան կկյամ, լյավ կկյամ մինին աասը ետ կպիրիմ:

Էտ տղան ա ասում, է՛, էտ կումուր տղան։ Հալա 14—15 տարեկան ա. է՛, շտիլ խոխա ա, վերջը. շատ ման ա կյամ էտ խոխատ, տա՞նանց պյունը ճարում ա. էն ժուլիկներին Պյունը ճարում ա, տեսնում... բաղաքն էլ թագավերու բաղաք ա ինում, տեսնում՝ բաղաքի կենտրոնումը լւավ մազադին պեց ըրած, ուրանց մըեծը նստած արիտուր ա անում, ին վեց հոգին էլ ըստաղան-ընդաղան սիրփած պիրում ըն լհաւ։

Տեղը ճարում ա, ետ ա աւեռնում, կյամ մորը կոշտր, տսում ա. — Այան, ինձ հետե մին ըխճկան զարյա կարեւ։

Թա. — Հինչ ը՞ս անում։

Թա. — Քու հի՞շ կործն ա, կարեւ, լի, քեղ ասում րմ՝ կարեւ։

Էտ մարը յոր ա օնում շորա-շիրթա մին լավ նախշուն զարյա ա կարում։ Տա է՛ շահիլ տղա, զասուի կյենում ա, աեռնում մին սերուն ախճիգյ։ Բխճկան նման սարբվում, քյուում ա հիշաեղ վեր էտ ժուլիկներին մագագինն ա, էգ մագագինի ըրըշավը տես ա քյուում, աեն ա քյուում, ախրը, վերջը էտ մաղաղինչին տեսնում ա, վեր մին ախճիգյ տես-աեն քյուում ա. «Երեվի հմանչում ա, լի, պեն օպի», կանչում ա. — Եթ, բալա, եթ աեսնամ գարգտ հինչումն ա, հինչու՞ համար ըս տի հմնչելավ տեսան քյնամ։

Կյամ ա, թա. — Գյուղու՞մ ը՞ս հիշ կաւ։

Թա. ահմ ա. — Հի՞շ կաւ։

Ես էս հինչ վաճառականեն ախճիգյն ըմ, — ասում ա, — իմ հարս բյեցալ ա օտարություն, լի, մհենգի ուշացալ ա, տանը փող չկա, մամաս ասալ ա՝ քյնի տսե մին հենդի՞արուր մանեթ փող տտ, պապան վեր կյա՝ կտտնք։

Դե տա էտ ասած վաճառականեն ճինանչում ա, ծանոթ ա, ասում ա՝ պաժալուստա. հենգի՞արուր մանեթ հմրարում, տամ էտ ըրիճկանք։

Պիրում ա, տամ մողը, թա ասում տ. — Այա, հենգի՞արուր մանեթ ա, սկի նահանք մեր տանան հենգի՞արուր մնեթու ապրանք լըն տարալ. Ասում ա, քյուում, ըիճկան շորերը հանում, տղու շորերը կենում, պըճնում, քյուում քյուղումը էլ լհա կըլրպին-կրեգի տամ, ալիկունգի խաղ անում։

Էն վաճառականը կյտմ ա, էն վեր էն ա ղարփությունում, է՛, էտ վաճառականը կյամ ա, մհենգի ժուլիկներեն մըեծը ասում ա. «Ուրեմն, վեր եկալ ա, փողս կպիրի, լի»։ Շաա եշում ա, փողը պիրում չի էքսր եր ա կենում, քյուում. քյուում. — Բարեւ. — Բարեւ. — Հիրի ը՞ս եկալ. — էս հինչ օրեն. — Հունց ըս. — Լյավ ըմ. Տանա ետնը՝ նըստում, օտում-խմում, ասում ա. «Դե վեր եկալ ըմ, կպիրա, լի, վեր փողեն ըմ եկալ, փողը կաա»։ Եշում ա, տեսնում՝ փողու անում չկա ախեր։ Առ-

ու տեսնում ա, վեր տնումը տամ չի, ասում ա. — Պա գյուղում ը՞ս հինչ կա, ես փողեն ըմ եկալ։ Թա. — Հի՞նչ փողե։

Թա, ասում ա. — Դե, ծեր ախճիգյը եկալ ա, թա՝ հենգի՞արուր մանեթ տու. Ասալ ա՝ պապան էն ա ղարիբությունում, լի, փող չկա, կկյա, կտանք. փողը պրծալ ա, մաման ա ղարկալ։

Էտ վաճառականը. — Առաջինը, — ասում ա, — ես ախճիգյ չօնիմ, երկունշին էլ՝ ես վաճառական մարգ, ուրեմն իմ տանը փողը պրծնել թիգի, կյամ բըղանա հենգի՞արուր մանեթ փող պարաք անի՞մ, — ասում ա, — երեխա՞յ ըս, հի՞նչ ըս...

Հտեղ հիվանդանում ա՝ տեղնուտեղը. էտ ժուլիկրաշին հիվանդանում ա, Ախեր, նա էլ փողը հնգիերներան թաքուն ա տվալ, ասալ ա. «Փող ա, լի, կկյա, կտա, կպիրիմ էլհա տինիմ կասում»։ Հիվանդանում ա, հիշքան պրոֆեսորներ, թժիշկ-ներ-պեն կյամ ըն, վել մեկը տրա գարգը կարում չի գյիգա։ Ինքն էլ հնգերունցը ասալ չի, վել մինն էլ հնգերունցան գյուղում չի, թա հինչու հիվանդացավ։

Ախոր, էտ խոխան տեսնում ա վիր արա գտրղը դյուղսղ չկա, քյուում ա ըստեղան-ընդեղան աղյաթ-սկի գուիտուրի շորեր ճարում, կյենում, կյամ ըա՝ ես աղյտթսկի դոխար ըմ, ես կարող ըմ տրան սղցնիմ։ Հտահանք եշում ըն՝ մին խոխա ա, հինչ դուխտորն ըն եկալ, կըեցտ ըն, սա եկալ ա, թա՝ կսղցնիմ։

Ասում ա. — Զեր հիշ գործն ա, հաղար մանեթ տաք, կըղցնիմ։ Հենգի՞արուր մանեթ կտաք, վեր ճարը պիրիմ, հետո վեր լլավանա, հենգի՞արուր մանեթ էլ էն վախան ընք տլական։

Դոգվոր ըն կապում. — Եթե սղցրե՝ հենգի՞արուր մանեթը տամ ըք, եթե սղցրե վուչ կլոիս կտրեք։

Տրանք համաձայնվում ըն, ճրբնեն հի՞նչ։

Թա, ասում ա. — Դե, հենգի՞արուր մտնեթը սվեր, քյնամ ճար պիրիմ։ Հենդի՞արուր մանեթը յոր ա օնում, քյուում։

Քյնամ ա, պիրում փողը տամ մորը, մին քանե քյունա-մունա շուշա-մուշա ախնում ջուրերումը, կյամ։

Թա, ասում ա. — Հիվանդը պետք ա տինիք մին աան, վեր մթեն ինի և մենակ ես ինիմ իրան մոտար. ոչ ոք կյա վուզ։

Պիրում ըն, տինում մին մթեն տան, ակուշկեր-պենը լլավ կապում, պնդցնում, ինքը վեր մտնում ա, տյոււսի մարգկանցն ասած ա ինում. վեր ես ճարը տալու ըմ, թա օգուտ անե, հարայ ա անելու-վարայ ա անելու. թա օգուտ շանե՝ տուս ա կընական, ուրեմն՝ նորը մինան թիգի քյնամ, թաղա ճար պիրիմ։ Սա մտնում ա, առոնը կա-

պում ա, անգուճը կտրում՝ հիվանդը վայ ա անում, քեթը կտրում ա՝ հայ անում, հովլ ա գյուղում, պոշն ա կտրում, մանները, տի հայ-հայ անում, ախըր, տի կտրում, կտրում, կտրում, վերջը վղան կտրում, պտատում յուղանումը, այսու կյամ ինքը:

Դե, վեր հայ ա անում-վայ ա անում, այուսին էլ գյուգում ըն, թա ճարը օքուտ ա անում, տըա հոմար ա աի անում, տսալ ա, չէ^o, վեր օքուտ անե՝ հայ ա տալու Տյուս ա կյամ տոռնը կապում, թա, ասում ա.— Գյուգում ըք հինչ կա, էն ճարը լյավ օքուտ ա տամ, րայց լրիվ սղցնում չի, հենգյ-հարուր մանեթ էլ տվեք, քյնիմ մի օրիշ ավելի լյավ ճար պիրիմ, թայց մինչև երկու ժամը նըա մոտը քյնող շինի: Եթե երկու ժամ անց կացավ, նանա ետնը կարող բք պենաք,— ասում ա:

Պիրում ա հենգյարուր մանեթն էլ ինքյ օնում, էլ լհա տանում աամ մորը, էն ճարեր-մարեր, շորեր-մորեր տանում ուրանց րաղեն մաշին մին փոս կտրում, ածում մաշը, վրեղավ ծածկում, կյամ տղու շորեր կյենում, տյուս կյամ քյուշան, էլհա իոցը նհետ սկսում իհալ անելը:

Երկու ժամ ըսպասում ըն, իրեք ժամ ըսպասում ըն՝ գոխտուրը կյամ չի: Նի մնում, եղում աեսնում, հիշտ՝ զա ա, խարար ա աեռալ: Հայ-վյուգը տեղեք ընգնում ա... որշեմ, տրան թաղում ըն, պրծնում... Տա թագտվորին քաղաքն ա ինում, էն վեց հոքին քյնում ըն թագավերեն մոտը, կյենգատ անում: Ասում ըն.— Ստի մին պեն ա կոյացալ քաղաքումտ, ստի մեղ քյալագյ ա եկալ: Վեր մեղ եկալ ա, քյըղ էլ ա կյալու: Մին թահր ըրա, — ասում ըն,— տրան ճարի:

Թագավերը նազիր-վեզիրներեն նհետ մտածամ ա. «Ես հինչ անիմ, հի՞շ աեսակ ճարիմ ար-րան»: Վերջը, կյամ ըն քնենքի կյամ, խորհուրդ տամ, վեր. «Երեք օղաք վրեսկավ պեռնինք, քաղաքեն մաշին պեց թողինք, յավաշ-յավաշ հետան քյնինք՝ հեռե: Օղտերը աի քաղաքը շոռ տան, մինչե՝ հուվ վեր պիսկ անե, մուտանա թագավերեն օղտերեն, մահլում ա, չէ^o, գյիղա վեր նա կնի, ճտըալ ընքու:

Տի էլ անում ըն: Էտ օղտերը քաղաքումը աի քյնում ըն, ման կյամ: Էտ տղան էլ գյուգում ա արգեն, վեր թագավերը տի պեն ա ըրալ: Ուրանց հայաթին էլ լյավ կանալ ա ինում, խոտ ա ինում: Դե, սոված օղտեր՝ սաղ օրը ըրենն կածին քաղաքը շոռ եկած. գրրղան պենում ա աղան, ինքը դրաղ կենում, էա օղտերը քյուշան շոռ ըն աամ, կյամ մանում հայաթը, տղան գրրղան կապում ա: Օղտերին հետան քյնացողներն էլ, մտիկ անողները, էրկու հայ թորքեր ըն ինում, օղաքը ըշկոներան ըղնում ա, կյամ ըն տղեն թա.— Աա, դավա-

լար գյորմա ղը^oն:

Թա, ասում ա.— Դավալար գյուրչա գեթգի^o:

Տա տի ա ասում, ուրեմն՝ կնտնշին էլ ըն նահանք գյուրչա ասում, յրգյինքին էլ ըն գյուրչա ասում, ուրեմն՝ եթե կլին ընգնին, վեր օղտերը կնանշի յրա ըն քյցալ, էն ա տեղն ասում ա, լի: Վեր կլոխ շըղնին, կլիւցեր եշին, ուրեմն՝ գյգլական ըն թաւ՝ օղաքը երգյինքն ըն եր իլալ:

Ասում ա.— Նա ղեյիրսա՞ն^o:

Ասում ա.— Դեյիրամ՝ գավալար գյուրչա գեթգի^o:

Մահանք րիգի երգյինքը եշում ըն, էն մին հնգյերը թա.— Աա, հա, գավալարը ման գյուրչա գյորգում:

Էն մինն էլ թա.— Գյորգըն՝ գյորգըն, գեգաք:^{****}

Քյնում ըն թագավերեն թա.— Օղաքը երգյինքն ըն պըցրացալ, մունք մինին հաքյին տեսալ ընք:

Էտ տղան, զաշանգի, օղտերը աանում ա, ուրանց պաղպալ ա ինում, սլգվալումը պեռները վեր օնում, օղտերը կառում, վրեսկոնեն վեր ածում ըաեղ, այուս կյամ, էլհա ուրան հետե ման ա կյամ:

Մին պառավ կնեգյ կյամ ա թագավերան թա.— Հինչ կատ^oս, ես քո օղաքը քթենամ:

Թա ասում ա.— Եթե ճարիս, քո քշուավը մին քյե վրսկե ըմ ալական, եթե ճրեցեր վուլ՝ կլոխ կարելու ըմ:

Էտ պառավը ընգնում ա էտ քաղաքը, դրաղան սկսում մտնել աները: Թա ասում ա.— Հուրը տան օղտու մըես կա, — ասում ա,— իմ խոխաս հիվանդացալ ա, րժշկներն ասում ըն, վեր օղտու մըես օտե՝ կլավանաւ Որշեմ, տի ման կյալավ-մտն կյալավ-ման կյալավ կյամ ա, հսնում տահանց հայաթը: Էս աղան էլ աանը շինում, մարն ա ինում: Մին խիլա կորում ա, աամ ուրան: Պտահում ա, հա այուս կյայիս, աղան ղըրղումը պտահում ա.— Այա, էս հինչ ա:

Թա, ասում ա.— Այան քը մաաաղ, մին խոխաս օնիմ հիվանգ, գոխտունեն ասալ ըն՝ րիգի օղտու մըես օաե, եկալ ըմ, քու մար տվալ ա, լի, աանում ըմ:

— Աա, աա հինչ ա վեր տվալ ա, եկ տանիմ մին շախկա քյե աամ, աար էնքան օաեե:

— Այան քը մաաաղ,— ասում ա,— հոր ա^o, հա վեր աի մին պեն անիս, է...

Կյամ ա, նհեաը պիրում էա պոավին, պակ-

* Ուղտեր չես տեսին (Թրգմ. 4.):

** Ուղտերը երկինք գնացին (Թրգմ. 4.):

*** Ի՞նչ ես ասում (Թրգմ. 4.):

**** Ուղտերը երկնքում տեսա (Թրգմ. 4.):

***** Տեսա, տեսա, գնանք (Թրգմ. 4.):

վարի պենում, օղտկրը նշտնց տամ, թա.—Հիշքան սղում ըստ կտրե՛ տարւ

Հա պառավը վեր կռանում աւ, կացենը քաջում ա, արտ կրոխը կտրում, քցում տեղ, թա.—Տար մրեսր թող խոժան օտե, սղոնաւ

Էա թաղավերը շատ ա եղում, վեր պառավը կյաւ Հիշտղա՞ կյա, կորավ պառավը: «Արա, պա հի՞նչ անինք, հու՞նց անինք, Հիշտղա ճարինքս: Մին էլ նորից ժուղիկները կյամ ըն, տրան ասում... թաղավերեն, դի: վեր.— Եկ բըղարեն զրաղեն էրկու րտրծանի տներ շինինք, կոռւզոմ դարոր բաշինք, դրրկոն յրան անինք, ախրանը տինինք... թաղավերեն մի մադար ախճիդյ ա ինում... էն ախճիդյ տինինք բնդեղ էրկունջի ճարկումը, հուվ վեր ոխսկ անե, կյա, թաղավերեն ախճիդյը փըինքուն, դիդա, վեր նա ա. էլ օրիշ հնար չկա:

Էս տղտն էլ լա աի մին պենա օղում, Դե թաղավերեն հետե տներ շինելր հի՞նչ տ, հու մըդ նման շրշրվական չի, ջանը ջափա տա, տսում ա, անում րն, Տները շինում րն, բխճրկանը պիրում, տինում էրկունջի ըտաժումը:

Էս տղտն մտածում տ՝ հինչ անե, հու՞նց անե... ուրանց մին թագի ա ինում, տանա կուպրուն ա տյուս քցում, ինքը նի մնում կուպրունեն մաշը՝ շոն տեռնում: Շոն տեռնում, քյնում ախճկա տան ախրանիկին կոշտր: Ախրտնիկը ուրախանում ա, կերակրում, պահում, վեր քշերը ինքյ քունավ ընցնե, յնա շոնը ուրան տեղը տանը կեշի:

Քշերը ախրանիկը վեր քնում ա, տա պցրանում ա: Էտ «շոնը» պցրանում ա, թա ախճիդյը շիլակե, տյուս պերի, ախճիդյը զուրթնանում ա: Վեռ զուրթնանում ա, տա սկսում ա հաշիլը՝ շան նման: Ախրանիկը հշոցին յրտ զուրթնանում ա, կյամ, թա.— Հի՞նչ ա, հի՞նչ ա պտահալ:

Թա.— Ինձ տարած ին: Վեր ես շոնը շինար՝ ինձ տարած ին:

— Ա, հու՞նց թա...

Թա.— Հու:

Էտ ախրանիկը օղում ա, թա էա շանը կլխավը շու կյա, Քյնում ա, ուրան ստացած պայտկը պիրում, լոխ տամ էա շանր: Դե, շատ մըեծ պեն ա՝ համ րիմկան ա աղագալ, համ էլ՝ տանավ ուրան ա փրկալ: Շոնը տեռնում ա տահանց հավատը: Էն ա մին քշեր էլ վեր ախրանիկը պենդ քնում ա, ախճիդյն էլ ա քնում, տա րիմկանը շիլակում ա, տաղաս տյուս կյամ: Ծխճկանը պիրում ա ուրանց առնր: Տանում ա ուրանց առնը, տեղերը քցում ուրան ծեռուք, ախճիդյը տինում մաշն, ինքյն էլ կողքեն պարանց ըղնում: Պասկում ա, ինքը քունավ ընցնում: Վեր քունավ ա ընցնում, էտ ախճիդյը զուրթնանում ա: Դե, տղան անքոն, նղացած, մընում ա քնած: Եշում ա, տեսնում՝ մին տղու

ն: ետ պառկած. «Ա, էս հի՞նչ պեն ա. էս հի՞նչ նաղլ ա. ա տյուս ա կյամ, վեր փախճի: Բայց դրբազան տյուս կյայիս օղում ա, թա մին նշան անե, վեր էրյար կյան, տրան փոնին Տեստեն ման ա կյամ: մին վեղբու մաշի խիլլա ունգյ ա բթենում, կրասկա, կյարմուր, վեղրան լիգյը, հա ծերը քցում ա վիգրին մաշը, տանում զըրրդան յրա թխում, անց կենում, քյնում թաղավերեն տոնը, ուրանց տոնը, լի:

Վեր լյուսանուս ա, էտ տղան տեսնում ա՝ ախճիգը չկա: Ախճիգը չկա: Հայ դակ, հայ բեղադ, ախճիգը՝ ախճիգը չկա: Ասում ա. «Սա անպայման մին տեղ մին նշան արած կինի, վեր կյան ինձ փոնինս: Ճիրաբը նի ա կցնում, քյնում տեստեն շոռ կյամ, տեսնում՝ ախճիգը ծերը զըրգան յրա ունդյավ փիշատած: Դե, մհենդյ էտ կրասկան վել վեր կանվե, վել պեն կինի: Վեր անե, մին ա, մահմամ ա տոնալական՝ հու՞նց ջուռա անե, վեր ուրան փոնին վուչ էա վեղրան յոր ա օնում, քըղաքումը հիշքան դրրդա կա՝ լոխճին յրա թխում ա, տանում թաղավերեն տան դրբեն յրա էլ թըհում, կյամ արխային քոն ինում:

Ուռթանա տրիվոդն ըղնում ա բաղաբը էն վեց ժուղիկնեն կիխու ըն, վեր սա համան ծերենն կործն, թաղավերեն տտկն ըն տամ, վեր հու՞նց օղում ա ինի՝ բեղում ա փոնե, կախ տաւ Ախեր տողը ընդալ ա զընոնենն Տի, վեր շատ շըռվըռեն ըն ըղնում, ախճիգյն ասում ա՝ ստի, ստի... սնշան ըմ ըըալ՝ ծերքս կրասկավ թխալ ըմ կրբղեն, վեր քյնան, ճարինն:

Տյաւս ըն կյամ, վեր քյնին ճարին, եշում ըն, տեսնում՝ էն ա թաղավերեն դրրդեն յրա թխած: Եա են աեռնում, թա.— Թաղավերեն ապրած կենա, ախճիգը փիցնողը քու հայաթան ա, էն ա քու հայթումը:

Ախճիգը թա.— Զէ, ե՛, ստի կրուգ ըմ տվալ, սաի քյեցալ ըմ, ստի եկալ ըմ... քյնացեք, ճարեք:

Քյնում ըն, հիշտեղ զորգա կա, էն ա լոխճին յրա նշանը թխած, կյամ ըն թա.— Թաղավերն ապրած կենա, քաղաքումա,— ասում ըն,— մին սայա գրբա չկա:

— Կա ու՞ն— ասում ա,— դե մհենդյ հիշքան ժողովուրդ օնիմ՝ հըվքեցեք, էն հիշտեղ վեր ճառ ըմ ասում, է՛, հըվքեցեք ընդեղի:

Հըվքում ըն. տա էլ ա քյնում՝ էտ տղան, թաղավերը կյամ ա ուրան նաղիր-վեղիրներավը: տեղ ասում ա, վեր՝ հուվ վեր վզտվ օնե, թա ինքյն ա րալ, ես իմ ախճիգը տամ ում նրան:

Դե, ամեն մարդ էլ կօղի, վեր ինքյը ըրած ինի, վեր թաղավերու փեսա տեռնա, րայց պատմել կա, նաղլը կա, գիդալ կա, էա լոխ բեղում ա ասե: Հու՞ կար զուր տեղան կլոխը խթու տակ տինի:

Էս տղան մանն ա պցրցնում թա՝ ես ըմ ըրարի
Թագավերն ասում ա. — Դե, պատմի.
Լոխ պատմում ա, հունցը ես քե պըտմեցե.
Մհենց թագավերն ասում ա. «Ախճիգլս սանա
լյավ տղու ըմ տլակա՞նն. Սա վեր էս հասակումը
ստի պեներ ա անում, մըծանա, երգիր էլ կկառա-
վարես. Մաշկը թակում ա, թա. — Ախճիգլս քունն ա.
Պիրում ա ախճիգլս փսակում արա յրա, ինքն
էլ տրխալին երգիրը կառավարում, գյիգալավ, վեր
ուրան անա եսնը թագավեր կա:

21. ԹԱԳԱՎԵՐԵՆ ՕԽՏԸ ՏԱՐՎԱ ՔՅԱՐԱՌՈՒԽԻՆԸ

Մին թագավեր ա ինում, աստվածությունից
հրաման ա կյամ, վեր օխտը աարե քյասիրությու-
նում ա ըպրելու: Հիմա, հրցնում ըն. — Էա օխտը
տարեն շհլոց ըս յոր օնում՝ էտ ագբաառությունը,
թա՝ պոավոց:

Ասում ա. — Քյնիմ կնդանս նհետ մսլըհաթ
անիմ, — զրագետ մարգիք ըն, լի, աահանք, —
քյնամ կնդանս նհետ մսլըհաթ անիմ, աեսնանք:

Քյնում ա կնդանը նհետ մսլըհաթ անում,
ասում ա. — Մեղ ասավածությունը օխտը աարե
աղքաառութուն ա աամ, թագավերությունը յոր ա
օնում, հիմա ասե՝ շահիլոց վերցնի՞նք, թա՝ պոա-
վոց:

Կնիկն ասում ա. — Հիմա շահիլ ընք մունք,
հիմա քյասիրությունը շահիլոց յոր օնինք, շահի-
լոց ա լյավ, ողպեսզի կարողանանք գժվարություն-
ներեն աիմանանք, բայց վեր պառավ ինինք, կա-
րել լընք, կարել լընք հագթահարինք:

Իաի էլ շահիլոց յոր ըն օնում, էա քյասիրու-
թումը, յոր ըն օնում իրանց յրա:

Տահանց էլ էրկու բեխա ա ինում: Հիմա. վեր
քյասիրությունը յոր ըն օնում, թագավերություն-
դաա ծերքիցը լոխ ըգնում ա, խորհը ըն աեսնում,
վեր ըաեղից աեգափիսվին օրիշ աեգ: Էրկու աղա-
երեխա ա ինում: Եր ըն կենում, էրկու լոր հաց
մին յըլլեխում կուպում, ճանապարհվում: Ճանա-
պարհվում ըն, շաա քյնամ ըն-պեն ըն անում, վեր
սովածանում ըն, մին աեղ կրակ ըն անում: Կրակ
ըն անում, վեր էտ հացը թիցնին, օաին, լի: Տու
մի ասել, աեղ մին թաշիր ա ինում, վեր էա հո-
ղերը-պենը լոխ ուրան կարգագրության աակ ա:
Վեր կրակ ըն անում, ծոխը վեր ըաեղ եր ա ինում,
մարգ ա զարկում, աա ծերքեն տակեն դինված
մարգիք կան, ասում ա. — Մին քյնացեք, տեսեք
էն հի՞նչ ծոխ ա ընգեղ՝ իմ վեգում:

Կյամ ըն եշում, տեսնում՝ մին գեղեցիկ մարգ,
մին գեղեցիկ կնիկ, երկու աղա... թագավերական
խալս ըն, լի, լոխ գեղեցիկ, Պատասխանը տանում

ըն թա. — Ընգեղ մին մարգ ա, մին շատ գեղեցիկ
կնիկ, շատ իրար համապատասխան ըն:
թա, ասում ա. — Քյեցեք էտ կնիկը պերեք:
թա. — Հունց պիրինք, նա մարգ օնե, խոխեք
օնե, սկա հունց կինի...
թա. — Դե, քյեցեք զոռավ պիրեք, լի:

Կյայն էն կնեգյը զոռավ յոր օնին, աանին:
Յոր օնին, տանին, թագավերը կսկսե լյաց ինիլը,
խոխեքը սկսին լյաց ինիլը, կլինեն թակիլը. էտ
կնդանը կտանին տան էն թաշիրին: Թաղավերն
էլ լյաց ինի, լյավ, եր կկենա խոցը կուռնոտան
փոնե, սկսե ճանապարհը շարունակելը: Կյա,
մին կյետ կպտահե: Էտ կյետավը րիգի ընցնե էն
կողմը: Մին երեխան կթողե կյեաեն էս կողմեն,
էն մեկին ծերքան փոնե, վեր կյետավն անց կցնե:
Վեր կհանեն կյետեն մաշաեղը, հանկարծ մին կյուկ
կկա, էն գրսի խոխեն աանե: Ծտեղ կշագվե, էն
ծերքեն խոխան պեց կըղնե, ճյուրը յոր կօնե, կը-
աանե, ինքյ կմնա տեղ մինակ՝ կլոխր թկեյիս:
Անց կկենա էն անգյունը... Դե, արգեն խոխեքը
ծերքան ընգալ ըն, հունց անե... մեկը կյուկն ա
տարալ, էն մինն էլ՝ կյետը: Կնեգյն էլ թաշիրն ա
աարալ Անց կկենա աի, իրան ճանապարհը շա-
րունակե:

Էտ կյուկը տարած խոխան շորանը ծերքան խը-
լում ա. շորանը հայ-հարաց ա անում-պեն
անում, վերջը, խում ա ծերքան: Էտ մին երեխան
էլ, վեր ընգնում ա կյեաը, քյնում ա, մին գահա-
ա ինում կապած, ճղացու գահնա, քյնա ըղնե գըհ-
նակը, ճյուրը կտրե, ճղացպանը կյա տեսնա՝ էն
ա մին խոխա ըաեղ: Ըաեղ ըտա այու կօնե: Էտ
ճղացպանը, էտ խոխան ըտեղ կպահե, էն շորանն
էլ ընգեղ կպահե:

Էտա՝ էտ թագավերը, քյնի, տյուս կյա մին քա-
ղաք: Քյնի, այուս կյա մին քաղաք, վեր էն քաղա-
քեն ժողովուրգեն թագավերը մահվալ ա, արանք
պեն ըն ընարում՝ թագավեր պիտի ընտրին: Մա-
հանց կարգն էլ իաի ա. դուշը պիտի պեց թոգին,
թուուն ա, լի: Պեց պիտի թողին իրեք անգամ,
հուրը կլինեն վեր կյա, նա թագավեր ա, լի: Ուրեմն՝
նա արգեն թագավեր ա՝ հուր կլինե դուշը իրեք
անգամ նսաից, Հիմա աա տյուս կյա էա քաղա-
քը. — է ս հի՞նչ ա, էս հի՞նչ կա, էս հի՞նչ ժողո-
վուրգ ա, վեր ըստի թուի ա տեռալ:

Ասում ըն. — Դե, ըսաեղ թագավեր ըն ընարում:
Քյնում ա, տի... գե մարգ ա, լի, էտքան ճա-
նապարհը եկալ ա, յըան շոր շի մնացալ: պեն շի
մնացալ, լոխ ճղողած, եխառու-ճիճուտ, քյնում,
նղացած մին քարու յրա նսաում: Դե, զուշ ըն
պեց թուղելու, հուրը կլինե իրեք անգամ վեր եկու,
ուրեմն՝ թագավեր ա: ժողովուրգը խոսում ըն. Հայ,

իմ կլինես ա վեր կլալու. էն մինը՝ ևս ըմ հարուստը, իմ կլինես տ վեր կլյական... Վեր պեց ըսթողում՝ կյամ ա, շու ատամ շոռ, էն ընգուունին յրա, ևս ընդունին յրա, վերջը՝ կյտ, էս թագավերեն կլինեն վեր կյտ, էն վեր օխար տարե ախկաղություն ա տվալ աստված, ժողովուրդ ըն, կբողոքին, տես կանին, տես կանին՝ էտ զուշը հունց ա պատհալ, վեր եկալ ա, էտ մարդին կլինեն վեր եկալ, Դե, ասում ըն. պեն ա, լի... Առաջվա հավատուր ավեստարանն տ իլալ... ասում ըն՝ գե ավետարանումն էլ կինի, լի, սիալ Հետո՝ զուշ ա, լի, զուշը սիալվում աւ Նորից, ասում ա... հալա էրկու անդամ պիահի պեց թողին: Մեկ էլ ըն պեց թողում: Ծոռ ա կյամ, շոռ ա տաս՝ ժողովուրդեն կըլիսավը, էլ լճա ետ կյամ, էն մտրդին կլինեն եր կյտմ: Մհենդի իրենքին անդամ աւ իրենքի անդամը հուրը կլին վեր եկու, զե արդեն թագավեր ա, լի, Մեկել ըն պեց թողում: Հուշը շոռ տամդեն տնում, կյամ, էլի էտ մարդին կլինեն վեր կյամ, էտ մարդին կլինեն վեր վեր ա կյամ, էտ մարդին խուլցնում ըն, խուսցնում ըն, տեսնում, որ էտ մարդը իոսակցությունից շաա բաղրաստ մարդ աւ Շաա բաղրաստ, շատ խելունք մարդ ա, տա կարսդ ա ժողովուրդ ղեկավարե: Տա հինչ հարցեր տալիս ըն, պագասիանում ա, շտա էլ իւալիս մարդ ա, հասկացող: Շա, էտ մարդը, ուրեմն, իսկապես վեր թաղավերացու աւ Տրան տինում ըն թագավեր, տա իրան թագավերությունը շարունակում ա:

Խոսինք էն բեխացը անաւ

Դե, էն մինը կյուլը տարալ ա, էն մինն էլ կյեան ա տտրալ, ընդալ ա ճղսպանեն կոշտը, պահալ ա, մեծացրալ: Տահանց խլքոնեն վեր մի քի կտրում ա, ըստուծանա ա, թա հինչն ա, էրկուրան էլ՝ ճոկ-ճոկ օղում ըն քյնին քաղաք, թագավերեն կոշտը, ռնանա զործ պահանջնինք, մեղ գործ տա՝ անինք, ապրինքն: Ճոկ-ճոկ ըն մտածում, է՛, պայց ուրուր նման՝ կյան թագավերեն կոշտը, ասին: Թագավերն ապրած կենա, երափեք ընք, լի, ախեր, եթիմ երեխեք ընք, խնդրում ընք, մեղ գործ տաս, զործ անինք, ապրինք:

Էտ վախտն էլ, օնգատն ընգած, մի հարուստ խոչա ա կյամ, տյուս կյամ թագավերեն վեղը: Դե օրենք ա՝ թագավերեն վեղը տյուս եկած հարուստ մարդկանց րպրանքեն ապահովությունը թագավերեն յրան ա րդնում: Էտ խոցը դարկում ա խոչեն լողանքեն յրա, հսկին: Խոչան էլ տեսնում ա, վեր թագավերը մարդ ա դարկալ, ղե թաշիր մարդ ա, լի, օղում ա պատիկ տա թագավերեն: Եը ա կենում, վրեսկավ-պենավ քյնում թագավերեն կոշտը պատիկ տամ, պատիկ առնում, պայց թագավերը եա կյա տոն թողում շի, թա խոչա թաշիրը եա կյա տոն

թշերը, ասում ա.— Հուշ ա գյուգում, հըղեցեքը հինշեր կպատահե:

Թա.— Պա... ունեցվածք օնիմ:

Թա.— Կախիլ մի, ըրխըլին կաց: Թագավերեն վեղումը բու ունեցվածքիտ հու՞ պիտի ծերք տա: Իմ զոնաղն ըս, իմ աշկես լուսին յրա տեղ օնիս, թշերս կմնաս, րոպոտ կընաս:

Թագավերը էն էրկու տղեն վեր զարկում ա թաշիրին ունեցվածքին յրա, էրկու հրացան ա տինում ծրքըներեն, ասում. «Քյուում ըք, պահում, եթե մին ասեղ էլ կորչի, կախաղան ըմ հըննական Զեղ կախաղանում ըմ տալու: Տի ասած ա ինում: Տահանք էլ. «Աշկես յրա, թագավերու: Էլ տանա ետնը փիս պեն կմատածե»:

Տրանք ամեգյը մին հրացան եր կալած, էտ խոչեն ունեցվածքը պահում ըն: Պահում ըն, դե, աշունքու թշեր ա, լի, էրկան թշեր ա, հիմա, տահանք զրուց ըն անում-պեն ըն անում, Ասում ըն:— Այ աղա, մունք էս ա հինչքան վախտ ա ընդերություն ընք անում, մինը մինան հարցնում ընք, թա՝ քու անումը հինչն ա, իմ անումս հինչն ա, ատահտն՝ տու հու՞ օնիս, ես հու՞ օնիմ... Էն մեծն ասում ա.— Ես հիշում ըմ, վեր մեր հարը թագավեր ա իլալ, մունք էլ էրկու ախապեր ընք իլալ: Մեր պաղան մեղ եր կալավ, վեր կյետավն անց կենա, ինձ,— ասում ա,— ճյուլը տարավ, էն մինն էլ կյուլը տարավ...

Ուրար ճնանչում ըն, կուզկու անում.— Պտ ևս քյը մատաղ, քու անումը հինչն աւ թա, դե.— Ասի աւ:— Պա բու անումը— Ասի:— Պա դե ախապեր ընք, վեր ախապեր ընք, լի. մատաղ ինիմ...

Լա տի ուրուր նհեա խոսում ըն: Տու մի ասել՝ տտհանց մարը խոչեն զոռամա տարած կնեգյն ա, վեր մինչեւ այսօր էլ պահում ա սանդուղեն մաշին քլած: Էտ խոխեքը վեր զրուց ըն անում, մարը լուսում ա: Մարը ասեղ լուսում ա էտ խոսկերքը: Վեր լուսում ա, սանգուղեն մաշան, թա.— Մատաղ ինիմ, էտ հինչն ըսեցեր:

Ախեր, դե բանք էլ օրիշ մարդ չի լյալ էն էրկու աղան վեր բյացալ ըն, տեղ մարդ չի լյալ, գյուգում ըն վեր մենակ ուրանք ըն, Մհենգյ՝ սանգուղեն մաշան մին սաս ա տյուս կյամ:

Թա, ասում ա.— Մատաղ ինիմ ծեղ, մին էլ պատմեցեք:

Մեկ էլ վեր նորից պատմում ըն, ասում ա— Պա, մատաղ ինիմ ծեղ, ես էլ ծեր մարն ըմ, լի: Ինձ,— ասում ա,— ստղաս տյուս կալիքյ: Կամաց տիստկնեն պուք ավեքյ, ինձ տյուս կալիքյ, պա ես ծեր մարն ըմ, լի, մատաղ ինիմ:

Էտ ախակնեն քանդում ըն, մարը աւաղատ տյուս օնում: Տյուս ըն օնում: Հու՞ ա գյուղում՝

ուրուր լպզտոտոմ ըն, պեն ըն անոմ, զրուց անում՝ կլխոնեն հինչ վեր եկալ ա, պատմում։ Հետո, մարը մաշտեղավը պարանց ա ըղնում, մին տղան մորը մին կուռնանն ա պարանց ըղնում, մին աղան էլ՝ էն մին։ Մինն ալի կուռնավը, մինը՝ ծեխս կուռնավը, տի, արդեն քնում ըն։ Մինչև լյուսը տի քնում ըն, էլ կուրթնըցնող չի ինում։

Քշերավ թաշիրը կյա, կտեսնա, վեր տեղ տի պեն ա՝ հունցը քնած ըն, աի էլ կա նուտ ետ կը- տեռնա թադավերեն մոռա թա, ասում ա. — Թա- դավերն ապրած կենա, առնս քանդալ ըս, ախեր։

Թա. — Հի՞նչ ըմ քանդալ։

Թա, ասում ա. — Թա ինձ հավատում չըս, մարդ դարկե, թող կյա տեսնան դրությունը հունց աւ

Կյան, կտեսնան հալա ինդի քնած։ Տահանց եր կկացնին, պիրին թադավերեն մոռա. թա ասում ա. — Այ տղերք, ծեզ, — ասում ա, — կախ ըմ տա- լու։ Ծեզ երկուսին, — ասում ա, — կախ ըմ տալու։

Էա խոսքը վեր ասում ա, մարն ասում ա. — Թագավերն տպրած կենա, մին խոսք տու։

Թա, ասում ա. — Խնդրեմ, ահե։

Թա, ասում ա. — Հինչ համոթ պե՞ն ա, վեր որդին մորը նհեա քնե։

— Յանի, — ասում ա, — Հու՞նց ա քո որդին։

Թա ասում ա. — Դե, հասե, ստի-ստի, զրուց ըն ըրալ, յըս էլ սկացալ ըմ, ախսալ ըմ, վեր իմ րախեքս ըն, լի, պա, — վերջը ասում ա, — իմ մարդս թադավեր ա իլալ, սրանք էլ իմ րախեքն ըն։ Թա- դավերեն անումը՝ ստի ա, ըեխեքինը՝ ինդի ա...
Վերջը թա, — Պաա՞հ...

Իմտնում ա, վեր սա ուրան կնեդյն ա, նրանք էլ՝ ուրան րախեքը։ Հիմա աեհնանք, դործը հունց պիաի քննվե։ Էտ թաշիրին սպանից վուշ, հինչ օնե-լօնե ինք կալավ, ուրան տկլոր պեց թողեց, քյնաց, էլ լհա ինքյը մնաց թադավեր և շարունա- կեց իր թադավերությունը օհուալ տոնանը ետնը։

22. ԹԱԳԱՎԵՐԵՆ ԽՈՇՀՈՒԹՅԸ ՏՂԵՆ

Մին թադավերի մին տղա ա ինում։ Էտ աղան վեր մծանում ա, հալա մինչև փսակվելը թադա- վերը հիվանդանում ա, լի, աղեն ասում ա. — Ես մեռնում ըմ, իմ տեղու թադավերը առու ըս ինելու, լի։ Թայց վեր փսակվիս... Հասե, ես քու փսակեն հասնում ըմ, լի... վեր փսակվիս, հըսանիք անիս, պրծնիս, — ասում ա, — մինչե քու նշանածը ուրան էն վեաաշորը, — ասում ա, — հանե վուշ, տինի կըլիսաակավա, նրան նի շկյաս։

Էտ տղան թա ասում ա. — Լյավ։

Վերջապես հոըը մոնելուց հեաո, հասակը առած մարդ ա, լի, իսակվում ա. Փսակվում ա, սերուն, հարսանիքը պրծնում ա հինչպես մարդ

ու կին քնում ըն միասին, եր կենում ինչպես՝ քույր ու եղրայր. նի չի կյամ, հորը աստծը անջուկ օնում, նի չի կյամ։ Մին ամես, երկու ամես, իրեք ամես, հենդյ տմես, վեց ամես, վերջապես կսպասի մինչե մին տարեն, էտ ախճիդյը սպասում ա, պեն չի կա, ախեր։ Տա կյրում ա հորը յրան, հասկացնում՝ տե- սավ-տենավ, թա. — Ինձ մարդու ըս տվալ, սարտվ թադավերու աղու ըս սվալ, րայց էս ա մին տարե ա, մունք քուր ա ախսոր նման ընք, տա նշանա- կում չի, — ասում տ, — վեր տու ինձ մարդի ըս տվալ։

Մհենդյ ախճկան հարը մտածում ա. ռինչպ!՝ ս անինքյ, հու՞նց անինքյ, վեր տրան սպանինքյ, վեր տի յա, սպանինքյ, տրանից ազադվինքյ, լիս։ Տա ախճկան յրան կյիրում ա, թա՝ տելեֆոնով խո- սում ա, վեր. «Էս հինչ օրը, տուք միասին այուս կյանք էս հինչ ճանապարհեն յրա, ես զորք ըմ զրկան սպանե, քյեզ յոր օնե կյա, նոըը մինան մարդու կամամ»։

«Փլան օրը էա տղան սուրբ-թուրը, զենքերը կապում ա, ծիերը նստած, միասին կյամ ըն, վեր կյամ ըն... էտ ախճիդյը դյուգում ա, վեր կյալ րի- դին զորքը, էտ աղեն սպանին ծշում ա, տեսնում՝ հեռվից թող ա կյամ, թող ա պցրանում։ Էտ՝ նշա- նածն ասում ա. — Տու ըստեղ կաց, ես մին քյնիմ, տեսնամ՝ էտ հի՞նչ թող ա»։

Թյնամ ա, տեսնում զորք ա, Զորք ա կյամ։ Տա մաննը կծում ա, հասկանում ա, վեր ուրան ըսպննական ըն, էտ զորքը սըի ա քաշում, լոխճին կառում, մին հատ թողում չի, արունն էլ կեաի նման ա քյնամ։ Ես ա տեռնում, կյամ նշանածը հրցնում ա, թա, ահում ա. — Հի՞նչ թող ա»։

Թա, ասում ա. — Վեշինչ, շորաններ ին, լի, վըեխճար ար, սարն ին տանում։

Տի աահանք ման կյալավ քյնում ըն, հսնում տոն, ախճկանը հոր առնը. հարը մնամ ա մաթալ, ախճկանն ահում ա. — Պա, ես զորք ըմ զարկալ ծեր առաջը, վեր էա տղեն բիդի սպանին, քեղ պիրին, հի՞նչ ա աեռալ։

Թա, ասում ա. — Հայրիկ, էտքանը դյուգում լըմ. թող ար պցրացալ ճանապարհին, հեռվում, ասից՝ սպասի քյնիմ, տեսնամ էտ հի՞նչ ա. — Թյե- ցալ ա, եկալ, թա՝ վըեխճար ար, սար ին սանում։

Թադավերը մաննը կծում ա, թա. — Պահո, սա իմ զորքը լոխ կառըալ ա»։

Մարդ ա դարկում, տեսնում՝ սաղ կուտորած, արունը ծով տեռած։ «Ա, սրան հի՞նչ անինքյ, հի՞նչ լանինքյ»։ Վերջապես ախսնում ա, վեր աս էտքան ուժեղ ա, տրանից պրծումնը չկա. տրան խափում ըն, տանում, աեղ մին աեղ կա, շորս անդյունը հասար քաշած, դրողան յրա ըրած, մա- լը՝ դվերնե քցած. վադր ա, առյուծ, ա, կյուլեր ա,

վեր մտրդին՝ հինչ նակաղաննի ըն անում, բցում ըն րտեղ, առյուծր-պենը տրան ցրե ա տամ: Մհենդյ, ասում ա, վեր արանա պրծու չկա, ասում ա.— Կրիխիք ման կյար: Յոր կօնիս կատանիս, ասուզին դրդան կպենաս, վեր ինքը մտնե, դրդան կապե, բլե, մնալու ա մաշին, դվերները տրան ցրե կտան, կյաս բյըդ հետեւ հարսանիքը կանիմ:

Էտ ախճիդյր ափ էլ անում ա. նհետր ման կյալափ բյնամ ա, թա, ասում ա. իմ հոր բաղն ա, պեն ա, բյնինք, ման կյանք: Կյամ ըն, պեց անում, դրդան էրկաթի դրդա ա... վեր պեց անում, էտ աղան առաջ մտնում ա, ինքը կապում ա, բըլլում տ դրդան, անց ա կենում, կյամ: Տղան մնամ ա մեջր:

Մհենդյ խոսինը կտ ըխճկանան: Կյամ ա տոն, հտրը պիխում ա, վերջապես, հու վեր ինում ա ինի, բյեցած, եա եկած աղջիկ ա: Տրան տամ ա մին հտուարակ աղու, հարստնիք ա անում: Վեր հարստնիք անում ա, էս հարսանիքի ժամանակը մին մուկոն ա այուս կյամ ծական: էս փսակվող տըդան հունց ա ինում, փըդաղավն ա, թա հունց անում, թիսում ա, էտ մուկունը սպանում: Էտ մուկունը վեր սպանում ա, ասում ա.

— Այ ժողովուրդ, տեսե՞յ, մուկունը հունց սպանեց, ինդրում ըմ կենացս մին էլ իմիքը:

Էս պենը իրեք անդամ կըկնում ա. «Այ ժողովուրդ,— ասում ա,— տեսե՞յ մուկունը հունց ըսպանեցի: Խնգրում ըմ, կենացս մին էլ իմիքը»:

Դե, առաջ աղաթ տ լալ, լի, մարդու օյշող ախճիդյր էն ա ինում փրդին բժակումը: Ընգեղ ախճիդյը օգում ա, թա ուրան օտե: Վերջը ախճիդյն օգում ա՝ ուրան մըեսն օսե: «Էն մուկն ա ըսպանալ, ժողավրդի մեց իրեք անդամ կրկնալ ա, իսկ էն տղան բյեցալ ա դորբը կուտուրալ, էն, էն սուվթա նշանածս, լի... դորբը կուտուրալ ա, եկալ: ասում ըմ՝ հինչ ար, ասում ա՝ վեշինչ, վըեխճար ար. պա ես հունց բյնիմ սըա նմաննեն տեղաշորս մտնիմ»:

Մհենդյ ուրուզունը, հըթննքան ետը, վեր բեղում ա միասին բյին չէ, էա տղան շորեր-պենը հտնում ա, մտնում աեղը, վեր ախճիդյն էլ հանվի, մանի տեղը լհա ինդի ակլոր, հալաված, պենած, սկի, շորերը կյենում չի, վեր մարդը նկատե լուչ, լհա ինդի այուս ա պրծնում, բյնում, հորը գրդան պեց անում, պրծնում, ահում ա. «Ես քյնամ, թող նրա վըսկոներեն կշտեն ինձ դվերները ցրե տան, ես մուկունը սպանողին կոշտը բյնի չըմ, ես հունը ըմ տեսալ, հունը նհետ րիգի ապրիմ»:

Քյնամ ա, պեց անում դրդան, մտնում ա: էտ թող մտնի, մհենդյ խոսինք տղիցը:

Տղան վեր մտնում ա բաղը, աեսնում՝ ըաեղ մըսկոնե-պեներ, մարգի-պենի թափած ա, տա ասում ա. «Հստեղ մին պեն կաօ: Դե, էն ա սուրը ծերքին, լի, սայաղ ա կենուա: Տա շատ վօր ման ա կյամ, տեսնում՝ մին առյուծ. Էտ առյուծը վեր հարձակվում ա՝ շաշկան բաշում ա, թխում, ըսպանում: Վերջապես վաղըն ա ինում, արջ ա ինում, կյուլ ա ինում, լոխճին մեկ-մեկ կտորում ա, էտ բաղեն դվերներան մեկն էլ չի մնում: Էտ ախճիդյը էն ժամանակն ա մտնում բաղը, վեր աղան լոխ կտորալ, վերջացըրալ ա, մին քար ա տինում կըլիտակեն, պրանվում մին ծառու տակե՝ քոն ինում: Ախճիդյը դլուղում ար, թա՝ տղեն վըսկոնեն կտևսնի, կյամ ա, տեսնում՝ դվրնեն կտորած, մին քար կլխեն տակեն տիրած, քնած: Տա աես-տեն պեն ա անում, վեր մին փափուկ պեն տինի տղեն կըլիտակեն, պեն չի քթենում, ինքըն էլ տկլոր ա, կյեցը՝ մին հալավ, մին փոխան, ճարը կտրում ա՝ փոխանը հանում ա, տանում, կլոխը կամաց-կամաց պցցցնում, տինում կըլիտակեն: Էտ տղան զարթնանում ա, տեսնում՝ նշանտծը կողքեն վետը՝ տկլոր. եղում, աեսնում՝ փոխանը հանած, արիքած կըլիտակեն:

Ուրեմն՝ հորը ասածը կաղարվեց: Տըանից հետո նրանք ապրում ըն մարդ ու կնեգի, թագավեր ու թագուհի:

Թող ամեն տղա ուրան հորը ասածը ստիկագարե, հասնի մուշաղեն:

23. ԸլոՊՐԱԿԱՆԵՆԲ

Եղկու ախպեր ըն ինում. մինը փսակված ա ինում, խուխատար, մինն էլ՝ աղապ աղա ա ինում լի: Տահանք դովլաթ օնին, շենան տյուս՝ դրալ տեղ պըհեյիս: Էտ մեծ ախպերտ՝ խուխատարը, ասում ա.— Քյնա մեր դուվլաթավն ընցեր, — աղափ աղեն ա ասում, — դուվլաթավն ընցեր, համ էլ դրալան ծախե, փողը պեր:

Էս աղափ տղան բյնում ա դուվլաթավն ընցնում, համ էլ՝ դրալան ծախում, փողը յոր օնում, կյամ: Հտեղ, էյղան բյնում ա դրալան ծախում, փողը պիրում տամ մեծ ախպորը:

Մին օր ըտա կնեգիր ասում ա.— Գյուղում ըս, քու ախպեր վեր դուվլաթան ծախում ա, հինչքան վեր պիրում ա մեղ աամ, էրկու էնքան էլ ինքըն ա յոր օնում: Քու ախպեր բյե տի յա անում, եկ քու ախպոր անտ այուս եկ:

Ասում ա.— Այ ախճիդյ, իտի պեն չի ինի, իմ ախպեր տի պենը անել չի:

Թա.— Հա, անում ա, քու ախպոր անտ եկ այուս եկ:

Կյամ ըն՝ ուրուղյունը հացը օտում-պեն անում,
վերջացնում, մեծ ախպերն ասում ա.— Ա, ախ-
պեր, եկ ուրուղ անա բաժանվինք:

Էտ փոքր ախպերն էլ ասում ա.— Ա ախպեր,
պա ես քյեղ հետե բյումադ ըմ, խումատար ըս,
բյումադ ըմ ինում քյեղ, խե՞ բաժանվում ըս:

Թա. — Զէ, բաժանվել բիդինք ուրուր անից:

Տահանց մին հար չէ ա ինում՝ մին քոռ հլեվուր:
Էտ վեր տի ա ասում, էս աղափ տղան ասում ա.—
Ես ճոթ անիմ, պտժին անիմ, տու վերին հավտն
ըս՝ եր կալ, այ ախպեր:

Թա, ասում ա.— Հա,

Պիրում ա, էս քոռ հլեվուրը տինում մի կողմը,
ուրանց դովլաթն էլ քցում մի կողմը, մեծ ախ-
պորն ասում.— Վերին հավան ըս, եր կալ:

Կնեղյն ասում ա.— Դովլաթը եր կալ, դովլա-
թը եր կալ:

Ասում ա.— Դե, դովլաթն ըմ յոր ուննական,—
մեծ ախպերն ա ասում:

Պիծինն ասում ա.— Դե, առ ինձ էրկուհարուր
մանեթ փող տոր, ես էս հլեվուրը յոր ըմ օնում,
քյնիմ:

Պիրում ա փողը տամ ուրան, յոր օնում՝ էս
հլեվուրեն փեշկան փոնում, տյուս կյամ, քյնում:
Շաա քյնում, խրեղ քյնում, քյնամ տյուս կյամ
մին քաղաք: Տյուս ա կյամ մին քաղաք, աեսնում՝
քյուզումը էն ա մին մաղաղին կա, էտ մաղաղինին
խաղայինը էն ա առեաուր ա անում: Ասում ա.
ոէս խաղայինան հարցնիմ, տեսնամ կսնդունե՞,
լհա ստեղ ծառայիմ, էս հլեվուրը պահիմա: Կյամ ա,
ասում.— Խաղային:

Ասում ա.— Հեյ:

Ասում ա.— Դե, էս քոռ հլեվուր ա, լի, ես սաեղ
ծառայիմ, էս հլեվուրը պահինք, լի:

Ասում ա.— Դե, կարելի ա:

Ասում ա.— Հնե, էս կուճուր օթաղը, էս հլեվու-
րը տար, տիր ընդեղ:

Տանում ա հլեվուրը տնում ընդեղ, ինքը կյամ
ծառայում տա կշտեն: Մին օր, երկու օր ծառա-
յում ա, հետո ասում ա, «Բալքի ավակակ մարդ
ա, ծովիկ ա, — ես խաղայինն ա ասում, — մին
փորձինք, աահանք», Մին թողթ փող մին շողում
պտառում ա, մին տեղ վեր քցում, ինքը քյնում,
մին ծակով եղում, էնպես վեր քցած ա ինում,
հանցու վեր աեսնա, թա. ոէս աղան վեր կյա, յոր
օնե, ինձ ասե՝ խաղային, էս փողը քյթալ ըմ, իս-
կապես՝ աա ինձ կծառայե, թա վեր չէ, էն ա յոր
կօնիմ փողը, ուրան րրախ տամա:

Ընդեղան կյամ ա էտ աղան, յոր օնում փողը,
ինքն էլ էն ա ինում զրաղան յըշիլիս, մին դալուա
տեղա, կյամ ա մուտանում, ասում.— Խաղային,

էս փողը բյղանա ա վեր ընդալ, է՛, սկի տեսալ էլ
շըմ հինչքան ա, էս ա իլալ ստեղ վեր ընդած:

Ցող ա օնում, դալուն թակում, ասում.— Տուվ
ըս, վեր կաս:

Սկսում ա ըսաեղ ծառայելր:

Էս խաղայինին մին ախճիգյ ա ինում, էլ պեն
չի ինում: Ասում ա. «Ախճիգյս կտամ սա, լի, կը-
մնա մեր տան իլածեն-շիլածեն յրա, լի: Մաղա-
ղեն-ղատ լոխ ուրան կմնա, վեր մունք մեռնիքյա:

Փսակում րն, Փսակում ըն, շատ կենում, խրեղյ
կենում, աահանք ճոխան էլ մեռնում ըն՝ էտ խա-
ղայինն էլ, ուրան կնեղյն էլ, Հինչ վեր կա, լոխ
մնամ ա տտհանց ծերբեն:

Տահանց թողինքյ ըսեղ, քյնինքյ տրա ախպոր
կոշտր: Հինչքան դովլաթ ա ինում ախպորը, էտ
դովլաթը լոխ փլանում ա, Զէ՞ վեր էտ դովլաթը
էն հլեվերեն կլիսումն ա իլալ, է՛, հլեվուրը քյե-
ցալ ա, դովլաթը փլացալ ա:

Մեծ ախպոր կնեղյն ասում ա.— Պա, յանի
օրիշ թահը չկա՞՝, Քյնա մի կա էվիլ քանդի, կպո-
աե, աաը քաղաքում ծախե, լի, մին քանե կապեկ
կտեռնա, ընգեղանս, պեր խոխեքյր կառավարինքյ,
լի, մին սուրու խոխեքյ ըն:

Դե հինչ անե, րեդում ա անե, լի: Էմիլը շր-
լակին քաղաքեն քյուչեքովը քյնում ա. «Հայ՝ լյավ
էվուլ, հայ՝ լյավ էվուլ, հայ՝ լյավ էվուլր: Դե,
ախպերը խաղային՝ կրախմալը քսած, պալտոնը
կյեցը, մաղաղինումը ծառայեյիս. մաղաղինա-
տար: Հլեվուրն էլ էն ա ընդեղ՝ տանը մաշին,
Ասում ա. «ԱՌ՝ լյավ էվուլր: Ասում ա. «Պեր ստեղ,
պեր:

Պիրում ա տա: Օշը ինդի տեն ըրած, սկի եշում
չի ախպորը, կարում չի ճիննանչի:

Ասում ա.— Քանե՞ յա:

Թա, ասում ա.— Հատը մին կապեկ:

Պիրում ա աա հատը հենդյ մնեթավ ինքյ
օնում: Յոր օնում փողը, քյնում ա մեծ ախպե-
րը: Յոր օնում, քյնում կնդանն ասում.— Ա կնեղյ,
ասալ ըմ՝ մին կապեկ, հենդյ մնեթավ ա ինքյ կա-
լալ, հալա ասալ ա՝ էլ կափիրիս:

Դե ուրան ախպերը ճինանչալ ա, լի, ասալ ա.
«Տանե խոխեքյը պահեա:

Քյնում ա՝ էլ քանդում, մին քանե օրան ետը
էլ հա. այ՝ լյավ էվուլ, այ՝ լյավ էվուլ: Ախպերն
ասում ա. պեր ստեղ, պեր, Պիրում ա, թա, ընդեղ
վեր ածե:

— Պեր տանելու ըմ էքյուծ ճանապարհ տի-
նիմ, վեր լյավ էվուլ, ըս պերալ ինձ հետե, մալու-
ղեց, քշերս էլ իմ զանազն ըս:

Վերջը հինչու վերե ա. ուրուղյունը վեր մըթ-
նում ա.— էն ա մին հար օնիմ,— ասում ա, — նի

մրտ ընդեղի, Քոռ ա իմ հար, նի մըտ դրուց ըրա, ասէ. «Ա Հեղվոր հի՞նչ ըս, հու՞նց ըս, լի՞ս. քեփո, հալր հոցրու»

Նի յա մնում բնդեղ, մթեն տեղ ա ինում, կարում չի ճննանչի, ասում ա.—Հու՞նց ըս, հի՞նչ ըս, հշակեղաց յրաւ

Են խազային աեռած տղան էլ մին տեղ կյողը ա կենում, անդում օնում, եշում.

Ասում ա.—Ա բալա, տու հո՞վ ըս, հշտղա՞ց յրաւ, վեր տի սերուն-սերուն հոցըփորձ ըս անում:

Ասում ա.—Է՛ ապեր, քեզ նման մին բռու հյավուրս ա իլալ, մեկ էլ մին լյավ ախապերս ա իլալ, աղափ, բնդեղան, մին էլ շտու դովլաթ ա իլալ Ախողորս ասալ ըմ՝ բյինի համ գուվլաթավն րնցեր, համ դրաղան ծախս, պեր օտինքը: Ախապերս բյեցալ ա, պերալ, կնեցյս թա. «Էն հինչքան վեր պիրում ա, էրկու էնքտն էլ ինքյն ա ուրան հետեւ յոր օնումու: Տրա համար էլ ախապորս պրժնվեցի, ստի բյաըրացեւ,

— Անունդ հի՞նչ ա:

— Անունս... Վահան ա:

— Հու՞ր տղա ըս:

— Փլանքյասին տղան ըմ:

— Վի՞ր շինա:

— Փլան շենա:

— Պա, ես բյը մատաղ, տու իմ տղաս ըս:

Հարն ա տսում, լի, մեծ տղեն ա ասում, լի, արգեն ճնանշում ա, լի: Կոլուրն ա ըղնում, պլազբ-շորում, էն աղտփ տիպեր, կյողը կացած աղան, տյուս ա կյամ.—Այ ախապեր, մին պեր ճակատտ տղաշիմ. աես՝ բու ախապեր ըմ, է՛: Ասում ա.—Ես բու ախապեր ըմ, ծախսալ ըմ պերալ, լոխ բյեղ տը-պտլ, մին կապեկ էլ ա պահալ ըմ, կնեցյտ տե-հէ՛ր հինչ բյալազյ եկու մեղ:—Հըտեւ տի յա:

Էյսը տանում, լյտվ գեյիմ կտրում տրա համար, կասայում, պալառն-պեն կեց տամ, ընդեղանս, մին քանի հարուր մանեթ էլ փող տամ, թա. տար խոխեթ ողահե:

Տանավ էլ վըրջանում ա:

24. ՀԱՐՈՒՍՏԵՆ ԱԽՃԻԳՅՅԸ ՔՅՍԻՐԵՆ ՀԱՐԹՆԸ

Մին բյասիր մարդու օխտը տղա ա ինում: Տահանք շատ ըն բյասիր ինում: Դե, լհա, վեր բյասիր ըն, փսակվել չի բիդին: Մեծ տղեն օզում ըն փսակին, էս էլ...բյասիր, վեր բյասիր. ոեխը ղեռ, փոխկը՝ ճոթուած: Էս էլ մաննը տանում, տինում ա մին հարուստու ըինձկան յրա: Հարուստ լրն, լի, լհա րարաթ լյավ ըն ասլում: Թյնում ըն ըինձկանն ասում, ախճիդյն ասում ա.—Տուր շատ բյասիր ըք, բայց, վեր ձեր անտեսության բոլոր իրավունքներն ինձ տաք, կկյամ ծեր տղեն:

Կյամ ըն տղեն հորն ու մորը ասում: Դա. ճար-ները հի՞նչ ա, հաղեր՝ ախճիդյ ա ճարվալ, համա-ձայնվում ըն, փսակում: Դե, էն ըինին ադաթ շար, վեր հրսաներյ շանին, բայց անում ըն, տղեն փսակում ըն, ըինձկանը պիրում տոն, տնաեսու-իյան շիլավը տինում ծերքեն: Դե, տղա ըս, տի-մացի: Ուոթանա բշերավ եր ա կենում, թա. — Ա պարոն, տու բյնական ըս հանդ: Ա տաքյեր, առու բյնական ըս կալ: Ա մին տաքյեր, տու բըյն-նական ըս... վլան, փստան,— վերջը, լոխահին հղե ա նշանց տամ, վերջն էլ ասում,— էս տոնը տեր-տակ կյար վուշ, ուրուգյունը տոն կյայիս ամեկյը մին պեն պերերյ, թա, լէ, հաց ըըմ տլական, հա՛, հաց լըմ տլական, վեր օտեւ:

Պիրում ըն. ամեն օր մինը մին պեն եը կա-լած տոն ա կյամ: Սա էլ թոխտը, մատիտը եր կալած, կյիրոտում ա, թա հու հինչ ա պերալ:

Մին օր պիծի ախապերը կյամ ա, հսնում շենը, նոր մենն ա ըղնում, վեր պեն չի պերալ Մին օղում ա թա կյա տոն, մին էլ մտածում ա վեր ըխպըակենը պեն չի ալական օտեւ: Դե, տյուգնը բոն ինիլն էլ շատ փիս պեն ա: Ետ ա տեռնում, բյնում ատես շոռ կյամ, տնն շոռ պատա: պեն չի ճարում, մին ստակած ծի ա պտահում, բուզը պուք ա տամ, պիրում, բցում շան տոպազը: Ուրուցյունը վեր ըխպերակենը մին-մին հրցնում ա, կյիրո-տում թա՝ հու հինչ ա պերտլ, վեր հերթը հսնում ա պիծի ախապորը, սա վըխվիխելավ ասից: թա՝ պեն չի պերալ, մին ստակած ծիու բուդ ա պերալ, էն ա շանը բուշին:

Թա.— էտ էլ ա լյավ, շոնը երկու օր կօտեւ:

Ուոթանա բշերավ, հալա մթնըժորած, հտրթնը վեր եր ա կենում, եշում ա, տեսնում՝ յիրգյին-քավը մին ղուղղուն ա թուղում, վրններեն ղաթու-մը մին պեն վլստրատե ա տամ: Էտ ղուղղունը կյամ ա, վեր շանը ըռաշին ջամդաքը տեսնում չի՝, վեր ա կյամ, էտ վլստրատե տվող պենը բցում շանը առալը, ջամդաքը յոր օնում, պցրանում, թողում, բյնում: Հարթնը մուտանում ա, տեսնում՝ շան առալ քցած զուզուննեն պերած պենը վըեսկե ա, ինքն էլ՝ թաքավերեն կլիւեն թյափան: Վել մի-նին ասում չի:

Էն մին ուոթանան վեր եր ա կենում, հրաման ա տամ, թա՝ սկսեցերյ տոն շինիլը: Պատըռնը, սկսուրը, մարդը, տըրյընեն մնտմ ըն մունմունու իրես յիշիյիս: Հարթնը, թա.— Մեր դործը չի, տուք սկսեր:

Մինին ղարկում ա քար պիրիլու, մինին՝ փադ, մինին՝ ճյուք, վերջը, տոնը շինում ըն: Պայց վէշ մինն էլ սետ չի թա՝ հինչվավ ըն շինում: Ամեն ուրուցյուն սկսուրը հարթնան թաքուն լյաց ա

ինում, ծույներեն թիում, թա.—Մեր աները էն վախտ քանդկից, վեր բյեցենք էս ըլիճկանը պերենք, մեր իրավունքները տվեցենք ծերքը:

Պատրոնն էլ թա.—Դե վեր ավալ ընք, բեղում տ հնթարկվինք, լի:

Հարթնը, ախեր, լոխ սկանում ա, ծեն չի հանում:

Տոնը վեր շինում ըն, պրծնում, տահանց կընդակ մին ճակատը զաշղա րող եզն ա ինում, ասում ա.—Եղնը մորթեցեք՝ Աղրաշը մորթեցեք, հով վեր էս տանը բյոմազ ա ըրալ, լոխճին դոնաղ ըրեքյ:

Էլ լհա լյտցը-շիվանը ըղնում ա առնը: Վերջը հարթնը հրամայում ա.—Մեր գործը չի, վեր ասում ըմ՝ մորթեցեքյ, մորթեցեքյ ուրեմն:

Մորթում ըն, լոխճին՝ հով վեր ատանը շինիլին բյոմազ ա ըրալ, ծեն ամմ, կամ ըն, լավ քեփ անում: Էս վախտը հարթնը լոխճին ներկայությամբ ասում ա.—Ա ժողովորդ, ես սահպալ ըմ՝ մին տոն շինին, շինալ ըն: Մհենգյ էլ ասում ըմ՝ ամեն ախպեր ուրան մհար մին-մին տոն շինին:

Քյափու հարթն ա, վեր ստիպալ ա, բեղում ա անին: Անում ըն: Տնամալ ինք օնում, տոնը սարքեն կարքը քցում: Եանան էլ, լհա, լոխճին ծեն ա տամ՝ քեփ ըն անում, էլ լհա հարթնը եր ա կենում ժողովուրթեն մաշին ասում.—Ա ժողովորդ, հին վեր ինձ ա վերաբերում՝ արալ ըմ, օրաս ետը էս տան իրավունքները ետ ամմ ըմ իմ սկեսուր:

Սկեսուրը լյաց ա ինում:

Թա.—Խե՞ յըս լյաց ինում:

Թա.—Հունց ամիմ, վեր լյաց շինիմ, ինձանարաժանվում ըս:

Թա.—Բաժանվում ըմ, առոք երկուսավ մըեծ ըք, մըզ յըա մըեծություն ըրեք: Մունք էլ ծեղ կենթարկվինքյ, հունց վեր կարգն ա:

Տի էլ անում ըն, լավ համերաշխ ապրում՝ ամեն մինը ուրանց տանը: Մինչկ մհենգյ էլ, լհա տի ապրում ըն: Թող տահանց օրհնություն ինի, օրհնություն էլ ինի մեղ յըա, մին էլ՝ հու վեր էս պատմությունը կրթլական ա, կամ ըսկննական ա, նահանց յըա:

25. ԹՂԿԱԼԵՆ ՏՂԱՆ ԹԱԳԱՎԵՐ

Մին քոռ մին կրմշի յըա նստած կապեկ հվեկիս ա ինում: Շահը ամեն կյալավ, քոռը եր ա կենում, կլոխ տամ: Մին օր շահը վաղիրի հետ կյամ տեղ, եր ա կենում էլ լհա կլոխ ամմ: Շահն ասում ա.—Քոռ, ես հունվ ըմ, վեր ինձ կլոխ ըս ամմ:

Թա, ասում ա.—Շահը սաղ ինի, շահն ըս:

Թա.—Պա առու քոռ մարդ ըս, հի՞նչ ըս գյուղում՝ ես շահն ըմ:

Թա, ասում ա.—Միիտ վետանը սասին յըա աննանչում ըմ, վեր շահն ըս:

Վազիրին շահն ասում ա.—Տիր թամբյիտ, տանինքյ, ամսեկան հենգյ կոպեկ փող կորոշինք ոոճիգյը, հացան էլ կօտե, ընգեղ կապրե, լի:

Յոր ըն օնում, տանում: Մին օր շահին լյավ ծի ըն րախշում, Ասում ա.—Մին քյեցեք քոռը պերեք, տեսնանք ծիուն հավան ա:

Պուրում ըն, Քոռ մարդ, էրկու աշկան կույր: Կյամ ա, էրկու ծերքավ սկսում տիտափել, ահստեն շոռ կյամ, թա.—Շահն ապրած կենա, շահա լյավ ծի ա, բայց ափսոս, վեր ճուխտակու հընդեր ա:

Թա.—Պտ, հի՞նչ ըս գյուղում:

Թա ասմ ա.—Կուխկճաղեն մինը պակաս ա:

Շահը թա.—Վեր տա տի գյուղող ա, արա ոոճիգյ հենգյ կապեկ էլ իվլցրեք:

Իվլցնում ըն, տեռնում ա տաս կապեկ:

Մին օր, մին գյուղացե մին վըեսկե մուաանա պերավ, թա.—Շահ, ինդրում ըմ,—ասմ ա,—էս մուտանան վըեսկու նհեա փոխիս, տանիմ իարջիմ լի:

Թա, ասում ա.—Տարեք, կշոցեք, վըեսկու նհետ փոխսեցեք, ավեր ուրան, թող յոր օնե, բյնա:

Տանում ըն կշոքեն մին թայումը տինում էտ մուտանան, շահեն խաղնան պիրում, լոխ լցնում կշոքեն էն մի թայը, մուաանան տեղան աուրուր չի կյամ:

— Ա, մին քյեցեք, քոռը պերեք, ահսնանք՝ էս հինչ ա, հինչ պեն ա:

Քյնամ ըն, քոռը պիրում: Քոռը կյամ ա, ծրբերավ մուաանան ափտիում թինում, մի կա ծրբերումը հղղորում, էլ լհա ախնում կշոքեն յըա, էն մի թայը լոխ վըեսկեն լցնում, կարում չի մուտնեն եինսե: Կոանում ա, աափան մին հափուո վըեղ յոր օնում, քցում մուաանեն աշկեն, մուտանան լոք ա տամ, եր ինում պեցիր դուլ, վըեսկեն թինում ա տափեն:

— Քոռ, էտ հի՞նչ ամալ ա, էտ հի՞նչ ա:

Թա ասում ա.—Մրա աշկը ինսանու աշկ ա, աշխարքից կշտացալ չի, մին հափուո վըեղավ աշաանում:

Շահն ասում ա.—Տրա ոոճիկը հենգյ կոպեկ էլ իվլցրեք: Տսնըհենգյ կոպեկ աեռավ:

Ասում ա.—Քոռ, տու վեր էաքան շատ գյուղում ըս, ե՞ս հունց մարդ ըմ:

Ասում ա.—Շահն ապրած կենա, շատ լյավ մարդ ըս, բայց ափսոս, վեր րդկալու աղս ըս*:

* — Բաղկալ գյուղում ըս հի՞նչ ա—ընդմիջարկեց ասացողը: —Ալո, այգիպան (Ծ. թ.)

— Շատ լավ մարդ ըս, բայց ափսոս վեր այդեպանու տղա ըս!

Թա.—Խե՞, իմ մար էտ ճանապարհետ ա՞ լալ թա.—էտ ա տուլ ըս ասում, լի:

Թա.—էս ա դարաղաշին վեր ըմ տլական, իմ մոր էլ կանչիմ պիրիմ. թա՝ վեր քու ասածու իլտվ, էն ա պրծեր, թա՝ վեր իլավ վուշ, քեղ կախ ըմ տլական^{*},

Հա: Տի էլ անում ա: Պիրում ա մորը, թա.—Այանե, գյուգում ըս հի՞նչ կա:

Թա.—Հը:

Թա.—Տեսնում ըս, դարաղաշին վեր ըմ ավալ, րեղում ա քոռեն կախ աայի, բայց քեղ ըմ կախ տլական, Մին պեն ըմ հրցնական, թա սոս ըսեցիր՝ կախ ըմ ալական, թա չէ՝ չէ:

Թա, ասում ա.—Ասե:

Թա, ասում ա.—Ասե աեհամ՝ ես հուրա՞ն ըմ տմալ եկալ:

Թա.—Քը մասաղ, տա թաքուն պեն լի: Քու հորա անա րախա շար ինում, մեր էս գորգեն դրադեն էլ մին րաղկալ կաը, քա հոր ծեռուքը... նհեան ինգի... տու զույացեր:

Ասում ա.—Ա քոռ շան տղա, պա տու հի՞շ գյացեր, վեր ես րղկալու տղա ըմ:

Թա, դե, ասում ա.—Վեր ոոճիդյս կըպկ-կապեկ րվցըր, գյիդացե, վեր առու րղկալու աղա ըս, վեր իսկական քու հոր աղան ինիր, մին քադաք ինձ կրախշիիր, ասիր՝ քյնա, մաշին նստե, ապըե:

1 1 1 1

26. ԹԱԳԱՎԵՐԵՆ ԻՐԵՔ ԱՐԱՋԸ

Ուրեմն սահ ա լի: Ինում տ, չնում մին թագավերը էս թագավերը արաղ ա աեսնում, Ասում ա.—Հո վեր կյա, արաղս գուշակե, հի՞նչ վեր օդի, կըամ, նրան մեծ իւլաթ-րարաթ կաամ:

Մին քյասիր մարդ ա ինում, վեր ա կենում ասում ա. ռՔյնիմ, գոնե վեր արաղը գուշակիմ վուշ, մին պեն կաա կօտիմ, լի, սոված մարդ ըմ:

Եր ա կենում, ճանապարհ ըղնում քյնում, քյնում, քյնում: Քյնամ աեղը մտածում ա լի, ասում ա. ռԱյ րալամ, ինձանա արաղ գուշակող կինի՞, քյնալու ըմ հի՞նչ ասիմ: Քյնում ա, աեսնում՝ մին զըեռու հըղեցու դրաղե, մին զըեռու քու, էս քուն մաշին մին գըեռու օխծը: էա օխծն տում ա.—Ա, կլխեա քար ըղնե, առու արաղ գուշակող ը՞ս, էտ հիշտեղ ը՞ս քյնամ:

* Դարաղաշին գյուգում ըս հի՞նչ ա, չս վեր կախ ըն տամ, է, էն կախ աալու փաղին դարաղաշի ըն ասում, ընդմիջարկեց ասացողը (Ս. Բ.):

Ասում ա.—Պա՞հ, ես քեղ մաաաղ, օխծ ախ-պեր, ա, պա հի՞նչ ըս դյուգում, թա հիշտեղ ըլ քյնում. դե ասե:

— Հի՞նչ ասիս: Թագավերը վեր ասե... թա ասում ա.—Հի՞նչ վեր ասիմ, վեր թաքավերը իսա-լաթ-րարաթ տա, ինձ էլ ը՞ս ալական.

Թա ասում ա.—Հա, լոխ քեղ կտամ, թաքյի էս կրական պրծնիմ:

Ասում ա.—Դե, կրյնիս, ասիս. թագավերն ապ-րած կենա, քշերս րազում երգինքան տեսալ ըս՝ կյուկեր վեր տըռնայիս: Սայաղ կաց, ժողովուրդտ կյուլ ըն տեռալ, քյեգ ուտուղական ըն:

Քյնում ա:

Թագավերն ասում ա.—Հը, եկալ ը՞ս,

Թա.—Հա:

— Հի՞նչ ըմ տեսալ:

Թա, ասում ա.—Տեսալ ըս՝ յիրգինքան կյու-լեր վեր տոնայիս, սայաղ կաց, ժողովուրդտ կյուլ ըն տըռնական, քյեղ օտին:

Թագավերը մեծ իւլաթ-րարաթ ա տամ, յոր ա օնում, կյամ: Դե, իսոստացալ ա չէ, վեր օխծին աա: Կյամ ա, ասում ա. ռԱրա հո՞վ ա տամ, պրծե՞ր, հազեր կաանիմ ես օտիմ, յիս:

Եր ա կենում քյնում ուրանց առնը: Մին եր-կու ամես ընցնում ա, էս մեռած թագավերը մին էլ ա արաղ տեսնում, թա ասում ա.—Քյեցեք, իմ արագ գուշակողը պերեք, էն լյավ ա արաղ գու-շակում:

Եր ըն կենում քյնում, թա.—Եք:

— Զէ:

Էն արաղ գուշակելը գյուգում լի, մեկնարան լի, ախրը, վերչը վըխեկան նհետ քյննական ա:

Եր ա կենում, ախրը, վըխեկան նհեա քյնում:

Օխծին քշտավը քյնիյիս տեղը, ասում ա.— Օխծ ախպեր, կլխավա շոռ աամ, էս կրական ինձ այուս կալ:

Թա.—Էն գնումեն, ա սեիրես, հի՞նչ ըս պե-րալ ինձ հեաե, վեր նորը եկալ ըս, թա ասում ըս՝ էս գյոնումըս էլ սուվըցըրու:

Թա.—Լյավ, է, հի՞նչու տա՝ քեղ կաամ, մին թահը ըրա:

Թա, ասում ա.—Դե, հըսե, ասում ըմ:

Թա.—Ասե:

Թա, ասում ա.—Կրյնիս, ասիս. յիրգինքան ապկեսնե ըս աեսալ վեր արանայիս: Աղվեսը ավե-լի վըանգավոր ա, քան՝ կյուլը ժողովուրդտ աղ-վես ըն տեռալ, սայաղ կաց, հաա՛, թագավեր:

Թա.—Լյավ:

Էս, լհա, մին պեոնը վըեսկե ա աամ, յոր ա օնում, կյամ: Էա անպիաանը էլ լհա օխծին կըշ-աավը լի կյամ, ասում ա. ռԵս կաանիմ օաիմ, լիս:

Եր ա կենում, քյում, մին հենգյ, վեց ամես ա ընցնում, էս մեռածն էլ լյավ հրուսաանում ա պեն ա անում, մին էլ նորը մինան՝ թագավերը էլ լհա արաղը տեսնում ա, թա՝ քյեցեք, պերեք:

Կյամ ըն, դե, վախում ա կյա: Թակում ըն, քըցըքացի ընելավ տանում, Համին տեղն ասում ա: — Դե, տուք քյեցեք, ես կյամ ըմ, լի:

Էլ լհա յան տ տամ՝ օխծին կոշար, օխծն ասում ա: — Ա, սսիրես, եկե՞ր: Պա քեղ իրես օնիս՝ մին էլ ըս եկալ:

Թա. — Զանս քյեղ մաաաղ, օխծ ախտեր, կըլ-խտվտ շոռ տտմ, էս կրական ինձ տյուս կալ, հինչ վեր տա, պիրիլական ըմ քյե աամ: Էն քյոհնա տվածն էլ եմ քյե ալական, էս կրական ինձ տյուս կտլ:

Թա, ասում ա: — Դե լյավ ա, վեր աի ա, աի. քյիս, կասիս. «Թագավերն ապրած կենա, առւ տեստլ ըս ըրտգոմտ՝ յրդիլիքան վըխճնե վեր տոնայրս: Ռողովուրդ հըլալալ ըն, վըեխճար ըն տեռալ, փափաղա ծոռ տիք պոզիտ, քըդ հետե քա-դտքավարր ապրե, էլ վել մին պեն չկա»:

Քյուում ա, ասում. թագավերս էլ խալաթ-րա-րաթ չի մնամ, վեր աա ուզ էն վեր տուվալ ա, ե, սանա իվիլ վըսսկե-արծաթ ա աամ, լյտվ շուկե-ղեն ա րախչում, ծիենը պըռնոտում ա, պրծնում, կյամ՝ թու՛ուզ՝ օխծին առնը: — Պարի օր, օխծ ախ-տեր, եկալ ըմ, է՛, պերալ ըմ, է՛:

Օխծը ծիծաղում ա, ասում ա: — Գյուղում ը՞ս հինչ կա:

Ասում ա: — Հի՞նչ:

Թա. — Էն սովթա, թաղավերը վեր կյուկ ա տեսալ, տու էլ ըս իլալ կյուկ տեռտժ, տու էլ ըս իլալ մուռտաված, տրա հետե էլ տու էլ պերալ շըս իմ փայը: Վեր աղվես ա աեսալ, տու էլ ըս իլալ աղվես: Մհենդյ վեր վըեխճար ա տեսալ, լոխ հըլալալ ըն, արա հետե էլ տու էլ ըս հըլալալ նհետնեն. օխծը վըեսկեն հի՞նչ ա անում, եր կալ, տար քըդ հետե, հինչ օղում ըս ըրա:

Ցոր ա օնում, քյուում ուրան առնը:

27. ԸՌԽԵՎԵՐ ՄԱՐ ՆԱՆ ԿՈՂՔԸ ՀԱՍՏ ՏՂԱՆ

Մին ըրխեվեր կնեղյ ա ինում, սրան մին տղա ա ինում, հսած տղա, մին էլ մին ճոխտ եղնը, էլ՝ վել մին պեն:

Օրեն մին օր էս աղան կյամ ա, աեսնում՝ մա-րը պարկած մեռնում ա:

Ասում ա: — Այան քյե մաաաղ, այա, հի՞նչ ըս օղում, քյե տամ, սղանաս: Բալքյա դոխտուր ըս օղում, ծին տա՞մ կյա, հի՞նչ անիմ:

Թա, ասում ա: — Լհա, դոխտուր-պեն հաջաթ չի, ըրաղում ինձ ասալ ըն, վեր մեր դահնան եղ-նը մորթիմ, օտիմ, կսղանամ:

Թա, ասում ա: — Դահնան եղնը կմորթիմ, կո-տիս, կսղանաս: Տանա ետնը՝ թա կրեցե, մինչե աշունք եղնը ինքյ կօնիմ, թա՝ կրեցե վուլ, քյեգ լծլական ըմ, վար անիմ:

Ճար չկա, մարը պայմանավորվում ա: Հինչ կգյիգվա, թա տղան ուրան ըսածեն յրա էտքան հասաաա կինի:

Տարեն շոռ ա տամ, տյուս կյամ աշունքը՝ եղնը կա ուզ, մորթալ ա, տեղը ինքյ ունելու թահը վիլալ. խալիսը քյուում ըն վար, ինքյն էլ բիդի քյնի: Բեդում ա այան լժե, վար անե: Այան քտ-մակը քսում ա ափերին, տես-տեն, դե, ճար չկա, յոր ա օնում ալաթը, քյուում, մորը նհետը տա-նում, սերմը շաղ տամ, ըսկսում վարը:

— Այա, հո՛... այա, հո՛, — վար ա անում:

Էտ վարումը մինը սրա ծենը լսում ա, կյամ, տեսնում՝ իսկապես, էն ա մընը մորը լժած՝ այա, հո՛... այա, հո՛... վար ա տնում, վար ընեյիս:

Թա, ասում ա: — Ալ տղա, էտ հի՞նչ ըս անում:

Թա, ասում ա: — Մեղավերը ինքն ա: սոա աե-ղան հիվանդացալ ա, ես եղանը մինը մորթալ ըմ, կերալ ա...

Թա ասում ա: — Դե վեր տի ա, տու քու մորը պեց թող, ես էն ա փլտն ծմակում մին պեց ըն-դած կյումաշ օնիմ, փոնե, պեր լժե՝ թա կտրու ըս. պլացած ա:

Մարն ասում ա: — Գյուտ փոնե, պեր: Կացենը եր կալ, քյնա, փոնե պեր:

Դե մին ա՝ ասե վուզ, ասե, պեց ընդած կյումտ-շը պել կինի:

Մա կացենը յոր օնում, քյուում, ծմտկեն մաշին զալ սարքում՝ կյումու նման: Էտ զալեն մաշին վենն ա կենում, ստու անում, պլացած կյումաշը կյամ ա, թա հարե, ինքյը լոք ա տամ չոլը, տոռնը քլում, թողում կյումաշեն մաշին:

Մին իրեք-շորս օր տի պահում ա կյումտշեն՝ զլեն մաշին, պեն չի տամ, թա օտե: Իրեք-շորս օրան ետնը կյամ ա, տոռնը պեց անում, նի մննում՝ աեսնում՝ կյումաշը սվերած, նստած: Պիրում ա, դաշանդյ, կյուման կապում, պրծնում, մին խրեդյ ճյուր տամ... տերման չի աամ: Տանա ետնը՝ կյու-մաշը լավ իկելունքանում ա, պիրում ա լծում, սկսում վար անելը:

Էտ մարդը՝ կյումաշեն տարը, ասում ա: «Գյինիմ տեսնամ՝ կյումաշը էս մարդին սպանի՞ց, թա՞՝ լժե: Ախեր որպես վաս մարդու ա զարկալ, գյիդալավ, վեր սպըննական ա կյումաշը նրան:

Կյամ ա, աեսնում՝ կյումաշը էն ա լժած, իլուն-քըրած, վար ա անում, թա: — Դե վեր տու կրա-ցալ ըս էտ կյումաշը փոնիս, ես քեղ իմ փեսան ըմ փոնըլական:

Տա՝ էտ տղան, ատկալ ա կաղնում, թա.— Ես
կարալ շըմ քյեղ փեսա ինիմ, ես մին քյասիր տղա,
տու՝ մին հարուստ մարդ, կարել շըմ:

Վերջը, տես-տեն, հը՛, հը՛, հը՛... էս աղան համ
հմանչում ա, համ է՛ մտածում, վեր անպետք
ախճիգ կինի:

Էս մարդը շաա վեր զոռ ա անում, էս աղան
քյնում ա, Քյնում ա տեսնում՝ մին ախճից ա՝
իրեսը լվանում չի, մաղերը սանդրում չի, մին
թամբալը, ընդեղ վեր ընդած, յոր ա օնում, պի-
րում Պիրում ա՝ ուրան կնեղի: Հիմճկանը պիրում
ա տոն, մորն ասում.— Քեղ կսպանիմ, կախ կը-
տամ, վեր տրան հաց տաս՝ օտեն: Տաս վուշ, չքել
իմ ըսըծնեն մին-մին կադարե վուշ: Տա վեր ուռ-
թանա եր կենա, հայաթը սրբից, առնը սրբից,
տոները սրբից, մին կառը հաց կտաս, կօտի: Նատ
կանե, շատ կասա:

Ասում ա, ինքը քյնում դործի: Ուրուդյունը
կյամ ա տոն, աեսնում՝ կնեղիը սնդրվելու, տափեն
նստած:

Ասում ա.— Պա, իս՞ ինձ հաց շըք տամ,
օտիմ:

Թա, ասում ա.— Էս աարե թաղա օրենք ա
տյուս եկալ, հուվ վեր դործ չի անում՝ նրան հաց
շըն աամ օտեն: Սօրե հի՞նը ըս ըրալ, վեր հաց էլ
օղում ըս:

Թա.— Հի՞նչ անիմ:

Թա.— Առավոտը քշերով եր ըս կննական, իմ
մար կավը կթլական ա, տուվ էլ կավը աննական
ըս աաս աըվարածեն: Ընդեղան էլ՝ ճիխ հվրքելավ
կյաս, հանիս առն: Սկսիս հայաթը սիրփիլը, առնը
սիրփիլը... դործը վրջնալական ետնը՝ հաց կօդիս,
կտան՝ կօդիս:

Տի սկսում ա դործ անելը:

Հիմճկան հարն առում ա. «Քյնիմ, աեսնամ՝ ախ-
ճիդյս ստ՞ղ ա, թա՝ շան տղան թակալ, սպանալ
ա, Քյափուր մարդ ար. մորը լծալ ար, ըխճկանս
կոպանե, վեր կսպանե: Քյնիմ, աեսնամ»:

Կյամ ա, աեսնում. ախճիդյը հրեղան ա աեռալ,
հուրի-փերի: Մաղերը սանդրած ղաշանդյ, էն ա
պուրթը կիդիլիս:

Թա.— Այ ախճիդյ, էս հունց ա պաահալ:

Թա.— Մինը անում շըմ, ինձ հաց շըն աամ:

Էս մարդը հվատում չի, լի, վեր կարող ա տի
պեն ինի, ծիծաղում ա, Դի, հվատում չի, հվա-
տում չի, աշկավը տեսածն էլ չի հվալակա՞ն:

Փեսան վեր կյամ ա տոն, ասում ա.— Ա շան
տղա, էս ըխճկանը քսաներկու տարե թակալ ըմ՝
կրացալ շըմ մարդ շինիմ, վեր առւ աի մարդ ըս
շինալ, լյավ կնեղի ըս շինալ, աղամարդը առւ վոս,
եկ իմ հաբստությանը կեսը քյեղ աամ, եր կալ,
քյնա:

Հարստության կեսը տամ ա ուրան, էս մարդը
սկսում ա կարդեն ապրելը:
Տանավ վերջանում ա:

28. ԴԱՐՈՒՇԴԱՐԱՆԴԱՆ

Մին մարդ էշը պետած խուրմա ա տանում:
Բղարան առոտ տանում ա, Ճանապարհեն տրան
պատահում ա Դարուշդարանդան: Էս Դարուշդա-
րանդան մի շահի ախպեր ա ինում, իրանեն, թա
հիշտուղու: Ինքը շատ դալի-դուլի մարդ ա, բայց
շատ խելունք ա ինում: Թագավերն անդամ, հինչ
որոշումնե հանում ա, առանց նրա կարում չի:
Դարուշդարանդան կյամ ա պտահում էտ իշըվե-
րեն: Կյամ ա, բարեկում ա, սա էլ՝ նրա բարեվին
պատասխանում ա, մինտեղ ճամրան շարունա-
կում ըն: Մհենդյ էս Դարուշդարանդան էտ իշըվե-
րեն ասում ա.— Մին խուրմա տոր, մին խոսքը
սվրցնիմ:

Ասում ա.— Լյավ:

Մին խուրմա ա աամ:

Խուրման աամ ա, սա թա.— Մին մարդու վեր
պտահում ըս, է՛, անումը հրցրու:

Թա, պա.— Էտ էս դյուդում ի: Էտ մին պեն տ՝,
վեր ինձ սուվրցրեր:

Էլի քյնամ ըն: Էլի քյնամ ըն, մեկ էլ ասում
ա.— Դի, մին խուրմա էլ առոր, մին պեն էլ սուվր-
ցնիմ:

Տամ ա, թա.— Հի՞նը ա:

Ասում ա.— Մին պենը վեր քըզանա օզում
ըն, տու հանել մի, աա:

Մին խիլա վեր քնամ ըն, ասում ա.— Մին
խուրմա էլ առ, մին խոսք էլ սվրցնիմ:

Մին խուրմա էլ ա ինք օնում, թա ասում ա.—
Վեր քյնամ ըս մին տեղ դոնաղլըդ. Հարսանիք ինի,
րաժենի-պեն ինի, վեր քյնամ ըս, ընդեղ տու քու
տեղու ճինանշի, հետո նստե, աեղատ էլ աուրուր
շկյաս:

— է՛, տա պե՞ն ա, ես էտ դյուդում ըմ իլալ:
Թա.— Դի, դյուդում ըս իլալ՝ դյուդում ըս իլալ:

Մինում ա. Էտ Դարուշդարանդան ճոկվում ա,
քյնում, նա էլ՝ ուրան հըեաե: Պաատ քյնում ա,
առաջը ցեխ ա ինում, աեսնում չի, էշը ցեխումը
վեր ա ըզնում: Մեն ա տամ.— է՛յ, այ մարդ, հե՛յ,
հե՛յ, այ մարդ, հե՛յ:

Տա եշում չի:

— Այ մարդ, հե՛յ, քյեղ նհեա լը՞մ:

Եշում չի:

— Ա մարդ, էն վեր խուրմա ըմ ավալ, խոսք
ըս սվրցրալ, է՛... է՛, հե՛յ, եա աեռ եկ, էշը ցե-
խումը վեր ա ընդալ, քյումադյ ըրա, յոր օնինքյ:

Ետ ա աեռնում, կյամ, թա, դե. — Օղոաշ, — ասում ա, — պա ես խուրմա կերե, քյեղ խոսքը սվրցրե, էն վեր անումս հրցրտծ ինիր, տու էլ ծեն կտիր՝ ա փլանքյաս: Հե՛յ-հե՛յ ըս անում, ես հի՞նչ գիգամ, վեր մարդու հետա ըս ասում: Պա, — ասում ա, — տրա համար խուրմա ինք կալի, կերե, քյեղ էտ խուրմը սվրցրե, տու էլ: հալա, ըսեցեր՝ գլուգում ըմ, պա անումս հրցրե՞ր:

Մհենդյ, հինչու վերե ա, էշը ցեխան տյուս ըն օնում, պրծնում, Դարուշդարանդան ասում ա. — Արդեն մթին ա, իմ տեղս մոտե ա, լի, եք քյանք, ուրուգյունս մեր աանը զոնաղ կկենաս, էլ լհա էքյուց անց կաց, քսւ ճանապարհը շարունակե:

Թա, ասում ա. — Դե, շաս լլավ կինի:

Ծոր օնում, պիրում, ուրանց տունը, վերջապես, պեռնը վեր օնում, էշը տանում, կյումումը կապում, խոտա, արեսաարենա աամ, կյամ ըն նստում, թադավերը մարդ ա զարկում, վեր Դարուշդարանդան կյա, զոնաղը օնե: Դարուշդարանդան թադավերեն մարդուն եա ա աամ: Թա, ասում ա. — Պա, էն ա զոնաղ օնիմ, — ասում ա, — ինչպե՞ս զոնաղը թողիմ աանը, ես կյամ:

Քյամ ա, տի թտդավերեն ասում ա: Թադավերը թա. — Թոկաց զոնաղները յոր օնե, կյտ, վնաս չօնե:

Մհենդյ Դարուշդարանդան զոնաղը յոր օնում, քյանամ, քյամ ըն աեսնում՝ կամաց-կամաց հվաքվում ըն, լի, զոնաղները: Էտ իշաար մարդը քյում ա, լափ, երե ինդյուաին նստում: Երե ինդյուաին նստում ա, տրան կուփե տալավ, կուփե տալավ, պիրում ըն, առոե, մղակր Դե, Դարուշդարանդան էլ ախեր ուրան մըեսն օտում ա. աա խուրմտ ա կերա՛լ, արա համար էլ խոսք սվրցրա՛լ... Հինչու վերե ա: Արդեն, վեր սկսում ըն օտել-խմելը, դե մին տեղ մըննուներան ընդտծ ա ինում՝ տենակ աիրած լըն ինում: Նաղիր-վեղիրն ասում ա՝ աենտկ շկա՛: Էտ մարդին զրումը մին լլավ տենակ ա ինում, տյուս օնում, տամ ա նաղիր-վեղիրին: Էտ տենակը վեր տտմ ա նաղիր-վեղիրին, արա աշքերը ուրդան ճրաքյվում ըն, անդյին քարեր կան էտ տենտկեն յրա, հիշտղա՞ն ա ճանդյն ընդտլ, ախր, աա անդյին պեն ա, է՛, կյին չօնե: Էտ նաղիր-վեղիրին աշքը փոնում ա, թա. — Էտ աենակը իմն ա: Քեղ հիշտղա տի տենակ, իրեքն ա իլալ ինձ, իմ խաճան կյուղացալ ըն, ման ըմ կյամ, վեր էտ տենակը ճարիմ: Քու կլոխտ, — ասում ա, — յա կարել ըմ տալու տուավու շուա, յա՝ ուրեմն, տեղը որիդի ասիս, էն էրկու տենակն էլ րիդի պիրիս:

Վերշը. Էտ տենակը թա հիշտղա՞ն յա ճանդյն ընկալ, հունց, ինքին էլ շի զյուղում: Հունց ա աա ճանդյն ընկալ, գյուղում լի:

Մհենդյ զոնաղը վեր վրտնում ա, էտ նաղիր-վեղիրը մուտանում ա, վեր տրան րանդարկե, վեր էքյուժ րեդում ա՝ յա էն էրկու տենտկն էլ պիրի, յտ աեղն տսե, յա կամ թե շէ՛ կախ տ ալակոն ըտտ:

Էտ Դարուշդարանդան ասում ա. — Իմ զոնաղն ինձ տոր, ես տանիմ, ուրուգյունս պտհիմ, առավուտ էլի պիրիմ: Հինչ օղում ըս ըրտ:

Թա, ասում ա. — Ուրթումնը կեր, վեր տրան խոսքը լըս սվրցըննական, էն վախտը կարող ըմ քյետ տամ:

Ուրթումն օտում ուրեմն, վեր տրան պեն շի սվրցըննական էտ տինակեն մհար:

Վերջապես կյամ ըն տոն: Կյամ ըն տոն, առտչին ասում ա. — Վեր ես քյեղ պեն սուվրցրե, ըսեցե՛ քըղ նհետ քյուղեն անունը հրցրու, ըսեցեր՝ դյուգում ըմ. Հարայ-Հարայ տվեր նրո համար, վեր հրցրեցեր վուլ Լսեցե. մին տեղ վեր քյում ըս՝ տեղա ճինանչի, եանան նստե, քյեցեր սուփերեն երե կլիեն նստեցեր, կուփե տալավ պիրին, խրեգյ ար մնամ առնավը տյուս քյին: Լսեցե, քըղտնտ վեր մին պենը օղում լըն, ծերքդ ջուրտ մի քյիլ: Վե՛ր մինն ասիմ, քեղ հի՞նչ դործ օնիս, վեր տենակը ջուրտտ հնեցեր... — Մհենդյ, — ասում ա, — տրա վարն անց տ կացալ, էքյուժ քեղ նաղիր-վեղիրը կախ ա տալու՝ էտ տինակեն համար, մհենդյ պտտտո կյարա, աեստ-տենա եր կալ, աանինքյ, տանք էշին, կյանք:

Կյարի, տերման-պեն ըն յոր օնում, էտ Դարուշդարանդան էլ՝ մին մհակ ա յոր օնում, քյանմ ըն էշին կոշտը: Կյարին-պենը աամ ըն վեր էշն օտե, Դարուշդարանդան էշին թխում ա. — Այ էշ, քյեղ ըմ տսում, լլավ լսիր, հաա՛, էքյուժ նաղիր-վեղիրը քյեղ կախ ա տալու, ա էշ, վեր քըղտնտ հրցնե, այ էշ, թա՛ էտ տենտկը հիշաղա՞ն ա, տու կասիս՝ նաղիր-վեղիրը սաղ ինի, էտ աենակը, ասիմ. իմ հար թացիր ա իլալ, էշին տ ասում է՛, նրա հետե, վեր ուրթումն ա կերա՛լ՝ էտ մարդին պեն ըսվուցցնե, մին տեղա կյայիս, զաշաղները, կասիս՝ առաջը կտրալ ըն, կարողությունը-պենը տարալ, իմ հոր էլ սպանալ, էտ տինտկով շիոյարը խառնալ, տենտկը թողալ իմ հոր սրաեն մաշին: Ես, մհենդյ, էտ տենտկը ջուրտտ սմ տիրալ, ամեն տեղ տի նշանց ըմ աամ, վեր դյիդտմ, թա՛ իմ հոր հու վա սպանալ: Լյավ սկաց, ա էշ...

Հա, աի էշին թխելտվ, էշին խրըաելավ Դարուշդարանդան ասում ա լոխ, վրջնում, կյամ ըն տոն: Էքյուր եր ըն կենում, Դարուշդարանդան տտնում ա էտ մարդին սաղ-սալամաթ աամ նաղիր-վեղիրին՝ հումցը վեր խոստացալ ա:

Մհենդյ սուդ ա: Ասում ա. — Դե, մին պաամե,

տեսնամ՝ իւ տեսնակը հիշտղա՞՞ ա ընդալ քու ծերբը:

Ասում ա.— Իմ հար վաճառական մարդ ա լալ, առետուրից օղտերը պեռնած կյամ ա լալ, դաշաղներն,— ասում ա,— եկալ ըն առաջը կտրալ, իմ հոր սպանալ, էս տինակավը սերտը իւառնալ, էս աենակն էլ մոռացալ, թողալ ըն սրտումը, պեռները-պենը լոխ եր կալալ, բիեցալ, թյեցալ ըմ իմ հոր ման եկալ, աեսալ՝ սպանած, չտ աենակն էլ թողած սրտումը, բյեցած, Մհենգյ, — ասում ա,— էս տենակը զրումը ման ըմ աամ, հու վեր օղի, օղի վուչ, լհա, այուս ըմ օնում, աամ, վեր տինակեն տարը այուս կյա, տրսնամ՝ իմ հոր հուլ ա սպանալ,— ասում աւ Ես իմ հոր վրեժը աի պիտի առնիմ:

Էս նաղիր-վեղիրը կլոխը առորուր ա աամ, ասում ա. «Էտ քու խոսկերբը չի»:

Տանավ տի աղաղվում աւ Վերշը, կյամ ուրան խուրման էշին բցում, ճանապարհը շարունակում:

Տանավ էլ վերջանում աւ:

29. ԹԱԼԵՏԸ ԿՏԲՎԱՆ ՄԱՐԴԸ

Իլալ ա, շիլալ՝ մին մարդ: Էտ մարդը կնդանը յրա կղնրվում ա, տոն-աեդ, խոխա թողում, թքում իրըսներեն, եր կենում հրղե ինում. ասում ա. «Կլոխ ըմ յոր ուննական, քյնիմ, կորոհմա:

Տյուս կյախս աեդը, ուրանց տոանը մին յարա ա ինում՝ ճաղը կուրած, աինում ա հրթաթեն, հղե ինում, քյնում, քյնում, քյնում, ասում ա. «Օխծա, շռնա, կյուլա կշիհի, լհա, էս յըրավը կպաշապանվիմա: Լհա սաի մաքեն դոնն րնդած քյնիիս, մինը քմական ժեն ա տամ.— Արա, արա, քու հար լյուս աեռնա, էտ ծին վենն ըրա:

Էտ խեդին ծին էլ պեց ընդած, փախած քյինիս ա իլալ: Ասում ա.— Տու՛ոշ, տու՛ոշ, առւ՛ոշ, տու՛ոշ, թա ծին վենն անե, յրրեն ճաղը ծիին տղկն ա նիյ ինում, աշկը քուռանում: Էտ ծիատարը վենն ա կենում թա.— Ծիս աալ րիդիս, թա չէ, քեղ տննական ըմ շահեն կոշար:

— Այ մարդ,— ասում ա,— մին կապեկ փող չօնիմ, էս ըմ սոված, աանան կղնվալ ըմ, այուս եկալ, ես հիշտեղա՞ն աամ ծիտ:

— Վեր աի ա, տննական ըմ շահեն կոշտը:

Ցոր ա օնում, հըդեն րղնում, քյնում: Հըդեննի քյնիիս քյնում ըն, վեր շահեն կոշտը հսնին, էտ մարդը կյենդյաան անե, էտ վարումտ աեսնում ըն՝ մին հըդեցու մաշի, մին էշ ցեխեն մաշին պեռնած, վեր ընդած: Էտ իշատարն ասում ա. — Զանս ծըղ մատաղ, քյումազյ ըրե՞՝ էշս ցեխան տյուս օնիմ:

Էս րախտը կտրված մարդը, էս էշին հաքյվան վեր փոնում չի, ծիք տամ, հտբյին պուր ա կյամ, էտ իշատարն էլ վենն ա կենում, թա՝ էշին հախ- կը տալ րիդիս:

Էն մինը րոլ չի, էս էլ կլիսավը եկավ: Դե ախրը հիշտղա տա, Տանում ըն, էս իշատարն էլ ա քյնում: Տանում ըն շահեն հայաթը, տեսնում՝ էն ա, ընդեղ իցցուն-վացցուն մարդ կա նստած, մին շահի հարթն էլ էն ա մին տիտակու զրտղե նստած, էա րախտը կարած մարդն էլ քյնում ա տիտակեն էն մին դրադին նստում: Դե, ծնդրություն ա անում, էն հարթն էլ մի կա թիթե ա ինում, պիցրանում ա, թոմփ՝ վեր ընդնում էտ հարթնը, խոխան րթա- րաթ անում: Տըա մարդն էլ տեղ ա վեննը կենում, թա՝ խոխաս տո, տու իմ խոխաս սպանալ ըս:

«Ա րալամ, էս հունց անինքյ, — էա մարդն ասում ա, — քյննական ըմ նիհ մնիմ շահեն կոշ- տը՝ առանց օչրեդ, ասիմ՝ շահն ապրած կենա, կլոխս օյին ա եկալ, այիեր՝ աստված, առվեր՝ տու, յա ինձ սպանե, յա՝ աղադե»:

Լհա, քյնում ա, առանց հերթի տոռնը պից անում, նիհ մնում, աեհում՝ շահը մեծ, պառավ մարդ, մին արսնօխտը տիրեկան ախճիդյ աիրած գյուրդյումը ղ'րա! խազ ա անում: Ասում ա.— Ա շան տղտ, հի՞նչ աեսեր:

Ասում ա.— Շահն ապրած կենա, վել մին պեն էլ աեսալ ըրմ, իմ դարդս էտ չի, ինձ հարութ-դա- րուր դարդ օնիմ, ես աա հետե ըրմ եկալ:

Շահն ասում ա. «Ա, էս շան տղաս կարող ա լավ մարդ ինի, վեր տի արքավ ա խոսում»: — Ը դարդա հի՞նչ ա, — հտրցնում ա:

Թա, ասում ա՝ հասե, սաի, լի նազ անում վեր.— Ծին ստի քուռացավ, էշին հաքյին ըստի պուր տվե, էս կնեղյն էլ, վերշը, րստեղ բթարաթ ըրավ, վերօք՝ էս օյինը կլոխս եկավ: Յա ինձ սպանե, յա՝ պահե:

Թաղավերը ուրան մուկքաարեն՝ ծիրպահեն ասում ա.— Քյնի, մեր կյումը նի մըտ, մեր կյու- մումը մին ծի կա, պեր առ էն մարդին, էն վեր ծիան աշկը քուռացրալ ա, ե՛, էն ծիուն ավաղ առ էն մարդին, թող յոր օնե, քյնի:

Ասում ա.— Լիավ:

Քյնում ա:

Խաս լհա էն դյուղտցու ծին աշկեն մինն ա իլալ քոո, էս մին ծին, վեր թաղավերը ավաղը աամ ա, համ՝ էրկու աշկն ա քոո, համ էլ՝ քոսան ընդած ա, մաշկն էլ չուդով աւ Ախրը, էտ մարդը շահ ա լի, հրաման ա տվալ, հի՞նչ րեդում ա անե: Ցոր ա օնում՝ սուս ու փուս էտ ծին քըղաքան վեր այուս ա կյամ, մին խոր ծոր ա ինում, քցում ա էա ծորեն մաշը, թա՝ էս տանում ըմ հի՞նչ անիմ: Տերտակ քյնում:

Ասում էլ թաղավերն ասում տ' էն կնդա տերնը
ծեն առվեքի: Էն վեր խոխան բթարտթ տ իլալ:
Թա.—Հի՞նչ ըս օղում:

Ասում ա.—Սորի ընք րրալ, մաաաղ րմ մոր-
թալ, գե, փահլուվանս աակավ անց ըմ կցըալ հան-
ցու՝ ինձ մին խոխա ինի. Էս ա օխտը ամես ա
կնեգս պաաանապեր, մհենգ հաակ տի ախաա-
կեն նստալ ա, վեր քցալ, բթարտթ ըրալ: Խոխան ըմ
օղում:

Թագավերն ասում ա.—Գյուգում ըս հինչ կա:
Թա.—Հը:

Թա.—Կնեղյտ տո էտ մարդին, շքելը պահե,
վեր յդե տեռնա, օխտը ամեսը թմամե, կկյաս, տա-
նիս:

Լա էլ ա տյուս կյամ լյաց ինիլավ:

Խբարը կյամ ա, թա՝ իշատարը փախավ: Վազ
ըն տամ իշատերեն հետան.—Արա, եք, քու հեր-
թըա ա:

Ասում ա.—Արա, չէ, ե՛, չէ, ես քյնում ըմ մեր
շենը, վկաններ պիրեմ, վեր՝ մեր էցը ցղնալ ա՝
հաքյի չի իլալ, է՛, առանց հաքյի ա իլալ:

Ուրեմն մաածում ա. ռկեր էս անմեղ մարդ-
կանց կլոխը էս օյինը պերավ, պա իմ կլոխը հի՞նչ
օյին ա պիրլականա:

Իտի սուլյա էլ տ ինում, է՛:

30. ՇԱՀ Ա.ԲԱՍԵՆ ՀՐԱՄԱՆԸ

Շահ Արաս թաղավերը գերվիշու շորեր ա
կյենում, քյնում իրա աշխալհը, ման կյամ: Ռուդ-
յունը վեր մթնում ա, կյամ ա, աեսնում, վեր մին
տեղ մին մաարաթ կա: Մաածում ա, ինքյը ուրան
ասում. ռՔյնամ տեսնում, էս քշեր ինձ կընդունի՞ն,
դոնադ մնամա:

Տյուս դոլան էս տոնը շտո սիրուն առն ա ինում:
Ասում ա.—Տեսնուս էս աան մաշին էս տանր հար-
մար օղուշադ կի՞նի:

Կյամ ա աանը կոշտը, ստեղ մին կնեղյ սրան
դոնադ ա ընդունում:

Մհենց մաածում ա. ռՏեսնաս էս օղուշադեն
հարմար նշանած կա՞ էս տանը մաշին:

Տեսնում ա վեր աանը մին սիրուն տղամարդ
կա: Տեսնում ա վեր էս աան կնեղյն ու նշանածը
ուրուր շաա հարմար ըն. դոնադ ա մնում:

Հաց ըն օտում, պարանց ըղնում՝ քոն ինին: Ղու-
նաղին հետե տեղաշող են քցում շոկ օթադում,
ուրանք էլ մարդ ու կնեղյ շոկ օթադում ըն քոն
ինում, դունաղին ութաղեն քշտեն: Քշերվա մի
վախտ Շահ Արասը սկանում ա, վեր առոնը թա-
կում ըն: Քշերվա շորերավը, լհա ինդի, եք ա կե-
նում, առանը դաթավը եշում, տեսնում, վեր եկած-

ներեն էա կնեղյը ասում ա, վեր դոնադ օնե. տոնան
եա ա աամ:

Ամմա, էս կլվողնեն դոռ ըն անում, քյնում լըն
ստղան. կնեղյը ստիպված առոնը պեց ա անում:
Շահ Արասը տեսնում ա, վեր կնդա սիրեկանները
նի յըն մտնում առն, էս կնդա նշանածեն իւեխառում:
Նահանք հիշաղա՞ կոյիդան, թա Շահ Արասը գեր-
վիշի շորեր կցած, առանը դաթավը ուրանց եշում
ա, սկանում հինչ վեր ասալ ըն: Շահ Արասը կա-
րում չի խոսե, պարանց ա ըղնում, քոն ինում մինչև
ուութանա: Ուոութանա եր ա կենում, վեր քյնի:

Կնեղյն ասում ա.—Դերվիշ, ինչյըս քյնում,
հաց կոտինք, չայ կիմինք, կրյաս:

Դերվիշը ասում ա.—Զէ, քյնում ըմ, թայդի
յում: Պա նշանած հո՞ր ա:

Կնեղյն ասում ա.—Քեցալ ա կործե:

Շահ Արասը ծիավերու նման տյուս ա կյամ
ստղաս, ու մին րաշ՝ քյնում պալատը:

Ուրան վեգիրներեն ասում ա, ասում չի ե՛, հրա-
ման ա աամ,—թա ես քյնում ըմ, մին էլ շոռ կյամ
աշխարհս: Սըերը սրում քե, մինչև իմ կյալը հենգ
տրկանա պեցը հինչքան կնեղյարմաա կա՝ սրի
քշեցքի: Մինչեվ հենգ արեկանը հլա թոդ ապրին,
դամմաղ պեներ ըն, պեն շըն հսկանում:

Շահ Արասը քյնում ա շոռ կյամ, ետ կյամ
աեսնում՝ հունց վեր թողալ ա, աի ել մնում ա. վել
մին պեն էլ ըըալ լըն:

Ասում ա.—Էս հի՞նչ պեն ա. ասածըս խե՞
կդարալ լըն. վիզիրին պերեք, կլոխը կտըլտկտն ըմ:

Վիզիրին կանչում ըն, կյամ ա: թա.—Իմ հրա-
մանը խ՞ե լըք կդարալ:

Վեղիրը թա.—Շահը ապրած կենա, պա ասել
լըս, ուղեց վեր սկսիմ կուտորելը, մինր մարդ
եկավ, ասից. ռկերթի, սպասե Շահ Արասը կյա,
մին ըսելի պեն օնիմ ուրան, ասիմ, նանա եաը
հինչ օգում ըս՝ րըաս:

Շահ Արասն ասում ա.—Դերեք էա մարդուն,
ես աըա կլոխ աամ:

Էա մարդին պիրում ըն, Շահ Արասը աըան
ասում ա.—Տու քա՞նի կլիսանի յըս, վեր թողալ
լըս թա հըամանըս կգարին. ես մհենց կլոխտ
պիաի աամ:

Սա կլիսավ պատիվ ա տամ շահեն ու ասում.—
Շահն ապրած կենա, մին խոսք օնիմ՝ ասիմ, նա-
նա ետնը կլոխս տո:

Թա.—Ասե:

— Ես,— ասում ա.—դաշաղ ըմ իլալ էն էլ
խտուկու-մտուրու դտշտդ լըմ իլալ, է՛, վաթցուն
դըշղնեղին կլիսավերն ըմ իլալ: Մին քշեր քեփ
անում տեղը, մին էլ աեսնամ դրողան թակում ըն:
Մղանա ամենաապիծի հընդերը եր կացավ, թա
քյնի տեսնա, հուլ ա գրաղան թակում: Քյնից,

Ինքինին ա. վեր քինից, էլ ետ չեկավ. Ամեն օր թեփ ինք անում, ամեն քշեր մեկը քյնում ար. իշունիննը քեցավ, վեշ մինն էլ ետ չեկավ. Վաթցունինչի օրը տեսնամ, վեր ինձ ըն կանչում: Ուղեց թա տյուս կյամ, կնեղյա փեշկաս փոնից. ասից. «Իշունը հնդերունքա քեցալ ըն, մինն էլ ետ չի եկալ իտան ըն իլալ. տու տյուս կյայիս ինչնեա կապե, ետնան քյնիու: Խնչնեա կպեց. աանան տյուս եկե: Վեր տյուս եկե, յշեց տեսնամ՝ մինը հրիշտակու նման դրբումը կաղնալ՝ ինձ ա սպասում: Լիա վեր ինձ տեսավ, մին լավ հազից, ինձ եշից, մին խոր թառանչ քաշից, ռշըմ րրավ, ասից.— Լյավ ըս ըրտլ, վեր տի յըս եկալ, թա չէ քեղ էլ... քու վերշն էլ ար եկալ, — ասից,— դե վեր տի յա, ծիա հանե, եր իլ, քյնինից: Մին հնեց, նստեց, ինքը ժին հրիշտ, ասից.— Հետաս քշի կյա: Հետան քշեց, ինքը ուշկեն ար քյնում, ես՝ քմական: Մըտըծեց, թա մին ա, ինձ տննական ա սպանե, սուրս քաշիմ, ես ուրան սպանիմ: Սուրս քշեց, հինչքտն օժ օնիմ՝ հվեցի, յրա պերե, լափ առուե քյլին մալ տեղը*: Վեր թիւց, էտ անիրտվը ետ եշից, թա.— Զարափաթ ընելու տեղ չի, քշի կյա: Մըտըծեց թա.— Էտ ե՞ս ըմ. թա ե՞ս ըմ. իմ սուրը պիտի ժիանն էլ ընցած ինի, էտ իմ կարեց վուչ:

Էլլա քյնում ընք, Խնչալս մին լավ յշեց, լավ տնդեց, ոխավը մին էլ թիւց, էլլա ետ եշից, թա.— Պա տսում ըմ, թա զարափաթի տեղ չի, քշի կյա:

Ումուս կարվեց, հետան քշեց, Քյնացենք. շաա, քիլ, մտենք մին ծմակե մաչի Մմակով քյնիյիս տեսենք, վեր մին տեղ զուզե յտ, քոլ չկա: Հաեղ տեսա վեր ատիեն տակեն մին խոր պադվալ կա: Տա հացրեց, ծիան վեր եկավ, ինձ էլ տսից.— Վեր եկ:

Վեր մկա. ծիաներեն կտպերը տիրտվ հըփուս մաշին, խանչալը հանից, թա.— Ես քյնում ըմ, կես ժամ կսպասես, ծկլթական ըմ. թա վեր ծկլթաց՝ սպասես, վեր այուս կյամ: Թա, պեն ա, ծկլթաց վուչ քու ժին նստիս վուչ, նա քեղ կրլական չի ազտաե, իմը կնսախու՝ քեղ կաղատե:

Սպսեց, սպսեց՝ տեսա վեր ծեն-ծյուն չկա, ուրան ժին նստեց, թա լիա փտխչիմ, մինել տեսս ծկլթաց, տեղս սոշեց: Մինել վեր ծկլթաց, ժիան վեր եկե: Տեսնամ՝ մին օշտփու կլոխ ծերքեն, տյուս եկավ: Էս ուշափեն կլոխը քշից հըրդյին մաշը, ժիու տունդան կապից, եր իլինք ժիանները, հղե ընզանք:

Քեցենք, քեցենք, այուս եկենք մին հայաթ: Միտնցան վեր եկենք, կապուտեցենք, պիցրտցանք

տան կլիս Շարկը: Տեսա, վեր ընդեղ պաարաստի կարավաթ կա: Տա ինձ էդ կովը թնեն նշանց ա տամ, թա.— Քոն իլ:

Ցորդանը քշից ինձ յրա, ես պարանց ի ընդալ, ինքը զալալը սկսից բոլթա թակելը: Խիլլա կաշավ, եկավ, թա.— Այ մարդ, քոն իլա՞ծ ըս:

Կասիմ.— Չէ:

Ասում ըմ:— Քոնս կյամ չի:

Ասում ա.— Քոն իլ, թա չէ՝ կլոխտ կկտրիմ: Ասից ու սկսից բոլթա թակելը: Մին խրեզ ետնան, էլհա եկավ թա.— Քոն իլա՞ծ ըս:

Կասիմ.— Չէ:

Կղնկից, ասից.— Պա քեղ ասա՞լ չըմ՝ քոն իլ. մհենդյ հունց ըս, կլոխտ կաըիմ՝ տեն քշիմ:

Ճարս կտրած տաղ ըմ տնում:

Իրեքինջի դոնում վեր եկավ հրցրեց, ես ծեն չնեց: տեսնամ վններեն պտկեն յրա քյնից, յուրզունեն տական քմական յշեց, Տեսնամ՝ փափախը կիխան եր կալավ, պատան կախ ըրավ, եշեց տեսնամ՝ կլխան ժամեր կախ-կախ ընդած. կլխու ընդե, վեր կնեղյ ա:

Տեսե, վեր խանչալն էլ, ուշափեն կլոխն էլ եր կալավ, քյնում ա րիդի պադվալը: Ես էլ տղամարդ ըմ, այուս եկե, քմական թաքուն-թաքուն քյեց: Պըգվալեն առոնը պեց ըրավ, ռվապ, եանան ասից:— Ամողլի, անունդ կալալ ըմ: Էլ...

Խտնչալը եր կալավ, թա ուրան սերտը կոխե, ես քմական խտտեց: Դե հինչքան չինի, ես էլ ըմ աղամարդ, կարեց վուչ, թա ծերքտս աղտտվե: Հինչքան հոռ-հոռ ըրավ, պեն չի տյուս եկավ: Էտ վախտը յշեց տեսնամ, ստեղ մին մեռալ կա, ըսեց:

— Էտ հինչ ա պտահալ:

Թա.— Էս մեռալը իմ նշանածն ա, էս օշափն ա նրան սպանալ. Հսցրալ չի թա օտե, մհենդյ եռ իմ, նշանածես վրեժը կալալ ըմ, էլ օզում չըմ ապրիմ: Քու հնդերունքտ էլ լոխ ինձ համտր, օշափեն դեմ կոնք ըն քեցալ, կրեցալ չըն հազթին, նրա հետե, վեր տանան տյուս ըն եկալ առանց խնչալե, զաշաղը առանց խանչալ բդի տանտն տյուս չկյա, էս վուժե մեղ քու ընդերների արունն էլ կա: Թեղ հունվ ա սաւլ, թա խանչա՞լ կապիս: — Կնեղլըս:

Օնքերը մին խեցգյ ուրուր ավավ, ասից.— Քու կյանքն էլ նա յա փրկտլ, քինի՝ նրանա պժանվես վուչ: Պա ես հունց ստի կնանուցը երա ծերք պլցրցնիմ:

Շահ Արասը եղում ա, եղում էս մարդին, ետնան հրցնում:— Տու հունվ ըս:

Սա շորերը հանում ա, Շահ Արասը եղում ա, աեսնում, վեր՝ ուրան վիզիրեն հարն ա:— Ախ-

* Այստեղ լսողներից մեկը ճաւց (Ս. Բ.):

պեր,— ասում ա,— ըշխարքեն լավը լավ տ,
փիսը՝ փիս. իմ հրամանս ետ ըմ յոր օնում, բախ-
շում ըմ րոլորին կանքը, թող քյնին աղաա ապ-
րին, ուրանց հետեւ:

31. ՇԱՀ ԱՐԱՍԵՆ ԻՐԵՔ ԿՆԱՆԵՔԸ

Շահ Արասը թադավեր եղած ժամանակ յոր
ա օնում իրան նաղիր-վեղիրները, քյնում աշխարհ-
տեսության էս շեն, էս շեն շոռ ա կյամ, լհտ
տեսնա՝ հունց ըն, հոմց շըն։ Աշունք ա ինում,
աշունք, Շոռ կյալավ այուս ա կյամ մին աեդ,
տեսնում՝ վար ըն անում, ուշունց ըն տամ, խո-
սում ըն. բայց մինը՝ ճոխտ եգնը լժած վար ա
անում, վեր այուս տ կյամ տափեն էն դրաղը,
էն դրաղումն ա պար կյամ, մին էլ վեր այուս ա
կյամ էս դրաղը՝ էս դրաղեն ա պար կյամ։ Շահ
Արաս թագավերը ղարմանում ա. ոչս հի՞նչ ա,
օրիշները ուշունց ալավ ըն վար անում, էս լհա՝
էս կլինեն էլ ա պար կյամ, էս կլինեն էլ ես քյնիմ
աեսնամ՝ էս մարդին դարգը հինչ ա, վեր սաի ա
անում։

Թյում ա, բարե աամ. թա՝ բարե։ Հի՞նչ ա
գյուգում, թա Շահ Արասն ա:— էտ հի՞նչ ա, —
ասում ա, — դարդա հի՞նչ ա, իհ՝ խալիսեն նման
շըս վար անում, էս դրաղումն էլ ըս պար կյամ,
էն դրաղումն էլ։

Թա.— Դե, հի՞նչ պաամիմ, հի՞նչ ասիմ։

Թա.— Զէ, պաամել բիդիս։ Վեր եկալ ըմ,
օղում ըմ աեսնամ, աշխարհաեսության ըմ այուս
եկտլ, շաա ըմ շոռ կյլական, օղում ըմ պաամիս,
իմանամ։

Թա.— Դե, հի՞նչ ասիմ, ինձ մին կնեդյ օնիմ,
վել շնրմաշի խարշին աեդն ըմ դյուգում, վել մին
պինու աեդ ըմ դյուգում։ Էս ա վեր քյինիմ, էն
ա իննական ամեն հինչս հաղեր, պադրասա։ Լհա,
թումբեն պըտկեն վետ ա կնմական, նիհ հասնիմ
աեդ, դաստի վեններս լվրննական ա, թմղրցնե,
ինձ աանե թախտեն նստրցնե, ինքը քյնի եկմե-
րը այուս անե, տանե ապուս աա, էշը ուրան տե-
ղը կապե... վերշը՝ կյա սերուն-դաշանդ, ինձ
Արավ ուտրցնե-խմրցնե. Շնե, քոն իլ։ Քշերը ես
տվուներեն ապուս ըմ տլական։ Քշերը եր ա կրն-
նական ինքը քյնի ապուս տա, հյվնեն աեն անե,
Ուտթանա վեր եր կացավ, ամեն հինշը սրբական
ա, սերմը քցի էշավը, եղները լժե, ճպաաը տի-
նի ծերքս թա. Շնու քյնա...»

Շահ Արասը թա.— Ուրուպունը կյիլական ըմ
ծեր ապուն զոնազ։

Թա.— Դե, կկյաս, կկյաս լի։

Հի՞նչ ա դյուգում թա՝ պեն ա, թադավեր ա:

Շահ Արասը կյամ ա, լհա էս մարդուն հետ-

տան քշը-քաշ քյնում, տեսնում՝ հինչ վեր ասալ
ա, իսնապես՝ դյուղ։ Կնեդյն էլ մին լավ կնեգյ.
վետը կացավ ընդեղ, մարդը եկավ, եղները տյուս
ըրավ, աարավ աեղը կպոաից։ Եկավ մարդին
նստըցրուց, վենները հանից լվացավ... իրեսը,
տեսը-աենը, աարավ... էն ա դոշակը քցած...
տարավ նրսացրից, շայը՝ էն ա հեռ ա կյամ,
ամեն հինչ պադրաստ...

Շահ Արասը մնամ ա աեղ, Մնամ ա, էա քշե-
րը մնամ ա աեղ։ էա մարդը քոն ա ինում, կնեդյն
էլ ամեն հինշը վրշցնում ա, մարդին դուլվտվը նիհ
մնում յուրզանեն տակը։ Շահ Արասը քոն իլած
շի, լոխ աեսնում ա: էա կնեդյը ժամանակեն եր
ա կենում, ապուս տամ հյվլններեն, ուրան ժա-
մանակեն սեղան ա շինում... վերշը՝ սերմը պի-
րում, քցում էշավը, եղները լժում, ճպաաը պի-
րում, աինում մարգու ծերքեն, թա, դե.— Քշի։

Լհա վեր քցում ա, թա պատառ աեն քյնի, էս
մարդը՝ Շահ Արասը, թա.— Լհա մին վեա կտց,
քյնամ մ'էր, ետ տեռ, ըստեղ եք։

Ետ ա տեռնում։

Թա, ասում ա.— Ինձ իրեք կնեդյ օնիմ, էն
իրեք կնեդյը էս կնդանը նհետ փոխլական ըմ։

Սա թա.— Աղա, խաթադ-մաթադ քաշի։ Հիշա-
ղա՝ եկեր տու իմ ապուն։ Զէ։ Վեր աասը կնեդյ էլ
տաս, ես իմ կնեդյը աալ շրմ։

Թա.— Տի նաղլը չկա, ես քու վեղտ կկարիմ,
դյուգում ըս, ես հով ըմ։

Սա վեր սաի ա տաում, էս կնեդյը սկանում ա:
Ինքն էլ շաա խելունք կնեդյ ա ինում, կխու ա
րդում թա՝ պինը հինչումն ա: Մարդին կունան
փոնում ա, դրտղ քաշում, թա.— Վնաս չկա, ես
դյուգում ըմ։ Էն մեկալ պրներում որխին կաց,
թող կյան։ Վեր էն իրեք կնեդյը պիրի քյեղ աա,
կհրցնիս մին-մին, կասիս՝ ծեռուքա հի՞նչ ար
կյամ, խսյաթա հի՞նչ ա: Մինն ըսլական ա.
«Ներքս շոռ ա, կյող ըմ։» Մինն ըսլական ա.
«Լեղվանի ըմ, կովարարու Մինն էլ ըսլական ա,
ովկնս տյուս ա: Էն վեր ասում ա՝ կյող ըմ, տո-
նը թափշուր կանիս էն կյողեն, կասիս. «Ճասե,
եղեն պոլիդյը, էն ա՝ պենը, էն ա՝ տեսը-տենը,
հինչ անում ըս ըրա, թաքի՝ ես աեսնամ վուզ։» Էն
հով վեր ասե՝ շոռ կյող ըմ, նրան էլ կասիս.
«Եշի, տես՝ հինչ ըմ ասում. տանը էն մին դոլավը
առուն ըմ պեց ըննական։ Ես վեր ընդղավ մանիմ,
սիրեկանա թող սաղավ այուս կյա։ Վեր սաղավ
մանիմ, սիրեկանտ ընդղավ թող այուս կյա, թա-
քի աշկս տեսնա վուզ։ Էս է, ստե։ Էն հով վեր
ասե՝ կովարար ըմ, կասիս. «Ճինչ կոնվ-մոնվ օղում
ըս ըրա, վեր շյապկաս ընդղան ուրվաց, կոնվ-մոնվ
տեսնտմ վուզ։» Դե ես էլ հանց կանիմ, վեր ինքը
ուրան կնանոցը փառք տտ։

Էս մարգը եր ա կենում, քյնում ուրան վարը ընելու Վեր ուրուգունը կյամ ա տուն, տեսնում ա՝ ուրան կնեղյը տանը չի, իրեք կնեղյ տանը նստած Կտնչում ա տահանց, կնեղյը հունց վեր ասալ ա, մին-մին տսում տահանց: Սա վեր տյուս ա կյամ, էս կնանեթյը մնամ ըն ուրուր իրեսե յիշիիս: Մինը՝ մնին թա.—Ամա՞ն, էս հինչ լավ մարդ տ Շահ Արասը թագավեր ինիլավ մին դոնում ստի պեն չի ասալ Ես իմ խոյաթը թորա ըրե, էն մինն էլ, թա՝ ես էր էն մինն էլ, թա՝ ես էր:

Էս մարդը էլ լհա ոռթանա եր ա կենում, բեքյեփ քյնում վարի էս կնանեթյը ուրուր նհետ մսլըհաթ ըն անում, թա.—Ախճի, տու եղնեցը տյուս կանիս, տու՝ ապուր կտաս, տու՝ ճաջ կիփիս, տու՝ չայ կտինիս, տու՝ տեգաշորը կրցիս, տու՝ տվոներեն ապուր կտաս, վերջը...

Էս մարդը, ուրուգյունը բեքյեփ տոն ա կյամ: Հհա, վեր կորիս ուրվում ա, էս կնանեթյը հունցը պայմանավերվալ ըն, ինգի ել անում ըն՝ լավ, սարքեն-կարգեն: Քշերն էլ, վեր էս մարդը տեղաշորն անի մնում, էս կնանոցը մինը քմակավն անի մնում, մինը ըստշավը, վերջը, լի, տու ինձանա լավ ըս գյուգում, ինձանա ջտհիլ ըս:

Մհենգյ խոսինք Շահ Արասեն անաւ:

Շահ Արասն տ, լի, գիբյ-գիբյ, փտտ տեռած, վել խոսել օնե, վել տսել օնե, վել պեն օնե, վել հինչ օնե, տի՝ տես-տեն Մին խիլլա ժամանակ, վեր անց ա կենում, տսում ա. «Քյնիմ, տեսնամ՝ էն մարդը հունց ա անում, հունց ա յոլա տտնում իմ կնանուցը»: Եր ա կենում կյամ, տեսնում՝ էն մարդը հեն տ լծոց վար ընելիս, մհենգյ իրեք տեղ ա պար կյամ. մին՝ էն զբաղումը, մին՝ էս գրաղումն ա պար կյամ, մին էլ՝ մաշ տեղը. «Անպաճառ էն մտրդն ա իննական, քյնիմ կոշտը, տեսնամ՝ կնտնեթյ հունց ա պահում»: Կյամ ա, թտ.—էա հինչ ա, խալիսեն մնան ըս վար տնում՝ սուս-փուս, իրեք տեղ պար ըս կյամ:

— Հինչ օնիս քեղ, էտ էլ էն լընի, մին գոնում մին մարդ եկավ սոտ տեղան դոնաղ, ինքյն էլ Շահ Արաս թագավերը տեռավ, ունգուր նման կնեղյս էլ եր կալավ, տարավ, Մհենգյ իրեք կնեղյ ա: Էլ կյուղութուն ըըն անում, էն մինն էլ կոնկ չի անում, պեն չի անում: Քոն ըմ ինում, մինը քմակավս տ նի մտնում, մինը՝ ըուաշավս, սերուն, դաշանպյ, վերջը՝ ամեն հինչը ստղի:

Թա.—Ուրուգյունս կյլական ըմ դոնաղ:

Թտ.—Տի նազլը-ղատ չկա, Ղոնաղ կյամ, էլ լհա կորիս խաթու մաշ քցի՞ս:

Թա.—Վերջը՝ կյլակտն ըմ:

Կյամ ա՝ լպաստը փոխած, ոտնգուր փոխած, ցույց տամ, վեր Շահ Արասն ա, կյամ, տեսնում, վերջը՝ հունց վեր ասալ ա, աի, էտ կնանեթյ սրտն

լավ պահած: Հունց ըն պահալ, հունց ըն պտհալ, էլ, էլ, էլ էլ ըսելու չի: Վերջը, հինչ կլոխտ ցվընիմ, էս Շահ Արասը քյնում ա, կնեղյը, էս մարդին կնեղյը, պիրում տամ էս մարթին, ուրան կնանեթյը յոր օնում քյնում:—Կա քու կնեղյը, իմ կնանեթյ ինձ տու:

Էս կնանեթյն էլ լհա, վեր նիհ ըն մնում Շահ Արասեն պալատը, ամեղյը ուրան փեշակը սկսում ա, հունց ըն սկսում, փհա՛ հա՛, հա՛, հա՛, խի՛, խի՛ խի ...*

32. ՇԱՀ ԱՐԱՍԵՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Շահ Արասը սովորություն օներ, գերվիշու շուրեր տր հագնում, տյուս կյամ քտղաքը ման կյամ, վեր տեսնա՝ ժողովուրգը ուրան անա գոհ ը՞ն, անգոհ ը՞ն, հուվ ա՞ իրանից կյենգյատ անում, հուվ ա՞ թարիփ անում... տի, միշտ գերվիշու շուրերում, ման ար կյամ ուրան նաղիր-վեղիընեղին նհետ:

Մի անգամ տի շորեր հագած, ուրան քաղաքով քյնամ ար. տեսնում՝ մին ակուշկավ լացի սյաս ա կյամ: Լաց ա ինում. մին կնեյգ լաց ա ինում, նաղիր-վեղիընեղին ասում ա:—Մին քըյնանք, մտնինք տեսնանք՝ գարգը հինչ ա, խե՞ յա լաց ինում էտ կնեղյտ: Տա մին գարգ օնե, վեր տի լաց ա ինում:

Քյնում ըն, մտնում, գերվիշի ֆորմում. էտ կնեղյը վեր տեսնում տ մարգ մտտվ, սուս անում, Մհենգյ հարցնում ա էտ կնդանից:—Խե՞ ըս լաց ինում, գարգտ հինչ ա:

Ասում ա:—Դե, հատե, երկու ա, թա իըեք խորս օնիմ, ես էլ կործ-պեն անում չըմ, խոխեթյը սոված, ես էլ սոված: Սոված ինիլամ նհետ լհու խտի լաց ըմ ինում:

Թա ասում ա:—Լաց:

Տյուս օնում զուրան մին տրուղորմա տամ էս կնդանը, թա ասում ա:—Էքյուծվանից, էտ արուղորմից տմեն օր մի հատ կհանիս, կտտնիս—կիհնն էլ ասում ա, վեր տա թնդյանուց պեն ա, լի, — հատը տասը մանեթ ա, կտան, — ասում ա, — փոքն ինքյ կօնիս, կպիրիս, խոցտ կպահիս:

Էքսը օրը, էտ տրուղորման մին հատ տյուս ա օնում, քյնտմ քաղաքը: Ծտեղ մի շնուգ հայտնի վաճտուական ա ինում, տանում ա, վեր տա, նհաշ ա տամ, ասում ա:—Քանի՞ ա:

Ասում ա:—Տասը մանեթ ա:

Թա.—Տասը մտնեթավ ինքյ կօնիմ, բայց ինձ րոլորն ա հարկավեր, քյնտ տանը հինչքտն կա՛ լոխ պեր, ասաց մնեթավ ինքյ օնիմ:

* Միժաղում է (Ծ. Բ.):

Էտ կնեղյ եր ա կենում քյնամ ա: Էտ արուղորման վեր պիրում ա, Էտ ջուղը կնդան ըսիսեն տամ ա, թա: — Էտ տրուղորման իմն ա, կյուղացալ ըս: Թեզ հիշտղա՞ ա տի տրուղորմա:

Ասում ա: — Ցանի հունց ա քունց:

Թա, ասում ա: — Իմն ա, լի: Օղում ըս՝ սուղի տամ, սուղն ասի, վեր էս տրուղորման իմն ա:

Պիրում ա սուղի տամ: Սա քյնում ա, էրկու շհսդ ճարում, փող տամ, վեր սուղում ասին. թա՞ էս տրուղորման էս թաշիրինն ա, քանե տարի տեսալ ըն:

Էտ վկաները էտ կնդանը, էս վաճառականն նհետ քյնում ըն սուղը:

Մհենդյ էտ սուղը էտ կնդան անա հրցնում ա, լի, ասում ա: — Էտ տրուղորման հիշտղա՞ ա:

Թա, ասում ա: — Մին մարդ ա լի, ավալ Պերալ ըմ, թա մի հատ ծտխիմ, լոխ եր ա կալալ, թա ասում ա՝ կյուղացալ ըս: Ես էլ ասում ըմ՝ կյուղացալ ըմ:

Թա: — Ինչպե՞ս լըս կյուղացալ, էն ա վկաներ օնիմ ինձ, վեր տրուղորման իմն ա լյալ:

Էն վկաներն մին-մին կանչում ա, հրցնում թա: — Տրուղորման հունըն ա:

Ասում ա: — Էտ վաճտուակտնենն ա, քտնե տարի մունք տեսալ ընք, վեր էտ տրուղորման նրտ ծերքեն տ լյալ, մհենդյ էտ կնեղյը կյուղացալ ա, մհենդյ նորը կյուղոթունը փոնալ ա ինքյը:

Էն մի վկայից ըն հարցնում, էն էլ տ աի ասում, ասում ա: — Դյուղ ա:

Պիրում տ էտ սուղը, էա կնդանը ծերքը կըտրում: Տի որոշում ըն, ծերքը կարում, պեց թողում, Մերքը վեր կարում ըն, մհենդյ, կյամ ա տոն, դե վայ-վրուղը քցում ա, լի: Խլածը հերիք չի, ծերքն էլ կարալ ըն. տիմացի, վայ-վրուղը աի քցում ա:

Շահ Արասը մտածում ա, թա. ԱՄին քյնամ գիրավ ընցնիմ, տեսնամ՝ էտ կնեղյ էլ լհտ լաց ա ինու՞մ: Նաղիր-վեղիրներն նհետ քյնում ա: Քյենամ ա, տկուշկեն տական սկանում, տեսնում՝ հա՞նց լաց տ ինում, վեր ծերքը երկինքն ա ինում՝ սկի, էն վրխտեն նման չի, ավելի ուժեղ ա լյաց ինում: Զարմանում ըն, լի, ասում ա՝ մին, քյնանք աեսնտնք, տա հի՞նչ ա: Թյում ըն տեսնում՝ էտ կնդտնը ծերքը կարած: Թա: — Հի՞նչ պեն ա:

Էտ կնեղյը տի լոխ մին-մին պատմում ա՝ հունցը ասալ ըմ, վեր ստի սուղիտ ըմ ըրալ:

Շահ Արտուր անց ա կենում քյնում, իրան թախտեն նստում: Էքսը, սուղին էլ ա կանչում, էն վաճառականն էլ ա կանչում, էն վկաները, էն կնեղյը, վեր կոռնը կտրալ ըն: Ասում ա: Ճթող լոխ կյսն իմ պալատս: Էն արուղորման էլ կպիրիքյա: Էքսը սուղյան, էն վաճառականն նհետ

շհըդնեն, հետո՝ էն կնեղյը արուղորման էլ եր կտլած, կյամ ըն Շահ Արասեն պտլատր:

Շահ Արասը արուղորման յոր ա օնում: Դե, իրան պալատեն մտրդկանց, նազիր-վեղիրներին լոխնին հվաքալ ա, պրժալ, ստի, լոխնին մին-մին մուտանում ա հրցնում: — Էս արուղորման հուրն ա:

— Շահ Արասն ապրած կենա, քունն ա: Էն մինին ա մուատնում: — Էս արուղորման հուրն ա:

— Շահ Արասն ապրած կենա, քունն ա:

Տի ջարդին, լոխնին հրցնում ա, լոխ էլ ասում ըն. ՃՇահ Արասն տպրած կենա, քունն ա: Սուղյին ասում ա: — Էս տրուղորման իմն ա: Տեսե՞ր, վեր իմ պալատականներս լոխ ըսեցեն վրեր Շահ Արասենն ա:

— Հա, տեսե:

Մհենդյ ասում ա: — Ես, էս տրուղորման տվալ ըմ էս կնդանը, վեր տտնե, ծախե, ուրան խոխեքյը պտհե:

Մհենդյ կնդանն ասում ա: — Պաամե, աեսնանք հի՞նչ տեսակ ա լյալ:

Պատմում ա, ասում ա: — Մին հատ տարտլ ըմ վաճառակտնեն կոշտը, հրցրալ ա, թա՝ հաաը քանե՞ ա, տսալ ըմ՝ տասը մանեթ: Թա ասում տ. դե ես մին հաաը օղում լըմ, քյնի տըրուղորման լոխ պեր, միանդտմից հատը տասը մնեթավ ինքյ օնիմ: Քյեցալ, տրուղորման պերալ, էս վաճառականը մին հատ էլ ինձ սիլլա ա ավալ. Թա՝ տրուղորման իմն ա, կյուղացալ ըս, Ասալ ըմ՝ կյուղացալ ըմ: Ինքը՝ կյուղացալ ըս, ես՝ կյուղացալ ըմ, կործը ընդնում տ սուղին: Սուղումը էս էրկու վկանները հաստադտլ ըն, վեր տրուղորման վաճառականնենն ա, կյուղացալ ըմ:

Մհենդյ սուղին ասում ա: — Ինչպե՞ս ըս սուղիտ ըրալ:

Թա, ասում ա: — Դե, ինչպե՞ս սուղիա անիմ. վաճառականն ասալ ա. արուղորման իմն ա, էս կնեղյը կյուղացալ ա. հասե, երկու վկա օնե, վկաները հաստադտլ ըն: Էտ վկաններն փող ա տվալ, վեր սուղումը կաղնին, ասին թա՝ էս արուղորման էս վաճառակտնենն ա: Դե, վեր տի հսապալ ա, թա՝ էս տրուղորման էս վաճառակտնենն ա, կյուղացալ ա, դե կյողեն էլ, ախրը, ծերքը կարում ընք, լի, ես էլ կարել ըմ ավալ: Ես ըստեղ հի՞նչ մեղավոր ըմ, հունցը օրենքյտ ա, տի ել րրալ ըմ՝ ծերքը կտրալ ըմ:

Պիրում ա... սուղյան էլ չի մեղավոր ըտեղ... Երկու հաա ճյորի ա պիրիլ տամ, տահանց էտ շհաղներեն ամեն մեկին մին ճյորու վեռա ա աամ, թա: — Հլա, թոկաց մին էս վկանները քյնան:

Իսկ էտ վաճառականն ասում ա: — Ես քեզ վել մին պեն շըմ անում, ամսեկան, — ասում ա: —

իցուն մանեթ ըս տամ էս կնգանոր, մինչև քու կյանքիդ վերջը, վեր էս կնեգյը ուրան խոցավը ապահով ապրե, տրա համտր էլ ես քեղ գնդակահարել շըմ տամ, Կրյանս,— ասում ա,— ամսական իցուն մանեթ տաս էս կնգանը, եթե մին ամես ուղացրիր, իսկուն կնլական ըմ քեղ ինձ մոտ:

Դե, ախըր, տա, էլ հինչ բեդի անե, էս օրվանից սկսում ա էտ վաճառականտ, ամեն ամես հիցուն մտնեթ էտ կնգանը փող ա աամ, արանով տի տպրում ա. տրանով էլ տի վրշանում ա:

33. ՇԱՀ ԱՐԱՍՆ ՈՒ ԽՈՍՔ ԾԱԽՈՂ ՏՂԱՆ

Մին թադավեր ա ինում. Շահ Արասն ա ինում: Օրերիդ մին օր էս կա Շահ Արասն ասում ա. «Մին այուս կյամ, աեսնամ, ժողովուրդն հինչ դրության մեջ ըն: Շորերը փոխում ա, տյուս կյամ, քյում ման կյալ:

Մին քյասիր տոն էլ ա ինում ըաեղ, տահանց մին փոխա ա ինում, մին էլ՝ մայրն ա ինում: էտ խոխան քյում ա ծմական օրեկան մին շելակ փադ պերում, ծախում, աասը, թա քսան կպեկու, աանավ էլ ապրում ըն:

Օրերեն մին օր, Շահ Արասը քյնամ ա րադար, տեսնում ա՝ համին էս խոխան բզարավը շոռ. ա կյամ ու կանչում. ռենուր ըմ ծախում, խոսք ըմ ծախում: էտ Շահ Արասը մնում ա մաթալ, ասում ա. ռէս հինչ պեն ա, խոսք ըմ ծախում, թա վե՞րն ա: Մին մուաանամ, աեսնամ աա հինչ պեն ա:

Քյում ա, մուտանում, թա, ասում ա.— Բալա, հինչպե՞ս թա՝ խոսք ըմ ծախում:

— Հա, կարեոր խոսք ըմ ծախում:

Թա.— Հու՞նց կարեոր:

Թա, ասում ա.— Հարկավորական խոսք ա:

Թո, ասում ա.— Հո՞նչ աամ, էս խոսքիա՝ ինձ ասիս:

Թա, ասում ա.— Իրեք մանեթ առ, ասիմ:

Իրեք մանեթ ա այուս օնում, աամ իրան:

Թա, ասում ա.— Լյավությունին լյավություն պաի անիս:

Թա, դե.— Վերշացա՞վ:

Թա.— Հա, վերշացավ:

Շահ Արասն անց ա կենում, քյնամ: Շահ Արասն անց ա կենում, Շի քանի ժամանակ անց ա կենում, էլի կյամ, շոռ աամ, կյամ էտ բադարա, տեսնում: էս խոխան ըաեղ էլի:

Ասում ա. ռենուր ըմ ծախում, խոսք ըմ ծախում:— խոխան ա ասում:

Ասում ա. ռէս հինչ պեն ա, էլ լհա ասում ա՝ խոսք ըմ ծախում, խոսք ըմ ծախում:

Քյնամ ա մուտանում, թա ասում ա.— Հինչ-

պե՞ս թա խոսք ըմ ծախում, հինչ խոսք ա, էտ վեր ծախում ըս:

Դե, հո՞ն, ա դյուդում, թա Շահ Արասն ա:

Թա.— Հա, կարեոր խոսք ա:

Թա.— Հինչ տամ, ասիս:

Թա.— Իրեք մանեթ տո, ասիմ,

Իրեք մտնեթը տյուս օնում, տամ իրան:

Թա, ասում ա.— Վաղությունին վաղություն պետք ա անիս:

Անց ա կենում, քյնում: Անց ա կենում, քյնում, բայց խոխեն ասած ա ինում:— Տու կկյաս էս հինչ տեղը, ես ընդեղ ըմ իննական, քեղ օրական իցուն կապեկ փող կտամ:

Ասում ա.— Լյավ, — խոխան ա ասալ:

Եր ա կենում Շահ Արասը, քյնում ուրան թաղթեն նստում՝ թադավեր մարդ ա, լի, էտ խոխան ամեն օր կյամ, Շահ Արասին անա իցուն կապեկ փող ինք օնում: Էտ Շահ Արասեն մին վեզիր ա ինում, մին օր ետ ա տեղում Շահ Արասեն թա.— Շահ Արասն ապրած կենա, էն խոխան մի դուցե՞հարյուր տարե ըպրալական ա, տու օրական իցուն կապեկ որ տաս նըան, քու ամրող կարողություն տվեցտնա:

Թա, ասում ա.— Դե, խոստացալ ըմ, պետք ա տամ, լի:

Ասում ա.— Զի կարելի՞ն, վեր աաս վուշ:

Թա, ասում ա.— Պա հու՞նց կարելի ա:

Թա, ասում ա.— Ես քյեղ սուվեցնիմ, էնպես արա՝ տաս վուշ:

Ասում ա.— Դե, մին ասե, աեսնամ՝ հու՞նց անիմ:

Էս Շահ Արասն էլ չի օղում, է՝, աա. մին տասը տարե տվալ ա, փուշմանալ ա:

Վկղիրն ասում ա.— Խոխան վեր կկյա, ասե՝ իցուն կապեկս աուր, մին նամակ կյիրի քու րունուա ղասարնեցեն յրաւ նամտկումը կյիրի, վեր. ռենուան աեղ հանելուն բաստա, ղաստի վեղը կարեցիք: Կաաս իրան թող տանե:

Թա.— Լյավ:

Խոխան քյնամ ա, թա ասում ա.— Շահ Արասն ապրած կենա, իցուն կապեկս աու:

Թա, ասում ա.— Մերքես փող չկա, էտ նամակը տար, տո ղասարեն, իցուն կապեկա քյեղ տա:

Խոխան ուրախանալավ, վաղ տալավ, քյնում ա, ճանապարհին մին խոխա կյամ ա, թա.— Արա, իցուն կապեկ փող տո, լի:

Թա, ասում ա.— Զկա, ժերքես չկա, հաս կյիրալ ա Շահ Արասը, վեր քյնամ ղըսարեն ստանամ:

Ասում ա.— Լյավ ա, լյավ, ինձ տո, — ասում ա,— ես քյնամ, սաանամ:

— կա, դե, — ասում ա, — կա, առւ քյնա, ստացւ

Էտ աղան յոր ա օնում էտ թողթը, քյնամ տամ զասարեն. զասարը վեր կարթում ա, իսկուն արա վեղը թխում ա, կարում:

Էտ տղան վաղիրին աղան ա ինում: Թխում ըն, վաղիրին աղեն վեղը կարում:

Հայ-հուը ըղնում ա, թա՝ վաղիրին աղան կորալ ա, ուրվամ չի: Պարդվում ա, վեր վեղը կորալ ըն: Պիրում ա Շահ Արասը ժողով հայտարարում, թա ասում ա. — Վաղություն ընողին պետք ա վաղություն անիս:

Վաղիրին էլ կանչում ա, ըսեղ կախաղան հանում. ըտանավ էլ վերջանում ա:

34. ՊԵՐԿԲՓՈԽԱՆ ԿՆԵԳՅԸ

Ինում ա, շինում, մին մարդ, մին կնեդյ: Էա մարդին կնեդյը բարաթ ա ինում: Քու հովան կացած՝ բարաթ կնեդյ ա ինում: Էա մարդը ասրեն տասներկու ամես ըշխադում ա, ցորեն ա վարում՝ կյարի ա օտում, կյարի ա վարում, էլ հա կյարի ա օտում: Ախրը, մին օր կյամ ա րիդարած նսաած օնքերը բեժ անում: Կնեդյն ասում ա. — Ա մարդ, իսե՝ տի ըս անում:

Թա. — Էէ, կնեդյ, էլ դործ լըմ ըննական:

— Ա մարդ, հի՞նչ ա, պատճառը հի՞նչ ա:

Ասում ա. — Վեր աարեն տասներկու ամես ըշխադում ըմ՝ կյարի ըմ օտում, էլ ըշխադում ըմ հի՞նչ անիմ:

Կնեդյը, ըսեցե, լի, մին պատառ բարաթ ա ինում: Ասում ա. — Ա մարդ, դյուգում ըս հինչ կա. տու մին քուր օնիս Շուրվանի, դյուգում ըս հունց հայասդըն ա՝, — ասում ա, — լհա պեց կալած ա կենում: Վեր ընդեղ ստի ա անում, այսինքն՝ փեշկերը դարիր տղամարդու ըռաշին պեց ա անում, քու հացը ստեղ կյարի ա աեռնում:

Էդ մարդին խելքն էլ օրումս ա ինում, լի, կ լնվում ա, փրփրում, ահում ա. — Նրա իմմանն, — ասում ա, — Նրա ախրըսը, էն ճափկե մհակը վեր խանձ ըմ ավալ, տիրալ ընդեղ, պեր ստեղ, ես յոր ըմ օննական, քյնիմ; էս մհակեն տակը տամ:

Պիրում ա, ուրթանա հղե ա ինում. շատ ա քյնում, խրեդյ ա քյնում, ախրը, հոմց ա պտահում՝ քուրը տանան նկատում ա, վեր ախպերը կյամ ա: Մերքերը ետ ա տանում, վաղ աամ. ռԱխպեր, կլխավտ շոռ աամ, էս հի՞նչ ա պահաճալ, վեր մեննտ ըս քցալ...:

Էս ախպերն ասում տ. — Հը՞մ, հեռե կաց, ռադ իւ. սաղաս, ախրաթտ կարվե, — ասում ա, — պա առւ կարում լը՞ս քեղ թահրին պահիս, վեր ռինդիս ըս անում՝ հացս կյարի ա տեռնում:

Սաեղ քուրը դաստի կլխու ա ըղնում, ասում ա. — Ես քեղ մատաղ, եկ մին զըուց կանինք. տեսնտնք՝ էտ իսի՞ աի ա:

Տու ասում՝ էր՝ էս քուրերն էլ մին տղա ա ինում, ինքյն էլ քաշալ: Դե, դյուգում ըք լի, քաշալը համ դալիդու կինի, համ՝ ժուլիկ: Հաց ուաելան եանը Քաշալն ասում ա. — Դայի, վեր աի ա, ես քո հացը ճելլի ցորեն կանիմ:

Մին էրկու օր վեր կենում ըն, դային թայդի ա ըղնում, թա. «Իմ հացը հունց ա ցորեն ըննական»: Եր ըն կենում կյամ: Հղեննի ասում ա. — Դայի, հասե՝ քյնում ընք, հինչու անիմ, առւ խոսիս վուշ: Տու սուս կանիս, կտեսնաս, թա քուրկնդանը ես հունց ըմ շարգեռում լծլական Ասում ա. — Դե քյնում ընք, կասիս, վեր՝ Քաշալը մին հինդյ օր սաեղ կըննական ա:

Կյամ ըն, հսնում առն: Դըրրուդյում ա ինում: Լհա, վեր կյամ ըն գլուխսկանց նիհ մանում... Դե, ախեղ, կնեդյը՝ քուակենը, դյուգում աը, թա՝ քուրերը կշաեն ուրան մարդը շաա ա կըննական: Նի ըն մնում աեսնում՝ փլավ ըրած, հիյղամ, սեղանը սարքած, փափուկ ցորեն հացը թիած, վերշը՝ պղրասաված... Տեղ մին քյովու աղա ա ինում: Քյուիսեն տղան բիդի կյար սաեղ: Պայց էս ա, սահանք ըն ճելլի կյամ: Լհա, վեր սաի րուրուան նի ըն մնում, էս կնեդյը դերասանությում ա անում՝ ծերքերը ետ ա տանում, թա. — Քաշալ, կլխավտ շոռ տամ, պաաերը շոփ բիդիմ կոխիւ, վեննավա կյարմուր թիլ բիդիմ քցել... էտ հի՞նչ պեն ա, վեր քուակենա աի մեննտ ըս քցալ:

— Հա, քուակեն, կասիմ՝ քյնիմ, տեսնամ հունց ա, էս ա հինչքան վախտ տեսալ շըմ:

Վերշը, էտ ուրուդյունը նստում ըն, օտում ըն, խմում ըն, դաթումն էլ էս Քաշալը դայուն ստի կուփիւ ա աամ, թա. — Դայի, — ասում ա, — էս հլա՝ մին:

Էքլսը եղ ըն կենում, դալին ասում ա. — Ս Քաշալ, քյննական ընք մի կա վար անինք: Մի կա վար անինք, — ասում ա, — քյոմադյ պիսի անիս:

Քուակենը արդեն դյուգում ա էա մասին: Գյուրում ա, վեր Քաշալ նան մարդը քյննական ըն մին-աւելի վար: Ինքն էլ սահանց անա ալք ա կյուզանում, հտնդիպում քյովիւն աղեն նհեա: Գյուրիւն տղեն ասում ա: Գյուիսեն աղան էլ թա. — Ցըս էս եմ քյննական վար, չալ եղն ըմ լծլական, հա՞ա էտ շան տղեքյը վեր քյնին ուրանց կործեն, տու ել հացա, տեսա-աենա կշինիս, կկյաս կոշաս:

Գյուիսեն տղան ասում ա, քյնում: Տու մի սաեղ Քաշալը տուանը աական ըսկնայիս ա ինամ: Ալ-

լղա զոնում Քաշալ, դայուն ասում ա.—Դայի, մին չորս-հՀնդյ մետո բյաղ եր կտր

Դային բացը յոր ա զնում, տանում, Տահանց Նղնը կյարմուր ա ինում, բաղը փորավն ա տամ, մին հենդյ կիլոմետրեն յրա էլ շալ ա ուրվում, ուռակեսը տյուս ա կյամ հանդր, շալ հկն յրա բյում Տես-աւն շրնած, տակեն ճկուրավ այուս ա կյամ շալ եղնեն կոշտը, համ վեր մուտանում ա, մնամ ա մին քան-քանը հենդյ վրնալափի, մին քան-քանը հենդյ շքը, ճինան-շում աւ Ճինանշում ա, բուրդան ճրկվում, Մըրկ-վում ա, կունի-կունի տնբտնքամ: Համ տնքանքամ ա, համ բյում, Դե հու ետ շի տոնելական, Քաշալը իրո թա դդյասկանց նկատում ա.—Ա քու-կե՞ն, էս հո՞ր ըս դահմաթ քաշալ, տի պեն չի ինի, էս ա կլական ընք, լի:

Ասում ա.—Քաշալ, կլիավտ շոռ աամ, պա հունց անիմ, իմ տալին տղտն ըս, հըղերանց մե հետ եկալ ըս:

Պիրում ըն, քորկնդան ընդեղ աարած պեներն օսում, քուակենը լընկլի տալավ ետ ա աեռնում, կյամ: Զըխկլի ա աամ, իրը թա վեննը ցավում ա, վեր էքյուժ քյնի վուչ:

Ուրուդյում կյամ ըն, էլ լհա աշկ ա կյուղանում քուակենը, զըրրդեն քմակեն քյուխեն աղեն նհեա աեսնվում: Դե, վեր տեսնվելը կա, Քալեն՝ թաքուն անդում օնելը պակաս չի:

Քյուխեն տղան ասում ա.—Ախճի, ինձ տուղնը իսե՞ սպնեցեր, էս դյուրադյուռնեն էս հի՞նչ ըրեն:

Ստեղ էլ լհա պայմանավորվում ըն էքսվահմարի—իմ քյեցած ճանապարհավը, քյուխեն աղան ա ասում, ինձոր ըմ ուտլական, քլեր վեր ածիմ, էտ քլեն հետքերավը կկյաս:

Քաշալը էքսյը քլենեն հվաքում ա ուրանց հըղցավը մաակում, քուակենը համին ճամփավ քյնում աւ Քյուում ա, աեսնում՝ էլ լհա խափված ա, սաեղ, արդեն տնքանքոցը քցում ա, պընդցնում ցավեն աեղը:

Քաշալը կյամ ա.—Ա, քուակեն, ախր տու... առու...

Քուակենն էլ տնքանքամ ա, հա՞յ-հա՞յ անում վա՞յ-վա՞յ անում: Քաշալն ասում ա.—Ա քուակեն, ախեր, քու ցավա, դյուդում ըս, սորփավ ա տյուս կլական:

Ահում ա.—Ես քեղ մատաղ, Քաշալ, հո՞ր ա էտ սորփը, էտ հի՞նչ սորփ ա, հինչ անդ՞ու, վեր ինձ տեղն ասիս, ճյուր կանիմ՝ վեններտ լվանամ: Կլսավտ շոռ տամ, մին թահր ըրա, մեռնում ըմ:

Թա, ասում ա.—Քուակեն, դյուգում ըս հի՞նչ կա, էս տ ստեղ՝ յալումը մին սորփ կա, Յալեն

անումը երսծու Խութ ա, Խութին պտկեն էլ սորփ կա, ա՛ռում՝ Դընդ-դընդ նհատակ աւ Ճինչու սրտավտ ընցնում ա, վեր օղում ըս, անում ա, Քյուում ըս ընդեղ, լըքըլոր մուտանում ըս, ծեն տամ՝ Դընդ-դընդ նհատակ ռա՞ե՞յ ա ըննական: Մըննատ քցիս վուչ, հա՞ա, կասիս. ռիմ իրեսս քու վետանտ տակը, հինչու ասիմ, կանի՞սս: Հու-լական ա՞ հա՞: Տու ել հինչու ասիս, կանե:

— Վը՞յ, ես քյը մատաղ, Քաշալ, վեր էտ քամեն ինձանա տյուս կյա, քյը հետե, դյուդում ըմ հրնչեր ըմ ըննական:

Հա, դե լլավ: Քաշալը կածանը նշանց ա աամ, ինքյը թաքուն քմական եշում, Քուակենը վեր մին կես կիոմետր քյնում ա, քմակեն եշում տես-նում, վեր դալդան ա ընդալ, զեյրան ա կտրում: Քաշալն էլ՝ թաքուն հետան՝ ասլան: Քուակենը վաղ տված քյնում ա, սորփը քթենում, լոքում ըուալին.—Դընդ-դընդ նհատակ...

Քաշալն էլ մին օրիշ հորցավ քյեցած ա ինում, նիհ մաած էտ սորփը: Վեր քուակենը Դընդ-դընդ նհատակ ա ծեն տամ, Քաշալն ասում ա.—Ճե՞յ:

Ասում ա.—Քաշալն ու ուրան դայուն տանի՞ս: Ասում ա.—Ճա՞:

— Պա հունց անիմ, վեր աանիս:

Ասում ա.—Ճաշ ըրա օտին, կուտորվին:

— Ճե՞յ:— ասում ա,— կլիավտ շոռ աամ, իմ իրեսս վետետ աակը, Դընդ-դընդ նհատակ, վեր էտ պենը ամալ կյա, իրեք-շորս վերցակ ըմ մատաղ ըննական:

Քաշալն ասում ա.—Ճը՞մ, հը՞մ, լլավ կինի:

Քուակենը թողում ա, կյամ, սկսում պադըաստություն տեսնալը: Քաշալն էլ կյամ ա դայուն կոշաը, ասում ա.—Դայի, քյննակտն ընք առն, լլա՞ավ սոսիրա ա իննական: Վեր հացը օաիս, կշանաս, եր կկենաս, րուրդան աշկերտ հոփ օնիս, մաշկետ լրա վեր ըղնիս:

Դե, վեր կղնիս, վեր կղնիս, լի դայուն հետե մին վեր ըղնելը հի՞նչ ա՞ լլավ ուաելան-իսմելան ետնը:

Դային վեր օտում ա, խմում, աշկերը ճպճպացնում ա, մաշկեն յրա պարանց ըղնում: Քաշալը տիմանում չի, թա նափաս քաշի, ինքյն էլ ա աի անում: Քուակենը քուրդան ուրիխնալան նհետ.—Ճա՞ա,— ասում ա,— դյուրադյուռ ինիք տուք, մդյամ տսնըլակա՞ն ի, վեր շնսատակ տեռնաք:

Էս վարումը քյուխեն տղան նիհ ա մնում, թա.— եկ, քուակենն ա ասում,— քաշ աանք, քցինք ճյուրտըվերեն փոսը:

Դե, Քաշալը դայուն ասած ա ինում. «Դայի, հինչքան վեր կլոխտ տես-տեսու նի կյա, հա՞յ-վա՞յ շանիսս: .

Քյում ըն փոսր: Քյումին տղան կրվաթեն պարանց ա ըղսում, ծերքերը տիսում կլինեն ապօս, մրն պատառ ըսկում խոխոացնելը: Խըռ հա խըռ, վեր քոն ա ինում, քոակենը եղը քասգում ա, սի՞ տամ քթավուրը, տիսում կրակեն, վեր թաղադան ճաշ անե, ճանցու քյումին տղան եր կենա, մինաեղ առոք-փառոք օարն: Էս վեր եղը քասգում ա, արնում կրակեն, սողանա-մողասապեն ա քյում մաշը, այուս կյամ, վեր մին պատառ ճեխա-պենա պիրի կրակեն տակը նիհ տա, հանցու կըակը թեժ ինի, խորագյը ճելի իփի, Քալալը դիգյուսկանց եր ա կենում, կյամ քթըվուրեն կոթան փոնում, էս պլամթայիս եղը լցնում քյումին աղեն ոեխը: Երկու հետ ծեկեն տ տամ, սաակում: Ինքը՝ Քաշալը, էլ լհա քյուում ա նիհ մնում ճյուրտըվերեն փոսր: Ռուակենը եա ա տեռնում կյամ: Լհա վեր եղում ա, տեսնում՝ քթըվուրում եղ չկա, ծույնանը թիում ա. «Վա՛, քյուանամ ես, աես հինչ ա, ե՛, եղը իլլալ ա, քյումին տղան եր ա կըննակսն ինձ սպտնեա: Մին էլ նորը մինան պոլիգյը պիրում ա, եղը քանդում: Կերջը՝ ճաշն անում ա, էս մինը, էն մինը, պրծնում, քյուում մուատնում, ծերքը տանում, տինում քյումին տղեն բուզուրեն մին պիծի, կուփի ասմ.—Քյումին տղա:

Սաս չկա:

— Քյումին աղա:

Սաս չկա:

— Աղա, քյումին աղա...

Տեսնում ա, արգեն՝ քյումին աղան հարգիլ տ իլլու:

— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, էս, էս քըքըսաակածը հիշտղա եկավ, ըստեղ ըսաակի՞ց:— Ասում ա ծույնանը թիում, վա՛յ-վա՛յ անում: Քալալը ընգղան պրկըշաուաում ա.— Վամ՛հ, իսե՞...

Էս վեր սաի ա անում, քոըկնգանը սերտը համ մի կա վախ ա ըղնում, համ էլ ուրախանում: Մուտանում ա.— Քալալ, կլիսավտ շոռ աամ, օշա կլոխտ ա եկա՞լ:

— Հա, քոակեն, վախիլ մի, էս ըմ լյավ: Դտյին էլ էս ա լյավ, եր ընք կենում:

Եր ըն կենում:

— Քոակեն,— ասում ա,— էս հի՞նչ ա,

Թա ասում ա.— Եկալ ա ըստեղ,— ասում ա,— սրա իստինն, ինդինն, — ուշունց ա տամ, լի: Թա դե:— Պա էս հի՞նչ անինքյ:

Թա ասում ա.— Վեհնչ, արտ նազը ես քշտկան ըմ, քոակեն, պեր, հլա մին հաց շինի, օտինքյ:

Հացը շինում ա, օառում ըն, Քալալն ասում ա.— Քոուկեն, խտրտ լօնի՞ս, մին խարա պեր տտեղ:

Խտրան էլ մեծ մեշուկ ա: Խտրան պիրում տ, քյումուն տղեն քյում ըն մտչը, ոեխը կապում, Քալալը շիլակում տ, ասում ա.— Քոակեն, տու քմական մին պիծի պահե, վեր վեր լըղնե: Կերած-խմած մարդ ա լի, հինչքան շինի քյոխու տղտ յտ:

Ցոր ըն օնում, քյուում: Ծենին դրտղեն ա ինում Քյումին աղեն ղարադամը: Տանում ըն էն գեռ հուրթին կլինենը կենում, Քալալը ստոր փոխած, քյումին տղեն սասավը ղարագամեն հուրթին ի վեր կանչում ա.— Այանե:

Այան խոսում լի:

— Այանե:

Այտն կղնված տսում ա.— Քու այուն էլ, քըգ էլ, կապը կարտծ տնկտուր, հիշտղտ եկալ ըս, ետ տեռ, քյոնի ընգեղել:

— Այտնե, — ասում ա,— կըղնիմ էս հուրթն ը վեր, արունս քեղ լրա վեր ածիմ:

— Արունտ էլ,— ասում տ,— էն մինն էլ. վեր ըս ըղնում, վեր ընգեղել, վեր տի բեյնամուս ըս, ստակել րիդիմ:

Քալալը, լհա, արան ա ինում մաթալ. մեշուկեն ոեխը պենում ա՝ շոռ՝ մի, տիյերան նհետ քյումին տղեն զամդաքը վեր քյում: Վեր գրըխկում ա արվեր, գե, հինչքան ինի վուլ մտր ա լի, ծվոցը, ծկլթոցը նիհ ա ըղնում: Ծինտցեք լոխ հվաքում ըն, պա՛ հի՞նչ ա, հինչ լի, թա ասում ըն՝ քյումին տղան քյեցալ ա:— Արա, թո՞րն տ քյեցալ: Թա՛ քյեցալ ա էն արշարհը:

Հտ՞տ: Քալալը կյտմ ա տոն, քոտկենն էլ ա կյամ:

— Քոակեն,— ասում ա,— էա մարգը պտտվով մարգ տր, ժողովուրգն էլ ասում ա՝ տուք մոտ ըք ուրուր, ես հվտտում ըմմ, բայց աի պեն ասում ըն: Ախեր, վեր տու քյոնիս վուլ ըարա թղումեն, ծափ կաան, ծիծաղեն, քղանա նըեստա կենան: Հի՞նչ անինք:

Քոակենը տեռնում ա գյովդանն ընկած մուկուն՝ արդտողում ա, հի՞նչ անե:

Քալալն ասում ա.— Քոակեն, պեր էրկու միսի մորթե: Միսրին մունք կօտինքյ, փուլիգյնեն տողդրու ծույներետ կապե, վեր քյնիս, վեր լյաց ինիս, համ՝ քյումին աղա վա՛յ-հարայ տաս, համ՝ ծույներետ թիսիս, ժողովուրգը ըսլտկան ա. «Ավաք-յե՛ր, էս խեղն կնեղյը պենտ գյուման լի»: Գյուրագուու էլ մննական տ, տու ըղտվական ըս, պրծնիս:

Ասում ա.— Դե հո՞ր ա, Քալալ, խելքետ մա-ապալ:

Պիրում ա էրկու միսրի մորթում, փուլիգյնեն տողդրում, ծույներետ կապում: Միսրեքյն էլ՝ շինում, ստըքում, թողում, ինքը քյոնում քյումին տղեն թղումեն:

Հլա մինչեւ հանդը-հունդը, վեր քյուխեն տղա ա տսում, ծույներես ծըլիցնում, ըստղաս-ընդղաս ասում ըն. արա, խեղճ կնեղյ, կօղը հաղար պին ըն ասալ, հանց ա սոտ ինի՞, Մին էրկուսն ել ասում ըն. շիդյարով ա լյաց ինում, զորթ աւ

Քաշալն էլ կամ ա, ձևացնում ա, վեր էրուշ ա, հանցու ճինանչին վուշ չամ տես-տեն քյնում ա, համ էլ ասում.—Հու՞ ըրավ, հու՞ լրավ պարկ-ըփոխան կնեղյն ըրավ, Հու՞ ըրավ, հու՞ լրավ, պըրկըփոխան կնեղյն ըրավ.

Ըստեղ մին դեր ա ինում: Էս դերը մորուքը տմրամրայնելավ ասում ա.—Քյու մաստղ, մին պերեր էտ կնանունցը փոխննեն ակը ավեք, անսնանք՝ հուր փոխանուն կա պարկ: Չինի թա՝ սաեղ տի հանցագործ ինի:

Պիրում ըն ակը տամ, տեսնում՝ քողկնդանը ծույներեն էրկու պարկ կապած: Պա ասել ըս, ասում ըն, էն կնեղյն ա ըրալ, էս ա իլալ, ժողովուրդը ծափ ա ամ, ծիծաղում, կօղի մոլատեղ ինի, է՛, թա՝ էս ա, վեր կատ Տրա մահվան մադղան էտ ա: Փոնում ըն քողկնդանը, ճյորեն հաքյվան կապում, դնդրաղեն դըխկըցնում, զուռնան ածում, ըստեղ-ընդեղ քաշ-քաշ անում, պտրո-պատու անում, սպանում: Վերջը պիրում պտունեն հվաքում, տինում քյուիսն տղեն նաժումը, ասում.—Տարեք թղեցեր, նտհանց հետեւ ընդեղ շատ լյավ կինի, փափուկ վեղ, ուրտնք էլ ուրուր կշաե, թող հինչ անում ըն, անին:

Քաշալն էլ շոռ ա կյամ էս մոահ շընթկներան մին հալալ ծծկեր օղլուզտղ պիրում, դայուն նհետը փսակում, ասում.—Դայի, զադրիս կղիդա՞ս, հացդ ցորեն շինեցե, մհենդ, սօրա ետ կեր-իմե, քեփ ըրա, ես քյեցե:

35. ՔԾԶԱԼԻՒ ՔՅԼԾԳՆԵՐԱՆ

Ինում ա, չնում էրկու ախպեր, մեկը՝ քաշալ ա ինում, մեկը՝ ոլ քաշալ:

Դե էս քաշալները տու դյուդում ըս, վեր քյալազիներ ըն ինում, չ՛:

Էս քաշալը ախպորը էրկու կյումաշ ա տամ, թա՝ տանել րիդիս ծախիս, Կարյադին*, Պիրում ա կյումշնեն առուն անում, քշում ա, լի, վեր տանեն Կարյադինոյի ըաղտրումը ծախիս: Ծանապարհնեն մին մտրդ ա տյուս կյամ:—Ա, էս էծին հոլերը հիշտե՞ղ ըս տանում:

— Բոո՛, սահանք կյումշնե ըն, հի՞նչ էծու հոլերը:

— Ըմբո, աշկեա ա տի ուրվում,— ասում ա, — էծու հոլեր ըն տտհտնք: Էտ հո՞վ ա ասալ, թա կյումաշ ա: Քանի՞ տամ: Մինին երեք ուրվի աամ:

Թա.—Պա՞, արա, կյումշներեն մինը իրեք ուրվի կինի՞:

— Ա, կյումաշ վի, է՛, էծու հոլ ա, քու աշկեն ա տի ուրվամ: Քու աշկեն ա տի ուրվամ, հասկանում լըս:

Հոլու տեղ էտ էրկու կյումաշը առնում ա էտ մարդից: Վեց ուրվի ա ասամ, առնում:

Վերջը՝ օախում ա, կյամ տոն, քաշալ ախպերն ասում ա:— Ա, կյումաշնեն հի՞նչ ըս ըրալ:

Թա.— ծարալ ըմ ծախալ Ա՝,— ասում ա, — կյումշնե լըս տրվալ ինձ, է՛, հոլեր ըս տվալ, էրկու հոլ ա իլալ... պա, ճանապարհին տոնող էկու, ասում ա՝ քու աշքետ տանանք կյումշնե ըն ուրվամ, բայց հոլեր ըն: Հոլու տեղ ըմ ծախալ:

Արապերս ասում ա, «Հնդեղեք մին քյտլադյլի մարդ կա, ստ կինիս: Թա.— Հու՞նց մարդ ա, բոյը-բուսաթը, հադուատը:

Վեր տսում ա, տեսնում ա, վեր ուրան ասած մարդն աւ Թա.— Լյավ տ ըրալ, վեշինչ լյավ ա ըրալ, վեր հոլու տեղ եր ա կալալ:

Աշունք տ ինում, վարը-պենը սկսած: Էս քաշալս քյուում ա էրկու ըլրաստրակ ինքյ օնում, մինը պիրում վեսները կպոտում, տանը վեր քցում, սինն էլ յոր օնում քյուում վար: Քյուում ա վար, դյուգու՞մ ըս հիշտեղ, համին էտ կյումշնեն հոլերու տեղ ինք օնող մարդու սամթն ա վար քյուում: Քյուում ա, սկսում վար անելը, Մին վտրում էս հրեվանը կյամ ա... ՚րե ադաթ ա իլտ՝ վար տնող հրիվընեն ուրուր դիրավ ըն ընցնում... կյամ ա, տեսնում՝ մին ըլրաստրակ տեղ կապած, թա.— պոռ, էս հի՞նչ ըլրաստրակ աւ:

Թա.— Սա աիլեփոնու նման մին պեն ա, լի,— ասում ա,— վեր սերտս մին պեն օղի, ըսլական ըմ ըլրաստրակեն, քյննակտն ա, մեր տանն տսեւ սերմը խրոյյանա, դրկլական ըմ՝ դույուղ անե, սերմը պրին... կամ, թա լէ՝ մին զոնտղ տոն անելի ինիմ, ուրան առաջ դարկում ըմ տոն, ասե՝ դոնալ ա կյական, հանցու պադրաստովթյուն քաշին մեր աանը... Հատեքյ, աի ա էտ ըլրաստրակը:

— Ա, տի պեն վի ինի, տի...

Թա.— Պա՞ հու՞նց վի ինի, — ասում ա:

Թա.— Դե վեր էտ ըլրաստրակը աի պեները դյիդա, ես էտ ըլրաստրտկը կառնիմ:

Թա.— Կարել լըս տրա կյինը տտս տու, թընդյանոց ա, — ասում ա:

Թա.— Դե եք մարք կյանք, եթե քու ասած պեները քյնի տանն տսե... քյնի տանն ասե էա ըլրաստրակը, ես տրտս հաղար մանեթ փող կտտմ:

— Թա, դե... հինչ ըմ ասում:

Էտ ըլրաստրակեն անունն էլ Պատիկ ա ինում, ընդուզան փոնում, մաշին ասում:— Պատիկ, կը-

* Բնակավայր Աղբ. ՍՍՀ-ում, սահմանակից լղիՄ (Ե. Կ.).

քյնիս տանը ասիս՝ կերակուր պատրաստին մես առնին, զոնաղ ա կյական:

Թյուլ անում... վեր, իրրե առն ա քյննական, ըլրասարակ ա, լի, քոլն ի վեր նի մտավ, առավավ, քյնից, կորավ:

Էտ մարդը էս Քշալեն եխան թյուկ չի անում, նհետը եր ա կենում, քյնում տեսնում՝ ըլրասարակը տանը կապած. «Պա՛հ, պա՛հ, հինչ դյուղ ա ասալ, է՛, ըլրասարակը եկալ ա, էս ա տանը կապած, հինչ վեր ասալ ա, ամեն հինչ պադրասա, պա՛հ, պա՛հ», մտածում ա իտի:

Վերջը, օտում ըն, խմում, թա.—Դե, ախպեր, մին աս՝ էտ ըլրասարակես կյինը:

Թա.—Դե, երկուհաղաբ մանեթ փող որիդիս ասլ:

Երկուհաղաբ մանեթ փող ա հմբարում էս մարդը, ըլրասարակը յոր օնում, քյնում: Կնեղյն ասում ա.— էտ հի՞նչ ըլրաստրտկ ա, էտ հի՞նչ պեն ա:

Թա.—Պա, էս թնդյանոց ըլրասարակ ա, — ասում ա,— իմաստուն պեն ա, — ասում ա, — ինձ հետ շոռ ըմ ըծլտկտն, — ասում ա, — հանցու վեր խարար-պեն ա պիրալական քըզ հեաե...

Թա.—Տի պեն չի ինիլ, խափված կինիս, այ մարդ, առ շատ ըս մարդ խափալ, հալրաթ քըզ էլ ըն խափալ...

Թա.—Զէ,— ասում ա, — ըրխեյին կաց, փորձալ ըմ, — ասում ա, — աեսալ:

Վերջը, էքյսն էլ ինքն ա ըլրտստրտկը յոր օնում, քյնում հանդը, տանում, ընդեաանս, ուրույյունը էլ լհա ինդի ընդումեն են ըզնում, թա.—Պստիկ, կքյնիս, տանն ասիս՝ միկա եաե ըմ կյական, հրնդերումք էլ ըմ պիրիլական, կերակուր պադրասաե, — ասում ա, պրծնում, ըլրասարակը թյուլ անում:

Էն էլ՝ առավավ, լի, մի քոլու քամակ նի մաավ, քյնից:

Ցըտացած էլ քյնում ա էս մարդը՝ հնդերունքը նհետը, տեսնում ճիրաքյ-պեն հանդցրած տանը, ուրանք էլ քոն իլած: Ծեն տամ կնդանը.—Ալ կնեղյ, հե՛յ, այ կնեղյ:

«Հե՛յ ա անում:

— Ախճի, պա զոնաղ էլ ըմ պերալ, Պստիկը եկա՞լ չի:

— Պստիկին հարն էլ, քու հարն էլ, Պստիկը վե՞րն ա, պստիկ-դատ չկա:

— Պահ, ինձ քյալագի եկու՞ շան վերթի՞ն, պա էս հու՞նց անինքյ... որալի շիլ ա ընդալ, քյացալ էն ծիողեն առ՞նը:

Եր ա կենում, քյնում: Նյամ, ընդեաանս.—Արա, պա Պստիկին թյուկ ըմ ըրալ, առն չի հսալ, րալի եկած ինի սաեղ:

— Արա, պա, քեղ ըմ տվալ, աարալ ըս խտմ-իսամ պեց թողա՞լ: էլ տոնը, հղեն-պենը սովլցրալ չըս. պա աի մին օրում թյուկ կանի՞ն: Պա, պա, պա, մղափուն, ժախած չի րիդի, աեսնաս հիշտեղ ա պոասում, հիշտեղ ա վեր ընդած, պա՛հ, պտ՛հ, պա՛հ, պա աի պենը կանի՞ն, յաղու՞ղ տի պենը տարեր, րադա առավեր, պա՛, պա՛, պա՛:

Թա.—Ախպեր, դե քեղ աանշիլ մի, կորալ ա՝ կորալ ա, լի, փողը ես ըմ առավտլ, տու՝ հի՞նչ անիս, ես՝ հի՞նչ անիմ, քյեցալ ա, քյեցալ ա. դե վեր աի ըխպրացալ ընք, էս մին հեան էլ առ եկ իմ տոնս զոնաղ, — ասում ա, քյնում:

Եր ա կենում մին օր քյնում աահանց տոնը զոնադ, Քալալը քյնում ա էտ ըլրտստրտկ ատոնողին տոնը: Լհա, ինդի, մթեն ա ինում վեր քյնում ա համում: Էշը նստում ա, քյնում զոնաղ. Էշը օղում ա կապե հյաթումը, էս զոնաղ կտնլոդն ասում ա.—Ա ա, եկ տոնը, խոխեքը էշը կկապին, ապուռ էլ կտան, հինչը կաան՝ ճյուր, տես-տեն, կտար-քին...

— Զէ,— ասում ա, — ամալ չի կյալ, մին աեղ հատկացրու՝ էշս կապիմ, քյիլիդ-դատ առ, վեր կապիմ, աշառը յոր օնիմ:

— Ա, հի՞նչ կա, էտ հինչ պե՞ն ա:

— Ա, էս օրիշ էշ ա, է՛, էն մնցցածեն նման չի:

— Ա, էտ հի՞նչ էշ ա:

Թա.—Թրքեն նհետ վլեսկե ա վեր քցում էշը, կըատում: Վլեսկե ա կըտտում: Հտա:

— Արա աի պեն չի ինի, աի նաղը չի ինի...

— Զէ, վլեսկե կարոդ ա, — ասում ա, — կյարուն եշած Սահ, — ասում ա, — կիցավ կյարի ըմ աամ, մին կյից աամ՝ մին վլեսկե, երկու կյից աամ՝ երկու վլեսկե, իրեքը տամ՝ իրեքը վլեսկե ա աամ:

Թա, դե. «Սա շաա հետաքրքիր պեն ա, էտ հի՞նչ նաղը ա...»:

Քալալը պիրում ա էշին փալանը յոր օնում, մաշկը թիմարում, թա էս ղաթումը հու՞նց ա էր-կու վլեսկե կոխում էշին քամակը, վել մինը տեսնում չի: Հա, եանան, շուվանը-պենը քշես, առոնք քլես, պրծնես, աշառը յոր օնես... Վերջը, քյնում ըն, օտում, խմում քոն ինում, ուրթանան, թա.—Ա, եկ մին քյնինք, աեսնամ զյու՞ղ ըսեցեր, ուրուդ-յունը մին պեն ըսեցեր. աա՛, էն ըմ նիդյարան:

Քյնում, տեսնում՝ կյումումը, կըտտեն նհետ երկու ոսկի վեր ընդած: Երկու կյից էլ կյարի տու-ված ա ինում:

— Պաա՛հ, արա էտ հի՞նչ նաղը ա, էտ հի՞նչ պեն ա...

— Պա աի յա, է՛, պա աի ա: Տի ապրանք օնիմ, է՛, — ասում ա:

Թա.—Դե, էն ըլրսարական խեր շսաացե, պեր, լհա, էտ էշտ ինձ տու

Թա.—Ես Հունց քեղ տաս՝ էշս, քո տոնը շինվի, վրեսկե կտրող ապրանքս քեղ ամ, հինչ անիմ նանա ետր.

Թա.—Դե, էն ըլրսարակումը վեր վնաս ըմ ըրալ, հանց անիմ լհա մին բարաթ օքուտ կյա, լի, ախրը.

Թա.—Զէ, սրա կյինը կարալ լըս աաս, շատ աթնդյանց, փող ա կտրող լի, — ասում ա! — Առու, օգում ըս մին սուակա կյարի առ, էլ լհա քյնի հվաքե, բայց, դե...!

Հինչւ վերե ա, պիրում ա, էտ էշը հենգյիհազար մնեթավ տամ էա մարգին:

Թա.—Դե, գյուգում ըս հինչ կա, տա շատ սեկրետի պեն ա, էշը կյուման այուս չօնիս. հանց կանիս, վեր հնգեղ-հրեվան, պեն դիդան վուչ. Դյիդան վուչ, վեր էշը վրեսկե ա թրբում, կկյան, կյուղանան, պենդ պահե: Համ էլ՝ առ շարթեկան մին անգամ կորմը առ, կյիրակին, վեր մարգը-պենը քաշվում ըն՝ աես-տեն քյնում, էն օրը քյնի էշին կոշար, վրեսկեն հվաքե, ծիլի-ճելի քյնիս վեշ, խոխա պեն թողիս վուչ քյնի, Շա, կնգանա էլ չի թողիս քյնի: Որովհեան էա գաղտնիքը, — ասում ա, — կարող ըն ժողովուրգը գյիգան,

Թա, գե. — Լյավ:

Էս մինը ծախում ա, էն մինը ինքյ օնում, պի էլ պիժենվում, քյնում ըն. մինը՝ ինդի, մինը՝ ըստի:

Պիրում ա մին շերտվա ճյուրը-պենը տինում, կյարուն զոռ անում. վեր շատ կյարի տա, շատ վրեսկե ինի: Հա՛, կյարան օտում ա էշը, ճիրան խմում, ընդեաանս, կյամ՝ վընները տուանը տեմ անում, ծենը կտրում, ստակում: Ախեր մին շերեթ կենում ա:

Կյամ ա մին կումի ճաք ա ինում, էա ճաքավը լրշիս, ախեր էշին վեննանը նալ կա, նալը փլըստրաա ա աամ, վեր վենները տեմ ա ըրալ առանը, ճաքավն էլ լլուսն ա նի մնում, նալը փլստրաա ա աամ:

Թա.—Պահ՛, կյումը լցրալ ա վրեսկավ, էն ա փլստրաա ա աամ, — քյնում ա. — ա, կնեգյ, դե մին աշտուր պեր:

Աշաաը պիրում, տեսնում՝ պո՛, առոնը պենվում չի, էշը եկալ ա վընները տեմ ըրալ, տսզալ, ծենը կաըրալ ա: Մին թարավ պենում, ընգեաանս, վերը, տեսնում էշը սաակած: Ախեր հենգյ հազար ժանեթ փող ա եր կալալ էշին հմար: Կղնվում ա, Նա՛ եր ըմ կըննական, քյնիմ, էտ շան ազեն սպանիմ:

Քաշալը գյուգում ա, վեր կյլական ա, Հանց ասալ ա, վեր էշը սաակե: Վերջը, լի, կյարուն հե-

տան ճյուրը իմե, ստկլական ա, լի: Եը ա կենում քինում, ընգեաանս. — Ախպեր, ախպեր, — տահանք էլ սխպըրտեռած ըն ինում, կօզի կղնված, — ախպեր, խե՞ը ա:

Թա.—Աա, խերը հիշտե՞ղ ա, էշը սաակալ ա:

— Աա, աի պեն չի ինիլ, խոխա յըս, ըախա յըս, — ստեղ կղնվում ա, կնգանը թխում, կնեգյը վեր ա ըղնում, մեռնում, մահանում:

Կնեգյը սահանում ա:

— Աա, պահ՛, եկած չի րիդի, իմ գարգասը էլ թխեցեր, կնեգյգ մահացավ, պա աի պեն կինի, տի նալլ կինի:

Թա.—Դե, մեղավոր ա, էշին սուվումը խոսալ ա, ես գյուգում ըմ, նա համար թխեցե: Ասալ ա, պա, ինգի, վընում մահացավ, պա աի պեն կինի, արա համար էլ էշը սաակալ ա:

Թա.—Զէ, լյավ չիլավ:

Թա.—Վելինչ, էլ լհա սղըցնական ըմ:

Ընգեղ մին թառ ա ինում: Էտ թառը յոը ա օնում, սաի ճընգ-ճընգ անում... դե նախօրոք կնգանը սվըցրած ա ինում՝ վեր ճընգ-ճընգ անիմ, կումի-կումի կղուրթնանաս ճընգ-ճընգ ա անում, զուրթնանում ա, թա. — Տեսեր, սղըցրե մեռած տեղան, էս էլ սաի պեն ա:

Թա.—Ասում եմ. ախպեր, էն ըլրսարական էշան խեր շաեսե, պեր էտ թառա ինձ տու

Թա.—Աա, Հունց քեղ տամ, հիշտեղ մեռնող ա ինում, քյնում ըմ, — ասում ա, — սղըցնում, ընդեղանս, հինչքան էլ փող օզիս, տամ ըն: Հունց քեղ աամ:

Թա.—Դե, րեգում ա ինձ աաս, վեր էն էրկունն վնասը տանա այուս օնիմ:

Փարին բյնում ա, նատ ա բյնում, խրեգ ա բյնում, եշում ա տեսնում մի վխճարու իլխս ա պրծալ, սուրու ա պրծալ, վեր սաել շրմ: Թա. աշի՞նչ կինի, բյնիմ էն չուրտնեն ախալեր ասիմ, թա ինքյն էլ քուր ասից, դյիղա վեր մտքումը խայինություն չկա, զարզս կպատմիմ, պեն կանիմ, նա ինձ տեղաց կհասցնե, կամ էլ մին հացու կտորա, զատա կտա, կոտիմ, լի, լյավ կինի:

Էս չորանը թութագյը ոխեն տիրած, ծլցնելավ բյնում ար: Մուտանում ա, թա.— Ախալեր, չորան ախալեր, եթե կարելի յա, ես սոված ըմ, ընդած էս-էս անտառները, էս-էս պեները. մին կտոր հաց տա՞ս, վերջը, հետո,— ասում ա, — դարդս քեղ կպատմիմ:

Թա ասում ա.— Պա՞հ, պա՞հ, պա՞հ, շատ լյավ կինի, հինչ կինի, տու խաղայկա, ես՝ խաղային, էս վխճներան կոտինք, տեսս-տեն...

Սա՝ Փարին, ետ տ տեսնում, թա.— Ախալ էտպես չի, ախալեր, ես Հաջի-Սայադին ախճիդյն

ըմ, Ալի-Վալի խանեն կնեղյն ըմ. Ալի-Վալի խանեն կնեղյն ըմ:

Է՞ա վեր Հաջի Սայադեն անումը տամ ա, էս շորանը սրան քուր ա ասում, նրա համար, վեր էս շորանը Հաջի Սայադեն շորանն ա ինում:

Պիրում ա մին վեխճար մորթում, Փարին ասում ա.— Դե վեր էտ վեխճարը մորթում ըս, տրա թափանը. հանց շինի, վեր կլինես քաշիմ, քաշտլ ուրվամ:

Վերջը. մորթում ա, թափանն էլ պադրաստում ա, օտում ըն, խմում, վեր կշտանում ա, ասում ա.— Գյուգում ըս հի՞նչ կա, ախպեր, իմ շորերս հնական ըմ բոխճալամիշ անիմ, քեղ տտմ, տուվ էլ ինձ հմար մըն շուրանու-մուրանու հադուստ պեր, կյենամ, քյինիմ; Հիրը վեր ես խարար անիմ քեզ, առւ էտ բոխճան էլ կպիրիս, եղած մհակտ էլ կպիրիս, իմ դուշմնեն լուս քեզ ըսլական ըմ, տու ինձ ըխպրոթոն պիտի տնիս, ես իրեք դուշման օնիմ:

Էս շորանը լսում ա ու հանապարհ ցուց տամ, թա.— Դե հսե, ստղավ կըյնիս, թուշին առացտ կյական ա քու շոր պադրաստած մոստը, Վեր քեցեր, հսեր մոստը, ճրննշական ըս, թուշին կը-քյնաս:

Թա.— Կյամ:

Վեր կյամ ա հսնում մոստը, եղում ա տեսնում՝ ուրտնց հրլվաններան էրկու թաշիր ճյորինեն պեռնած, քյնում ըն առետուր: Տահանք էլ խեղան շօնին, Փարին մինչկ սահտնց կյալը մին նտմակ տ կյուում: «Աստուծ սիրողը, կնվերտեն յրան ա կյիրում,— եթե էս նամակը տանե տեղաց հսցնե, ըստուժանտ հինչ սերտը օգում ա, էն էլ կաա»: Էս նամակը տինում ա մըն քարու յրա, ինքը կյուղը կենում:

Էս թոշիրնեն կյամ ըն, նհանցա մինը տեսնում ա թոխտը, քյնում ա յոր օնում, կարդում, թա.— Եթե ես էսօր մի կապեկի առեառը շանիմ, էս նամակը կարիմ տանիմ տեղաց անիմ, ինձ բոլ ա: Թաման աստված,— ասում տ, — սա հինչ արա՞ղ ար:

Ընկերն ասում ա:— Ինձ տո, ես տանիմ:

Ասում ա:— Էս ա իմ ծերքես, լի, կտանիմ:

Մհենդի Փարուն անտ խոսինք: Աս հիա մհակը քաշ տալավ, վիճարեն մորթեն կլինեն քաշած, հսնում ա տեղ, Հաջը Սայադին տոնը, այսինքը հերանց տոնը:

Թա.— Հաջի Սայադ, ես քու ընումետ խաթրու ըմ եկալ, բնձ վեշ հար օնիմ, վեշ մար օնիմ, վեշ ազդական օնիմ, վեշ մըն պեն շօնիմ, ինձ հցըփոր պահե հյաթումա: Հայաթա վեսկու նման կպահիմ, թաքի ինձ հանդ շդարկիս:

Ստեղ Թափտըղը տսում ա:— Զի-լէ մին, լհա

սեր հցըփորը խրեղյ ա, տու էլ եկ: Մինն էլ պի-աի քեզ հետե հաց շինի:

Ստեղ Մահմադն ասում ա.— Ա, սուս ըրա, մեր հացերը լհա ստի մարդ պիտի օտե, ստի եթիմ խոխեյը: Հի՞նչ ա, հի՞նչ ա իլա:

Ընդունում ա: Վեր ընդունում ա, սա շնորհա-կալ ա ինում պիցը-պիցը խուսելավ: Մարը բլկո-նան սրա սասը սկանում ա, թա. «Սրա սասը հունց վեր մեր Փարուն սասը ինիս:

Խաբարը տանք Ալի-Վալի խանեն: Սա Կարա-վազիրին տսում ա.— Քյնի էրկու դերվիշու լրաս առ, քյնական ընք բովք անինք:

Սա պատառ տեղեր ա տուրուր կյամ:

Ալի-Վալի խանը թա.— Հը, խելունք կաց. յա քթենալ բիդինք, յա կտորվել բիդինք:

Դերվիշը լրասները կյենում ըն, մմենքը մին սազ յոր օնում, տյուս կյամ աշխարհք:

Էս շենը, էն շենը, էս սարը, էն սարը, էս քա-դաքը, էն քադաքը... Ղուշերեն նհետ, սրերեն նը-հետ... «Փարուն տեսնող ինիս, տես ինի, տես ինի... տյուս ըն կյամ մին երդիր, որտեղ խանե-րը, բեզերը, նազիրները, վազիրները, լոխ վնանեք ըն, Ատեղ մին տեղ դայտն ըն անում: Ըտղետ խան-ախճիդյն ասում ա: «Արանք դերվիշ լըն, սհանցա մինը՝ Ալի-Վալի խտնն ա, մինն էլ՝ Կա-րա-վազիրը, Փարուն ըն շոռ. կյամ: Մոխրվե Փտ-րին, մղանտ լյավ ախճիդյ աս:

Էտ վարումը, վեր ես ախճիդյը Ալի-Վալի խա-նեն անունը տամ ա, էն առետրականներն էլ ըն ինում ըտեղ դինջնայիս, եղում ըն թխտեն, տես-նում, համան թխտում կյիրած անունն ա:

— Արա, պա էս հիշաե՞ղ քթենանք, Ալի-Վա-լի խանեն:

Էտ դովումն էլ Ալի-Վալի խանը եր ա կենում, թա.— Կարա-վազիր, առւ մին շուրուս քաշի, ես ստեղեք մին պատառ շոռ տամ, կյամ:

Էտ վախտը էս առետուրականներե հետան քնում ա, թա.— Թաջիր, աշխարհք տեսած ըք, շոռ ըք կյամ, պեն ըք անում, հի՞նչ կա ըշխար-հում:

Թա.— Վեցինչ:

Թա.— Նոր ծզանա մինը Ալի-Վալի խանեն անունը տվավ, հի՞նչ տեղ կարելի յա ճարել: Ալի-Վալի խանը ես ըմ:

Թա.— Գյու՞ղ:

Թա.— Աստված վկա, դյուղ:

Տյուս տ օնում նամակը, տամ Ալի-Վալի խա-նեն: Սա կարդում ա:

— Սըա համար հի՞նչ տտմ ծեղ:

— Պեն լընք օդում, շատ շնորհակալ ընք:

Դաստի մին նամակ ա կյիրում, տամ ուրանց, թա.—Կընիր, իմ խաղնան անենքիդ ճոխտում սկզնը վեսկե կտան, ևր կալո քյեցեք նամտէին խաթրու:

Թա.—Շատ շնորհակալ ընք, թաքի տված ինիմ, բաքի նամակը տեղ հըսցրած ինիմ:

Նամակը ալնում ա ծոցումը, կյամ, թա եր կննան քյնին, էս կին խանեն նաղիր-վագիրնեն կանչում ըն, թա. ռեկեք մին-մին սապան չայ խմեցեք, ևտան քյեցեքու Դե չի կարելի վեր բյնին փուլ, խան ա, Շու դարափաթ չո՞ւ:

Թյում ըն ընդեղ, չայը-պենը խմում ըն, էս խան-կնեղը ասում ա.—Հու՞վ ա դյուդում ըմ, առուք Փարին հինչ տեղ աւ ես դյուդում ըմ, առուք Փարում ըք շոռ կյաս, եկեք ամեն մինտ մկանա մինը ևր կալիր, ստեղ խանություն, ռադյություն ըրեք:

Կարա-վագիրը Ալի-Վալի խանեն թաքուն ասում ա.—Ալի-Վալի խան, դյուդ ա ասում, եկ ամենքս մինր յոր օնինք, ստեղ մնանք, բյնինք փուլ մեր երգիրը:

Դե խանեն խոսր կոարել կինի:

Ասում ա.—Լճա մին էրկու տեղ կա, նի կյանք, էնտեղ կինի՝ լճա կկյանք, ինիլ չի՝ լճա կկյանք, Վեր կկյանք, հիշտ աւ:

Էս կնեղի-խանը պրիկադ ա տամ, թա.—Ամենը օխոր ճղաա թխեք, թող քյինին:

Թխում ըն, բյնում ըն:

Դի Ազի-Վալի խանը դյուզում ա նմակն մաշինը Կյիրած ա, վեր կկյաս քյորփուն կոշտը, տես-աեն...

Վեր բյնում ա քյորփին քթենում, ըրխընանում տ: Աստ էլ՝ բյնում, բյահրիզը քթենում, ախ-պուրը նշում ա աեսնում մին խրեղ աենը պլուներ, տներ շինած, Ստեղ նստում ա, թա. «Մին տարե, լրկու տարե, տասր տարե, մինչկ դյանքն վերջը ստեղ սպաւական րմ: Նյուժն լի էսրան ժամանակ Փարին մին զանում կյլական չի ստեղ, վեր տեսնամու:

Համին էս վարումը Հաջի Աայաղը քյովշանան կյամ ա, թա.—Քաշալ, քաշալ, բյնի՝ մին ցորու ճյուր պեր, մին խրեղի խմինք:

Սապինջը յոր ա օնում, թա բյնի ճյուր պի-րի, Թյում ա աեսնում, վեր Ալի-Վալի խանն ու Կարա-վալիրը ըստեղ նստած: Բայց ուրան ճնանչում ըն, քանե վեր լրաթը փոխած աւ լճա ուր-խրալան նհետ սապինջը վեր սախ յա անում, դյուդում չի՝ ճյուր նի տեռավ մաշը, թա՝ նի շտեռավ, Պիրում ա տամ Հաջի Աայաղն, Սա կլինեն ա քաշում, աեսնում ճյուր չեա մաշին, Յոր ա օնում քշալին կլինավը աամ. սա վա՛յ-վա՛յ յը քը-ցում ա, կլինան փոնում, լլաց խոսւմ: Հաջի Աա-

յաղեն կնեգլը ասում ա. «Ախր էս Քշալեն սասը հանց ա մեր Փարում սասը ինիս:

Սառնչը յոր ա օնում, լցկումած քյնում: Քը-նում ա ճյուրը, առե սերուն լցնում, պրծնում, թա.—Դերվիշներ, քշերը-զատը հիշտե՞ղ ըք քյն-նական, ծեր մաղիլը հիշտե՞ղ աւ:

Թա.—Մեր մայզիլը ստեղ ա: Մունք քշերց-ցրեկ ստեղ պիտի կենանք, էս ախպրին կշտեն, մւշե մեր կորուստը սաեղ քթենանք:

Թե.—Դե լլավ:

Կյամ ա: Կյամ ա, ճյուրը տամ ա Հաջի Աայաղեն, իմում ա ցորտ-ցորտ ճյուրը, վեր դնօցնում ա, թա՝ շաա՛յ-փաա՛յ:

Էտ վարումն էլ Մահմադն էլ, Թափտըն էլ լ:ա տեղ ըն ինում, իրար կշտե վետը: Հաջի Աայաղը վեր ցորտ-ցորտ ճիրան դինշանում ա, Քաշալը մեղբն ա կյամ, հրցնում ա.—Կլինտ ցավ տվա՞վ:

Թա ասում ա.—Պա հի՞նչ բրավ, ցավ տվավ:

Թա.—Վեշինչ:

Թա.—Վեշինչ-վեշինչ, բայց քրգանա մին պեն րմ սէում խնդրիմ:

Թա.—Պա հի՞նչ կինի, ասի:

Թա.—Հինչրան վախտ ա ես քեղ ծառայիյիս, վել մի վատ պեն շըմ բալ, բայց շատ խնդրում րմ էս ուրուզյուս տանա իրավունքը ինձ տաս:

Թափտըն ասում ա.—Զէ-չէ մին. աեսնաս իրավունքը հի՞նչ պիփաի տա, մհենջ էլ մին սպիշ-կա թափ աա, կրակավ լոխ նի կըցնե:

Մահմադն ասում ա.—Ա, սղասե, տեսնանք հի՞նչ ա օգում, հի՞նչ ըս տական-կիխան խոսում:

Հաջի Սայադը թա.—Հի՞նչ ըս ըննական, վեր իրավունքը տամ:

Թա.—Մին քանեն մարդու ծեն ըմ ալական, զոնաղ անիմ ստեղ, Տանա ետը, էքյուց ուռութանարու հացու ինձ հալալ կանիս, անց կենամ բյնիմ:

Թա.—Պա հինչլավը ըս զոնադ ըննական, հի՞նչ ըս ըննական:

Թա.—Ես կանիմ, էս մինը քու դործը չի:

Թա.—Դե լլավ, բրա տեսնանք:

Թա.—Դե ինձանա կյման խոսող չինի, լոխ ևս ըննական, ես եմ կանչելու:

Պիրում ա չուրանեն յրա մարդ դարկում. «Չուրան, կապած քոխճան էլ, մհակտ էլ, մհակտ էլ եղե, մին օխտը-օթ վեխճար էլ եր կալ, եկս:

Չորանս եր ա կենում, հինչ վեր Փարին ասալ ա՝ լոխ տեղին կադարում: Պիրում ա՝ վեխճարները մրթուասում, մաշկում, իփում-թափում, սարքում...

Փարին, հինչ Փարին, տի քաշալ կինի, արածը Քշալու պե՞ն ա: Ամեն ինչը պազրաստում, հրա-վեր դարկում, բոլոր պարիկամներին՝ հինչքան վեր

օնին։ Սահանք էլ նստուծ դալումը. ա՛, վերը կյամ
ա՛ պարիկամ, վերը կյամ ա՛ պարիկամ։

— Այ մարդ, — ասում ա, — էս Քաշալը հրանչ ա
գյուգում, թա սահանք մեր պարիկամներն ըն։

Կանշում ա՝ քյաթիուգեքյ-մաթիուգեքյ, տըո-
մարեն էլ՝ մամաշային. տատմերն էլ ա կյում, էլ
գեր-մեր, լոխճին հվագում ա, է՛, լոխճին։

Կանշում ըն, թա. — Քաշալ, պտ հացեն-պենեն
վաղան չի, ախեր ժամանակն անց կացավ։

Թա. — Ցավաշ իլիք, էրկու մարդ կա ճիրին,
նահանց էլ պիրինք, ետնան։

Չորանը զարկում ա, թա. — Թյնի, էն ա ճիրին
էրկու գերվիշ կա նսաած, նահանց եր կալ, պեր
դոնալ։

Թյնում ա շորանը, թա. — Դե ծեղ կանշում ըն
Հաջի Սայագեն աանան։

Սահանք կարգեն ուրիսանում ըն։

Ալի-Վալին ասում ա. — Երեկ Փարին ստեղ կինի,
կյամ ա, աշկեն մինը արուն կարած շոռ ա
կյամ։ Ըիսէկերք, կնանիք կան, լիքը, Փարին ըր-
վամ չի։

Մնամ ա տիուր, Սկսում ըն օաել-խմել, եր-
գել, խաղ ըն ասում, պար ըն կյամ։ Հետո վեր
լոխ պրծնում ա, ասում ա. — Մին սուս կցեք,
աեսնանք էս զարիր թաշիրները հինչ կասին։
Դերվիշներ, — ասից, — մին երգ ասեք տեսնանք՝
հինչ կասիր։

Եր ըն կենում, ստղերը յոր օնում, ուրանց երգը
երգում, ռԱլ ժողովուրդ, այ մարդիկ, հունվ ա
Փարին տեսալ, հրանչ ըք սկանում, հինչ ըք տես-
նում...։

Փարին անումը վեր աամ ըն, տատմերը ընգեղ
կղտի-պղտի յա անում, օղում ա թա տյուս կյա,
շորանն ասում ա՝ հը՛ը... Թափտըն էլ ա օղում,
թա տյուս կյա, թա՝ հը՛ը...։

Թա. — Պա խտգայինը ես ըմ։

Թա. — Խաղայինը տու չըս, ես ըմ։

Վերջը վեր տի զլմղալ ա տեսնում, Փարին,
այսինքը՝ Քաշալը ասում ա. — Սուս ըրեք, մհենգ
էլ ես ըմ երդ ըսլական, զլմղալ միք անե։

Սաքիթ անում, տանը ներք ընգյունավ փար-
դա կապում, շորերը տանում կյենում, մաղերը
հունց վեր առաջ ար կախ տամ սարգում, հունցը
իլալ ա՝ ինդի, սաղը ծերքն օնում՝ երդում։ — Այ
ժողովուրդ, լլավ լսեցեք։ Օրերեն մի ժամանակը
Հաջի Սայագը, անգրագեա մարդ, ամեն տարի
մին շենք ար շինում, քյնում հազ, Վերջին տարին
ար։ Տա մին ախճիգյ օնար, անումը Փարին։ Են
տվավ, թա. ռՓարին, դավթարը եր կալ, եկ հինչ
վեր օղում ըմ, կյրոտե, վեր հաջի տեղան կյլա-
կան ընք, ժողովուրդը կյլական ա մեր առաջը,

պիրինք, պարկ աանք, հղե տինինք, Հաջի Սայա-
գը ասից, Փարին կյրոտեց, Հաջի Սայագը ասից,
Փարին կյրոտեց։

Էտ վեր տի երգում ա, մարը, Փարուն մարը,
լիա կուռները խաչած, ըրտուսունքերն ա վեր
տեսնում, սասը այուս չի կյամ։

Քաշալը՝ Փարին, ասում ա. — Ուութանա եր
կացեն, թա հաջ քյնիլու վերջին տարեն ա, Մահ-
մադն էլ ընք մեգ նհետ տննական։ Մահմադն էլ
եր կալին, քյեցեն։ Մնացին տանը Փարին ու
Թափտըն։

Էս հայը, թա. — Սի բալամ, քաշալը էսքանը
հինչտղա յա դիդում։

Սլի-Վալի խանն էլ ընդեղ, թա. — Վեր սկսալ
ա, Փարուն աեղն էլ ա ըսլական։

— Վերջը, — ասում ա Փարին, — երեսուն ինն
օրը վեր թմամից, մտավ քառասունը, ուութանա
քշերավ Փարին եր կացավ, թա՝ Թափտըն, եք ստո-
լը ստուգինք, տեսնանք հինչ ա պակաս։ Ստուդում
ըն, տեսնում, լիմոնն ու փալթախարը պակաս ա։
Թափտըն վաղ տալավ քյնում ա, թա փալթա-
խարն ու լիմոնը րդարան պիրի, ճանապարհեն
տատմարը պտահում ա, Տա՝ թո՞ոն ըս քյնում։
թա՝ ստի, ստի, քուրս ասից... Թա՝ ա, էն քո՞ւ
քուր ա. քու քուր չի, քյնի ծերք քցի, թող Հաջի-
Սայագը կյա, քեղ նրա հետ փսակի, կյամ ա, թա
ծերք քցի, Փարին սապինչը տամ ա կլսավը։ Սա
փլարյանն իլեր դնգիկ յա տամ, կլոխը ճղում։
Սկսում ա Փարին լլաց ինիլը, յալեխը տանում ա,
թա կլոխը կապե, էս վախտը իարար կյամ ա,
թա՝ Հաջի Սայագը կյամ ա, Թափտընը ըոնըթա-
թախ վաղ ա տամ, քյնում ըորշնեն։ ռԱղա, էտ
հինչ ա պտահալ, հինչ ա իլալ, տես-տեն...։
ռէլ հրանչ պիտի պտահե, — Թափտըն ա ասում, —
հինչ առուք քեցալ ըք, էլ թիթիսում զահիլ-չուլ
շկար, լոխ մեր տանը, Փարուն նհեա լրառթոն
ընելիս... ուղեցալ ըմ թա թողիմ վուշ, կովալ ըմ,
թա տյուս անիմ, թիթեցեն թա ինձ սպանին, կլոխս
ճղեցենա։ Հաջի Սայագը ստեղ ասում ա. ռՄահ-
մադ, իմ տոնս հրամալ ա, քյնի Փարուն եր հա-
նե թարքյտ, տար փլան զորումը սպանե, շորերը
ըոնըփալալ ըրա, պեր ինձ նշանց տո, ես նոր
քյնիմ մանիմ էն տոնը։ Մարը լլաց ա ինում,
ասում ա. ռԹուղեցեք քյնիմ, իրեսը աեսնամ, նոր
մորթեցեք։ Թա՝ չէ, Թողում ըըն։ Մահմադը ծին
քշում ա, կյամ, Փարին տյուս ա կյամ, ախպորը
կոլավն ըզնում, պշպշուում ախպորը, թա. ռՀո՞ր
ա մաման, հո՞ր ա պապան, խե՞ եկալ ըըն։ Թա.
ռԱ քուր, կյամ ըն, եր իլ թարքյտ, քյնինք միասին
պիրինք։ Ուրիսացած Փարին լոզ ա տամ, եր ինում
ախպոր թարքյտ։ Սա ծին քշում ա թուշ՝ փլան դո-
րին։ Թա, ռԹարքյաս վեր եկ։ Վեր ա կյամ, թա.

«Էիդի քեզ մորթիմաւ, Խանչալը քաշում ա, Փարին ուրանա բյնում աւ Մահմադը թա. «Աստված, պահմ ծերքավ ես իմ քվեր հունց մորթիմաւ Եղում ա տեսնում՝ մի քանի հոյ-մոլ ա կյամ: Ղաման կոխում ա միսիս փորը, Փարուն շորերը հանում, փլալում էծին ըռնումը, թոզում տկլոր Փարուն ծմակեն զորումը վեր ընդած, կյամ: Պիրում ա շորերը, ըռնուտ շորերը, Հաջի Սայադեն նշանց աամ, Հաջի Սայադը նոր քյնում ա նի մանում ուրան տոնը: Կյամ ըն տոն, Ժողովուրդը հավաքում ըն, օսում խմում, ուրիսանում, ցրվում ուրանց տները, Պա, ախճիգյր՝ Փարին, հի՞ն ա անում: Այ ժողովուրդ, յավ սկացեք, Փարին քշերը աշքերը պեց ա անում, տեսնում՝ մինակ, տկլոր, ծմակեն զորում վեր ընդած: Վիսելան նհետ մհենգի էլ փսվեր ա վեր ըղնում: Հրալին մաշին կյամ ըն ասում, թա. «Փարին, եր կաց զսմաթու եկալ ա. Ալի-Վալի խանը օղում ա փսակվէ, հարմար ախճիդյ չի ճարվում. Իր կաց քյնի, ետ ա ըռաշիա մին քյահրիդ կա, կշտեն էլ մին տիրիվալի մինարի կա, եր կինիս, էտ տիրվներեն մաշին նստիս, սպասիս. Ալի-Վալի խանը կյական ա, քեզ տաներ: Մին քանե հեա համին էս արալը տեսնում ա: Վերջը, եր ա կենում, հունց վեր ըրազում ասում ըն, ինդի էլ անում ա, Փրսող տալավ, տափերը լնդուալավ կյամ ա տեսնում, իսկապես, քյահրիդը՝ կա, լինարին՝ կա, տիրիվալի, իսիլա զալին: Եր ա ինում էս տիրիվներեն մաշին նստում, շողկն էլ ըղնում ա նվեն ճիրին: Շատ ա կենում, խրեդյ ա կենում, մին էլ տեսնում ա՝ Ալի-Վալի խանը ծիի կապան փոնած կյամ ա, եկավ վեր ծին ճյուր տա, ծին վեր շողկը ճիրին մաշին տեսնում ա, խրտնում ա, օղում չի խմեն: Մին էրկու-իրեք անդամ Ալի-Վալի խանը շալլեղավ թխում ա: Փարին ընդդան ասում ա. «Ալի-Վալի խան, ծին մեղավոր չի, մեղք ա, թխել միս: Թա. «Պա տու հունց ըսու: Թա. «Ես մերկ ախճիգյ ըմ, հետով կիմանաս, թա կարում ըս, հագուստ հաւացրու, ինձ տարօւ: Մամենաալինի կյամ ա րոինձա կապում, պիրում: Փարին ասում ա. «Տիր ծառեն տակեն, տու հոաց, ես վեր կյամ, կյենամա, կյենում ա, նստում Ալի-Վալի խանեն թարքին, կյամ, կյամ ա. վեր տոն ա մտնում, վեր լուսին տակեն Ալի-Վալի խանը տեսնում ա Փարուն, խրեդյ ա մնում օշը քյնի: Փարին, հինչ Փարին: «Աշխարհս շոռ ըմ եկալ, ստի պեն աեսալ շըմ, էսքան սիրուն, էսքան դեղեցիկ, էս ֆիդունի, սա աստված ա դրկել ինձ հետեր: Մտեղ տեռնում ըն մարդ-կնեդյ, օտում, խմում, քոն ինում: Ալի-Վալի խանեն աանը ծառայողները, նաղիրվագիրնեն, լոխ աղամարդ ըն ինում: Նրանց մեծն էլ Կարա-վագիրն ա ինում: Կյամ ըն սրան ասում, վեր շայը պաղրաստ ա. Ալի-Վալի խանը եր չի կլ...

նում, Տոռնը վեր պենում ա, նի մտնում, եղում տեսնում Ալի-Վալի խանը մին հուրի-փարի խըտ-տած պակած, լու ստի ծովուլը կախ ա ինում: Ախր Փարին էլ տեսնում ա: «Կարա-վազիրը եր ա կցնում Ալի-Վալուն, վեր շայ խմին, կարում չի հրցնե վու, թա՝ հինչտղա ճարից: Ալի-Վալի խա-նը թա՝ քյնուի լնարուն յրա յար: Մհենդյ ամեն քշեր էս Կարա-վազիրը քյնում ա լնարուն տակեն նստում, լու դուզում ա, թա ընդեղ լիքն ա: Տես-նում ա, վեր կա վու, մտածում ա. «Ալի-Վալի խանեն սպննական ըմ, Փարուն ծերքան ինք օնիմա: Վերջը մի տարե... էրկու տարե... Փարին էրկու երեխա յա պիրում: Էտ էրկու տղա երեխան կյամ ըն մծմանում: Մին օր այուս ըն կյամ քյուշան, ուրկոքան յրա տեռնում մին խուխու թակում: Էտ խոխան լյաց ինիլավ ասում ա, վեր իրա դա-յին հրանեք ա ըննական, ուրանց թուղլական չի կյան հրանեքնեն հոխերը կյամ ըն Փարուն ասում. «Մամա, մեղ դայի լօնի՞նք, հրանեքյ անե, մոնք էլ քյնի՞նքու: Փարին ըտեղ նղոսրտ-վում ա, լյաց ինում, թա. «Պա հունց լօնիք, դա-յի էլ օնիք, տաա էլ օնիք, պապ էլ օնիք, լոխ օնիքու: Էտ վարումը Ալի-Վալի խանը մտնում ա, թա. «Է հի՞ն ա, հի՞ն լ չի, խե լյաց իլած ըստ: Երեխոցը պարտահած պենը պատմում ա, Ալի-Վա-լի խանը ասում ա. «Միդուց սերտու օղա՞լ ա, ըյնաւ: Թա. «Հինչ կինի, շատ լյավ կինիու: Թա. «Դի՞ն սերատ հինչքան օգում ա, փող եր կալ, հինչ պաղարկա օգում ա, եր կալ, տարօւ: Ալի-Վալի խանն ինքն ա քյնում, հինչ լ լյավ-լյավ պեներ կա, ինք օնում, մին իրեք շամաղան դյուզուցնում, պաղրասաում: Մտեղ ամենքը մին սազ ըն յոր օնում: Ալի-Վալի խանն ասում ա. «Էմ սերտու թիւպում ա, վայ թա մունք ուրուր արժան շտես-նանքու: Փարին էլ ասում ա. «Մեր վըսկըոնեն մին տեղ պիտի փիին, մին հնդյստարանում: Կարեա ըն պիրում, Կարա-վազիրին՝ յրան մեծ նշանակում: Ասեղ մնացած վազիրնեն ուրուր թաքուն ասում ըն. «Հանց րիգար Կարա-վազիրը մըդ նհետ կյա-վու, կիխներս մին քյալազի ա պիրիլական»: Ալի-Վալի խանն ասում ա. «Կարա-վազիր, վել հզու-ցու զրաղե վեր կկյաս, վել էլ ճյուրու քշտե վեր կկյաս. Հեռե տեղեր՝ դյուզերում վեր կկյասաւ: Ասում ա՝ լյավի հշում ըն, քյնում: Շատ քեցեն, քիլ քեցեն, վերջը մթնում ա: Էն տեղն ա մթնում, վեր տական տյեր մին հզե կյամ ա քյնում, ստե-ղես հզեն էլ քյնում ա ճիրին յրաւ: Առե էն հաշա-լըզումը Կարա-վազիրը թա՝ քշերս պիտի կենանքու: Մնացած վազիրները թա. «Կարա-վազիր, պա Ալի-Վալի խանը հինչ ասից, էս համ ճիրին քշտեն, համ՝ հղեցը: Թա. «Մեր կործը չի, ծղանա մու-տանող չի ինիօւ: Լոխճին դարկում ա լորս անդ-

յունը դարառվ, ինքը մնամ կարեան քշտեն: Փարուն մարը մեռնե, Փարին քոն կինի՞: Կարավագիրը վեր կարեան շորս անդյունը շտու տ րոլթա տամ, Փարին սրան, թա. «Կարա-վաղիր, մին քիլ հեռ բոլթա թակե, խոխեքը քնած ըն»: Վերջը. հը՛, հը՛, թա. «Փարի, մունք պտի կլիխ-կլիսի տանք»: Թա. «Կարա-վազիր, պտտիվատ ըղնել միս: Թա. «Խոխատ մրթովական ըմ»: Թա. «Խոխան չի, վեր ինձ էլ մորթիս, ամալ չի կլական»: Խոխենան մինը մորթում ա, թա. «Հի՞նչ ըս ասում»: Թա. «Քեղ ասալ ըմ, վեր ինձ էլ մորթիս, ամալ չի կլական, պտտիվատ ըղնել միս: Փոնում ա, խուսեն մինն էլ մորթում: Փարին, թա. «Կարա-վազիր, աշբատ-օնքամ եր ըս ընցալ, քո ասածտ դյուդում ըմ, ինձ մին խնդիրք օնիմ: Իմ կունան մին քյանդիր կապե, ես քյնիմ շոլ, կյամ»: Կարա-Վազիրը Փարու խնդիրքը կաարում ա: Փարին քյնում ա, ծերքեն քյանդիրը ետ անում, մին ծառու կապում, ինքը փախչում: Կարա-վազիրը վեր կլսու ա ըղնում, թա պենը հինչումն ա, հարայ ա տամ. «Հա՞-հա՞րայ, աարեն եկեք» թվանդյ ա արքցնում, հաշիբ-զըյաթը քցում: Լոին հավաքում ըն. «Հի՞նչ ա իլալ»: Թա. «Շան տղեք, մրփոտալ ըք, զղնեն եկեն, խոխոցը մորթեցեն, Փարուն տարեն»:

Քշալեն էս խոսքեն յրան սաղ խտոնվում ըն ուրուր, շորանը մհակը պցրցնում ա թա՝ հը՛...

Քաշալը փրդին քմական թա. «Տղոնեղ նստեցեք, ես հաւ պրծալ ըմ. տան իրավունքը սօր իմն աս:

Փարուն մարն էլ մին կլոխ լաց ա ինում, թա. «Հանց ա Փարուն ծենը ինի»:

«Հա, սաղ օրթումն ըն օտում, վեր քոն լըն իլալ: Մորթած խոխեքը պիրում ըն, աամ Ալի-Վալի խանեն, Ալի-Վալի խանը վեր տեսնում ա, ծիլի-ծիլի ա տամ: Փարին էլ շտն քթա ճյուր խմիլավ տյուա ա կյամ մին վար ընողու կոշա: Նրան ախպեր ա ասում, րայց սրա միտքը խային ա ինում: Փարին մին կտոր հաց ա օտում, ծլկում սաղաս էլ: Պտահում մին շուրանու: Սրան էլ ա սախպեր» ասում, րայց տեսնում ա, վեր սրա մեաքն էլ ա ծոռ ստեղծված, ասում ա, վեր. «Ես Հազի Ատյաղեն ախճիդյն ըմ, Ալի-Վալի խանեն կնեդյը: Ստեղ շորանը թա. «Ես էլ Հազի Ատյաղեն շորանն ըմ, տուվ էլ՝ իմ քուրս»: «Են վեր քու քուրն ըմ, սոված ըմ, ինձ կերակրես: Պիրում ա շորանը մին վեխճար մորթում, Փարին օտում ա, կշտանում, մորթեն էլ կլսեն քաշում, տեռում քաշալ... վեր լավ եշիք, շուրանեն էլ ծեր մաշին կքթենաք: Զորանն էլ մին շուրանու շորեր ա ճառում Փարուն հետե, Փարին նրան ասում ա. «Ես իրեք դյուշման օնիմ, կպատմիմ, րայց տու հաջաթ

ըս կլական, հիրը կանչիմ՝ կկյասու: Ինքը քյնում ա շուրանու շորերում, մին մահակ ծերքեն, քաշալ աեռած հասնում Հազի Սայադեն սարբած քյոր-փուն: Ստեղ մին նամակ ա թողում, յրան էլ կյերում. «Աստծու սիրուն, եթե էս նամակը տաք Ալի-Վալի խանեն, աստծու սիրուն, աստված նըրան ուրան օչած ժառանդը կտա», նամակը թողում ա, ինքը կյամ հսնում Հազի Սայադեն տոնը, «Հազի Սայադ, —ասում ա,— ես քու ընումետ խաթրու ըմ եկալ. ինձ վել հար օնիմ, վել մար օնիմ, վել մին հարազատ լօնիմ, սոված ըմ՝ ընդած ըսահղեք»:

Ստեղ տմանում լըն՝ վել Փարին, վել էլ նրան լսողնեն, Փարդան ետ ա տանում, պեց անում. Փարի տու Փարի, փիրդեն քմական սազը տոշին, աշբերը կիրմիրած, վենը կացած: Տան մաշին լոխ ուրուր ըն խառնվում, Հու վեր ուրիմնալի յա՝ ուրիսանում ա, Հու վեր տիրելի յա՝ ախրում ա Կողին փախչին, րայց շորանը վեր «հը՛» յա անում, զանները տյող ա ըղնում:

Ալի-Վալի խանը Հազի Ատյաղեն ասում ա. — ինձ մին օթաղ տու:

Տամ ա: Կարտ-վազիրն քցում ա էա օթաղեն մալը, ամեն օր մին թիքյա կարում նրտնա. տի թիքյա-թիքյա կտրտելավ ուադ անում:

Դե Հազի Ատյաղն էլ տատմերեն ա մին ճյորու հաբյվա կապում, քաշ-քաշ սնում, ստի ուադ անում:

Տի էլ անում ըն թափարդեն նհետ:

Հազի-Ատյաղն ասում ա. — Ալի-Վալի խան, էլ քյնալ մի երդիրդ, ստեղ մնա, Մտհմտդեն նհետ ախպեր տեռեքյ, էս հարստությանը տար տեռեքյ:

Ատեղ սկսում ա մին հրաանեքյ, թա հի՞նչ հրաանեքյ, էլ ասվիլ չի քաշում ա օխտը օր, օխտքերը: Տի ել քաթը հրթննքավը պրծնում ա:

40. ԱՌՅՈՒՇՆ ԱՌՅՈՒՇ Ա, ՕԶՈՒՄ Ա ԷՔ ԻՆԻ ՕԶՈՒՄ Ա՝ ՎԵՐՑ

Ղարաբաղում մին Մելիք-Բաղը կար, էա Մելիք Բաղը... տտ կինն էլ ա մահանում, մնում ա ճար ու մադար մին տղա: Ինքն էլ արդեն եկալ ա հրլվերալ Որոշալ ա, յի. տղաս փսակիմ, ուրեմն ժառանդությունիս յրա փվցնիմ, իմ առհմը քանի քյնա՝ քարդանա, աճե: Ախր, վերշը՝ տղան փստկում ա: Տղան փսակում ա, մին էնպիսի մելիքի ախճիդյ ա առնում ուրան աղկն համար, որ էա մելիքը շատ, ինդի, ինդի աժդահակատաղած, մին դազանացած մարդ ա ինում: Մեծ աերիտորյա ա ինում տրան: Վերջը, տրան ախճիդյն առնում ա, պիրում՝ էն նպատակավ, որպիսզի ուրան աղան, շատ, ինդի սրամիա չի

ինում, թուլլ ա ինում... էտ ըխճկանան մին պեն սուվերեն, որպեսզի հետագայում, որ ինքը սահանան, կարողանան լի ուրան կալվածքները, ուրան կարողությունը դևկավարին, պահին.

Վերջը, էտ հարսը վեր կյամ ա ուրան տոն, էս Մելք-Բաղրն ասում ա. «Ես սրանց փորձելու ըմ, տեսնամ՝ մին որևէ բան սովորել ըն թա՛ չէ», աղեն ա օղում փորձի, հարթնասը:

Տղնն ասում ա.—Այ տղա, ծիանները թամբի, մին էրկան ճանապարհ ընք քյննական:

Տղան պիրում ա էրկու հատ ծի թամբում, ճանապարհ ըն ըզնում, ճանապարհ ըն ըզնում, վերջը, շատ ըն քյնամ, խրեդ ըն քյնամ, Մելք-Բաղրը ինդի, շատ մասալ ասող մարդ ա ինում, տղեն ասում ա.—Այ աղա, ճանապարհը ըրկնացալ ա, հանց ըրա, վեր ճանապարհը կըրճանաւ: Ես չե սովածացալ ըմ, հանց ըրա, վեր սովածությունս անց կենաւ:

Տղան ասում ա.—Ա հար, դե թա կարճ ճանապարհ ըս դյուզում, կարճ ճանապարհավ քյնինք: Սովածացալ ըս, ասիր՝ որպեսզի հաց յոր օնինք, վեր հաց ուտիր, մհենդյ, տի, ես՝ վել ճանապարհը կրճցնող ըմ, վել էլ հաց ստեղծող, հինչ անի՞մ:

Փոնում ա մին լյավ կլոխն իյեր թակում, պրծնում, ետ ամ, թա՛ ետ աեռ: Ետ ըն աեռնում, կյամ: Էտ աղան կյամ ա տխուր-արասում, վերջը, ըոխեն յրա փսըկեր վեր ըզնում, պարանց ըզնում: Հարթնը կյամ ա, թա.—Այ աղա, հի՞նչ ա պահածալ քեդ: Տու մեծ մարդու տղա՝ մելքու աղա, լյավ հարստություն օնինք, լյավ կապիտալ օնինք...: Ես էլ նույնպես՝ խանի-թեղի ախճիդ եմ, մեծ հարստություն օնիմ, մեր ապրուսաը լյավ, ամեն ինչը լյավ, խի՞ էս էապես տխուր:

Բայց պատրոնը լսում ա, է՛, թա աեսնա հարսեն անա հինչ ա այուս կյամ:

Տղան ասում ա.—Դե, հինչ ասիմ, է՛, իմ հարստի մին հարց ա տվալ, թա՛ հղեն իրկնացալ ա, հանց ըրա, վեր հղեն կրճանա. սովածացալ ըմ, հանց ըրա վեր սովածությունս անց կենաւ: Ես կրացալ լըմ տրա հարցին պաղսախանիմ, վերջը վըռնալ ա, ինձ թակալ:

Հարսն ասսւմ ա.—Բո, հի՞նչ ա, էտ քավթառը կիմկու ա, հի՞նչ ա ըրալ, հի՞նչ ա աա: Տա հի՞նչ հիմար, սարսաղ մարդ ա,

Պատրոնը լսում ա, ախեր: Պատրոնը լսում ա, ասում ա. «Բաա», աա ինձ հարսնը ծառայել չի կարող: Իմ տղային, տա պեն սովցնել չի կարող: Փոնում ա տրան տյուս ա քցում: Տյուս ա քցում, դարկում հորը տոնը: Դե, հարն էլ՝ մին աժդահա, մին ջին-ջանապար մարդ, կաաղած որոշում ա, վեր՝ ես էս մելքին ամբողջ ունեց-

վածքը պիտի թալանած պիրիմ: Սկսում ա իրան հեմար կամաց-կամաց զորք հավաքելը:

Մինդյ Մելք-Բաղրը մտածում ա. «Հի՞նչ անիմ, էս տղան բեղում ա փսակիմ, ախրը, մեր տանը մին հարթնը բեղի, մեղ ժառայնդյ ինի. վեր հետադայում իմ տան ծուխը եր հանող ինի, լիւս ինքը, մինակ, մին ծի ա նսառում՝ հայդա, ճանապարփում ա, կյամ ա, շասած մին դյուղ տեսնում՝ մին չորան մի քառասուն-իցուն վեխճար առաջն արած տանում ա.—Աա, չորան, էտ հիշտեղ ը՞ս քյնում:

Թա, ասում ա.—Քյնում ըմ մեր շենը:

— Մոտե՞ ա ծեր շենը:

Թա, ասում ա.—Հասե, էս սարեն քմակեն:

Կյամ ըն տյուս կյամ. դյուղի տիմացը մին փոքր յալ ա նյում, էտ յալումը եղում ա, տեսնում՝ շնուռում շատ ժողովուրդ կա կաղնած: Զուրանեն անա հրցնում ա, ասում ա.—Չորան, էս հի՞նչ ժողովուրդ ըն, վեր տենց հվաքվալ ըն շենը:

Թա, ասում ա.—Շենում մեռնող ա լալ, էտ մովին յրա ըն հվաքվալ:

Թա, ասում ա.—Չորան, էտ մարդը մեռա՞լ ա, րյացա՞լ, թա՞ մին ումուղատեղ օնե:

Չորանը մնում ա էշ կտրած. թա՛ էս մարդը մեռալ ա, էլ հի՞շ ումուղատեղ պիտի ինի, հի՞շ բեղում ա ինի: Տեսնում ա, վեր կարում չի պատախանի, ասում ա. «Եէ՛, րսու ա, է, իմ տղես նման: Տա էլ ա իմ տղես նման: Վերջը. կյամ ըն: Զուրանեն նհետ կյամ ա: Դե, մին օրիշ տեղ մի ճինանլում, մին պեն չի անում, շորանեն նհետ կյամ ա ուրանց տոնը: Զուրանեն, իմիշիալոց, մին լյավ հար ա ինում. աշխարհ տեսած, րնադյետ, շատ խելունք մարդ ա ինում, տյուս ա կյամ, տեսնում մին մելքի ուրան հյաթումը տղեն նհետ կաղնած: Տրան կանչում ա պիրում տոն, տղեն կարդադրում, վեր մին վեխճար մորթե:

Հին, քյոհնա դտրադամ տոն, լի, մաշտեղան մին փարդա կապած: Փարդին քմակեն էտ դյուզուցու ախճիդյն ա ինում: Վերջը, տրա հարը էս մելքին նհետ նստում ըն, խոսում ըն, իսկ տղան վեխճարը մորթում ա, մաշկում, թմդցնում, պիրում քվերը նհետ սկսում կտրատելը՝ հանցու կերպուր իփին:

Քուրն ասում ա.—էտ մարդը հո՞վ ա:

Թա.—Հիդամ, ճանալարհն տ ինձ պտահալ, հրցըրալ ըմ, թա հիշ տեղ ա քյնտմ:

Թա.—Պա, իսկի քըդ նհետ զրուց չի ըրա՞լ:

Թա, ասում ա.—Զրուց ա ըրալ, եկալ ընք տյուս եկալ շենին տիմացը, շենումը հավաքված մարդիք ըն լյալ, ասում ա՝ էն հի՞նչ մարդիք ըն ընդեղ հվաքված: Ասալ ըմ՝ դե, մեռալ ա, լի, մըռլին յրա ըն հվաքված: Ինձ հարց ա տամ, ասում

ա՝ էտ մեռալը մեռտլ ա ու հինչ քյեցա՞լ, թա՞
ումուղաւեղ օնեն:

Թա.— Պա, հինչ ըս աստ՞ւ:

Ասալ ըմ.— Վեշ մին պեն, էլ հինչ ասիմ. մե-
ռալը՝ մեռալ ա, լի, անց ա կացալ քյեցալ:

— Հըմ, հտոտ տի գոնզի ըս, է՛ նտ ուղեցալ
ա գյիդա՝ էտ մարգը, վեր մեռալ ա, ժառանգյ
օնե՞ն, կործը ետնտն տանող օնե՞ն, ուրան քմակեն
ուրան նամուաը, զեյրաթը պահող օնե՞ն, թա՞ էն ա
հինչ ծովսը հանգյալ ա, փշացալ ա, քյեցալ ա:
էն մարդը տիյ ա ասալ, աա ա ուղեցալ գյիդա:

Էտ Մելիք-Թաղը սկանում ա, Սկանում ա,
թա. «Պա՞ահ, էս ըխճկանումը էս ա հոնար կա-
արդեն իմ ասածներս կարող ա կլոխ ըղնե՞ թա ես
հինչ ըմ օգում ասիմ: Մինակ մին տյուա կյա
տեմացը, տեսնամ, կաղեցյ ա՞ն, քոռ ա՞ն, քաշալ
ա՞ն, շոլախ ա՞ն...» Վերջը. մին առ ժամանակ անց-
նելուց հետո, ախճիդյը կերակուրը-պենը պատ-
րաստում ա, պրծնում, պիրում սոսկիրան քցում.
Հացը-պենը տինում. վերջը, կերակուրը տինում,
շայը տինում, էս մեկը պերում, էն մեկը պերում,
վերջը, քյնում ա, կյամ ա, տես-տեն, տեսնում ա՝
շէ, լյավ որյով-բուսաթավ ախճիդյ ա, ինքն էլ
լյավ դեղեցիկ ախճիդյ ա, վերջը, սրամտություն
էլ օնե՞ ամեն հինչը հասկանում ա:

Ախճկա հորն ասում ա.— Գյուգում ըս խե
եկալ ը՞մ:

Թա, ասում ա.— Դե, վերջը. տոնը եկած զու-
նազեն կասի՞ն՝ խե եկալ ը՞ս: Եկալ ըս՝ պարտվ
ըս եկալ:

Թա, ասում ա.— Զէ: Եկալ ըմ ախճիդյտ օգիմ՝
իմ տղես հետեւ:

Թա.— Պաա, անհարմտր չի՞, վեր տի... խե՞
տու ինձանավ մագաղ ըս անում, ին՞ ինձ ծաղ-
րում ըս:

Թա.— Զէէ, ագնիկ խոսք, օգում ըմ, գյուզ
ըմ ասում:

Թա.— Զի կարող պտահել, վեր տու գյուզն
ըսեյիս ինիս: Տու՝ մեծ, մելիք մարդ ըս, թագավե-
րու րրարար մարդ ըս, առու քյնի ըիդիս մելիքու
ախճիդյ օգիս, խանութագյու ախճիդյ օղիս...
պա, ես մին հասարակ գյուղացի ըմ, քյասիր
գյուղացի, հունց կարելի ա, վեր տու ինձ նհետ
ինամեյություն անիս:

Թա.— Զէ, ագնիկ խոսք, շատ ճիշտ ըմ ասում.
իմ տղես արեք, իմ արես. վերջը, եկալ ըմ որ-
պեսզի քու ախճիդյը տանիմ...

Գյուղացին ասում ա.— Դե, լյավ...

Վերջը, պայմանավորվում ըն, ախճիդյը օղում
տ, պիրում տղեն հետեւ:

Էն ա, մին էրկու-իրեք ամես կրիավն անց տ
կենում, հորը տղեն ասում ա.— Այ տղու, մին
ծիերը թամքե, եր կաց ճանապարհինք, ճանա-
պարհ ընք քյննակտն:

Դե, տղան ծիերը թամքում ա, պերում, վեր
հոր ու տղա նստեն քյնին, էտ հարթնը էն տղեն
ասում ա, թա ապորն ասե, թա՝ երկար հղե ըս
քյննական, քըզ նհետ հաց տինիմ: Ապերն ըսկա-
նում ա: Թայց էտ տղան անուշադրության ա տի-
նում: Դոնզի մարդ ա, է՛, Վալուն* նման մարդ ա,
հա, նստում են ծիանեն, քյնում: էլ լհա կյամ ա,
վեր շատ ըն կյամ, խրեգյ ըն կյտմ, էլ լհա նույն
հարցը տղեն տամ ա, թա.— Այ տղա, ճանա-
պարհն ըրկնացալ ա, վերջը, յըս էլ սովածացալ
ըմ, հունց անինք, վեր համ հղեն կրմանա, համ
սովածությունս տնց կենա:

Էտ տղան ասում ա.— Ա հար, խե՞ ըս ինձ
շրջարում, թա մին պեն ըս գյուղում՝ ասե, կարձ
հղե ըս զյուգում՝ կարձ հղացվ քյնինք, սովածա-
ցալ ըս՝ պեր հաց յոր օնինք, որպեսզի օտինք,
հինչ անի՞մ,— ասում ա,— տու ինձ խե ը՞ս շրր-
շտրում:

Փոնում ա էլ լհա կլոխն իվեր մին սավ թա-
կում: Ետ ըն տեռնում, կյամ: էլ լհա կյամ ա,
ըոխեն յրա փսրվեր ըղնում, պարանց ըղնում:
Խելքը օրումս մարդ ա, լի: Հարթնը կյամ ա, թա.—
Այ տղա, շինի թթ ես քյասիր մարդու ախճիդյ
ըմ, տու էլ հարուսա մարգու տղտ ըս, տա հետե
ը՞ս էտքան տինու՞ր: Եթե ինձ հավան լրս, ես կա-
րող ըմ քյնիմ հորս տոնը, տու էլ մնա քու հորը
տտնը:

Ասում ա.— Զէէ, ես քեղ շատ հավան ըմ,
շատ էլ սիրում ըմ, րայց, հասե-վերջը, ստի պենու
դարգա իմ հար ինձ թտկում աւ:

Թտ.— Պա, տի հասարակ պենու գարդա խե՞
քեղ թակել ըս տամ:

Թա, գե.— Պա հինչ անի՞մ:

Թտ.— Հարտ տսում տ՝ ճանապարհն ըրկնա-
ցել ա, ճանապարհը կրմցնելու հետեւ հարկավեր
ա գրոց անել, քաթեր պատմել, մին որեէ պեն
անել՝ ճանապարհը կրմնական ա: Իսկ քու հար էլ
թութուն քաշող մարդ ա, ասե՝ ա հար, թութուն
քաշի՝ ավտոտությունտ անց կենա, մինչեւ հասնինք
մեր տեղը՝ հիշտեղ պետք ա քյնինք: Տրանավ էլ
վերջաննական ա:

Հա՞ա, արգեն հլեվուրը կլսու ա ընդալ, ախեր
սկանում ա լյայ, վեր՝ հաա, սրանում էն ա հու-

* Վալուն ասացողի համագլուղացին է, ընականից ունի
հոգեկան անհավասարակշուրջուած, գրադ բազմաթիվ հե-
րիաթներ: Նրանցից մաս ատոք հեքիաթ զրի եմ առել
1974-ին (Ը. Բ.):

նար կաւ հսկապես. ուրան միտքը լհա տիալյալ. վեր տղան պեն պատմե՝ զղեն կրճանա, հորն ասե՝ պապիրոս քաշի, սովածությունտ անց կենա... ինքը կլոխ չի ընդալ Կանչում ա հարթնանր, պէրում կոշտը, վերջը՝ ճկատան պաշում, թս ասում ա.— Այսուհետե ես ըրխին ըմ, վեր տու իմ տղես ղեկավարիս, էս իմ տնտեսությունս էլ պիտի ղեկավարիս... իմ հարթն ըս՝ վեր իմ հարթն ըս մինչե իմ կանքիս վերջը.

Տի էլ սկսում ա հարսնություն անելι

Էն առաջվա ինամին, էտ զաղանացած մարդր, զորք ա պատրաստում, վերջը, հարձակվում Մելիք-Բաղրին լրա, տրա ամբողջ ունեցվածքը հաղարավեր վրխնոնե ա, հով ա դյուդում, կավեր ա, ամեն հինչը, ծիանների սուրու... բոլորը-լոխ քշում, տանում էտ հեկվորն էլ եր ա կենում հետան քյոնում՝ աեսնան՝ հուվ ա, հինչ ա. արան էլ րն փոնում, տանում Տանում ըն, րանդարկում Տանը մնում ա՝ հարթնը, մեկ էլ էտ տղան թայց դե, ախը-վերջը, հիշքան չինի հարուստ մարդիկ ըն, լի, տանը էնքան հարստություն ա մնում, էնքան ունեցվածք ա մնում... էտ հարթն ասում ա... ո՞ե, ինձ համար հիշ կա՞ գե, դե քասիր ըմ իլալ, մէննդյ էլ քսրացե, րայց էտ աակեն մնացած հարստությունն ավելի շատ ա, քան թե իմ հորս հարստությունը. մինչե կյանքիս վերջը բոլ ա, դե տարալ ըն՝ աարալ ըն, լի թալց, դե, ախեր հեկվորը լյավ մարդ ար, լի:

Տանում ըն հեկվորին բանդարկում, Հեկվորը մտածում ա. ո՞էս, ամբողջ ունեցվածքը տարեն, ինձ էլ աերեն ըստեղ բանդարկեցն, ես էլ հեկվոր մարդ ըմ, ես էտ բանտում մոնլական ըմ, հինչ անի՞մ, վեր իմ կյանքը ստղաս աղադիմա, Մտածում ա, ասում ա. ո՞էս մին պեն ըմ հնարելու, վերջն իմ հարթն ա կոխ ըղնական: Հունց օղում ա ինի՝ կլոխ ա ըղնական: Խնդրում ա, վեր ինքը կյա էտ խանեն մուս, Խանը թույլ ա տամ, ասում ա՝ եկ կյամ ա, ասում ա.— Խան, ես ըստեղ մըոնելավ քեղ վել մին պենու օքուտ ըմ, մեծ մարդ ըմ, պեց թողե, քինիմ լհա էտ ունեցվածքը տարալ ըս՝ քեղ հալալ ինի, պեց թող, քյնիմ իմ տանս՝ մին տարե ա, կես տարե ա՝ ապրիմ, իմ տանս էլ մեռնիմ, լի և նե՞, ես բանտում մեռնիմ:

Ասում ա.— Զէէ՝, տու ամրող աշխարքավս ինձ խալտառակալ ըս՝ իմ ախճիդյս տարեր, երեք ամես պհեցեր, տյուտ քցեցեր, ես քեղ թեղում ա էտ բանտում ըսպանիմ: Քեղ պեց կթողնի՞մ սկի:

Թա, ասում ա.— Դե վեր տի ա, ես քեղ էրկու հարուր եղնը կտամ՝ պողերը ըրկն-էրկան, սորսոր, էրկու հարուր եղնը կտամ՝ պողերը կըեռ-կըեռ, էրկու հարուրն էլ անպոզ Ալ, էտ ձեի եղներ պիտի տաս, վեր տանինք, քա հոր աղադինք:

Էրկու հարուր եղնը կամ՝ անպոզ. վեց հարուր եղնը կտամ, ինձ ըստղաս ազաղե:

Վեց... էտ խանը մտածում ա. ո՞ւ մարդ. աշխարհումս էսպիսի անասուն կա ու, էտ մարդին, ուրեմն, վեր իտի հարստություն օնե, պադե վեց հարուր եղնը պիտիմ՝ տրան պեց թողեմ քյնի, էտ քավթառը ըստեղ պահում ըմ, հինչ անիմք Ասում ա.— Շատ լյավ:

Ասում ա.— Դե վեր համաձայն ըս, քու մարդկուտ ուղարկե. քյնին եղնենքը պիտին, տու ինձ կազադիս:

Թա, ասում ա.— Լյավ:

Եր ա կենում իրան թիկնապահներան մին շորս-հենդյ հոդի ուղարկում, ասում ա.— Քյեցեք տրա տոնը, ուրան տղեն ըսեցեք, վեր՝ ստի, ստի, ստի եղնենքը պիտին:

Եր ըն կենում կյամ. վերջը, կանչում՝ տղան այուս ա կյամ տոռնը էտ հարթն էլ ա տյուս կյամ տոռնը: Ասում ըն.— Դե, այ տղա, քու հարտ քղանա սհենց, սհենց, սհենց, վեց հարուր եղն ա պահանջալ: Թեղում ա տտս, վեր թանդից աղադին Վեց հարուր եղնը հասե, էտ ֆորմի եղներ. էրկու հարուրը՝ պողերը ըրկն-էրկան, սորսոր, էրկու հարուրը՝ պողերը կըեռ-կըեռ, էրկու հարուրն էլ անպոզ Ալ, էտ ձեի եղներ պիտի տաս, վեր տանինք, քա հոր աղադինք:

Էտ տղան ասում ա.— Էտքան եղնը մեղ որակի՞ց ա:

Իսկ հարթնը, թա.— Լյավ,— ասում ա,— եկեք տոն, ես քյնամ եղնենքը պիտիմ:

Հարթնը պերում ա էտ մարդկանց հյուրասիրում. վերջը. մարդիկ նստում ըն հացի, տղային՝ մարդուն, ասում ա.— Ալ տղա, արի ստեղի:

Կյամ ա, տրան ասում ա.— Քու հարը եղնենք մի օղալ նա գյուդում չի՞ վեր մունք վեց հարուր հատ եղնենք չօնինք: Էտ էրկու հարուր եղնենք՝ պողերը էրկան-էրկան, սորսոր, տա՝ էրկու հարուր թվանդյավուր ըն էրկու հարուր եղներ՝ պողերը կըեռ-կըեռ՝ էրկու հարուր շշկավոր ըն, թուրավոր, թուր ունեցող դինվորներ ըն, էրկու հարուր էլ անպոզ եղնը, տա էրկու հարուր դինվոր ըն՝ առանց զենքի, առանց որմէ պենի, որ քյնանք հարձակվինք, էտ խանի տարած ունեցվածքը ետ խլինք, յոր օնինք, կյանք, Քու հարը դյուդում չի՞ վեր մունք ըստեղ վեց հարուր եղնը չօնինք,— Թա, ասում ա,— լյավ, էտ մարդկանց ես հաց ըմ տամ, տու քու հորտ էն հրեղան ծին նստե, քյնա մեր ամրող հասարակությունը հվաքե, պեր մեր հրապարակը: Սօր կարելու լըն կյան, էրկուծ առապարակը: Ասե՝ խանի նկատմամբ նորություն կա:

Էտ տղան ծին նստում ա... դե, հորը ծին մը-
նացած ա ինում, հորը հաքուստը մնացած ա
ինում... նստում ա, քյում ամբուջ ժողովուրդին
իմաց անում: Եքյուը առավոտը ժողովուրդը հա-
վաքում ըն: Ժողովուրդը հավաքվում ըն, իսկ էտ
եկած մարդիքը, էն վեր եկալ ըն թա եզնենքը
տանին, ասում ըն:— Պա, եզնենքը հրշ տեռավ:

Թա ասում ա.— Եզնենքը մհենդյ չեն կյալու,
եզնենքը մին հինդ-վեց օրից հետո ըն կյալու:
Եզնենքը էն ըն, էէ՛, սարերումը, յայլազներումը,
ընդեղ արածում ըն, էսօր եզնը կա՞: Պետք ա
ասինք, վեր մեր շորանները ընդպան քշին, պիրին:

Տի խափում ա, ուշացնում ա օըը:

Վերջը, հարթնը կյամ ա այուս կյամ հրա-
պարակ, տեսնում, էէ՛, ժողովուրդը լոխ հվաք-
ված: Դե, ինքն էլ թազա հարթն, լի, հին սովորու-
թյամբ քեթկալը տված տյուս ա կյամ ժողովուրդի
առաջ. թա ասում ա.— Այ ժողովուրդ, տուք ինձ
ներեցեք, որ ես որպես հարու համարձակվալ ըմ
տյուս կյամ: Մելիք-թազը՝ իմ պարունը, վեր էն
ա խանեն կշտեն րանդարկված, տա տուք դյուգում
ըք, էրկու հարուր եզն ա պահանջալ՝ պոզերը
ըրկըն-էրկան, սոր-սոր, էրկու հարուր եզնը պա-
հանջող ա պոզերը կըեռ-կըեռ, էրկու հարուր
եզն էլ՝ անպող: Վեց հարուր եզնը, վեր ասանինք
մեր ապորը ազատել կտանք, պիրինք:

Թոլորն ասում ըն՝ հա, շաա էլ լատվ կինի: էն
մինն ասում ա՝ ես երկու եզնը տվե, էն մինն
ասում ա՝ ես իրեքը տվե, էն մինն ասում ա՝ ես
մեկը տվե... վերջը, բոլոը թա՝ վեց հարուր եզնը
թմըցնինք, քյնանք մեր առաջնորդը պիրինք:

Ի միշի այլոց, էտ Մելիք-թազը էնքան հար-
դանքավեր մարդ ա իլալ, վեր ամբողջ ժողովուր-
դը տրան հարդիյս ըն իլալ:

Թա, ասում ա.— Զէ՛, այ ժողովուրդ, ըստեղ
եզնան հարց չի: Էրկու հարուր եզնը՝ պոզերը եր-
կար, աա երկու հարուր թվանդյավոր ա: Էրկու
հարուր եզնը՝ պոզերը կըեռ-կըեռ՝ աա էրկու հա-
րուր զինվոր ա՝ թուրք ծերքին: Էրկու հարուր եզնը՝
անպող, տա էրկու հարուր ազատ մարդիք ըն,
վեր քյնանք, հարձակվինք խանեն յրան, մեզանից
թալանած ունեցվածքը յոր օնինքյ, կյանք, և մեր
ապորն էլ բանդից ազատինք, պիրինք՝ մզանա
տարած պեներեն նհետ:— Հատե, էտ ձեկի ա ասում:

Թոլորը համաձայնվում ըն, ասում ըն՝ հա, վա-
զը բոլորս պատրաստ, հուրը զենք օնե՛ գենքավ,
հուրը թուր օնե՛ թուրավ, հուրը թուր չօնե՛ ան-
զենք, վեցհարուր հոդի վազը մոմք էս հրապարա-
կում կազնած պատրաստ ընք իննական: Մեր
Ակուեն* նման մին սարսազն ինում ա, եր ա կե-

* Ակու-ասացողի համապյուղացի. նրան ասված բանը
ուշ է տեղ չասնում: Խսկական անունը Հակոբ է (Ս. Բ.),

նում, թա.— Պա էս լհա զորք, պա էս զորքեն
առաջնորդը, զեկավարը հուշ ա:

Ասում ա.— Տրանց զեկավարը ես ըմ իննա-
կան, ես:

Թա.— Պաա՛, պա, վեր զեկավարը տու ըս,
վեր քյնանք—ասում ա,— մեր օրենքի համաձայն
տու պետք ա նրանց զեկավարի հետ կովիս, զորքն
էլ՝ նրանց զորքեն հետ կովի, պա տու կրըլական
ը՞ս մինակ նրանց զեկավարեն նհետ կոեվ տնի՞ս:

Թա.— Վեշնչ,— ասում ա,— վեր քյնանք հաս-
անիք ընդեղ, տու կովեն մասնակցիս վուշ, մենակ
տու թիմաշա կանիս թա՝ տեսնանս հուվ ա հազ-
բում:

Վերջը, պայմանավորվում ըն: Էքյուը առավո-
տը եր ա կենում էտ հարթնը զորավարական հա-
գուստը հաղում, թուրը կտպում, նստում հրեզան
ծին, քյնում-տյուս կյամ հրապարակ, տեսնում՝
ամրոզ ժողովուրդը հվաքված սաեզ: Առաջնոր-
դում ա տրանց դեպի էտ աժդահա խանը իսկ
էտ աժդահու խանն էլ մին սովորություն օնե: պեցիր շարդախ ա զինել տամ, վըշկա, մարդ ու
կնեղյ ամառը էտ սարին տեղը քոն ըն ինում: Էտ
խանը չատեզ քնած ա ինում: Էտ պեցիր տեղը՝
կնդանը նհետ: Առավոտը եր ըն կենում, տեսնում՝
թող ա պրցրացալ, էէ՛, հիշ թող: Խանը կնդանն
ասում ա.— Ա կնեղյ, տես, հաա, վեցհարուր եզնը
կյամ ա, հաա, տես հիշքան եզն ըն պիրում:

Կնեղյը ուշադիր եշում ա, թա.— Այ մարդ,
հի՞նչ ըս խոտամ, քյըզ երա զորք ա կյամ, զորք,
եզն վե՞րն ա:

Վերջը, խանը եշում ա տեսնում՝ իսկապես,
զորք ա կյամ: Վեր ա կյամ ըտազատ, իսկույն
թուրը կապում, նստում ծին, վերջը, ուրան
զայկանում հիշքա՞ն ժողովուրդ պիտի ինի, հիշ-
քա՞ն մարդ պիտի ինի, ժամանակ էլ չկա: Մին
իցուն-վացուն մարդ ա հվաքվում, ինքն էլ թա
հինչի յրա մալավ կացա՞ծ. թա՝ զորք ա կյամ՝
թող կյա, լի, ինձ հի՞նչ ըննական: Առաջ ա կե-
նում: Առաջ ա կենում, երկու զորքը իրար հանդի-
պում ըն: Սկսում ըն կովելը: Էտ խանն իմանում
չի, թա իրան դիմացի կազնածը հարս ա, կին ա,
դե էն ա զորավարական շորերումը, հի՞նչ ա դյու-
դում, թա հի՞նչ ա: Թուրը քաշում ա խանին յրա
և սկսում կովելը: Ակու-ախսպերն էլ զասիդ թի-
մաշա ա անում, թա էտ հարսը հի՞նչ ա անում, լի: Վերջը,
շատ կովելոց հետո, էտ ախսիդը էտ խա-
նեն ծիից վեր ա քյցում: Վեր ա քյցում պրծնում,
սրտեն շոքում: Թա, ասում ա՝ սրան կապեցեք,
կպուտեցեք սրան: Կպուտում ըն: Դե, զորքան խո-
սինք. էն հիցուն-վացուն հոգին վեցհարուր հոդուն
հի՞նչ պետք ա անե: Կուտուրեցին, ճմուեցեն, հու-

վեր կարից՝ փախավ, հու վեր կարից վուչ՝ վեր-ը, փշացավ, բյնաց.

Կարդաղրում ա դորքին, թա ասում ա.—Մը-զանա պերած ունեցվածքն էլ, ուրան ամրող ունեցվածքն էլ բշեցեք գետի մեր կողմը:

Ասում ա, կյամ, սերուն, բանտին տոռնը պե-նում, ուրան պատրոնը բանտից տյուս օնում, դորավարական շորերը հանում, պատրոնեն կյեց տամ, թուրը կապել տամ, ծին տամ ուրան, թա ասում ա՝ նստել:

Պատրոնն ասում ա.—Ա. հարթնը, կլիավլու շոռ տամ, պա առո՞ հինչ ըս նստլական թա, ասում ա.—Վեշինչ, տու նսակ հլա, կտեսնանք նստում ա պատրոնը, կտրդադրում ա, թա. խանեն ծին պերեք, եանեն, ծին էլ հարսն ա նստում, Կար-դադրում ա, ասում ա. խանեն համար մին ծի պերեք եանեն համար մին ծի ըն պիրում, մին յարու, խանեն յրան նստրցնում, վեններն էլ կպո-տոամ, ժերքերն էլ՝ հայդա, բշում ա, պիրում: Թը-շում ա, պիրում, կյամ ա հասնում ուրանց տունը, խանեն խսկույն բանդարկում ա, ուրանց ամրող ունեցվածքը, վեր խանը տարալ ար, եա ըն պե-րալ, յոր օնում, խսկ էտ խանից պերած ավել ունեցվածքը բաժանում դորքեն յրան. էտ հասա-րակությանը ե ով որ պատերազմին մասնակցու ա. հուրը՝ տասը վեխճար ա բղնում, հուրը՝ էր-կու եղն ա բղնում, հուրը՝ մի ծի տ բղնում, վեր-չը, բոկորին յրա բաժանում, պրծնում, թա, ասում ա. տարեք, արխային ապրեցեք, էլ վախեք վուչ, էլ վել մին պեն չի ինի, քանի ես սաղ ըմ, վել մին մարդ կարել չի ծեր քեփին նի կյտ:

Հիմիկ էլ էտ խտնն ա ինդրում, վեր թույլ տան, կյա՝ մին իւսոք օնի, լի, ասեւ Հարթնը օղում ա թույլ տա, Մելիք-Բաղրը համաձայնվում չի, թա ասում ա՝ կյա մեղ կիսափի, որեէ պեն կա-նի, թա, տում ա՝ վեշինչ, թող լհա տահանք հինչ ա ասում:

Կյտմ ա, թա, ասում ա.—Վերջը, պա ես բանտում մնալավ քեզ հինչ օղուտ ըմ տլական, պեց թող, թող անց կենամ բյնամ, լի, Մհենդյ, օրիշ հարսաւթյուն չօնիմ, թա քըզ նման ասիմ՝

Հարստություն ըմ տլական... վե մին պեն չօնիմ, լհա, ինդրում ըմ, ինձ պեց թողիք:

Թա, ասում ա.—Զէէ, պա քեզ աղադիմ, տյու քյնաս, նորը զորք կապիս, կյաս մըզ յրա կունչի:

Հարսն ասում ա.—Ապեր, տրան ըղաղե, բյնի, տա հի՞շ՝ կարող ա անե մենդյ. արդեն իմ կուռ-նան ուժը տեսալ ա, տա կարալ չի էլ ինձ զեմ պատերազմը տյուս կյա: Թող զորք կապե, կյա, զորք օնե՞ զորքես նհետ ա կոեվ ըննական, ինքն էլ՝ ինձ նհետ ա, չէէ, կոեվ ըննական, Պա, ես իրան վեր հազթիմ, իրան զորքը տեռնում չի պարտվա՞ծ, տա ինձ հի՞շ կարող ա տնել:

Թա, ասում ա.—Դե, լյավ, կաղադիմ:

Խանն ասում ա.—Դե, վեր աղադում ըս, մին ինդիրք օնիմ, լի պա, տու ինձ ըսեցիք՝ էս ձեկ եղնը, էս ձեկ էն եղնը, էս ձեկ էս եղնը, հու՞նց կարող ա վեր... բու ասածը իմ մարդիք ըն պի-րալ, տեղ հասցրալ. վերջումը՝ զորք այուս եկեն: Պա բու եղնենքը հի՞նչ իլին:

Ասում ա.—Ես քեզ եղնենք լըմ խոստացալ, ես դյացալ ըմ, վեր ասին՝ էրկուհարուր եղնը պո-ղերը ըրկն-էրկան, սոր-սոր, իմ հարսս դյալական ա, վեր էրկու հարուր թվանդյավոր րն. էրկու հարուր եղնը՝ պողերը կը եռ-կը եռ, սա էրկուհարուր թուրա-վոր ա. էրկուհարուր տնպող եղն էլ՝ անդեն մարդիքն ըն, լի: Ես դյացալ ըմ, վեր հարսս կլոի ա ըղնե-լու, զորք հավաքե, կյա քեզ հազթե, ինձ էլ բան-դից աղադե, ես էտ իմաստով ըմ քեզ խոստացել, որ եղնը տամ: Դե հիմիկ, հասե, տի ա տեռնում: Հարթնս հասկացալ ա, եկալ ա, բու ունեցվածքն էլ ա պերալ, իմն էլ ա ետ պերալ, ինձ էլ բանդից տղադալ, երկ՛ըս կարդավորալ Մհենդյ, սերուն, խաղաղ դաղափարի, ինձ համար պետք ա ապրիմ փառավոր: Տու էլ որտեղ վեր քյնում ըս, րյնա:

Էտ խանեն պեց ա թողում, քյնում աւ էն օր-գանից մինչ էսօր, էտ երդիրը խախանդվում ա, էս կինն էլ դառնում ա էս դերդաստանեն և առաջ-նորդը, և դեկավազը:

Էտ էլ ասված ա նրա համար վեր. «Առյուծը առյուծ ա, օղում ա եք ինի, օղում ա վերց ինի»:

Ստ էլ ժողովրդական առած աւ:

ԶՐՈՒՅՑՑՆԵՐ, ԱՐԱԿԱՆԵՐ, ԶՎԱՐԺԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԲԻՇԻՆ ՀՈՒ ԿԵՐԱՎ

Էտ ա մի քյասիր տեղտեր ասից. «Ես պիաի վեր կենամ, մեր շենումը ապրելու միջոցներ շկա, բյնիմ ուրիշ տեղու ծանապարհ ընդյավ ստեղից ներքի շենը», Քյնաց աեսավ ներքի շենին դյուր-

* Գյուղ Ագր. ՍՍՀ Եահումյանի շրջանում, սահմանակից ասացողի դյուդին (Ծ. 4.):

յներին կշտեն մին պառավ մարդ նստած:

- Պարի օր:
- Ասսծու պարին:
- Հի՞շ մարդ էս:
- Մարդ եմ էլի, բյնամ եմ էջմիածին օր-հընվեմ:
- Յըս ըլ եմ բյնում, փող ըմ հվաքում վար,